нескрываемое замешательство, полная растерянность и абсолютное непонимание процессов, обусловленных функционированием «Лазаревского клуба». Так, накануне начала второго заседания небезызвестный проправительственный интернет-портал Азербайджана [aze.az](http://aze.az/lazarevskiy-klub-obrechen-na-proval.html) весьма своеобразно «благословил» его работу публикацией статьи под заглавием «Лазаревский клуб обречен на провал» (<http://aze.az/lazarevskiy-klub-obrechen-na-proval.html>). Уважаемый читатель вполне уместно может задаться вопросом: а почему из множества статей азербайджанских масс-медиа, посвященных работе «Лазаревского клуба», я упомянул именно эту публикацию? И он будет прав, однако ответ на сей вопрос проще простого. Оказывается, в апшеронском султанате (именуемом также Азербайджаном) есть интернет-порталы, которые уж больно беспокоятся за Армению. В подтверждение сказанного достаточно привести отдельные сердобольные стенания, например, aze.az о том, что: «Следует отметить, что до второго заседания клуба российские государственные медиа осуществили антиармянскую кампанию (надо же, какой позор, а вместе с тем, какая сердобольность, а главное, с чьей стороны она выражается. – А. Г.). А целый ряд депутатов Госдумы приняли участие в Баку в антиармянском шествии (согласитесь, весьма примечательно, что авторы сей публикации сами определяют подлинную суть состоявшегося 26 февраля т. г. шествия, проведенного, якобы, в память о жертвах ходжалинской трагедии 26 февраля 1992 года. – А. Г.). Один из них – член данного клуба. Между тем в эфире государственных российских медиа не звучит ни одного антиазербайджанского слова (видимо, велико было разочарование азербайджанских политологов, когда российские СМИ к трагедии 1992 года в Ходжалы, вина за которую полностью на совести Народного фронта Азербайджана, отнеслись, как и подобает солидным изданиям, придерживающимся общепринятых моральных принципов. – А. Г.). Отметим, что армяне сами признают, что «Лазаревский клуб», как и всякая российская инициатива, обречен на провал». Заключительное предложение сего безоговорочного вердикта пробуждает двоякие чувства. С одной стороны, вызывает удовлетворение то, что в противники «Лазаревского клуба» записались особи с подчеркнуто выраженным антироссийским душком и убожеством выражаемых ими мыслей. С другой стороны, они не скрывают своих связей с теми отбросами непонятно какого общества, которые позиционируют себя как «армяне, которые сами признают, что «Лазаревский клуб», как и всякая российская инициатива, обречен на провал». Можно было ограничиться вышеприведенной ссылкой, опубликованной в этом азербайджанском интернет-портале, так как сия публикация наиболее полно характеризует дичайший уровень непонимания целей и задач «Лазаревского клуба». Авторы статьи не задаются вопросом о побудительных мотивах первых уверенных шагов членов

клуба на пути к реализации поставленных задач, что изо дня в день повышает авторитет этой организации. Однако вызывает сожаление, что на подобный уровень невосприятия реалий помимо азербайджанских СМИ скатились и официальные лица апшеронского султаната, подтверждением чему стало заявление Министерства иностранных дел Азербайджана, в котором, в частности, отмечается: «Согласно распространенной в СМИ информации, 5–6 марта текущего года в Москве состоялось второе заседание российско-армянского «Лазаревского клуба». В нем приняли участие официальные представители исполнительной и законодательной властей Российской Федерации в лице советника президента РФ С. Глазьева, который передал участникам заседания приветствие президента России В. Путина, а также первого заместителя председателя Комитета Государственной Думы Российской Федерации по делам СНГ, евразийской интеграции и связям с соотечественниками К. Затулина. Хотели бы напомнить, что в связи с приглашением на первое заседание вышеупомянутого клуба представителей сепаратистского режима, созданного на оккупированных Арменией территориях Азербайджана, равно как и прозвучавшими в рамках первого заседания высказываниями, открыто ущемляющими суверенитет и территориальную целостность Азербайджана, МИД Азербайджанской Республики выразил свое недовольство и возмущение МИД РФ» («МИД Азербайджана выразил недовольство в связи с приглашением представителей сепаратистского режима на заседание «Лазаревского клуба», 7 марта 2019 г., 16:38).

Первое восприятие данного заявления – это чувство удивления на столь «молниеносное» реагирование МИД апшеронского султаната на итоги первого заседания «Лазаревского клуба», да-да, уважаемый читатель, я не оговорился, первого заседания, которое состоялось 30 ноября–1 декабря 2018 года в Ереване. В официальном документе МИД Азербайджана дается оценка именно этому мероприятию. Что же касается оценки второго заседания, то апшеронским дипломатам по сути нечего сказать, так как они на сей счет еще не придумали какую-либо брехню. А может, их подвели ими же ангажированные наемники с армянскими фамилиями, которые запоздали с возможными клеветническими «разоблачениями» членов «Лазаревского клуба». Впрочем, мне ясно, почему официально Баку понадобилось 3 месяца, чтобы понять и оценить итоги «первого заседания вышеупомянутого клуба», а дальше – «выразить свое недовольство и возмущение МИД РФ». Можно было привести и другие выдержки из заявления апшеронского внешнеполитического ведомства, однако в этом нет необходимости и вот почему. Еще за двенадцать дней до начала второго заседания «Лазаревского клуба», 22 февраля т. г. на брифинге в МИД РФ журналист из Азербайджана спросил у официального представителя Марии Захаровой относительно проведения в

Москве 5–6 марта т. г. второго заседания «Лазаревского клуба». По его же словам на этом мероприятии предполагается участие руководителей Республики Арцах. При этом азербайджанский журналист хотел увязать этот вопрос с сопредседательством России в Минской группе ОБСЕ по урегулированию Нагорно-карабахского конфликта. Не дослушав вопрос до конца, официальный представитель МИД России прервала его: «Подождите. При чем здесь сопредседательство России, эта функция и данный форум? Каким образом вы соотносите это в вашем вопросе? Вы соотносите это в том контексте, что Москва – столица России? Вот видите, как вы сами в вашем вопросе соединяете вещи, которые соединять не надо. При этом в Москве, как вы правильно отметили, проходят ежедневно сотни форумов на различные темы, которые проводит гражданское общество (откуда журналисту из султаната знать, что такое гражданское общество, вольное проводить подобные мероприятия, или же что такое неправительственные организации. – А. Г.). Я думаю, что речь наверняка идет об одном из них. Если у вас есть информация, что в нем каким-то образом участвуют официальные лица, дайте мне, пожалуйста, эту информацию, я уточню. У меня такой информации нет». Приятно констатировать, что МИД Азербайджана добросовестно и весьма оперативно выполнил поручение Марии Захаровой и 7 марта т. г. отапортовал: «... доводим до сведения российской стороны, что наличие конкретных данных по участию высокопоставленных официальных лиц государственных органов РФ на вышеуказанном заседании 5 марта, где они присутствовали наряду с представителями незаконного режима, созданного на оккупированных территориях Азербайджана, грубейшим образом противоречит обязательствам страны-сопредседателя МГ ОБСЕ ...». Оказывается, второе заседание «Лазаревского клуба», проходившее в открытом режиме с участием чуть ли не полусотни журналистов из ведущих масс-медиа России и Армении, со стороны азербайджанского МИД было воспринято как некое закрытое таинственное мероприятие, потребовавшее невероятных конспирологических усилий с целью выявления «конкретных данных по участию высокопоставленных официальных лиц государственных органов РФ». Как бы помягче охарактеризовать сей абсурд. Словом, в условиях неурегулированности Нагорно-карабахского конфликта нервы азербайджанских властей явно сдают, а маразм крепчает. А посему – армяне, будьте бдительны, потому что это происходит вовсе не случайно, а является неременным атрибутом подготовки информационного фона для развязывания Азербайджаном новой войны против Республики Арцах. Думается, что сомнения относительно, на первый взгляд, столь неожиданного с моей стороны вывода полностью развеются при дальнейшем ознакомлении с фактами, которые будут приведены ниже. При этом

заметим, что можно было бы привести с десятков других выдержек из масс-медиа Азербайджана, в которых гневно осуждается сам факт проведения в Москве заседания «Лазаревского клуба». Для полноты картины отметим, что заключительным аккордом выражения гнева азербайджанской стороны явилась информация о встрече 7 марта т. г. министра иностранных дел апшеронского султаната Э. Мамедъярова с послом РФ в Баку Михаилом Бочарниковым. Что же такого интересного написали азербайджанские СМИ об этой встрече: «Министр Э. Мамедъяров сказал, что отношения между Азербайджаном и Россией носят стратегический характер и, подчеркнув роль России как одного из сопредседателей Минской группы ОБСЕ в процессе урегулирования армяно-азербайджанского нагорно-карабахского конфликта, выразил протест азербайджанской стороны в связи с участием 5–6 марта официальных государственных лиц РФ на очередном заседании российско-армянского «Лазаревского клуба», на котором присутствовали представители сепаратистского режима, созданного на оккупированных территориях Азербайджана».

Думается, здесь следует остановиться, так как за лавинообразным потоком информации о московском заседании «Лазаревского клуба» как-то в стороне остаются не менее актуальные события, прямо затрагивающие не только интересы Армении, но и нашего стратегического союзника, России. Прежде чем изложить наиболее значимые события последних месяцев в регионе Южного Кавказа, не могу устоять перед соблазном привести еще один пример в обоснование моей оценки относительно крепчающего день ото дня маразма апшеронских властей. Так, 4 марта т. г. проправительственный интернет-портал Minval. az опубликовал статью под заглавием: «Иран: мужество азербайджанцев и предательская политика Тегерана», сопроводив это заглавие подзаголовком «Азербайджанцы протестуют против предательской политики властей ИРИ». В сей скандальной публикации читаем: «Власти ИРИ (Иранской Республики Иран. – А. Г.), которые ограничились легким «а-я-яй» в адрес армянских националистов, развернувших на встрече с Пашиняном (в рамках официального визита Н. Пашиняна 27–28 февраля т. г. в Исламскую Республику Иран. – А. Г.) плакат «Карабах – это Армения и все!», и даже не подумали привлечь их к ответственности, а в случае с упоминанием о принадлежности Карабаха Азербайджану тут же ответили репрессиями. Уже на выходе со стадиона в Тебризе полиция задержала 28 наших соотечественников (1 марта т. г. на стадионе в Тебризе в ходе футбольного матча болельщики одной из команд скандировали лозунг «Карабах наш и будет нашим», подняли флаг Азербайджана и сожгли флаг Армении. – А. Г.), в том числе известного азербайджанского национально-культурного активиста Юсифа Салахшура (примечательно, что автор статьи специально подчерки-

вает «культурного», ибо Тофигаханум Фазил кызы, будучи весьма информированным журналистом, отдает себе отчет, что в апшеронском султанате «национальное», как правило, далеко от «культурного». – А. Г.). Некоторые из задержанных избиты в тюрьме». Так вот азербайджанские собраты «национально-культурного» активиста 10 марта т. г. у Посольства Ирана в Баку скандировали лозунги о том, что Карабах нужно возвращать любым путем и что необходимо расширять границы Азербайджана вплоть до Тебриза. При этом заметим, что большинство плакатов были написаны на английском языке (видимо, организаторы сего действия следовали азербайджанскому гостеприимству и с учетом того, что митинг был рассчитан вовсе не для дипломатов Посольства ИРИ, а для их американских коллег, облегчили последним хлопоты по переводу своих лозунгов с фарси на английский. – А. Г.). Заметим, что содержание лозунгов сводилось к »South Azerbaijan Is NOT IRAN», то есть «Южный Азербайджан – это не Иран». Таким образом, воспитательная работа иранских правоохранительных органов в тюрьме Тебриза, судя по всему – наиболее действенное средство от пресечения махрового сепаратизма в азербайджанонаселенных районах Ирана. Заметим, что для «национально-культурных» активистов так называемый ими Южный Азербайджан – это древнейшая Атропатена, названная так по имени Атропата, которого Александр Македонский в 328 году до н. э. назначил сатрапом Мидии. Разглагольствуя о своих притязаниях на территорию Северного Ирана, азербайджанская сторона вновь обосновывает правильность поставленного им диагноза – маразм крепчает. Ведь надо же, азербайджанское государство, которое было образовано лишь в 1918 году, претендует на свои «исторические земли», тысячелетиями принадлежащие Ирану, Персидской империи.

Однако подлость поведения азербайджанских сепаратистов в другом: они спекулируют на крайне обострившихся отношениях между США и Ираном в надежде, что в случае крайне неблагоприятной развязки этого конфликта для Ирана смогут вероломно захватить северные территории Ирана. Справедливости ради отметим, населенные в основном этническими азербайджанцами.

К вышеизложенному следует добавить и распространенное 9 марта т. г. заявление сопредседателей Минской группы ОБСЕ (далее – Заявление), которое, несмотря на то что по сути повторяет ранее изложенные ими же принципы урегулирования Нагорно-карабахского конфликта, в условиях новых внешнеполитических реалий, о которых было сказано выше, а также нового внутривосточного положения в Армении после государственного переворота апреля-мая 2018 года, требует глубокого осмысления. Обострившиеся отношения между США и Ираном, агрессивная риторика азер-

байджанской стороны в отношении Ирана (пока лишь в СМИ), недвусмысленно выраженный подход США к урегулированию Нагорно-карабахского конфликта по формуле, предложенной Миллсом– Болтоном «территории (земли) – в обмен на мир», а также непримиримое упорство Н. Пашиняна, достойное лучшего применения, о неприменном участии арцахской стороны в переговорном процессе, создают совершенно новую ситуацию в нашем регионе. Во-первых, для Ирана становится архиважной задачей обеспечение безопасности стокилометровой границы между ИРИ и зоной безопасности Республики Арцах, контролируемой со стороны ее вооруженных сил. Уже одно из положений Заявления – «и международные гарантии безопасности, которые будут включать миротворческую операцию» – заставляет серьезно призадуматься. А какие страны будут осуществлять миротворческую операцию? Страны-сопредседатели Минской группы ОБСЕ – Россия, США и Франция? То есть США и Франция могут дать «международные гарантии безопасности» при задействовании сил НАТО? Тогда как будет осуществляться взаимодействие сил НАТО с российскими миротворцами? Неужто столь же опасно (вследствие непредсказуемости действий коалиционных сил под руководством США), как это имеет место быть в Сирии? Не говоря уже о возможной реакции иранского руководства в случае подобного развития событий. Увы, логика событий, происходящих в последние дни, свидетельствует о возможности подобного сценария развития ситуации в нашем регионе. Что имеется в виду? Заметим, что в ходе переговоров от 5 марта т. г. между Н. Пашиняном и Верховным представителем ЕС по иностранным делам и политике безопасности Федерикой Могерини она выступила за то, чтобы премьер-министр Армении участвовал в переговорах, проводимых под эгидой сопредседателей МГ ОБСЕ, без предусловий (в ответ на то, что Н. Пашинян тогда же 5 марта в Брюсселе в беседе с журналистами заявил о необходимости нового формата переговоров по Нагорному Карабаху). Более того, в ответ на это предложение комиссар по вопросам расширения и политики соседства ЕС Йоханнес Хан на совместной с Н. Пашиняном пресс-конференции прямо заявил о необходимости сохранения действующего формата переговоров по урегулированию Нагорно-карабахского конфликта. «Иногда речь идет о нашей поддержке, я думаю, что лучше сохранить нынешний формат. Не нужно стремиться создать что-либо новое только ради новизны. И в более общем плане речь идет о мерах доверия», – сказал Й. Хан. Следует отметить, что о необходимости сохранения формата переговоров сложился консенсус между сопредседателями МГ ОБСЕ.

В этих условиях до начала обсуждения вопросов повестки дня совместного заседания Советов безопасности Армении и Республики Арцах 12 марта т. г. Н. Пашинян в который уже раз заявил: «Главный

вопрос заключается в следующем: кто представляет арцахцев или, как говорят в некоторых случаях, армян Карабаха в переговорном процессе? Проблема в том, что сегодня за переговорным столом нет полномочного легитимного представителя народа Арцаха или, как предпочитают говорить некоторые из наших коллег, нет субъекта, который имеет вотум доверия, полномочия представлять армян Карабаха». Уверен, что «народный премьер-министр РА» уж больно архаично и провинциально лукавит, выражаясь проще – пудрит мозги. Неужели Н. Пашинян не задастся вопросом, а в какой степени он является легитимным, когда более половины граждан Армении, обладающих правом голоса, вовсе не пошли на выборы в НС РА, а посему он, будучи выдвиженцем парламентского большинства, отнюдь не является всенародно избранным премьер-министром РА. Н. Пашинян попросту уходит от ответственности. Ведь в эти судьбоносные дни истинный патриот Армении и Арцаха сам бы инициировал совместное заседание Совбезов, на повестке которого были бы два вопроса: о наделении Н. Пашиняна полномочиями на переговорном процессе по Нагорно-карабахскому урегулированию представлять Республику Арцах. Естественно, это решение должно быть оформлено в полном соответствии с положениями Международного права. И второй вопрос – «О создании объединенного комитета обороны Республики Армения и Республики Арцах». Ан нет, к принятию такой ответственности на себя он отнюдь не готов – ни морально, ни психологически. Ведь это не то же самое, что митинговать в Ереване, разжигать страсти людей, доводить дело до кровопролития, а потом отсиживаться «в подполье», когда спецслужбы РА прекрасно знали о месте его пребывания. Да, да, уважаемый читатель, прекрасно знали и не брали, чтобы поподробнее узнать о его связях на свободе. Но это тема другого анализа. Не сомневаюсь, что Н. Пашинян в настоящее время не раз задумывается о подлинных причинах его беспрепятственного восшествия на вершину власти в Армении. О беспрекословной поддержке его персоны со стороны тоталитарной религиозной секты «Слово жизни», множества соросовских прихлебателей, ну и, конечно, представителей ЛГБТ-сообщества. А сейчас он тянет время. Чего только стоят его откровения на совместном заседании Совбезов. «Считаю нужным подчеркнуть, что подготовка народов к миру не может быть отдельной задачей одного из вовлеченных в переговорный процесс правительств, это – совместная работа. Я имею в виду, к примеру, что подготовка азербайджанского общества к миру должна происходить с участием властей не только Азербайджана, но и Армении», – цитирует премьера пресс-служба правительства Армении. Дальше – больше: «... я готов продолжить диалог не только с президентом, но и с народом Азербайджана, поскольку убежден в том, что азербайджанский народ настолько же миролюбив, как и народы Армении и Арцаха». Эти

бредовые мысли Н. Пашиняна говорят о его подлинной оторванности от знания азербайджанских реалий или же о проявлении куда более опасного синдрома, синдрома о своей исключительности. Что это – примитивное политическое трюкачество или же болезненная самоуверенность в своем мессианстве? Ведь сумел же он своими популистскими речами оболванить тысячи и тысячи обезволенных нуждой граждан Армении. А может, из известного центра силы мировой политики его заверили в поддержке соросовских грантоедов, которые если в Азербайджане и имеются, то они бессильны что-либо сделать против апшеронского султана. Н. Пашинян не может не понимать, что его время на посту премьер-министра уже вышло, а его тщетные потуги в третий раз (второй раз – это выборы в Национальное Собрание РА VII созыва) ввести в заблуждение граждан Армении, в том числе и обманутых его «чарами», уже не удастся. Уже для любого мало-мальски мыслящего человека становится очевидным – все действия Н. Пашиняна по сути направлены на торпедирование переговорного процесса по Карабахскому урегулированию, тем самым на создание благоприятного информационного фона для азербайджанской стороны по развязыванию новой войны против Республики Арцах. А может быть именно в этом и заключалась его изначальная миссия по реализации политического завещания экс-посла США в РА Ричарда Миллса, затем лоббируемая советником президента США по безопасности Джоном Болтоном в ходе пребывания 25–26 октября 2018 г. в Ереване. Повторюсь, речь об урегулировании конфликта согласно формуле «территории (земли) – в обмен на мир» без определения будущего статуса Республики Арцах.

Подытоживая вышеприведенное, можно констатировать, что Н. Пашинян в должности премьер-министра становится реальной угрозой, вызовом национальной безопасности Республики Армения. Его незамедлительная добровольная отставка от должности премьер-министра Армении, незамедлительное формирование объединенного комитета вооруженных сил Армении и Арцаха – первый шаг на пути предотвращения войны.

Уважаемый читатель, не хотелось бы выглядеть в ваших глазах необъективным, замечаящим «бревно» лишь в чужом глазу. Увы, с сожалением вынужден признать, что маразм крепчает и в головах нынешних властей Армении. Так что призыв – армяне, будьте бдительны! – становится вдвойне актуальным.

Вместо послесловия. Завершая статью, испытал какое-то ощущение недосказанности. Речь об итогах второго заседания «Лазаревского клуба». С сожалением приходится констатировать, что официальные СМИ Армении так и умолчали это столь полезное мероприятие, чего не

скажешь о азербайджанских масс-медиа. Думая об этом, я невольно вспомнил интервью председателя оргкомитета по созданию «Лазаревского клуба», испытанного друга Армении и Арцаха, известного и уважаемого политика и общественного деятеля России и Армении, да-да Армении, Константина Федоровича Затулина. Открывая второе заседание «Лазаревского клуба», Константин Федорович сказал: «Для нас Армения важна не только как государство-союзник, для нас важно подтвердить основы своих отношений с армянским народом, который, конечно, первичен по отношению к своему государству и важен для нас в России как исторический друг и соотечественник на протяжении столетий. К нам приехала представительная делегация участников из Армении. Но я, не скрою, сожалею, что официальные структуры правительства Армении воздержались от того, чтобы кого-либо сюда прислать. Мы собрали в этом зале ведущих российских экономистов и представителей тех российских корпораций, которые работают в Армении. Мне кажется, что новым властям Армении было бы не лишним здесь с ними еще раз встретиться и еще раз обсудить экономические проблемы. Тем более что проблемы, как мы знаем, периодически возникают».

Уважаемый Константин Федорович, непосредственно обращаюсь к Вам со встречным вопросом: а кого могли прислать официальные структуры правительства Армении в Москву? Высокопоставленных русофобов или откровенных соросовских прихлебателей? Так других там и вовсе нет. Замечу, что, выразив свое откровенное сожаление из-за отсутствия на втором заседании «Лазаревского клуба» представителей правительства РА, К. Затулин опосредованно в очередной раз уличил последних в двуличии, а именно: сейчас они на словах за армяно-российское сотрудничество, а на самом деле с точностью до наоборот. Не зря же столько денег и средств было потрачено для государственного переворота и приведения к власти сих граждан. Скажу больше: чтобы как-то оправдать свое отсутствие на этом мероприятии, они начнут исподволь клеветническую кампанию против каждого из нас, а в первую очередь против организаторов «Лазаревского клуба». А дальше сами будут «судить» – где правда, а где ложь. Словом, и нам, членам «Лазаревского клуба», следует быть бдительными.

Маразм крепчает, а враг не дремлет.

АРТАШЕС ГЕГАМЯН

Председатель партии «Национальное Единение»

ՀԱՅԵՐ, ԶԳՈՆ ԵՂԵՔ

ԱՐՐԲԵԶԱՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՖՈՆ Է ՍՏԵՂԾՈՒՄ ԱՐՑԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԱՆՁԱԶԵՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեկ շաբաթ է անցել հայ-ռուսական «Լազարյան ակումբի» երկրորդ նիստի աշխատանքի ավարտից հետո: Իմաստավորելով նիստի արդյունքները՝ ավելի ու ավելի ես համոզվում Ռուսաստանի և Հայաստանի քաղաքական ու հասարակական գործիչների, փորձագետների, գործարարների և լրագրողների բաց երկխոսության ու բանավեճերի նման հարթակի պահանջվածության մեջ:

Արդեն կարելի է համոզված փաստել, որ կայացած քննարկումը հնարավորություն ընձեռեց գնահատել Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական համագործակցության մակարդակն ու հեռանկարները՝ հաշվի առնելով քաղաքատնտեսական նոր իրողությունները, ինչպես նաև մեր երկրների համագործակցության աշխարհաքաղաքական կողմերը: Կարծում եմ, չափազանցություն չի լինի ասել, որ «Լազարյան ակումբի» երկրորդ նիստի ծրագիրը և տեղի ունեցած կարծիքների փոխանակումը ինքնատիպ հաստատումն էին Ռուսաստանի ու Հայաստանի գծի օբյեկտիվության և հրատապության՝ ուղղված ռուս-հայկական ռազմավարական գործընկերության հետագա խորացմանը՝ Եվրասիական տնտեսական միության ու ՀԱՊԿ շրջանակներում: Եվ դա իր արտացոլումն է գտել նիստի կարգախոսում. «Տնտեսություն, ներդրումներ, ինտեգրացիա. Ռուսաստանի և Հայաստանի տնտեսական կապերի զարգացման հեռանկարներ»: Չարժե կասկածել նաև, որ ամենամոտ առաջիկայում «Լազարյան ակումբի» անդամները և երկրորդ նիստին հրավիրված բանավեճերի մասնակիցները կընդհանրացնեն կարծիքների փոխանակման արդյունքները ու կմշակեն համատեղ երաշխավորություններ մեր երկրների գործադիր իշխանությունների համար: Երաշխավորություններ, որոնք ուղղված կլինեն համագործակցության մակարդակի հետագա բարձրացմանը՝ հաշվի առնելով արդի աշխարհաքաղաքական մարտահրավերները, որոնք ստանում են մեր պետությունների անվտանգությանն սպառնացող բնույթ:

Եվ ահա, «Լազարյան ակումբի» ստեղծարար աշխատանքի ֆոնին մտահոգություն և տարակուսանք է առաջացնում Ադրբեջանի ղեկավար

րության արձագանքը ոչ միայն «Լազարյան ակումբի» աշխատանքին, այլև հենց նրա գոյության փաստին:

Մինչ ադրբեջանական լրատվամիջոցների առանձին, բայց միանգամայն բնութագրական ու կրկնվող արձագանքները մեջբերելը՝ նշենք, որ դրանք միավորում են անթաքույց շփոթությունը, լիակատար մոլորվածությունը և բացարձակ անհասկացողությունը՝ պայմանավորված «Լազարյան ակումբի» գործունեությամբ: Այսպես, երկրորդ նիստի սկսվելու նախօրեին Ադրբեջանի ոչ անհայտ, կառավարամետ *aze.az* ինտերնետ պորտալը բավական ինքնատիպ կերպով «օրհնեց» նրա աշխատանքը «Լազարյան ակումբը» դատապարտված է ձախողման» վերնագրով հոդվածով (<http://aze.az/lazarevskiy-klub-obrechen-na-proval.html>): Հարգելի ընթերցողը միանգամայն տեղին կարող է հարց տալ. իսկ ինչո՞ւ «Լազարյան ակումբի» աշխատանքի վերաբերյալ ադրբեջանական լրատվամիջոցներում տեղ գտած բազմաթիվ հոդվածներից հիշատակեցի հենց այս հրապարակումը: Եվ նա իրավացի կլինի, բայց այս հարցի պատասխանը պարզից էլ պարզ է: Պարզվում է՝ ափշերոնյան սուլթանությունում (որը նաև Ադրբեջան է կոչվում) կան ինտերնետ պորտալներ, որոնք չափից ավելի են անհանգստանում Հայաստանի համար: Որպես ասվածի հաստատում բավական է մեջբերել, օրինակ, *aze.az*-ի որոշ սրտացավ տվայտանքներ այն մասին, թե՝ «Հարկ է նշել, որ մինչև ակումբի երկրորդ նիստը ռուսական պետական լրատվամիջոցներն իրականացնում էին հակահայկական քարոզչություն (տե՛ս, է, ինչ խայտառակություն, հետոն էլ՝ ինչ սրտացավություն, և որ գլխավորն է՝ ում կողմից է այն արտահայտվում – Ա. Գ.): Իսկ պետդումայի մի ամբողջ շարք պատգամավորներ Բաքվում մասնակցել են հակահայկական երթին (համաձայնեք, բավական հատկանշական է, որ այս հրապարակման հեղինակներն իրենք են որոշում ս. թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած երթի իսկական էությունը, որը, իբր, անցկացվել էր ի հիշատակ 1992թ. փետրվարի 26-ին Խոջալուի ողբերգության զոհերի – Ա. Գ.): Նրանցից մեկն այդ ակումբի անդամ է: Այնինչ, ռուսաստանյան պետական լրատվամիջոցների եթերում ոչ մի հակաադրբեջանական խոսք չի հնչում (հավանաբար, մեծ է եղել ադրբեջանցի քաղաքագետների հիասթափությունը, երբ ռուսական ԶԼՄ-ներում 1992թ. Խոջալուի ողբերգությանը, որի մեղքը լիովին ընկնում է Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի խղճին, վերաբերվեցին պատկառելի պարբերականներին հարիր ձևով՝ հավատարիմ մնացին բոլորի կողմից ընդունված բարոյական սկզբունքներին – Ա. Գ.): Նշենք, որ հայերն իրենք են խոստովանում, որ Լազարյան ակումբը, ինչպես և ցանկացած ռուսական նախաձեռնություն, դատապարտված է ձախողման»: Այս անվերապահ դատավճռի եզրափակիչ նախադասությունը երկակի զգացումներ է առաջացնում: Մի կողմից՝ գոհացնում է այն, որ «Լազարյան ակումբի» հակառակորդ են գրվել ընդգծված հակառուսական հովերով ու իրենց արտահայտած մտքերի ողորմելիությամբ աչքի ընկնող առանձնյակներ: Մյուս կողմից՝ նրանք չեն թաքցնում իրենց կապերն անհասկանալի է, թե որ հա-

Ա. զԵՆԱՄՅԱՆ

սարակության թափափուկների հետ, որոնք իրենց ներկայացնում են որպես «հայեր, որոնք իրենք են խոստովանում, որ «Լազարյան ակումբը», ինչպես և ռուսական ցանկացած նախաձեռնություն, դատապարտված է ծախողման»։ Կարելի էր սահմանափակվել ադրբեջանական այդ ինտերնետ պորտալում հրապարակված վերը նշված հղումով, քանի որ այդ հրապարակումն առավել ամբողջական է բնութագրում «Լազարյան ակումբի» նպատակները և խնդիրները չհասկանալու վայրի մակարդակը։ Հոգվածի հեղինակները չեն հարցնում ակումբի անդամների առաջին վստահ քայլերի դրդիչ մոտիվների մասին՝ առաջադրված խնդիրների կատարման ճանապարհին, ինչն օրեցօր բարձրացնում է այդ կազմակերպության հեղինակությունը։ Սակայն վիատեցնող է այն, որ իրողությունների չընկալման նման մակարդակի, ադրբեջանական լրատվամիջոցներից բացի, իջել են նաև ափշերոնյան սուլթանության պաշտոնական դեմքերը, ինչի հաստատումն է դարձել Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, որում, մասնավորապես, ասվում է. «ԶԼՄ-ներում տարածված տեղեկատվության համաձայն՝ ընթացիկ տարվա մարտի 5–6-ին Մոսկվայում տեղի է ունեցել ռուս-հայկական «Լազարյան ակումբի» երկրորդ նիստը։ Մասնակցել են Ռուսաստանի Դաշնության գործադիր և օրենսդիր իշխանությունների պաշտոնական ներկայացուցիչները՝ հանձինս ՌԴ նախագահի խորհրդական Ս.Գլազևի, որը նիստի մասնակիցներին է փոխանցել Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի ողջույնը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի ԱՊՀ գործերի, եվրասիական ինտեգրման և համերկրացիների հետ կապերի կոմիտեի առաջին փոխնախագահ Կ. Զատուլինի։ Կցանկանայինք հիշեցնել, որ վերոնշյալ ակումբի առաջին նիստին Հայաստանի կողմից Ադրբեջանի օկուպացված տարածքներում ստեղծված անջատողական ռեժիմի ներկայացուցիչների հրավերի, ինչպես նաև առաջին նիստի շրջանակում հնչեցված արտահայտությունների հետ կապված, որոնք բացահայտ ոտնահարում են Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, Ադրբեջանական Հանրապետության ԱԳՆ-ն իր դժգոհությունը և գայրույթն է հայտնել» (<http://www.trend.az/azerbaijan/Karabakh/3029952.html>, «Ադրբեջանի ԱԳՆ-ն դժգոհություն է հայտնել «Լազարյան ակումբի» նիստին անջատողական ռեժիմի ներկայացուցիչներին հրավիրելու հետ կապված», 7 մարտի 2019թ., 16:38):

Այս հայտարարության առաջին ընկալումը զարմանքի զգացողություն է ափշերոնյան սուլթանության ԱԳՆ-ի՝ «Լազարյան ակումբի» առաջին նիստի արդյունքներին այսքան «կայծակնային» արձագանքից, այո, այո, հարգելի ընթերցող, ես չսխալվեցի, առաջին նիստի, որը տեղի է ունեցել 2018 թվականի նոյեմբերի 30 – դեկտեմբերի 1-ին Երևանում։ Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական փաստաթղթում տրվում է հենց այս միջոցառման գնահատականը։ Իսկ ինչ վերաբերում է երկրորդ նիստի գնահատականին, ապա ափշերոնյան դիվանագետները, ըստ էության, ասելու բան չունեն, քանի որ այս հաշվով դեռ որևէ հերյուրանք չեն մտածել։ Իսկ գուցե նրանց

դավաճանել են իրենց իսկ կանխակալ վարձկանները հայկական ազգանուններով, որոնք ուշացել են գրապարտող «մերկացումներ» անել «Լազարյան ակումբի» անդամների հասցեին: Ի դեպ, ինձ համար պարզ է, թե ինչու պաշտոնական Բաքվին 3 ամիս պետք եղավ, որպեսզի հասկանա և գնահատի «վերոնշյալ ակումբի առաջին նիստի» արդյունքները, իսկ հետո ավելի հետաքրքիր է՝ «արտահայտի իր դժգոհությունն ու զայրույթը ՌԴ ԱԳՆ-ին»: Կարելի էր այլ մեջբերումներ էլ կատարել ավիչերոնյան քաղաքական գերատեսչության հայտարարությունից, բայց դրա կարիքը չկա, և ահա թե ինչու: «Լազարյան ակումբի» երկրորդ նիստի սկսվելուց տասներկու օր առաջ՝ ս.թ. փետրվարի 22-ին, ՌԴ ԱԳՆ ձեպագրույցում ադրբեջանցի լրագրողը հարցրեց պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովային Մոսկվայում ս.թ. մարտի 5–6-ին «Լազարյան ակումբի» երկրորդ նիստի անցկացման մասին: Նրա խոսքով՝ այդ միջոցառմանը ենթադրվում է Արցախի Հանրապետության ղեկավարների մասնակցությունը: Ընդ որում՝ ադրբեջանցի լրագրողն ուզում էր այդ հարցը կապել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբում Ռուսաստանի համանախագահության հետ: Մինչև վերջ հարցը չլսելով՝ Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչն ընդհատեց նրան. «Սպասեք: Ի՞նչ կապ ունի այստեղ Ռուսաստանի համանախագահությունը, այդ ֆունկցիան ու այդ ֆորումը: Ինչպե՞ս եք հարաբերակցում դա ձեր հարցում: Դուք դա հարաբերակցում եք այն համատեքստում, որ Մոսկվան Ռուսաստանի մայրաքաղաքն է: Այ, տեսնո՞ւմ եք, թե ինչպես եք ինքներդ ձեր հարցում միավորում բաներ, որոնք չպետք է միացնել: Ընդ որում, Մոսկվայում, ինչպես ճիշտ նկատեցիք, ամեն օր հարյուրավոր ֆորումներ են անցկացվում տարբեր թեմաներով, որոնք իրականացնում է քաղաքացիական հասարակությունը (որտեղի՞ց պետք է սուլթանության լրագրողն իմանար, թե ինչ է քաղաքացիական հասարակությունը, որն ազատ է անցկացնել նման միջոցառումներ, կամ թե ինչ են ոչկառավարական կազմակերպությունները – Ա. Գ.): Ես կարծում եմ, որ խոսքը, հավանաբար, դրանցից մեկի մասին է: Եթե դուք տեղեկություն ունեք, որ դրանում ինչ-որ կերպ մասնակցում են պաշտոնական անձինք, տվեք ինձ, խնդրեմ, այդ տեղեկությունը, ես կճշտեմ: Ես նման տեղեկություն չունեմ»: Հաճելի է փաստել, որ Ադրբեջանի ԱԳՆ-ն բարեխղճորեն և բավական օպերատիվորեն կատարեց Մարիա Զախարովայի հանձնարարությունը և ս. թ. մարտի 7-ին գեկուցեց. «... տեղեկացնում ենք ռուսական կողմին, որ մարտի 5-ի վերոնշյալ նիստում ՌԴ պետական մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցության կոնկրետ տվյալների առկայությունը, որտեղ նրանք ներկա էին Ադրբեջանի օկուպացված տարածքներում ստեղծված անօրինական ռեժիմի ներկայացուցիչների կողքին, կոպտաբար հակասում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրի պարտավորություններին ...»: Պարզվում է, որ «Լազարյան ակումբի» երկրորդ նիստը, որը բաց ռեժիմով անցկացվում էր Ռուսաստանի ու Հայաստանի առաջատար լրատվամիջոցների մոտ հիսուն լրագրողի

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

մասնակցությամբ, ադրբեջանական ԱԳՆ-ի կողմից ընկալվեց որպես մի ինչ-որ փակ, խորհրդավոր միջոցառում, որն անասելի կոնսպիրոլոգիական ջանքեր պահանջեց՝ «ՌԴ պետական մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցության մասին կոնկրետ տվյալների» բացահայտման նպատակով: Ինչպես անենք, որ որքան հնարավոր է մեղմ բնութագրենք այս անհեթեթությունը: Մի խոսքով՝ Ղարաբաղյան հակամարտության չկարգավորվածության պայմաններում ադրբեջանական իշխանությունների նյարդերն ակնհայտորեն տեղի են տալիս, իսկ մարագմը խորանում է: Ուստի, հայե՛ր, զգո՛ն եղեք, որովհետև դա տեղի է ունենում բնավ ոչ պատահաբար, այլ հանդիսանում է Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ նոր պատերազմի սանձազերծման տեղեկատվական ֆոնի պատրաստման պարտադիր ատրիբուտ: Կարծում եմ, որ կասկածներն իմ կողմից, առաջին հայացքից, այսքան անսպասելի եզրահանգման վերաբերյալ լիովին կցրվեն այն փաստերի հետ ծանոթանալով, որոնք կներկայացնեն ստորև: Ընդ որում՝ նկատենք, որ կարելի էր տասնյակ այլ մեջբերումներ կատարել ադրբեջանական լրատվամիջոցներից, որոնցում ցասումով դատապարտվում է Մոսկվայում «Լազարյան ակումբի» նիստի անցկացման փաստը: Պատկերն ամբողջացնելու համար նշենք, որ ադրբեջանական կողմի ցասման եզրափակիչ ակորդը ս. թ. մարտի 7-ին Բաքվում ՌԴ դեսպան Միխայիլ Բոչարնիկովի հետ ափշերոնյան սուլթանության արտաքին գործերի նախարար Է. Մամեդյարովի հանդիպման մասին տեղեկությունն էր: Ի՞նչ հետաքրքիր բան գրեցին ադրբեջանական լրատվամիջոցներն այդ հանդիպման մասին. «Նախարար Է. Մամեդյարովն ասաց, որ Ադրբեջանի և Ռուսաստանի հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ և, ընդգծելով Ռուսաստանի դերը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի՝ հայ-ադրբեջանական ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, հայտնեց ադրբեջանական կողմի բողոքը մարտի 5 – 6-ին ռուս-հայկական «Լազարյան ակումբի» հերթական նիստին ՌԴ պետական պաշտոնական անձանց մասնակցության առիթով, որին ներկա էին Ադրբեջանի օկուպացված տարածքներում ստեղծված անջատողական ռեժիմի ներկայացուցիչներ»:

Կարծում եմ, որ այստեղ հարկ է կանգ առնել, քանի որ «Լազարյան ակումբի» մոսկովյան նիստի մասին տեղեկատվության հեղեղատիպ հոսքի հետևում են մնում ոչ պակաս կարևոր իրադարձություններ, որոնք ուղղակիորեն առնչվում են ոչ միայն Հայաստանի, այլև մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի շահերին: Մինչ Հարավային Կովկասի տարածաշրջանում վերջին ամիսների առավել նշանակալի իրադարձությունները ներկայացնելը՝ չեմ կարող զսպել գայթակղությունս և չներկայացնել ևս մեկ օրինակ՝ հիմնավորելու համար ափշերոնյան իշխանությունների խորացող մարագմի մասին իմ գնահատականը: Այսպես, ս. թ. մարտի 4-ին կառավարամետ Minval.az ինտերնետ պորտալը հրապարակեց հոդված «Իրան. ադրբեջանցիների քաջությունը և Թեհրանի դավաճանական քաղաքակա-

նությունը» վերնագրով, ընդ որում՝ վերնագիրն ուղեկցելով «Ադրբեջանցիները բողոքում են ԻԻՀ իշխանությունների դավաճանական քաղաքականության դեմ» ենթավերնագրով (<https://minval.az/news/123868068>): Այս սկանդալային հրապարակման մեջ կարդում ենք. «ԻԻՀ (Իրանի Իսլամական Հանրապետություն – Ա. Գ.) իշխանությունները, որոնք սահմանափակվեցին թեթև «այ-այ-այ»-ով հայ ազգայնականների հասցեին, որոնք Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ (ս. թ. փետրվարի 27 – 28-ին Իրանի Իսլամական Հանրապետություն Ն. Փաշինյանի պաշտոնական այցի շրջանակում – Ա. Գ.) «Ղարաբաղը Հայաստան է, և վե՛րջ» պաստառ ծածանեցին, անգամ չմտածեցին էլ նրանց պատասխանատվության կանչել, այլ Ադրբեջանին Ղարաբաղի պատկանելության մասին հիշատակման ժամանակ անմիջապես պատասխանեցին բռնություններով: Թավրիզում մարզադաշտից դուրս գալիս ոստիկանությունը կալանեց մեր 28 հայրենակցի (ս. թ. մարտի 1-ին Թավրիզի մարզադաշտում ֆուտբոլի խաղի ժամանակ թիմերից մեկի երկրպագուները վանկարկում էին «Ղարաբաղը մերն է և մերն է լինելու», բարձրացրին Ադրբեջանի դրոշը և այրեցին Հայաստանինը – Ա. Գ.), այդ թվում հայտնի ադրբեջանցի ազգային-մշակութային ակտիվիստ Յուսիֆ Սալահշուրին (հատկանշական է, որ հոդվածի հեղինակը հատուկ ընդգծում է՝ «մշակութային», քանի որ Թոֆիգխանում Ֆազիլ կըզըն, բավական տեղեկացված լրագրող լինելով, իրեն հաշիվ տալիս է, որ ափշերոնյան սուլթանությունում «ազգայինը», որպես կանոն, հեռու է «մշակութայինից» – Ա. Գ.): Կալանվածներից ոմանք ծեծի են ենթարկվել բանտում»: Եվ ահա, «ազգային-մշակութային» ակտիվիստի ադրբեջանցի եղբայրակիցները ս. թ. մարտի 10-ին Բաքվում Իրանի դեսպանության առջև վանկարկում էին կարգախոսներ, որ Ղարաբաղը պետք է վերադարձնել ցանկացած ճանապարհով և որ անհրաժեշտ է ընդլայնել Ադրբեջանի սահմաններն ընդհուպ մինչև Թավրիզ: Ընդ որում՝ նկատենք, որ պաստառների մեծ մասը գրված էր անգլերեն (հավանաբար, այս արարի կազմակերպիչները հետևում էին ադրբեջանական հյուրընկալությանը և հաշվի առնելով այն, որ հանրահավաքը հաշվարկված էր բնավ ոչ ԻԻՀ դեսպանության դիվանագետների, այլ նրանց ամերիկացի գործընկերների համար, վերջիններիս համար հեշտացրել էին ֆարսիից իրենց կարգախոսների անգլերեն թարգմանության հոգսը – Ա. Գ.): Նշենք, որ կարգախոսների բովանդակությունը հանգեցվում էր »South Azerbaijan Is NOT IRAN«-ին, այսինքն՝ «Հարավային Ադրբեջանը Իրան չէ»: Այսպիսով, իրանցի իրավապահ մարմինների դաստիարակչական աշխատանքը Թավրիզի բանտում, դատելով ըստ ամենայնի՝ Իրանի ադրբեջանաբնակ շրջաններում թունդ անջատողականության կասեցման առավել գործուն միջոցն է: Նշենք, որ «ազգային-մշակութային» ակտիվիստների համար իրենց անվանած Հարավային Ադրբեջանը հնագույն Ատրպատականն է, որն այդպես է կոչվել Ատրոպատեսի անունով, որին Ալեքսանդր Մակեդոնացին մ. թ. ա. 328թ. նշանակեց Մարաստանի սատրապ: Բարբաջելով Հյուսիսային Իրանի տարածքների հանդեպ իրենց հավակնությունների մասին՝

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

ադրբեջանական կողմը նորից հիմնավորում է իրեն տրված ախտորոշման ճշմարտացիությունը՝ մարագմը խորանում է: Բա լինելու բա՞ն է՝ ադրբեջանական պետությունը, որը կազմավորվել է լոկ 1918թ., հավակնում է իր «պատմական հողերին», որոնք հազարամյակներ պատկանել են Իրանին, Պարսկական կայսրությանը:

Սակայն ադրբեջանական անջատողականների լկտիությունն այլ բանում է. նրանք շահարկում են ԱՄՆ-ի և Իրանի խիստ լարված հարաբերությունները՝ այն հույսով, որ Իրանի համար այդ հակամարտության ծայրահեղ անբարենպաստ հանգուցալուծման պարագայում կկարողանան ուխտադրժորեն զավթել Իրանի հյուսիսային տարածքները: Հանուն արդարության նշենք՝ հիմնականում էթնիկ ադրբեջանցիներով բնակեցված:

Վերոնշյալին պետք է հավելել նաև ս. թ. մարտի 9-ին տարածված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունը (այսուհետ՝ Հայտարարություն), որը, չնայած, ըստ էության, կրկնում է ավելի վաղ նրանց ներկայացրած սկզբունքները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ, արտաքին քաղաքական նոր իրողությունների պայմաններում, որոնց մասին վերն ասվեց, ինչպես նաև Հայաստանում 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումից հետո ներքաղաքական նոր իրավիճակի բերումով, պահանջում է խոր իմաստավորում: ԱՄՆ և Իրանի սրված հարաբերությունները, ադրբեջանական կողմի ագրեսիվ հռետորաբանությունը Իրանի հասցեին (առայժմ միայն ԶԼՄ-ներում), ԱՄՆ ոչ երկիմաստ մոտեցումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը՝ Միլս – Բոլթոնի առաջարկած «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով, ինչպես նաև Ն. Փաշինյանի անհաշտ համառությունը, որն ավելի լավ կիրառության է արժանի, բանակցային գործընթացին արցախյան կողմի պարտադիր մասնակցության մասին, միանգամայն նոր իրավիճակ են ստեղծում մեր տարածաշրջանում: Նախ՝ Իրանի համար գերկարևոր խնդիր է դառնում անվտանգության ապահովումը ԻԻՀ-ի և Արցախի Հանրապետության անվտանգության գոտու միջև հարյուր կիլոմետրանոց սահմանին, որը վերահսկվում է նրա զինված ուժերի կողմից: Հայտարարության դրույթներից մեկն արդեն՝ «և անվտանգության միջազգային երաշխիքները, որոնք կներառեն խաղաղարար գործողություն», ստիպում է լրջորեն մտածել: Իսկ ո՞ր երկրներն են իրականացնելու խաղաղարար գործողությունը: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Այսինքն՝ ԱՄՆ-ն ու Ֆրանսիան կարող են «անվտանգության միջազգային երաշխիքներ տալ» ՆԱՏՕ-ի ուժերի գործադրմամբ: Այդ դեպքում ինչպե՞ս է իրականացվելու ՆԱՏՕ-ի ուժերի փոխգործակցությունը ռուս խաղաղարարների հետ: Մի՞թե նույնքան վտանգավոր (ԱՄՆ ղեկավարությամբ կռավիցիոն ուժերի գործողությունների անկանխատեսելիության հետևանքով), որքան տեղի է ունենում Սիրիայում: Էլ չեն ասում Իրանի ղեկավարության հնարավոր արձագանքի մասին՝ իրադարձությունների զարգացման նման ընթացքի դեպքում: Ավաղ, իրադարձությունների տրամաբանությ-

յունը, որոնք տեղի են ունենում վերջին օրերին, վկայում են մեր տարածաշրջանում իրավիճակի զարգացման նման սցենարի հնարավորության մասին: Ի՞նչ նկատի ունեն: Նշենք, որ Ն. Փաշինյանի և ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության Գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի՝ ս. թ. մարտի 5-ի բանակցությունների ընթացքում վերջինը հանդես է եկել այն բանի օգտին, որ Հայաստանի վարչապետը մասնակցի ԵԱՀԿ ՄԽ հովանու ներքո անցկացվող բանակցություններին՝ առանց նախապայմանների (ի պատասխան այն բանի, որ Ն. Փաշինյանն այդ ժամանակ՝ մարտի 5-ին, Բրյուսելում, լրագրողների հետ զրույցում նշել էր Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ բանակցությունների նոր ձևաչափի անհրաժեշտության մասին): Ավելին, ի պատասխան այդ առաջարկության՝ ԵՄ ընդլայնման և հարևանության քաղաքականության հանձնակատար Յոհաննես Հանը Ն. Փաշինյանի հետ համատեղ մամուլի ասուլիսում ուղղակի հայտարարել էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ բանակցությունների գործող ձևաչափի պահպանման անհրաժեշտության մասին: «Երբեմն խոսքը մեր աջակցության մասին է, ես կարծում եմ, որ ավելի լավ է պահպանել ներկայիս ձևաչափը: Պետք չէ փորձել ստեղծել ինչ-որ նոր բան՝ հանուն նոր լինելու: Եվ առավել ընդհանուր առումով խոսքը վստահության միջոցների մասին է», – ասել է Յ. Հանը: Հարկ է նշել, որ բանակցությունների ձևաչափի պահպանման անհրաժեշտության մասին կոնսենսուս է ստեղծվել ԵԱՀԿ ՄԽ համանախագահների միջև:

Այս պայմաններում, ս. թ. մարտի 12-ին Հայաստանի և Արցախի Հանրապետությունների Անվտանգության խորհուրդների համատեղ նիստի օրակարգի քննարկումն սկսելուց առաջ Ն. Փաշինյանը որերորդ անգամ հայտարարեց. «Գլխավոր հարցը հետևյալն է. ո՞վ է ներկայացնելու արցախցիներին կամ, ինչպես ասում են որոշ դեպքերում՝ Ղարաբաղի հայերին բանակցային գործընթացում: Խնդիրն այն է, որ այսօր բանակցային սեղանին չկա Արցախի ժողովրդի լիազոր լեգիտիմ ներկայացուցիչ կամ, ինչպես նախընտրում են ասել մեր գործընկերներից ոմանք՝ չկա սուբյեկտ, որն ունի վստահության քվե, լիազորություններ՝ ներկայացնելու Ղարաբաղի հայերին»: Համոզված եմ, որ «ՀՀ ժողվարչապետը» խիստ արխայիկ և գեղջկավարի խորամանկում է, պարզ ասած՝ թոզ է փչում: Մի՞թե Ն. Փաշինյանը հարց չի տալիս, թե որքանով է ինքը լեգիտիմ, երբ Հայաստանի՝ ծայնի իրավունք ունեցող քաղաքացիների ավելի քան կեսը չի մասնակցել ՀՀ ԱԺ ընտրություններին, ուստի նա, լինելով խորհրդարանական մեծամասնության առաջադրած թեկնածուն, բնավ չի հանդիսանում ՀՀ համաժողովրդական ընտրված վարչապետ: Ն. Փաշինյանը պարզապես խուսափում է պատասխանատվությունից: Չէ՞ որ այս ճակատագրական օրերին Հայաստանի ու Արցախի իսկական հայրենասերն ինքը կնախաձեռներ Անվտանգության խորհուրդների համատեղ նիստ, որի օրակարգում կլինե՞ր երկու հարց. Ն. Փաշինյանին օժտել լիազորություններով՝ ղարաբաղյան կարգավորման

բանակցությունների գործընթացում ներկայացնելու Արցախի Հանրապետությունը: Բնականաբար, այս որոշումը պետք է ձևակերպվեր միջազգային իրավունքի դրույթներին համապատասխան: Եվ երկրորդ հարցը՝ «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության միացյալ կոմիտեի ստեղծման մասին»: Բայց չէ՛, նման պատասխանատվություն նա պատրաստ չէ ստանձնել ոչ բարոյապես, ոչ հոգեբանորեն: Չէ՞ որ դա Երևանում հանրահավաքներ անելը չէ, մարդկանց կրքերը բորբոքելը չէ, բանը արյունահեղության հասցնելը չէ, իսկ հետո էլ «ընդհատակում» նստելը չէ, երբ ՀՀ հատուկ ծառայությունները հիանալի գիտեին նրա գտնվելու վայրի մասին: Այո, այո, հարգելի ընթերցող, հիանալի գիտեին ու չէին կալանում, որպեսզի ավելի մանրամասն իմանային նրա կապերի մասին ազատության մեջ: Բայց սա այլ վերլուծության թեմա է: Չեմ կասկածում, որ Ն. Փաշինյանը ներկայում շատ է մտածում Հայաստանում իշխանության բարձունքում անխոչընդոտ հայտնվելու իսկական պատճառների մասին: «Կյանքի խոսքը» տոտալիտար կրոնական աղանդի, սորոսյան լափակերների բազմության և, իհարկե, ԼԳԲՏ հանրույթի ներկայացուցիչների կողմից իր անձի անշեղ աջակցության մասին: Իսկ հիմա նա ժամանակ է ձգում: Ի՞նչ ասես արժեն նրա հայտնությունները Անվտանգության խորհուրդների համատեղ նիստում. «Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ ժողովուրդների պատրաստումը խաղաղությանը չի կարող բանակցային գործընթացում ներգրավված կառավարություններից մեկի առանձին խնդիրը լինել, դա համատեղ աշխատանք է: Ես նկատի ունեմ, օրինակ, որ ադրբեջանական հասարակությանը խաղաղության պատրաստելը պետք է տեղի ունենա ոչ միայն Ադրբեջանի, այլև Հայաստանի իշխանությունների մասնակցությամբ», – վարչապետին մեջբերում է Հայաստանի կառավարության մամուլի ծառայությունը: Հետո ավելի հետաքրքիր է. «... ես պատրաստ եմ շարունակել երկխոսությունը ոչ միայն նախագահի, այլև Ադրբեջանի ժողովրդի հետ, քանի որ համոզված եմ նրանում, որ ադրբեջանցի ժողովուրդը նույնքան խաղաղասեր է, որքան և Հայաստանի ու Արցախի ժողովուրդները»: Ն. Փաշինյանի այս զառանցական մտքերը վկայում են ադրբեջանական իրողությունների իմացությունից նրա կտրվածության կամ էլ շատ ավելի վտանգավոր ախտանշանի դրսևորման մասին՝ իր բացառիկության մասին ախտանշանի: Ի՞նչ է սա՝ պարզունակ քաղաքական հնա՞րք, թե՞ իր մեսիականության հիվանդագին ինքնավստահություն: Չէ՞ որ նա կարողացավ ամբոխահաճո խոսքերով հիմարեցնել Հայաստանի՝ կարիքից կամազուրկ դարձած հազարավոր քաղաքացիների: Իսկ գուցե համաշխարհային քաղաքականության հայտնի կենտրոնից նրան հավաստիացրել են սորոսյան գրանտակերների աջակցության մասին, որոնք եթե Ադրբեջանում կան էլ, ապա անգոր են որևէ բան անել ափշերոնյան սուլթանի դեմ: Ն. Փաշինյանը չի կարող չհասկանալ, որ վարչապետի պաշտոնին գտնվելու իր ժամանակն արդեն սպառվել է, իսկ նրա ապարդյուն ջանքերը՝ երրորդ անգամ

(երկրորդ անգամ՝ ՀՀ VII գումարման Ազգային ժողովի ընտրություններն էին) մոլորության մեջ գցել Հայաստանի քաղաքացիներին, այդ թվում և նրա «ոյութանքներից» խաբված, արդեն չեն հաջողվի: Արդեն քիչ թե շատ մտածող մարդու համար էլ է ակնհայտ դառնում՝ Ն. Փաշինյանի բոլոր գործողությունները, ըստ էության, ուղղված են Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի արգելակմանը, դրանով իսկ՝ ադրբեջանական կողմի համար բարենպաստ տեղեկատվական ֆոնի ստեղծմանը՝ Արցախի Հանրապետության դեմ նոր պատերազմ սանձազերծելու համար: Իսկ գուցե հենց սա է նրա սկզբնական առաքելությունը՝ իրականացնել ՀՀ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Միլսի, հետո՝ ԱՄՆ նախագահի անվտանգության գծով խորհրդական Ջոն Բոլթոնի (որը Երևանում էր 2018թ. հոկտեմբերի 25 – 26-ին) կողմից քաջալերվող քաղաքական պատգամը: Կրկնում են, խոսքը հակամարտության կարգավորման մասին է՝ «տարածքներ (հողեր) խաղաղության դիմաց» բանաձևով՝ առանց Արցախի Հանրապետության ապագա կարգավիճակի սահմանման:

Ամփոփելով վերն ասվածը՝ կարելի է փաստել, որ Ն. Փաշինյանը վարչապետի պաշտոնում դառնում է իրական սպառնալիք, մարտահրավեր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը: Նրա անհապաղ ինքնակամ հրաժարականը Հայաստանի վարչապետի պաշտոնից, Հայաստանի և Արցախի Հանրապետությունների զինված ուժերի միացյալ կոմիտեի անհապաղ կազմավորումը պատերազմի կանխման առաջին քայլերն են:

Հարգելի ընթերցող, չէի ցանկանա ձեր աչքում ոչ օբյեկտիվ թվալ, որը «տեսնում է միայն ուրիշի աչքի գերանը»: Ավաղ, ցավով ստիպված են խոստովանել, որ մարազը խորանում է նաև Հայաստանի ներկա իշխանությունների գլուխներում: Այնպես որ, կոչը՝ հայե՛ր, զգո՛ն եղեք, կրկնակի հրատապ է դառնում:

Հետգրության փոխարեն: Հոգվածն ավարտելով՝ թերի ասվածի ինչ-որ զգացողություն ունեցա: Խոսքը «Լազարյան ակումբի» երկրորդ նիստի արդյունքների մասին է: Ցավով պետք է փաստեմ, որ Հայաստանի պաշտոնական լրատվամիջոցներն այդպես էլ չանդրադարձան այդքան օգտակար միջոցառմանը, ինչը չես ասի՝ ադրբեջանական մաս-մեդիաների մասին: Մտածելով այս մասին՝ ականա հիշեցի «Լազարյան ակումբի» ստեղծման կազմկոմիտեի նախագահ, Հայաստանի ու Արցախի Հանրապետության փորձված և վստահելի բարեկամ, Ռուսաստանի և Հայաստանի, այո, այո՝ Հայաստանի, հայտնի և հարգարժան քաղաքական-հասարակական գործիչ Կոնստանտին Ֆյոդորովիչ Ջատուլինի հարցազրույցը: Բացելով «Լազարյան ակումբի» երկրորդ նիստը՝ Կոնստանտին Ֆյոդորովիչն ասաց. «Մեզ համար Հայաստանը կարևոր է ոչ միայն որպես դաշնակից պետություն, մեզ համար կարևոր է հաստատել մեր հարաբերությունների հիմքերը հայ

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Ժողովրդի հետ, որը, իհարկե, առաջինն է իր պետության հանդեպ և կարևոր մեզ համար Ռուսաստանում՝ որպես պատմական բարեկամ և համերկրացի հարյուրամյակներ շարունակ: Մեզ մոտ է եկել Հայաստանից մասնակիցների ներկայացուցչական պատվիրակություն: Բայց ես, չեն թաքցնում, ցավում եմ, որ Հայաստանի կառավարության պաշտոնական կառույցները ձեռնպահ են մնացել, որպեսզի որևէ մեկին ուղարկեն այստեղ: Մենք այս դահլիճում հավաքել ենք ռուսաստանցի առաջատար տնտեսագետներին և ռուսական այն կորպորացիաների ներկայացուցիչներին, ովքեր աշխատում են Հայաստանում: Ինձ թվում է, որ Հայաստանի նոր իշխանությունների համար ավելորդ չէր լինի նրանց հետ այստեղ մեկ անգամ ևս հանդիպել ու մեկ անգամ ևս քննարկել տնտեսական խնդիրները: Մանավանդ որ խնդիրները, ինչպես գիտենք, պարբերաբար ծագում են»:

Որպեսզի ընթերցողները տպավորություն չստանան, թե միայն «Սասնա ծռերի» օրինակով եմ նման հեռուն գնացող եզրահանգումներ անում, այլ օրինակ էլ բերեմ: Այսպես, 2018թ. օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը ԼԳԲՏ հանրույթի (Հայաստանում 2018թ. ապրիլ–մայիսի պետական հեղաշրջման առավել ակտիվ շարժիչ ուժերից մեկը) ներկայացուցիչները Երևանում ներխուժեցին Երևան քաղաքի ոստիկանության կենտրոնական բաժին և ծեծեցին երկու ոստիկանի, ինչը խոստովանեցին այդ գերատեսչության մամուլի ծառայությունում: Պատճառը Հայաստանի մի քաղաքացու հարձակումն էր կանաչի շորեր հագած տղամարդկանց վրա: Կասկածյալին կալանեցին: Հետո մամուլի ծառայության հաղորդման մեջ ասվում էր. «Այսպես կոչված տուժող կողմը (չգիտես ինչու, վախենում են իրերը կոչել իրենց անունով, այսինքն՝ պեղառաստներին փաղաքշորեն անվանել գեյեր – Ա. Գ.) պարզել էր, որ կասկածյալին կհասցնեն ոստիկանության կենտրոնական բաժին, հավաքվել է ոստիկանության շենքի առջև, և բերման պահին ծագել է ծեծկռտուք: Իրավիճակը սրվել է, երբ փողոց են դուրս եկել բարձր հայհոյանքներից զայրացած («նոր Հայաստանում» իրենց առանձնապես արտոնյալ զգացող գեյերի կողմից – Ա. Գ.) մերձակա տների բնակիչները»: Իրադարձությունների նկարագրությունն իսկ, որոնք հետևել են ԼԳԲՏ հանրույթի այս զագրելի ակցիային, արդեն զգվանք է առաջացնում: Նշենք, որ սույն փաստը անհերքելի ապացույց է «Օվերթոնի պատուհանի» տեխնոլոգիայի «հաջող» կիրառման, այսինքն՝ մենք վկաներն ենք իրադարձությունների զարգացման, երբ աներևակայելիից (ԼԳԲՏ հանրույթի գոյությունն իսկ արդի Հայաստանում, որը հանդիսանում է Հայկական Քրիստոնեական քաղաքակրթության դարավոր ավանդույթների շարունակողը) անցում է կատարվում դեպի այդ իրադարձությունների պոպուլյարացում Նիկոլ Փաշինյանի կառավարության նախարարների կողմից դրանց ընդունելու միջոցով, ինչը վերոնկարագրյալ խափանարար տեխնոլոգիայի իրականացման նմուշ է: Կարելի է Հայաստանում հայկական հանրության ներսում վստահության քայքայման տեխնոլոգիայի, որը, ինչպես վերը նշեցինք, կոչվում է «Օվերտոնի պատուհան», իրական կիրառման այլ օրինակներ էլ բերել, ինչը խափանում է հայոց պետականության հիմքերը, բայց, կարծում եմ, դրա անհրաժեշտությունը չկա: Կարևոր է նշել, որ եթե հիմա ամենաօպերատիվ կերպով ոչինչ չձեռնարկվի, ապա մոտ ապագայում մենք կդառնանք սոցիալական և պետական ինստիտուտների քայքայման վկաները, իսկ դա, իր հերթին, լուրջ հարված կհասցնի հայոց պետականության հիմքերին:

Այսպիսով, ընդհանրացնելով ս. թ. մարտի 21-ին REGNUM լրատվական գործակալությունում հրապարակված «Կանխել՝ Հայաստանի Հանրա-

պետության և Արցախի անվտանգության սպառնալիքը» հողվածում ներկայացված նյութը և վերն ասվածը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունը. Հայաստանը դարձել է տարատեսակ գունավոր հեղափոխությունների տեխնոլոգիաների (որոնք ներկայացված են Զին Շարփի «Բռնապետությունից դեպի ժողովրդավարություն. ազատագրման հայեցակարգային հիմքերը», Էդվարդ Ն. Լյուբվաքի «Պետական հեղաշրջում. գործնական ձեռնարկ», ինչպես նաև Աբրահամ Նոամ Խոմսկու «Լավատեսություն ի հեճուկս հուսահատության», «Ստեղծելով ապագան. օկուպացիաներ, ներխուժումներ, կայսերական մտածողություն և կայունություն» և այլ հեղինակների աշխատություններում) իրականացման ինքնատիպ փորձադաշտ: Այս ճշմարտության գիտակցումը մեզ բերում է այն եզրահանգման, որ հայոց պետականության գոյության սպառնալիքը դառնում է ամենահրատապ խնդիրը մեր հասարակության բոլոր շերտերի համար՝ քաղաքական գործիչների, պետական ծառայողների, գիտնականների, գործարարների, կրթության ոլորտի աշխատողների, ֆերմերների, զինվորականների, երկրի սովորական քաղաքացիների: Կարևոր է մեր հասարակության յուրաքանչյուր անդամի անհատական պատասխանատվության գիտակցումը Հայաստանի Հանրապետության, 8 միլիոնանոց հայկական Սփյուռքի ճակատագրի համար: Հարկ է հասկանալ, որ հայոց պետականության պահպանման խնդիրը հեռուն է գնացել և խիստ հրատապ դարձել, ուստի և անհնար է համարժեք տեխնոլոգիական պատասխան տալ այն մակարդակով, որում այն դրված է. հարկավոր է ավելի բարձր մակարդակի համակարգային պատասխան: Հայոց պետականության գոյության մարտահրավերը պահանջում է զանգվածաբար բարձրացնել մեր քաղաքացիների հոգևոր և մտավոր մակարդակը, վերականգնել հայկական ընտանիքին, մեր ազգային հոգեկերտվածքին բնորոշ արժեքները, ընդ որում՝ ոչ թե ամենուրեք ոտնահարվող սոցիալական նորմերի, այլ անձնական քրիստոնեական արժեքների մակարդակով, որոնք խորապես բնորոշ են Հայաստանի և Արցախի Հանրապետության սովորական քաղաքացիներին: Եվ դա չի կարելի անել «դիրեկտիվներով», ինչեցնելով գոյություն չունեցող ձեռքբերումներն ու դրական փոփոխությունները, որոնք, իբր, տեղի են ունենում Հայաստանում պետական հեղաշրջումից հետո: Կարևոր է հասկանալ, որ մարդկանց հոգևոր և մտավոր մակարդակի բարձրացումն այս փուլում Հայաստանում հնարավոր է միայն անձնային արժեքների փոխանցման ճանապարհով, մարդկանց օրինակով, որոնք իրենց կյանքով են հաստատում այդ արժեքներին հավատարմությունը՝ օրեցօր իրենց նվիրելով շատ ավելի մեծ բանի՝ հանուն ընտանիքի, հարազատ գյուղի կամ քաղաքի, երկրի հաջողության: Ինչ-որ շատ ավելի մեծ բանի, քան «մորթապաշտ շահերը»:

Ավաղ, այս փոփոխությունների (որոնց չկասեցման դեպքում կարող ենք հանգել անշրջելի կործանարար հետևանքների հայ հասարակությունում) գիտակցումը չէ, որ տիրապետում է Հայաստանի ներկա իշխանու-

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

յունների գործունեության մեջ: Որպեսզի ասածներս մերկապարանոց չինչեն, բերեմ թարմ օրինակ: Այսպես, ս. թ. մարտի 21-ին Հայաստանի գրեթե բոլոր լրատվամիջոցները հրապարակեցին ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Վահան Շիրխանյանի բաց նամակը Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Թեմային առավել մանրամասն, ինչպես և պետք էր սպասել, դիմել են այն լրատվամիջոցները, որոնք կարգապահորեն ֆինանսավորվում են Սորոսի ֆոնդի և K^O-ի կողմից: Անուն առ անուն չենք թվարկի դրանց, միայն կկրկնենք Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգության հերոսի՝ Ֆամուսովի բացականչությունը (գործողություն 4, տեսարան 14). «Բա՛: Ծանոթ դեմքեր են»: Կարելի է էլի շարունակել մեջբերել այս գրական հերոսին: Զէ՞ որ նրա հետագա խոսքերը բավական ճիշտ ու հատկանշականորեն կարելի է վերագրել Հայաստանի քաղաքացիների գիտակցությունն արդեն որերորդ տարին այլասերող հայտնի գրանտակեր-ՁԼՄ-ներին, որոնց մասին այդքան պատկերավոր ասել է նույն Ֆամուսովը. «Աղջիկս, Սոֆյա Պավլովնա, խայտառակ, անամո՞թ: Որտե՞ղ: Ո՞ւմ հետ ... Պատահել է՝ թանկագին կեսիցս հեռու, և ինչ-որ տեղ տղամարդու հե՛տ»:

Հարգելի ընթերցող, չեմ ցանկանում մեջբերել բաց նամակի, այսպես կոչված, 23 կետերը, որոնք պատիվ չեն բերում Հայաստանի զինված ուժերի սպային (ցանկանում եմ հուսալ, որ Վ.Շիրխանյանը, լինելով պաշտպանության փոխնախարար, զինվորական կոչում ունի): Մանավանդ որ էլ չեմ ասում այն մասին, որ դրանք հասցեագրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ, Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին, որի անունը լուսահոգի Վազգեն Զավենի Սարգսյանի, Սերժ Ազատի Սարգսյանի, Սամվել Անդրանիկի Բաբայանի, Վիտալի Միքայելի Բալասանյանի, Արկադի Իվանի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) անունների հետ հիրավի խորհրդանշում է հայ ժողովրդի հաղթանակը Արցախի 1992 – 1994թթ. ազատագրական պատերազմում: Խորհենք այն մասին, թե ինչու և ում էր պետք հիմա հանդես գալ նման բաց նամակով, որում նսեմացվում, թայֆայականության աստիճանի ստորացվում է, թերևս, հայ արդի պատմության ամենավառ էջերից մեկը՝ Արցախի ազատագրման հերոսական էջը: Եթե որևէ մեկն իր տկարամտության պատճառով այսօր փորձում է նվազեցնել, նսեմացնել մեր համաժողովրդական հաղթանակի դերը Արցախյան ազատագրական պատերազմում, լինի ՀՀ այսօրվա իշխանություններից, թե քաղաքական կամակատարներից, ավելի բարձր գնահատելով Հայաստանում 2018թ. ապրիլ – մայիսի պետական հեղաշրջումը, ապա դա խոսում է հայ հասարակության լուրջ հիվանդության մասին: Այս պայմաններում միանգամայն տեղին հարց է ծագում. ո՞ւմ էր շահավետ նամակի հրապարակումը հենց հիմա, երբ ՀՀ երկրորդ նախագահը քաղաքական վեցնդետայի է ենթարկվում Հայաստանում իշխանության ղեկին գտնվողների կողմից: Գուցե այս հարցի պատաս-

խանը տրվել է Վ.Շիրխանյանի հարցազրույցում ոչ անհայտ 1in.am ինտերնետ պորտալին: Հարցազրույց, որը տարածվեց շատ ու շատ ՋԼՄ-ների կողմից, այն է՝ 2018թ. դեկտեմբերի 11-ին «Մեր Հայաստան» ինտերնետ պորտալը հրապարակեց հոդված «Այո, Ռոբերտ Քոչարյանը ձերբակալված է, բայց ճիշտ չէ, որ Սերժ Սարգսյանը ձերբակալված չէ. Վահան Շիրխանյան...» վերնագրով (<https://nashaarmenia.info/2018/12/11/da-robert-kocharyan-arrestovan-no-neprav/>): Այդ հրապարակման մեջ կարդում ենք. «Առաջին տեղեկատվականի գրուցակից. պաշտպանության նախկին փոխնախարար, Նորք-Մարաշ զինված հանցավոր խմբի գործով նախկին մեղադրյալ Վահան Շիրխանյան:

Հարց. – Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հանդես է եկել Քոչարյանի ձերբակալության մասին հայտարարությամբ, որում ասվում է. «Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները հակասում են երկրի նոր առաջնորդների ավելի վաղ արված հայտարարություններին, որ նրանք կիրառարկեն իրենց նախորդների քաղաքական հետապնդումից: Մոսկվայում մեծ գոհունակությամբ նշել են, որ ներկայիս ձգնաժամի լուծումը գտնվել է փոխզիջման արդյունքում, այն դեպքում, երբ վերջին օրերի իրադարձությունները փչացնում են դրական տրամադրվածությունը և հակասում նոր իշխանությունների ավելի վաղ արած հայտարարություններին»:

Վ. Շ. – Այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում, դա հետապնդում չէ: Հայաստանում 20-ամյա հակաժողովրդական, բռնաճնշիչ, թալանչիական ռեժիմի գոյությունը զգալի չափով պայմանավորված է ռուսաստանյան ղեկավարության աջակցությամբ: Հենց այդ պատճառով է ռուսամետ մեծամասնությունը կրկնակի կրճատվել»:

Ինչպես ասում են՝ «խոսքը ծիտիկ չէ, կթռնի ու էլ չես բռնի»: Համաձայն Վ. Շիրխանյանի տրամաբանության, ռուսամետ մեծամասնության կրճատման մեջ բնավ մեղավոր չեն բացահայտ հակառուսական, ըստ էության, ռուսատյաց ՋԼՄ-ները և ինտերնետ պորտալները, ոչկառավարական կազմակերպությունները, որոնց թվաքանակը գրեթե հիսունի է հասնում: Խոսքն այն լափակերների մասին է, որոնք արդեն ավելի քան 10 տարի շռայլորեն ֆինանսավորվում են ոչկառավարական «Բաց հասարակության» (Սորոսի ֆոնդ), Դեմոկրատիայի եվրոպական ֆոնդի (EED), Դեմոկրատիայի աջակցության ազգային ֆոնդի, Դեմոկրատիայի ազգային ինստիտուտի (NDI) և արևմտյան այլ ֆոնդերի կողմից: Դրանց միավորում է մի բան՝ խափանել Ռուսաստանի և Հայաստանի օբյեկտիվորեն ձևավորված ռազմավարական միությունը՝ մեր ժողովրդի անվտանգության երաշխավորին, սասանել մեր երկրների ժողովուրդների միջև բարեկամության և եղբայրության կապերը Հայաստանում հակառուսական տրամադրությունների հետևողական, լափիշ սերմանման միջոցով: Ընդ որում՝ Հայաստանի այդ անթաքույց անբարյացականների, եթե չասենք՝ թշնամիների զինանոցում հայոց

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

պետականության քայքայման ամենաարդիական տեխնոլոգիաներն են, ինչի մասին մասամբ ներկայացվեց վերը: Վ. Շիրխանյանի վերոնշյալ հարցազրույցը, իսկ հետո նաև սկանդալային բաց նամակը, կասկածելու հարկ չկա, այսուհետև ևս լայնորեն տարածվելու են Հայաստանում: Եվ դա բնավ պատահական չէ, քանի որ այսօրվա Հայաստանի հիմնական լրատվամիջոցների իսկական տերերը ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարարից ստացել են իրենց խափանարար աշխատանքի համար գլխավոր հարցի պատասխանը, այն է. «Հայաստանում 20-ամյա հակաժողովրդական, բռնաճնշիչ, թալանչիական ռեժիմի գոյությունը զգալի չափով պայմանավորված է ռուսաստանյան ղեկավարության աջակցությամբ»:

Կցանկանալի ինքնաքննադատաբար խոստովանել նաև սեփական թերացումներս հայ հասարակությանն այն հսկայական աշխատանքը պարզաբանելու հարցում, որը կատարվում է Ռուսաստանի կողմից, աշխատանք, որը շատ ավելի հեռուն է գնում այն պարտավորությունների շրջանակից, որոնք պարունակվում են ռուս-հայկական պայմանագրերում և համաձայնագրերում: Լինի դա մեր երկրների միջև ռազմարդյունաբերական համագործակցությունը, թե համագործակցությունն էներգետիկ, հումանիտար ոլորտներում:

Չէի ցանկանա հողվածս ավարտել տխուր նոտայով, ուստի բերեմ, ըստ իս, շատ հատկանշական, Ռուսաստանին բնորոշ օրինակ: Այսպես, ս.թ. մայիսի 28-ին Մոսկվայում, «Ֆիլիարմոնիա 2» համերգասրահում տեղի կունենա տաղանդավոր ջութակահար, 11-ամյա Ալեքսանդր Արտյոմի Խաչատրյանի մենահամերգը «Նովայա Ռոսիա» պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ միասին (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Յուրի Աբրամովիչ Բաշմետ): Երաժշտական հասարակայնության համար նշանակալի այս իրադարձությանը կարելի է նվիրել բազմաթիվ հոդվածներ, որոնք մեկ ընդհանուր լեյթմոտիվ կունենան՝ պետք է անվիճելի տաղանդ լինես, որպեսզի ճանապարհի հարթես չափազանց պատանի գործընկերոջդ համար, մեծ վարպետ է պետք լինել, սիրել Հայաստանն ու հայ ժողովրդին, որպեսզի այդքան խնամքով վերաբերվես հայաստանցի երիտասարդ շնորհալիներին: Եվ այդ տաղանդը մանավանդ ներհատուկ է ականավոր երաժշտին, մանեստրոյին, ռոստովցի Յուրի Բաշմետին: Ինչու հատկապես ընդգծեցի նրա ռոստովցի լինելը: Մտաբերենք պատմությունից, որ դեռևս 1778թ. հուլիսի 16-ին Բախչիսարայի վարդապետ Պյոտր Մարկոսովը Ղրիմի հայերի անունից և հանձնարարությամբ՝ խնդրանքով դիմել էր կայսրուհի Եկատերինա Երկրորդին: Կատարելով Եկատերինա Մեծի դիվանագիտական առաջադրանքը՝ ականավոր զորավար Ա.Սուվորովը, որի երակներում, ինչպես հայտնի է, նաև հայկական արյուն է հոսել, 1778թ. օգոստոս-սեպտեմբերին կազմակերպել է հայերի «մեծ վերաբնակեցումը» հարավային Ղրիմի անապատային, դեռևս անբնակ ափերին: Նշենք, որ այն տարիներին այդ հողերը դեռ նոր էին անցել Ռուսաստանին:

1779թ. նոյեմբերի 14-ին Ռուսաստանի կայսրուհու գերագույն հրովարտակով Սուրբ Դմիտրի Ռոստովցու ամրոցի մոտ հիմնվեց Դոնի Նախիջևանը: Անցել է ընդամենը 240 տարի, բայց ռոստովցիների բարեկամությունն ու սերը հայերի ու Հայաստանի հանդեպ շարունակվում են առ այսօր: Ուզում եմ հավատալ, որ Ալիկ Արտյոմովիչի համերգը մատուր Յուրի Բաշմետի ղեկավարած սիմֆոնիկ նվագախմբի հետ միանգամայն նոր երանգներ կհաղորդի Ռուսաստանի և Հայաստանի մշակութային համագործակցությանը՝ դառնալով մեր խոր հոգևոր կապերի վառ դրսևորումը:

Հետգրության փոխարեն: Չեմ թաքցնի, հարգելի ընթերցող, որ մտածելով Վ.Շիրխանյանի սկանդալային բաց նամակի մասին՝ անընդհատ խորհում էի, թե ինչ անեմ, որպեսզի ծայրահեղության մեջ չընկնեմ ու իմ գործողություններով ակամա լրիվ չգրոյացնեմ նրա անցած կյանքի ու ողջ աշխատանքային ճանապարհը: Զէ՞ որ Շիրխանյանը նման նամակ գրելով, հենց այդպես է վարվել. նա, աչքն անգամ չթարթելով, անվանարկել է Հայաստանի երկրորդ նախագահի՝ ներկայում քաղբանտարկյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի ողջ աշխատանքային կենսագրությունը, որը զուրկ չէ նաև հերոսական էջերից: Չեմ թաքցնի, որ ես խորհրդի համար դիմել եմ «Ազգային Միաբանություն» կուսակցության վարչության անդամ, Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախկին նախարար, պահեստի գնդապետ Լևոն Հակոբի Գալստյանին: Դիմել եմ ՆԳՆ բարձր պրոֆեսիոնալ ղեկավարին, որը Հայաստանի նորագույն պատմության ամենաբարդ շրջանում՝ 1990թ., շնորհիվ իր պրոֆեսիոնալիզմի և սառնարյունության, կարողացավ կանխել ՀՀՇ ո'չ մեկ սադրանք՝ դրանով իսկ թույլ չտալով մեծ արյունահեղություն երևանում, ինչպես դա տեղի ունեցավ Թբիլիսիում և Բաքվում 1990թ.: Չեմ թաքցնի, որ Լևոն Տեր-Պետրոսյանի և Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին Լևոն Հակոբի Գալստյանն իր քաղաքական գոծունեության համար երկու անգամ դատական պատասխանատվության է ենթարկվել: Ավելին, նա 1996թ. (Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության ժամանակ) ստիպված է եղել ավելի քան 20 օր նստել ձաղերի հետևում: Եվ ահա, Լևոն Հակոբովիչին ուղղված իմ հարցին, թե ինչու ի պատասխան անարդարացի հետապնդումների նա ինքը երբևէ նամակով չի դիմել ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, նա տարակուսած նայեց ինձ: Չեմ թաքցնի, որ նրա հայացքի ներքո ես ինձ անհարմար զգացի: Այնուհետև Լևոն Հակոբովիչն այսպես պատասխանեց. Լևոն Տեր-Պետրոսյանից (այսուհետ՝ ԼՏՊ) իմ բոլոր դժգոհությունների մասին ես մեկ կամ երկու անգամ չէ, որ ասել եմ հանրահավաքներում ու ընտրողների հետ հանդիպումներում, երբ ԼՏՊ-ն իշխանության ղեկին էր, ինչպես և քանիցս հանդես եմ եկել Ռոբերտ Քոչարյանի հասցեին քննադատությամբ, երբ նա ՀՀ նախագահն էր, իսկ հետևից քննադատելը վայել չէ սպային, մանավանդ երբ նա, ում քննադատում ես, ազատության մեջ չէ:

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Եվ վերջապես, կցանկանայի դիմել ընթերցողին հետևյալ հարցով. ի՞նչ կնշանակի, որ այն օրից, երբ հրապարակվեց Վ.Շիրխանյանի սկանդալային բաց նամակը, ադրբեջանական հեղինակավոր ինտերնետ պորտալներից և ոչ մեկը այս փաստը չդարձրեց իր քննարկման առարկա: Ես, հարգելի ընթերցող, ունեմ այս հարցի պատասխանը. հավանաբար, ափշերոնյան քաղաքական «մտածողները» չափազանց գոհ են Ռոբերտ Քոչարյանի հասցեին Վ.Շիրխանյանի այս խայտառակ գրպարտագրից: Չէ՞ որ, ըստ էության, այդ նամակն արտացոլում է հակահայկական հողվածների և այլ հրապարակումների բովանդակությունը, որոնք ահա արդեն 25 տարի ամենահմուտ կերպով նետվում են մեդիա-հարթություն ափշերոնյան «մտածողների» կողմից: Ակամա գիտակցությանդ մեջ է սողոսկում խռովարար միտքը. գուցե հենց այդ «մտածողներն» անմա՞սն չեն այս գարշահոտ տեղեկատվական դիվերսիային:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պարտքս եմ համարում հայտարարել. հայոց պետականության հիմքերի խափանումը մտել է եզրափակիչ փուլ: Եթե Հայաստանում խափանարար կազմակերպությունների գործունեության օպերատիվ և կոշտ կասեցման միջոցներ չձեռնարկվեն, մեր «արևմտյան բարին կամեցողները» կփորձեն պետականության քանդման այդ տեխնոլոգիաներն իրականացնել Ռուսաստանի Դաշնության Հյուսիսային Կովկասի հանրապետություններում: Ավաղ, դրանում կասկածել չարժե:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

АРТАШЕС ГЕГАМЯН: БЫТЬ ИЛИ НЕ БЫТЬ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

ВОТ В ЧЕМ ВОПРОС

В своих предыдущих статьях, опубликованных ИА REGNUM (см.: «Предотвратить угрозу безопасности Республики Армения и Арцаха!», 21.03.2019 и «Подрыв основ армянской государственности – вступил в завершающую стадию!», 29.03.2019) мне уже приходилось писать о беспрепятственном применении в Республике Армения (РА) современных технологий разрушения государственности. При этом замечу, что из 178 тысяч читателей статьи «Подрыв основ армянской государственности – вступил в завершающую стадию!» те, которые проголосовали (<http://www.shame.am/ru/news/view/67166.html>), весьма высоко оценили статью. Так, в своем подавляющем большинстве, а именно 66,4% оценили статью на «отлично», 13,21% – на «хорошо», тем самым фактически выразили свое полное согласие с основным выводом, содержащимся в ней. Напомним читателям, главный вывод этой публикации заключался в том, что: «В случае непринятия действенных мер по оперативному и жесткому пресечению в Армении деятельности подрывных организаций эти технологии разрушения государственности наши «западные доброжелатели» постараются реализовать в республиках Северного Кавказа Российской Федерации». При этом, естественно, возникал вопрос: насколько социально-экономическое положение РА будет «способствовать» реализации этих технологий или же, наоборот, тормозить их ход? Думаю, что этот вопрос имеет не только право на существование, но и предполагает исчерпывающий ответ на него.

Итак, уважаемый читатель, немного статистики. Надеюсь, еще свежи в памяти высокопарные обещания «народного премьер-министра» РА, что страну после государственного переворота апреля-мая 2018 года, именуемого его исполнителями «бархатной революцией», ожидает инвестиционный бум. Так ли это? Обратимся к статистике. Итак, согласно сборнику «Социально-экономическое положение Республики Армения в январе-феврале 2019 года» (стр. 93), если чистые финансовые обяза-

тельствa (термин «чистые» означает добавление вновь принятых обязательств минус погашения по данному финансовому инструменту) в январе-декабре 2017 г., или всего инвестиции составили 400,3 млн (без финансовых производных), то в январе-декабре 2018 г., соответственно, \$811,2 млн. Таким образом, в 2018 году имел место двукратный рост чистых финансовых обязательств РА. При этом заметим, что если в 2017 году прямые инвестиции составили \$249,8 млн, то в 2018 году произошел воистину «революционный рост» прямых инвестиций аж на целых \$ 4,5 млн. Ведь была же подготовлена почва Н. Пашиняну для объявления начала экономической революции.

Косвенным подтверждением недоверия к экономической политике «поборников экономической революции» служит существенный отток денежных средств (трансфертов) через банковскую систему, который имел место в 2018 году. Так, если в январе-декабре 2017 года чистый отток денежных средств (физических лиц) из РА за рубеж составил \$ 1 млрд 25 млн, то в январе-декабре 2018 г., соответственно, \$1 млрд 188,4 млн. Это самый высокий показатель чистого оттока финансовых средств за последние 10 лет (см. Вестник ЦБ РА за 2018 г., январь, стр. 84, Вестник ЦБ РА, январь 2019 г., стр. 15). В этих условиях говорить об инвестиционной привлекательности РА – курам на смех. Ведь факт того, что в 2018 г. из РА было выведено \$ 1 млрд 188,4 млн говорит сам за себя. Не приходится сомневаться, что любой мало-мальски вменяемый инвестор, зная эту статистику, не будет нуждаться в каких-либо разъяснениях относительно инвестиционной привлекательности РА. И вот на этом фоне вызывает удивление вперемешку с отчаянием, когда власти предрекающие РА гордиться двузначными показателями темпа роста внешнеторгового оборота в 2018 году, который составил 114,7% (см. «Социально-экономическое положение Республики Армения в январе-декабре 2018 г.», стр. 123, «Социально-экономическое положение Республики Армения в январе-декабре 2017 года», стр.121), при этом темп роста экспорта составил 107,5%, импорта – 18,66%.

Приходишь к выводу, что они вовсе не осознают, какими крайне отрицательными последствиями это чревато для платежного баланса РА.

Так, если по итогам 2017 года дефицит торгового баланса РА составил (минус) – \$ 1 млрд 939,8 млн, то по итогам 2018 года соответственно (минус) – \$ 2 млрд 551,3 млн, то есть за год имел место рост дефицита торгового баланса РА на \$ 611,5 млн. Такое положение дел при одновременном сокращении объема трансфертных поступлений от наших соотечественников и фактическом отсутствии роста инвестиций пагубно отразилось на счете текущих операций платежного баланса РА. Так, если за январь-декабрь 2017 года текущий счет платежного баланса составил

(минус) – \$ 279,67 млн, то за соответствующий период 2018 г. – соответственно (минус) – \$ 1 млрд 130,58 млн. Чтобы не утомлять читателей дальнейшими экономическими выкладками, заметим, что финансирование дефицита счета текущих операций возможно посредством: 1) иностранных кредитов и инвестиций в долговые бумаги; 2) иностранных инвестиций в акции; 3) распродажи Центробанком РА запасов валюты; 4) распродажи внутренними инвесторами зарубежных активов. Заметим, что внешний долг Армении в 2019 году увеличится на \$ 490 млн и к концу года достигнет 49,8% ВВП (в национальной валюте), при этом крупнейший кредит в размере \$ 343 млн планируется получить из России (согласно заявлению представителя департамента по управлению госдолгом Минфина РА Артура Амбарцумяна, см. «Государственный долг Армении вырастет на полмиллиарда долларов», 21.12.2018 г., arm-portal.ru/news/economy/gosudarstvennyiy-dolg...). В этих условиях очевидно, что рассчитывать на новые существенные иностранные кредиты не приходится, равно как и на иностранные инвестиции в акции, а говорить о распродаже внутренними инвесторами зарубежных активов вовсе несерьезно. Чего ради делать это? То есть для покрытия огромного дефицита счета текущих операций остается один путь – распродажа Центробанком РА запасов валюты. Так, согласно Вестнику ЦБ РА за февраль 2019 г., стр. 64 на конец декабря 2018 г. чистые международные резервы ЦБ РА составили 761 млрд 879 млн драмов, или \$ 1 млрд 577,4 млн на конец января – 641 млрд 240 млн драмов или \$1 млрд 316,4 млн. То есть в январе 2019 г. чистые международные резервы ЦБ РА (далее – ЧМР) в сравнении с декабрем 2018 г. сократились на \$ 261 млн. Справедливости ради отметим, что в феврале т.г. ЧМР в сравнении с январем пополнились на \$89,4 млн. Нет, уважаемый читатель, увеличение ЧМР вовсе не является следствием первых ростков «экономической революции». Попросту в январе-феврале 2019 г. имел место рост чистого притока международных трансфертов физическим лицам в сравнении с тем же периодом 2018 г. И это происходило при одновременном существенном сокращении объемов импорта в январе-феврале т.г. Так, в январе 2019 г. к январю 2018 г. имел место спад объемов импорта на 9,3 процентных пункта, в феврале, соответственно, на 2,5 процентных пункта. В случае непринятия действенных мер по пресечению негативных тенденций в экономике РА в ближайшие полгода-год неизбежно будет иметь место обвальное обесценивание национальной валюты, драма, что, в свою очередь, приведет к многократному росту цен, задержкам зарплат, пенсий, социальных пособий. Снизится собираемость налогов, сократится валовой внутренний продукт. Увы, вместо серьезного осмысления столь крайне опасного положения дел в экономике, принятия адекватных мер по предотвращению угрозы эконо-

мического коллапса мы являемся свидетелями все новых и новых шоу и других неприглядных зрелищ, которые неизбежно приведут к невосполнимым потерям, к подрыву экономических основ армянской государственности. Осознают это или нет в правительстве РА?

Становится очевидно, что технологии разрушения армянской государственности, о которых говорилось в предыдущих статьях, получают свое «подкрепление» в результате бездействия «народного премьер-министра» по предотвращению окончательного подрыва экономических основ РА.

Таким образом, суммируя к вышеизложенному и выводы, содержащиеся в ранее опубликованных статьях, мы можем сделать обобщение о том, что в настоящее время являемся свидетелями потери управляемости экономикой, деидеологизации, отказа от каких-либо присущих армянской христианской цивилизации ценностей. Чтобы не быть голословным, сошлюсь на выступление 5 апреля т. г. с трибуны Национального Собрания РА трансгендера, поучающего (щей), как нам жить и чего стыдиться. Складывается впечатление, что мы имеем дело с поощряемым властями беспределом «демократических», якобы спонтанных движений. Заметим, что все это кукловодами нынешних властей Армении осуществляется сознательно, на четко и подробно разработанной научной основе. Уважаемый читатель наверняка догадался, что речь о внедрении в нашу повседневную жизнь составляющих «управляемого хаоса». Главная же цель все та же – демонтаж ныне существующего армянского национального государства, нашей традиционной культуры, то есть перестройка массового сознания и мировоззрения посредством жесткого воздействия современных средств манипуляций всей духовной сферой человека с применением информационных социально-культурных технологий, о чем уже приходилось писать.

В связи с этим хотелось бы обратить внимание на следующее. В условиях, когда президент Азербайджана И. Алиев вовсе не скрывает своих намерений, в подходящее для апшеронского султаната время начать широкомасштабную войну против Республики Арцах и Республики Армения, особенно зловеще звучит последовательно внедряемая в сознание граждан Армении и Арцаха гнусная клеветническая информация о том, что Апрельская (2016 г.) война якобы была «договорной». Достаточно ознакомиться с основным источником этой информации, и будет не трудно увидеть, откуда растут уши столь циничной информации, которая мало того, что изначально носит клеветнический характер, она еще и преследует коварные цели. Поставлена задача всеми правдами и неправдами, откровенной ложью подорвать веру в верховное военное руководство РА и Республики Арцах. В соответствии с замыслом их авто-

ров, этих моральных выроdkов, распространение подобной информации самым пагубным образом воздействует на морально-психологическое состояние Вооруженных сил Армении и Арцаха. Их задача ясна – заронить червь сомнения в благородство помыслов героев Арцахской (1992–1994 гг.) освободительной войны, Апрельской (2016 г.) войны, сегодняшних защитников нашего Отечества.

А как на все эти подрывные действия среагировал «народный премьер-министр» РА, судите сами. Так, в ходе брифинга с журналистами 18 декабря 2018 г. тогда еще исполняющий обязанности премьер-министра Н. Пашинян подчеркнул, что вопросы, связанные с Апрельской войной, еще раз показывают, что у общественности есть много вопросов касательно этой войны. На вопрос журналистов, была ли Апрельская война договорной, как утверждали некоторые, Пашинян ответил, что все это время поступает устная и письменная информация, которая еще нуждается в проверке: «Я знаю, что есть такая версия, она широко обсуждалась. Но в одном не сомневайтесь: все наши действия будут направлены на то, чтобы раскрыть важную для нас правду, даже если она на первый взгляд может оставлять противоположное впечатление». Сей призыв «народного премьер-министра», конечно, был ожидаем и услышан. Так, 3 апреля т. г. небезызвестный интернет-портал 1in.am, щедро финансируемый из-за океана, взял интервью у лидера «Конструктивной партии Армении» Андриаса Гукасяна под заголовком «В апреле 2016 г. имело место предательство, и прежнее руководство РА обслуживало конкретные интересы» (<https://www.1in.am/2535056.html>), в котором он, в частности, заявил: «В итоге Апрельской войны произошло явное нарушение линии прекращения огня, что не имело каких-либо международных последствий. Все это подытоживая, мы пришли к выводу, что имела место измена и руководство Армении обслуживало интересы, которые искусственно привели к такому положению, при котором могло сложиться впечатление, что Ильхам Алиев может по собственной воле провоцировать войну, убивать людей и оставаться безнаказанным, как это было во время апрельских событий. Сегодня Республика Армения какими-либо официальными действиями это положение не изменила... Опубликованный нами видеоматериал подвергал опасности весь заговор Апрельской договорной войны и выявил, что армянская сторона имеет доказательства, что Азербайджан осуществил нападение».

Голословные обвинения А. Гукасяна, несомненно, требуют правовой оценки. Ведь в них по сути заявление об измене. Авторам этой затеи как раз нужна пропагандистская шумиха. Их цель – дискредитация военно-политического руководства Армении. Параллельно с вышеотмеченной публикацией на том же интернет-портале 1in.am была опубликована и другая статья под заглавием «Договорная война агентов. Апрельская

война была международным заговором или государственной изменой?». В качестве квинтэссенции этой статьи читаем: «Был проект: сдать территорию с большими потерями и остановить войну в тот момент, когда (территории) сданы, и объявить, что не возьмем, потому что будем иметь еще большие потери. Этот механизм был приведен в действие» (<https://www.1in.am/2535053.html>).

Автором этого пасквиля является руководитель центра стратегических и национальных исследований «Аналитикон» Манвел Саргсян. Естественно, что авторы двух вышеотмеченных статей финансируются из-за рубежа. Примечательно, что разговоры «о государственной измене» подогреваются исключительно со стороны разного рода политологов и аналитиков, у которых есть одно незыблемое общее – русофобия. Вызывает досаду другое: вся эта информационная гниль в конечном итоге ложится на благодатную почву, денно и ночно подготавливаемую для, повторюсь, дискредитации руководства Вооруженных сил РА и Республики Арцах.

Раздумывая над событиями, происходящими в Армении за последние две-три недели, я почему-то вспомнил известного персонажа философского романа Вольтера «Кандид». Да, уважаемый читатель, вы правы, речь о носителе философии оптимизма Панглоссе, учителе Кандида в период его жизни в замке Тундер-Тен-Тронк в Вестфалии (Германия). Панглосс в романе проповедует, что все к лучшему в нашем лучшем из миров, что зло – всего лишь тень на прекрасной картине, а мир совершенен и целенаправлен и нет цели без причины: все в мире совершается ради установленной цели. Вот так и нашему «народному премьер-министру» за 11 месяцев его правления кажется, что все, что происходит в «новой Армении», все к лучшему. Взять хотя бы заявление Н. Пашиняна от 6 марта т.г., сделанное во время правительственного часа в Национальном Собрании РА. Касаясь вопроса об исполнении гражданами РА своих обязанностей, в частности, по требованию чеков контрольно-кассовых аппаратов по завершении покупок, Н. Пашинян заявил: «Мы имеем беспрецедентное развитие. В январе-феврале т.г. в РА было напечатано на 12,5 млн чеков контрольно-кассовых аппаратов больше в сравнении с тем же периодом предыдущего года. В результате этого в январе-феврале т.г. торговый оборот вырос на 35 млрд драмов. И в итоге мы сейчас более уверенно смотрим на сбор государственных доходов в 2019 году». Так и хочется воскликнуть – возрадуйся, армянский народ, экономическая революция уверенной поступью стартовала. Уважаемый читатель, я вовсе не против постоянного совершенствования налогового администрирования, вывода торговли из тени, вовсе нет. Весь вопрос в уровне восприятия Н. Пашиняном самой сути совершенствования налоговой системы РА. Он отнюдь не углубляется в осознание той простой исти-

ны, что налоговая система должна стать для РА одним из важнейших способов мобилизации наших весьма ограниченных финансовых ресурсов на решение экономических, политических и социальных задач государства. У «народного премьера» отсутствует видение необходимости с помощью налоговой системы обеспечить финансирование существенной части предпринимательской, производственной и непроизводственной деятельности. Главное для него – «беспрецедентный рост чеков контрольно-кассовых аппаратов». Однако это тема отдельного анализа.

Возвращаясь к аналогии с Панглоссом, заметим, что «народный премьер», единожды уверовав, что все случившееся в «новой Армении», в этом лучшем из миров, к лучшему, вопреки всякой очевидности остается верным своему заблуждению – что государственный переворот апреля-мая 2018 г., именуемый им и его соратниками «бархатной революцией», – это благо для армянского народа. Хочется верить, что он искренен в этом своем заблуждении, косвенным подтверждением чего – его нескрываемая радость и гордость, что в век четвертой промышленной революции он и К^О затеяли в Армении экономическую революцию, первые ростки которой налицо – беспрецедентный рост в январе-феврале 2019 г. чеков контрольно-кассовых аппаратов.

Вместо послесловия. В завершение статьи я невольно призадумался: может, в своих статьях несколько сгущаю краски? Потом эта мысль сразу же отпала, как только вспомнил о многих вызовах и угрозах безопасности Армении и Арцаха, о которых вынужденно умалчивал, чтобы не сделать подарок апшеронскому султану. В ходе этих раздумий невольно пришли на память отдельные следствия из принципа Питера, положения, выдвинутого и обоснованного в одноименной книге Лоуренсом Питером. Вот некоторые следствия из принципа Лоуренса Дж. Питера:

* Сливки поднимаются вверх, пока не прокиснут.

* Для каждой существующей в мире должности где-то есть человек, не способный ей соответствовать. При достаточном числе продвижений по службе эту должность займет именно он.

* Вся полезная работа совершается теми, кто еще не достиг своего уровня некомпетентности.

* В иерархии индивидуальные свершения обратно пропорциональны высоте занимаемого поста. Иными словами, чем больше вертикальный рост, тем меньше горизонтальный.

* Равные возможности означают, что каждому в одинаковой мере предоставляется шанс стать некомпетентным. Даже домохозяйка сможет управлять государством.

* Получить должность труднее, чем удержаться в ней.

А. ГЕГАМЯН

Так вот, уважаемый читатель, если внимательно проанализировать деятельность «народного премьера» РА, невольно приходишь к неизбежному выводу: Никол Пашиян – живое воплощение действия в нашей жизни принципа Лоуренса Дж. Питера. Однако от этого нам не легче. Думается, читатель согласится с утверждением – беда, когда государством руководит лицо, достигшее уровня некомпетентности.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ԼԻՆԵԼ, ԹԵ՞ ՉԼԻՆԵԼ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ԱՅՍ Է ՀԱՐՑԸ

Ռուսաստանի REGNUM Դաշնային տեղեկատվական գործակալությունում հրապարակված իմ նախորդ հոդվածներում (տե՛ս REGNUM, «Կանխե՛լ Հայաստանի Հանրապետության և Արցախի անվտանգության սպառնալիքը», 21.03.2019 և «Հայոց պետականության հիմքերի խափանումը մտել է եզրափակիչ փուլ», 29.03.2019) արդեն գրել եմ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) պետականության խափանման արդի տեխնոլոգիաների անխոչընդոտ կիրառման մասին: Ընդ որում՝ նշեմ, որ «Հայոց պետականության հիմքերի խափանումը մտել է եզրափակիչ փուլ» հոդվածի (<http://www.shame.am/ru/news/view/67166.html>) 178 հազար ընթերցողներից հոդվածին գնահատական տվողները բավական բարձր են գնահատել այն: Այսպես, նրանց ճնշող մեծամասնությունը (66,4%) հոդվածը գնահատել է «գերազանց», 13,21%-ը գնահատել է «լավ»՝ դրանով իսկ փաստացի արտահայտել իր լիակատար համաձայնությունը դրանում պարունակվող հիմնական եզրահանգմանը: Ընթերցողներին հիշեցնենք, որ այդ հրապարակման գլխավոր եզրահանգումը հետևյալն է. «Եթե Հայաստանում խափանարար կազմակերպությունների գործունեության օպերատիվ և կոշտ կասեցման միջոցներ չծեռնարկվեն, մեր «արևմտյան բարին կամեցողները» կփորձեն պետականության քանդման այդ տեխնոլոգիաներն իրականացնել Ռուսաստանի Դաշնության Հյուսիսային Կովկասի հանրապետություններում»: Ընդ որում՝ բնականաբար, հարց է ծագում. որքանո՞վ է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը «նպաստելու» այդ տեխնոլոգիաների իրականացմանը կամ, հակառակը, արգելակելու դրանց ընթացքը: Կարծում եմ, որ այս հարցն ունի ոչ միայն գոյության իրավունք, այլև ակնկալում է սպառիչ պատասխան:

Եվ այսպես, հարգելի ընթերցող, մի փոքր վիճակագրություն: Հույս ունեմ հիշողության մեջ դեռ թարմ են ՀՀ «Ժողովարչապետի» վերամբարձ խոստումները, որ երկրում 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումից հետո, որը նրա կատարողներն անվանում են «թավշյա հեղափոխություն», սպասվում է ներդրումային բում: Այդպե՞ս է արդյոք: Դիմենք վիճակագրությանը: Եվ այսպես, համաձայն «Հայաստանի Հանրապետության 2019թ.

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

հունվար-փետրվարի սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկագրի (էջ 93), եթե զուտ ֆինանսական պարտավորությունները («զուտ» տերմինը նշանակում է ավելացումներից հանած տվյալ ֆինանսական գործիքի գծով մարումները) 2017թ. հունվար-դեկտեմբերին կամ ամբողջ ներդրումները կազմել են \$400,3 մլն (առանց ֆինանսական ածանցյալների), ապա 2018թ. հունվար-դեկտեմբերին, ֆինանսական պարտավորությունների զուտ ստանձնումը, համապատասխանաբար, \$811,2 մլն: Այսպիսով, 2018թ. տեղի է ունեցել ՀՀ զուտ ֆինանսական պարտավորությունների կրկնակի աճ: Ընդ որում՝ նկատենք, որ եթե 2017թ. ուղղակի ներդրումները կազմել են \$249,8 մլն, ապա 2018թ. տեղի է ունեցել ուղղակի ներդրումների հիրավի «հեղափոխական աճ»՝ մինչև \$4,5 մլն: Չէ՞ որ հող էր նախապատրաստվել Ն. Փաշինյանի համար, որպեսզի հայտարարեր տնտեսական նոր հեղափոխության սկիզբը:

«Տնտեսական հեղափոխության ջատագովների» տնտեսական քաղաքականության հանդեպ անվստահության անուղղակի հաստատումն է դրամական միջոցների (տրանսֆերտների) գոյություն ունեցող արտահոսքը բանկային համակարգի միջոցով, որը տեղի ունեցավ 2018թ.: Այսպես, եթե 2017թ. հունվար-դեկտեմբերին դրամական միջոցների (ֆիզիկական անձանց) զուտ արտահոսքը ՀՀ-ից արտասահման կազմել է \$1 մլրդ 25 մլն, ապա 2018թ. հունվար-դեկտեմբերին, համապատասխանաբար, \$1 մլրդ 188,4 մլն: Սա ֆինանսական միջոցների զուտ արտահոսքի ամենաբարձր ցուցանիշն է վերջին 10 տարիներին (տե՛ս ՀՀ ԿԲ 2018թ. Տեղեկատու, էջ 84, ՀՀ ԿԲ Տեղեկատու, 2019թ. հունվար, էջ 15): Այս պայմաններում ՀՀ ներդրումային գրավչության մասին խոսելն անգամ հավի ծիծաղը կշարժի: Չէ՞ որ փաստը, որ 2018թ. ՀՀ-ից դուրս է բերվել \$1 մլրդ 188,4 մլն, ինքնին խոսուն է: Չարժե կասկածել, որ ցանկացած փոքրիշատե մեղսունակ ներդրող, իմանալով այս վիճակագրության մասին, որևէ պարզաբանման կարիք չի ունենա ՀՀ ներդրումային գրավչության մասին: Եվ ահա այս ֆոնին հուսահատախառն զմայլանք է առաջացնում այն, երբ ՀՀ-ում իշխանության ղեկին գտնվողները հպարտանում են 2018թ. արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպի երկնիշ ցուցանիշներով, որը կազմել է 114,7% (տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբերին», էջ 123, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերին», էջ 121), ընդ որում՝ արտահանման աճի տեմպը կազմել է 107,5%, ներմուծմանը՝ 18,66%: Գալիս ես այն եզրահանգման, որ նրանք բնավ չեն գիտակցում, թե ինչ բացասական հետևանքներով է դա հղի ՀՀ վճարային հաշվեկշռի համար: Այսպես, եթե 2017թ. արդյունքներով ՀՀ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կազմել է (միևնույն) -\$1 մլրդ 939,8 մլն, ապա 2018թ. արդյունքներով՝ համապատասխանաբար (միևնույն) -\$2 մլրդ 551,3 մլն, այսինքն՝ մեկ տարում տեղի է ունեցել ՀՀ առևտրային հաշվեկշռի

դեֆիցիտի աճ \$611,5 մլն-ով: Նման իրավիճակը, մեր հայրենակիցներից ստացվող տրանսֆերտների ծավալի միաժամանակյա կրճատման և ներդրումների աճի փաստացի բացակայության հետ միասին, կործանարար ազդեցություն ունեցավ ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա: Այսպես, եթե 2018թ. հունվար-դեկտեմբերին վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը կազմել է (միևնույն) -\$279,67 մլն, ապա 2018թ. նույն ժամանակամիջոցում՝ համապատասխանաբար (միևնույն) -\$1 մլրդ 130,58 մլն: Ընթերցողներին հետագա տնտեսական հաշվարկներով չհոգնեցնելու համար նշեն, որ ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի դեֆիցիտի ֆինանսավորումը հնարավոր է՝ 1. օտարերկրյա ներդրումների և պարտատոմսերում ներդրումների, 2. բաժնետոմսերում օտարերկրյա ներդրումների, 3. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի պաշարների վաճառքի, 4. ներքին ներդրողների կողմից արտասահմանյան ակտիվների վաճառքի միջոցով: Նշենք, որ Հայաստանի արտաքին պարտքը 2019թ. կավելանա \$490 մլն-ով և տարեվերջին կհասնի ՀՆԱ 49,8%-ին (ազգային արժույթով), ընդ որում, խոշոր վարկ՝ \$343 մլն-ի չափով, նախատեսվում է ստանալ Ռուսաստանից (համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության պետպարտքի կառավարման վարչության ներկայացուցիչ Արթուր Համբարձումյանի հայտարարության (տե՛ս «Հայաստանի պետական պարտքը կավելանա կես միլիարդ դոլարով», 21.12.2018թ., arm-portal.ru/news/economy/gosudarstvennyiy-dolg...): Այս պայմաններում ակնհայտ է, որ զգալի օտարերկրյա վարկեր, ինչպես և բաժնետոմսերում օտարերկրյա ներդրումներ ստանալու հույս չարժե ունենալ, իսկ ներքին ներդրողների կողմից արտասահմանյան ակտիվների վաճառքի մասին խոսելը բնավ լուրջ չէ: Հանուն ինչի՞ անեն դա: Այսինքն՝ ընթացիկ հաշվի հսկայական դեֆիցիտի ծածկման միայն մի ճանապարհ է մնում՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի պաշարների վաճառքը: Այսպես, համաձայն ՀՀ ԿԲ Տեղեկագրի՝ 2019թ. փետրվար (էջ 64) – 2018թ. դեկտեմբերի վերջի համար ՀՀ ԿԲ զուտ միջազգային պահուստները կազմել են 765 մլրդ 792 մլն դրամ կամ \$1 մլրդ 585,5 մլն, հունվարի վերջին՝ 641 մլրդ 240 մլն դրամ կամ \$1 մլրդ 316,4 մլն: Այսինքն՝ 2019թ. հունվարին ՀՀ ԿԲ զուտ միջազգային պահուստները (այսուհետ՝ ԶՄՊ) 2018թ. դեկտեմբերի համեմատ կճատվել են \$269,1 մլն-ով: Հանուն արդարության նշենք, որ ս.թ. փետրվարին ԶՄՊ-ը հունվարի համեմատ համալրվել են \$89,4 մլն-ով: Ոչ, հարգելի ընթերցող, ԶՄՊ ավելացումը բնավ «տնտեսական հեղափոխության» առաջին ծիլերի հետևանքը չէ: Պարզապես 2019թ. հունվար-փետրվարին տեղի է ունեցել ֆիզիկական անձանց կողմից բանկային համակարգի միջոցով տրանսֆերտների զուտ ներհոսքի աճ 2018-ի նույն ժամանակամիջոցի համեմատ: Եվ դա տեղի է ունեցել ս.թ. հունվար-փետրվարին ներմուծման ծավալների էական կրճատման հետ մեկտեղ: Այսպես, 2019թ. հունվարին, 2018թ. հունվարի համեմատ, տեղի է ունեցել ներմուծման ծավալների անկում 9,3

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

տոկոսային կետով, փետրվարին, համապատասխանաբար, 2,5 տոկոսային կետով: ՀՀ տնտեսությունում բացասական միտումների կասեցման գործուն միջոցներ չձեռնարկելու դեպքում առաջիկա 6 ամսից – մեկ տարում անխուսափելիորեն տեղի կունենա ազգային արժույթի՝ դրամի մեծ արժեզրկում, ինչը, իր հերթին, կհանգեցնի գների բազմակի բարձրացման, աշխատավարձերի, թոշակների, սոցիալական նպաստների վճարումների ուշացման: Կնվազի հարկերի հավաքելիությունը, կկրճատվի համախառն ներքին արտադրանքը: Ավաղ, տնտեսությունում այսքան վտանգավոր դրությունը գիտակցելու, տնտեսական կոլապսի կանխմանն ուղղված համարժեք միջոցների ընդունման փոխարեն մենք դառնում ենք վկաները նորանոր շոուների և այլ անհրապույր տեսարանների, որոնք անխուսափելիորեն կհանգեցնեն անդամալի կորուստների, հայոց պետականության տնտեսական հիմքերի խափանման: Գիտակցո՞ւմ են արդյոք սա, թե՞ ոչ ՀՀ կառավարությունում:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ հայոց պետականության քայքայման տեխնոլոգիաները, որոնց մասին խոսվել է նախորդ հոդվածներում, իրենց «ամրագրումն» են ստանում ՀՀ տնտեսական հիմքերի վերջնական քայքայումը կանխելու ուղղությամբ «ժողվարչապետի» անգործության արդյունքում:

Ի մի բերելով ավելի վաղ հրապարակված հոդվածներում պարունակվող եզրահանգումները՝ մենք կարող ենք եզրակացնել, որ ներկայում վկաներն ենք տնտեսության կառավարելիության կորստի, ապագաղափարայնացման, հայ քրիստոնեական քաղաքակրթությանը բնորոշ արժեքներից հրաժարման: Որպեսզի ասածս մերկապարանոց չինչի, հղում կատարեմ ս.թ. ապրիլի 5-ին ՀՀ Ազգային ժողովի ամբիոնից տրանսպենդերի ունեցած ելույթին, որը մեզ սովորեցնում էր ինչպես ապրել և ինչից ամաչել: Տպավորություն է ստեղծվում, թե գործ ունենք իշխանությունների կողմից քաջալերվող «դեմոկրատական», իբր ինքնաբուխ շարժումների ամենաթողության հետ: Նշենք, որ այս ամենը Հայաստանի ներկա իշխանությունների տիկնիկավարներն իրականացնում են գիտակցաբար, հստակ ու մանրամասն մշակված գիտական հիմքով: Հարգելի ընթերցողը, հավանաբար, գլխի ընկավ, որ խոսքը մեր առօրյա կյանքում «կառավարվող քաոսի» բաղադրիչներ մտցնելու մասին է: Իսկ գլխավոր նպատակը նույնն է՝ գոյություն ունեցող հայ ազգային պետության, մեր ավանդական մշակույթի ապամոնտաժում, այսինքն՝ զանգվածային գիտակցության և աշխարհայացքի վերակառուցում մարդու հոգևորի վրա մանիպուլյացիաների արդի միջոցների կոշտ ազդեցության միջոցով, տեղեկատվական, սոցիալ-մշակութային տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչի մասին արդեն գրել են:

Այս առնչությամբ կցանկանայի ուշադրություն հրավիրել հետևյալի վրա: Այն պայմաններում, երբ Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը բոլորովին չի թաքցնում իր մտադրությունները՝ ափշերոնյան սուլթանության համար

հարմար ժամանակ լայնածավալ պատերազմ սկսել Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դեմ, հատկապես չարագուշակ է հնչում Հայաստանի ու Արցախի քաղաքացիների գիտակցությունում հետևողականորեն ներդրվող նսեմ գրպարտչական տեղեկատվությունն այն մասին, որ Ապրիլյան (2016թ.) պատերազմն իբր «պայմանավորված» էր: Բավական է ծանոթանալ այս տեղեկատվության հիմնական աղբյուրի հետ՝ և դժվար չի լինի տեսնել, թե որտեղից են աճում այսքան ցինիկ տեղեկատվության ականջները, որը, քիչ է, թե սկզբից մինչև վերջ կրում է գրպարտչական բնույթ, դեռ մի բան էլ հետապնդում է նենգ նպատակներ: Դրված է բոլոր միջոցներով, բացահայտ ստի օգնությամբ ՀՀ և Արցախի Հանրապետության գլխավոր ռազմական ղեկավարության հանդեպ հավատը խարխլելու խնդիրը: Այս բարոյական վիժվածքների մտահոլացման համապատասխան՝ նման տեղեկատվության տարածումը ամենակործանարար ձևով կներգործի Հայաստանի ու Արցախի զինված ուժերի ծառայողների գիտակցության վրա: Նրանց խնդիրը պարզ է՝ կասկածի որդը գցել Արցախյան 1992 – 1994թթ. ազատագրական պատերազմի, Ապրիլյան (2016թ.) պատերազմի հերոսների, մեր հայրենիքի այսօրվա պաշտպանների գործողությունների ազնվության հարցում:

Իսկ թե ինչպես է այս բոլոր խափանարար գործողություններին արձագանքել ՀՀ «Ժողվարչապետը»՝ դատեք ինքներդ: Այսպես, 2018թ. դեկտեմբերի 18-ին լրագրողների հետ ձեպագրույցում այն ժամանակ դեռ վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանն ընդգծեց, որ Ապրիլյան պատերազմի հետ կապված հարցերը մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ հասարակությունը շատ հարցեր ունի այդ պատերազմի վերաբերյալ: Լրագրողների հարցին, թե եղել է արդյոք Ապրիլյան պատերազմը պայմանավորված պատերազմ, ինչպես պնդում էին ոմանք, Փաշինյանը պատասխանել է, որ այդ ամբողջ ընթացքում բանավոր և գրավոր ինֆորմացիա է գալիս, որը դեռ ստուգման կարիք ունի. «Ես գիտեմ, որ կա նման վարկած, այն լայնորեն քննարկվել է: Բայց մի բանում մի կասկածեք. մեր բոլոր գործողություններն ուղղվելու են այն բանին, որպեսզի բացահայտվի մեզ համար կարևոր ճշմարտությունը, անգամ եթե այն առաջին հայացքից հակադիր տպավորություն թողնի»: «Ժողվարչապետի» այս կոչը, իհարկե, սպասելի էր և լսվեց: Այսպես, ս.թ. ապրիլի 3-ին ոչ անհայտ 1in.am ինտերնետ պորտալը, որը շրայլորեն ֆինանսավորվում է օվկիանոսի այն կողմից, հարցազրույց է վերցրել «Հայ կառուցողական կուսակցության» առաջնորդ Անդրիաս Դուկասյանից, որում նա, մասնավորապես, ասել է. «Ապրիլյան պատերազմի արդյունքում տեղի ունեցավ հրադադարի գծի ակնհայտ խախտում, որը չունեցավ որևէ միջազգային հետևանք: Այս ամենն ամփոփելով՝ մենք եկանք եզրահանգման, որ տեղի էր ունեցել դավաճանություն, և Հայաստանի ղեկավարությունը սպասարկել է շահեր, որոնք որ բերել են արհեստականորեն այն վիճակի, որից տպավորություն էր ստեղծվում, որ

Իլիհան Ալիևը կարող է ինքնակամ պատերազմներ հրահրել, մարդ սպանել և մնալ անպատիժ, ինչպես եղավ ապրիլյան դեպքերի ժամանակ, ու առ այսօր Հայաստանի Հանրապետությունը իր որևէ պաշտոնական գործողությունով այս իրավիճակը չի փոխել... Մեր կողմից հրապարակված տեսանյութը վտանգում էր ապրիլյան պայմանագրային պատերազմի ամբողջ դավադրությունը և բացահայտում էր, որ հայկական կողմն ունի ապացույցներ, որ Ադրբեջանն է կատարել հարձակումը» (<https://www.1in.am/2535056.html>, «2016-ի ապրիլին տեղի է ունեցել դավաճանություն, և ՀՀ նախկին ղեկավարությունը սպասարկել է կոնկրետ շահեր»): Ա.Ղուկասյանի մերկապարանոց մեղադրանքները, անկասկած, իրավական գնահատական են պահանջում: Դրանց նպատակն է վարկաբեկել Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությանը: Վերը նշված հոդվածին զուգահեռ՝ նույն 1in.am ինտերնետ պորտալում հրապարակվել է նաև մեկ այլ հոդված՝ «Ազենտների պայմանավորված պատերազմը». Ապրիլյան քառօրյան միջազգային դավադրություն էր, թե՞ պետական դավաճանություն» վերնագրով (<https://www.1in.am/2535053.html>): Որպես այդ հոդվածի ամփոփում կարդում ենք. «Եղել է նախագիծ՝ հանձնել տարածք մեծ զոհերով և կանգնեցնել պատերազմը այն պահին, երբ (տարածքներն) արդեն հանձնված են, ու հայտարարել, որ չենք վերցնի, որովհետև ավելի մեծ զոհեր կտանք: Այս մեխանիզմը աշխատեցվեց»: Այս զրպարտագրի հեղինակը «Անալիտիկոն» ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնի ղեկավար Մանվել Սարգսյանն է: Բնականաբար, վերը նշված երկու հոդվածների հեղինակները ֆինանսավորվում են արտասահմանից: Հատկանշական է, որ «պետական դավաճանության» մասին խոսակցությունները հրահրվում են բացառապես տարատեսակ քաղաքագետների ու վելուծաբանների կողմից, որոնք մի անսասան ընդհանրություն ունեն՝ ռուսատյաց են: Ափսոսանք է առաջացնում այլ բան. այն, որ այս ամբողջ տեղեկատվական նեխվածքը, վերջնարդյունքում, ընկնում է ՀՀ և Արցախի Հանրապետության զինված ուժերի ղեկավարությանը, կրկնում են, վարկաբեկելու համար զօրուգիշեր նախապատրաստվող պարարտ հողի վրա:

Խորհելով Հայաստանում վերջին երկու-երեք շաբաթներին տեղի ունեցած իրադարձությունների մասին, չգիտես ինչու, հիշեցի Վոլտերի «Կանդիդ» փիլիսոփայական վեպի հայտնի կերպարին: Այո, հարգելի ընթերցող, դուք իրավացի եք, խոսքը լավատեսության կրող Պանգլոսի մասին է՝ Կանդիդի ուսուցչի, Վեստֆալիայի (Գերմանիա) Տունդեր Տեն Տրոնկ ամրոցում նրա ապրած ժամանակ: Պանգլոսը վեպում քարոզում է, որ ամեն բան դեպի լավն է տանում աշխարհներից մեր լավագույն աշխարհում, որ չարը լոկ ստվերն է հիասքանչ նկարում, իսկ առասպելը կատարյալ է և նպատակաուղղված, ու չկա նպատակ առանց պատճառի. ամեն բան աշխարհում կատարվում է հանուն սահմանված նպատակի: Դե, ահա, մեր «ժողվարչապետին» էլ իր կառավարման 11 ամիսներին թվում է, թե այն

ամենը, ինչ կատարվում է «Նոր Հայաստանում», դեպի լավն է տանում: Վերցնենք թեկուզ Ն.Փաշինյանի ս.թ. մարտի 6-ի հայտարարությունը ՀՀ Ազգային ժողովում կառավարության հարցուպատասխանի ժամանակ: Անդրադառնալով ՀՀ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունների կատարմանը, մասնավորապես՝ գնումներից հետո հսկիչ-դրամարկղային կտրոններ պահանջելու մասով, Ն.Փաշինյանն ասաց. «Մենք աննախադեպ զարգացում ունենք: Այս տարվա հունվար-փետրվարին ՀՀ-ում տպագրվել են 12,5 մլն-ով ավելի հսկիչ-դրամարկղային կտրոններ՝ անցած տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ: Դրա արդյունքում այս տարվա հունվար-փետրվարին առևտրային շրջանառությունն ավելացել է 35 մլրդ դրամով: Եվ արդյունքում մենք հիմա ավելի քան վստահ ենք նայում պետական եկամուտների հավաքմանը 2019 թվականին»: Ուզում ես բացականչել՝ ցնծա՜, հայ ժողովուրդ, տնտեսական հեղափոխությունը վստահ քայլերով մեկնարկել է: Հարգելի ընթերցող, ես բնավ դեմ չեմ հարկային վարչարարության մշտական կատարելագործմանը, առևտուրը ստվերից հանելուն, ամենևին ոչ: Ամբողջ հարցը Ն.Փաշինյանի կողմից ՀՀ հարկային համակարգի կատարելագործման էության ընկալման մեջ է: Նա բոլորովին չի խորանում այն պարզ ճշմարտությունն ընկալելու մեջ, որ հարկային համակարգը պետք է ՀՀ-ի համար դառնա մեր միանգամայն սահմանափակ ֆինանսական ռեսուրսների հավաքման կարևորագույն մեխանիզմներից մեկը պետության տնտեսական, քաղաքական և սոցիալական խնդիրների լուծման համար: «Ժողվարչապետը» չունի հարկային համակարգի օգնությամբ ծեռնարկատիրական, արտադրական և ոչ արտադրական գործունեության էական մասի ֆինանսավորումն ապահովելու անհրաժեշտության տեսլական: Նրա համար գլխավորը «հսկիչ-դրամարկղային սարքերի կտրոնների աննախադեպ աճն է»: Բայց սա առանձին վերլուծության թեմա է:

Վերադառնալով Պանգլոսի համանմանությանը՝ նշենք, որ «Ժողվարչապետը» մի անգամ հավատալով, որ «նոր Հայաստանում» ամեն բան տանում է դեպի լավը աշխարհներից այս լավագույն աշխարհում, ի հեճուկս ամենայն ակնհայտության՝ հավատարիմ է մնում իր մոլորությանը, որ 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումը, որն ինքն ու իր զինակիցներն անվանում են «թավշյա հեղափոխություն», բարիք է հայ ժողովրդի համար: Ուզում եմ հավատալ, որ նա անկեղծ է իր այս մոլորության մեջ, դրա անուղղակի հաստատումն են նրա անթաքույց ուրախությունն ու հպարտությունը, որ չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում ինքը և K⁰-ը Հայաստանում մոգոնել են տնտեսական հեղափոխություն, որի առաջին ծիլերն ակնհայտ են՝ 2019թ. հսկիչ-դրամարկղային սարքերի կտրոնների աննախադեպ աճը 2019թ. հունվար-փետրվարին:

Հետզորության փոխարեն: Հոգվածն ավարտելով՝ ականա մտածեցի. գուցե փոքր-ինչ խտացնում եմ գույները: Հետո այդ միտքն անմիջապես

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

ցնդեց, հենց որ հիշեցի Հայաստանի Հանրապետության և Արցախի բազմաթիվ մարտահրավերների ու սպառնալիքների մասին, որոնց վերաբերյալ ստիպված լուծում ես, որպեսզի նվեր չանես ամիշերոնյան սուլթանին: Այս մտորումների ընթացքում ականա մտաբերեցի Լոուրենս Պիտերի սկզբունքի առանձին հետևություններ, որոնք առաջադրվել և հիմնավորվել են նրա համանուն գրքում: Ահա մի քանի հետևություն Լոուրենս Զ.Պիտերի «Պիտերի սկզբունքը» գրքից.

- Սերուցքը վեր է բարձրանում, քանի դեռ չի թթվել:

- Աշխարհում գոյություն ունեցող ցանկացած պաշտոնի համար ինչ-որ տեղ մարդ կա, որն ի գործու չէ համապատասխանել դրան: Ըստ ծառայության առաջ ընթանալու բավականաչափ թվի պարագայում այդ պաշտոնը կգբաղեցնի հենց նա:

- Ամբողջ օգտակար աշխատանքը կատարվում է նրանց կողմից, ովքեր դեռ չեն հասել իրենց անձեռնհասության մակարդակին:

- Հիերարխիայում անհատական մեծագործությունները հակառակ համեմատական են զբաղեցրած պաշտոնի բարձրությանը: Այլ խոսքով՝ որքան մեծ է ուղղահայաց աճը, այնքան փոքր է հորիզոնականը:

- Հավասար հնարավորությունները նշանակում են, որ յուրաքանչյուրին նույն չափով տրամադրվում է անձեռնհաս դառնալու հնարավորություն: Անգամ տնային տնտեսուհին կարող է կառավարել պետությունը:

- Պաշտոն ստանալն ավելի դժվար է, քան պաշտոնին մնալը:

Եվ ուրեմն, հարգելի ընթերցող, եթե ուշադիր վերլուծենք ՀՀ «Ժողվարչապետի» գործունեությունը, ականա կգանք անխուսափելի եզրահանգման. Նիկոլ Փաշինյանը «Պիտերի սկզբունքը» գրքի կենդանի մարմնավորումն է մեր կյանքում: Բայց դրանից մեզ համար ավելի հեշտ չէ, ավելի շուտ՝ հակառակը: Ի դեպ, կարծում եմ, որ ընթերցողը կհամաձայնի այն պնդմանը, թե՛ փորձանք է, երբ պետությունը ղեկավարում է մեկը, ով հասել է անիրագրելիության մակարդակին:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի I, II, III, V և VI
գումարումների պատգամավոր,
«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

АРТАШЕС ГЕГАМЯН: СТРАТЕГИЧЕСКИЙ СОЮЗ АРМЕНИИ И РОССИИ – ГАРАНТ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

«ХРИСТОС ВОСКРЕСЕ ИЗ МЕРТВЫХ, СМЕРТИЮ СМЕРТЬ ПОПРАВ
И СУЩИМ ВО ГРОБЕХ ЖИВОТ ДАРОВАВ»

Прошел год после государственного переворота апреля-мая 2018 года в Армении (далее – государственный переворот), и думается, что настало время объективного осмысления произошедшего. Не скрою, что за этот период я постоянно делился своими размышлениями о так называемой «бархатной революции» с гражданами Республики Армения (далее – РА) и союзнической России, написав около четырех десятков статей на эту тему. В них было изложено мое видение процессов, имевших место в РА и вокруг нее, более того, считал своим долгом критически осмыслить действия новых властей Армении, которые, на мой взгляд, чреватые опасными последствиями.

При этом указывал на конкретные вызовы и угрозы армянской государственности, раскрывал свои подходы по их преодолению и нейтрализации. Я не случайно вспомнил о российском читателе и, пользуясь случаем, хочу выразить свою особую признательность главному редактору ИА REGNUM Модесту Колерову, главным редакторам армянских патриотических газет «Иравунк» (Ованесу Галаджяну) и «Айоц Ашхар» (Гагику Мкртчяну), интернет-портала Shame.am (Артему Хачатуряну), которые систематически публиковали мои статьи. И эта благодарность отнюдь не формальное соблюдение знаков приличия, так как с первых же дней государственного переворота новые власти РА любую критику в свой адрес воспринимали (или делали вид) не иначе, как происки «контрреволюции», квалифицировали их как опасные диверсионные действия «черных». Напомним читателям, что к тому времени те, кто осуждал действия «революционеров», были отнесены к «черным», в отличие от «белых», то есть новых властей. И в подобной ситуации публикация статей, в которых раскрывалась вся поднаготная совершенного в РА государственного переворота с подробным разъяснением технологий, применяемых их гла-

варями, была весьма опасным делом. При этом в статьях на суд читателей выносились подробные ссылки на труды современных авторов «цветных революций», нацеленные на разрушение государственности. В частности, приводились ссылки на использование главарями «бархатной революции», а скорее их поводьями, рекомендаций, содержащихся в небезызвестной статье одного из теоретиков «цветных революций» Стивена Манна «Теория хаоса и стратегическая мысль». Заметим, что эта статья была напечатана еще в 1992 году в главном профессиональном журнале армии США (US Army War College Quarterly). Так вот если поставить цель подобрать эпиграф к первой годовщине государственного переворота в Армении, то лучше, чем следующие мысли Стивена Манна из его вышеупомянутой статьи, подобрать будет трудно: «Мир обречен быть хаотичным, потому что многообразные акторы человеческой политики в динамической системе... имеют разные цели и ценности (в случае с Н. Пашиняном и К^О это не вызывает сомнений. – А. Г.) ... Каждый актор в политически критических системах производит энергию конфликта... которая провоцирует смену статус-кво, участвуя, таким образом, в создании критического состояния... и любой курс приводит состояние дел к неизбежному катаклизменному переустройству». Следует также отметить «широкий кругозор» поводирей государственного переворота, которые прилежно придерживались рекомендаций и другого теоретика «цветных революций», Джина Шарпа, автора книг по методам ненасильственной борьбы против государственной власти. Так, в ходе осуществления государственного переворота в РА было использовано более 40 рекомендаций из «198 методов ненасильственных действий» («198 Methods of Nonviolent Action»), описанных в одноименном приложении к книге этого автора «От диктатуры к демократии». Об этом ранее уже приходилось писать.

Следует особо отметить, что до реализации практических шагов по осуществлению государственного переворота поводьры наших псевдореволюционеров подготовили благодатную почву для возможно безболезненной смены власти: они весьма нагло, по-хамски на протяжении ряда лет реализовывали в РА концепцию «Окно Овертона», названную так в память о ее авторе – американском общественном деятеле Джозефе Овертоне. Я далеко не случайно использовал эпитеты «нагло» и «по-хамски». Посудите сами, уважаемые читатели, ведь всего лишь десятилетием ранее даже в самом кошмарном сне никто в РА не мог вообразить, что представители ЛГБТ-сообщества могут в Ереване захватить отделение полиции и по сути остаться безнаказанными, или же захватить здание полка патрульно-постовой службы (далее – ППС), при этом убив троих полицейских, а в дальнейшем стать очевидцем перманентных акций про-

теста. Нет, уважаемый читатель, не с осуждением убийц полицейских, а против властей в защиту вооруженных лиц, захвативших здание ППС. Не говоря уже о предоставленной трансгендеру возможности выступать с трибуны Национального Собрания Республики Армения и при этом читать нравоучения о правилах хорошего поведения в отношении сексуальных меньшинств. Здесь следует особо указать на опасность, исходящую от заранее тщательно продуманных и срежиссированных кощунственных действий последователей тоталитарной религиозной секты «Слово жизни». Главное направление их удара – Армянская Апостольская Святая церковь и ее достойнейший предводитель Верховный Патриарх и Католикос Всех армян Гарегин II.

По прошествии года после государственного переворота в Армении уже не приходится сомневаться, что по замыслу их архитекторов к власти должны были быть приведены люди, которые полностью соответствовали бы главному из критериев, изложенных Лоуренсом Дж. Питером в одноименной книге «Принцип Питера». Вот о чем речь: «В иерархической системе каждый индивидуум имеет тенденцию подняться до уровня своей некомпетентности». Убедительным подтверждением этого неопровержимого факта является действующее правительство РА во главе с «народным премьером» Николом Пашиняном. Об этом будет изложено несколько позже. После столь подробного вводного изложения заметим, что, как и следовало ожидать, весьма уязвлено на мои публикации в ИА REGNUM среагировал небезызвестный интернет-портал 1in.am, щедро финансируемый из-за океана, причем не только с этих дальних берегов. При этом бросалась в глаза несколько запоздалая реакция этого интернет-портала, которая, скорее всего, была обусловлена тем, что мои статьи, опубликованные в ИА REGNUM, из раза в раз собирали весьма внушительную читательскую аудиторию в Армении. Чтобы не быть голословным, приведу лишь некоторые факты. Так, известный в РА интернет-портал Shame.am, который буквально через день помещал на своем сайте мои статьи, ранее опубликованные ИА REGNUM, свидетельствует о быстро растущем читательском интересе к ним. Например, число просмотров статьи «Подрыв основ армянской государственности – вступил в завершающую стадию!» составило 369 200, при этом 70,27% читателей, которые оценили статью, поставили ей «отлично», 10,81% – оценили на «хорошо», 17,57% – «очень плохо». Живой интерес у читателей вызвала также и статья «Санкционная война Запада против России – война против каждого члена ЕАЭС» от 2 марта т. г. Так, число просмотров этой статьи составило 128 565, причем из тех, кто ее оценил, 84,62% дали оценку «отлично», лишь 4,62% оценили на «очень плохо». Не оставила читателей равнодушной также и статья «Альтернативой военно-полити-

ческому союзу Армении и России является война», которую просмотрели 217 292 читателя, при этом из оценивших ее 88,89% признали статью «отличной» и лишь 7,41% оценили ее на «очень плохо». Эти данные я привожу вовсе не из желания подчеркнуть свою особую значимость, а с тем, чтобы показать, что в настоящее время налицо запрос сотен тысяч граждан Армении на осмысление подлинных целей государственного переворота, а также налицо нарастающее проявление врожденного для армян чувства опасности, нависшей над нашей Родиной, над каждой армянской семьей. Ведь для маленькой Армении подобная внушительная цифра читательской аудитории дорогого стоит. Замечу, что остальные статьи, опубликованные ИА REGNUM, а в дальнейшем помещенные на сайте Shame.am, просматривали в среднем от 30 до 50 тысяч читателей. Да, запрос армянского общества ознакомиться с иными оценками, отличными от оценок властей, о происходящих в РА событиях не может не вдохновлять. При этом наводит на оптимизм то обстоятельство, что эйфория от совершенного государственного переворота, именуемого их организаторами «бархатной революцией», имеет устойчивую тенденцию к угасанию и сводится на нет. В этой связи не приходится сомневаться в том, что столь внушительная читательская аудитория и ее отношение к публикациям автора не на шутку встревожили спонсоров государственного переворота, которые за последние годы потратили десятки и сотни миллионов долларов на создание благодатной почвы для организации этого государственного переворота в Армении. И вдруг лидер откровенно пророссийской партии (именно так, к нашей чести, воспринимают партию «Национальное Единение» разного рода грантоеды), ваш скромный слуга, осмеливается раскрыть всю подноготную так называемой «бархатной революции», ее подлинные цели: подорвать изнутри армянскую государственность (а это не единственная их цель), создав тем самым зону нестабильности на южных рубежах России, а там и условия для вывода из Армении 102-й российской военной базы, перебазирования из РА российской авиационной базы «Эребуни», а также вывода российских пограничников, охраняющих армяно-турецкую и армяно-иранскую государственную границы. Не скрою, что как у меня, так и у многих моих коллег вызвало усмешку то обстоятельство, когда в интернет-портале 1in.am появились клеветнические статьи и личные оскорбления в мой адрес. Более того, было также заснято оперативное видеоинтервью, изначально извращающее и при этом гневно осуждающее меня как автора якобы антигосударственных публикаций, к тому же в российском ИА REGNUM. Став свидетелем этого, невольно призадумался над тем, что рупор заокеанской пропагандистской машины, коим, бесспорно, является интернет-портал 1in.am, с упорством, присущим «не понятому людьми четвероногому меч-

тателю» (слова принадлежат великому Виктору Гюго, такими оценками обесмертившему обычного осла), систематически призывает директора Службы национальной безопасности РА, нет, требует от него привлечь к уголовной ответственности за антигосударственную деятельность Арташеса Гегамяна. Ярким проявлением моей «преступной» деятельности, согласно политическим воззрениям 1in.am, явилась предметная критика в адрес «народного премьера» РА, а также периодическое упоминание в моих статьях той непреложной истины, что имела место внушительная финансовая поддержка государственного переворота со стороны Фонда Сороса и иже с ним. Аргументация моих «очернителей» помимо прочей ерунды основывалась на приписывании мне мыслей и утверждений, которые были диаметрально противоположны оценкам событий последнего времени, содержащимся в моих статьях. Чтобы не быть голословным, сошлюсь на конкретный факт. Так, в статье «Никол Пашинян неистово буйствует» от 22 февраля т. г. я писал: «Думается, что даже вышеприведенные строки турецкого корреспондента вполне обосновывают правильность решения правительства РА об отправке военно-гуманитарной миссии Армении в Сирийскую Арабскую Республику. При этом замечу, что, на мой взгляд, это единственно правильное решение за все время деятельности властей Армении после государственного переворота апреля-мая 2018 года. И вдруг в этой ситуации, как гром среди ясного неба, прозвучала отповедь Госдепартамента США от 13 февраля т. г. в связи с отправкой в Сирию военно-гуманитарной миссии из Армении».

В то же время в видеоэфире 1in.am тиражировалась приписываемая мне мысль с точностью до наоборот. Нет-нет, уважаемый читатель, не из уст очередного стипендиата Фонда Сороса, а от прихлебателя, некогда присосавшегося к одному из видных военных деятелей Арцахской войны 1992–1994 гг., параллельно, думается, и к личным сбережениям одного из весьма респектабельных армянских банкиров. При этом я вовсе не исключаю, что клеветнические измышления в мой адрес преследовали и другую цель. Ведь это хорошая заявка получить грант из Фонда Сороса и других рассадников демократии и укрепления гражданского общества в Армении, тем более если автор этих лживых опусов является представителем сексуальных меньшинств. Да, обвиняя меня в антигосударственной деятельности, извращая суть моих статей, несомненно, отрабатывают заказ и тех сил, которые то ли из ревности, то ли с целью опустошения политического поля уж больно не хотят мириться с фактом выхода в свет публикаций в ИА REGNUM, а тем более их дальнейшим распространением. Ведь в них, к неудовольствию «политических конкурентов», последовательно раскрывалась безальтернативность стратегического союза Армении и России в деле обеспечения безопасно-

сти РА, более того, обосновывалась необходимость его дальнейшего углубления, повышения уровня армяно-российских отношений до военно-политического союза. Заметим, что подобная политика замалчивания была на руку известному центру силы мировой политики. Не сомневаюсь в том, что соответствующие разъяснения на сей счет были доложены указанному адресату. Нежелательность моих публикаций и в то же время их опасность для поводырей государственного переворота, повторюсь, во многом была обусловлена тем, что они были помещены на сайте российского ИА REGNUM.

Я специально пишу о реакции определенных сил, курирующих интернет-порталы, не подконтрольные разного рода западным спонсорам, сводящей либо к извращению сути моих статей и их охаиванию, либо к полному умалчиванию актуальных вопросов безопасности РА. Думается, что внесение полной ясности в этом вопросе имеет принципиальное значение. Ведь кто «хозяева» этих интернет-порталов в маленькой Армении – ни для кого не секрет. Мое недоумение вызвано тем, что в условиях, когда любому здравомыслящему человеку в РА доподлинно понятно, что Родина в опасности, что Армения в беде, а стало быть все, кому дорога судьба нашего Отечества, должны объединиться, создав единый фронт противодействия угрозам национальной безопасности, мягко выражаясь, почему-то поступают иначе. При этом ради справедливости и для полноты картины отметим и то, что угрозы безопасности армянской государственности, на мой взгляд, исходят вовсе не от какого-то злого умысла «народного премьера», а, как правило, являются закономерным следствием его полной некомпетентности в вопросах государственного управления. Это обстоятельство во многом усугубляется тем, что в «команде» Н. Пашиняна в большинстве своем персонажи, не год и не два питавшиеся из разного рода инородных, чуждых Армении, а порой и откровенно враждебных иностранных фондов.

Уважаемый читатель, я столь подробно изложил мое видение того сложного положения, в котором пребывает Армения после государственного переворота, когда на наших глазах на практике беспрепятственно оттачиваются современные технологии «цветных революций», чтобы задаться вопросом: а что мы этому противопоставляем? С сожалением отмечу, что мы являемся свидетелями того, когда системной работе, проводимой известным центром силы мировой политики, по разрушению армянской государственности и созданию нового очага нестабильности и напряженности в Армении, ближайшем стратегическом союзнике России, по существу противопоставляются единичные информационные контратаки. Благо что эти ответные действия в последнее время становятся все более востребованными со стороны населения РА. Убежден, что в случае

непринятия адекватных мер по нейтрализации угроз национальной безопасности Армении мы станем свидетелями неизбежного жесткого гражданского противостояния в армянском обществе. Увы, сделать такой вывод подсказывает вся логика последних событий в Армении. Подобное развитие ситуации в РА у апшеронских политиков может породить соблазн начать новую военную агрессию против Республики Арцах, что не оставит в стороне как Турцию, так и Иран, не говоря уже о России.

И вот в столь взрывоопасной ситуации объявляется о том, что 19 апреля т.г. премьер-министр РА Никол Пашинян в прямом эфире будет отвечать на вопросы пользователей Facebook. В ходе состоявшегося двухчасового эфира, увы, оправдались самые худшие ожидания – «народный премьер» в блаженном неведении того крайне опасного положения, в котором в настоящее время оказались Республика Армения. Не могло не вызвать тревоги и то обстоятельство, что содержание вопросов, адресованных «народному премьеру», по сути, показало полную отстраненность образованной части армянского общества от действующей власти. Ведь подавляющее большинство поднятых пользователями Facebook вопросов имело бытовую направленность. Это никоим образом не умаляет их значимость, особенно с точки зрения исполнения Н. Пашиняном тех или иных обещаний, которые в течение года, как из рога изобилия, сыпались во время его многочисленных выступлений. Нет, уважаемый читатель, я тревожусь о другом: в ходе прямого эфира в Facebook так и не были затронуты фундаментальные вопросы обеспечения национальной безопасности РА, от решения которых во многом зависит и успешная реализация поднятых социальных задач. В ответах на вопросы пользователей Facebook так и не услышали о том, как армянские власти намерены защищать такие фундаментальные ценности национальной безопасности, какими являются: сохранение армянской государственности в условиях системной подрывной работы, проводимой разного рода грантоедцами; информационная защищенность государства и народа в условиях непрекращающейся информационной войны, развязанной против Армении и Республики Арцах; сохранение христианской национальной идентичности армянства на основе всестороннего развития национальной культуры в условиях упрочения основ ее самобытности; обеспечение высокого уровня благосостояния граждан Армении с указанием конкретных целенаправленных действий правительства по снижению уровня бедности населения РА, сокращению безработицы, поэтапному повышению пенсий. Не говоря уже о том, что так и осталось загадкой, какой видится «народному премьеру» перспектива урегулирования Нагорно-карабахского конфликта, какие конкретные уроки были извлечены из Апрельской войны 2016 года. Словом, внимательное ознакомление

с содержанием вопросов пользователей Facebook, направленных премьер-министру РА, а также его ответы на них приводят к весьма плачевным выводам, а именно: свидетельствуют о полной оторванности части армянского общества от суровых реалий современности. Они все еще находятся в плену иллюзий от чар гегемона «бархатной революции и, повторюсь, полностью оторваны от суровых реалий, в котором оказалась Армения после государственного переворота. С другой стороны, весь этот двухчасовой эфир, бесспорно, отвлек внимание хотя бы части пользователей Facebook от куда более серьезных проблем РА, требующих безотлагательного решения.

Чтобы у читателей не вызвать подозрений в моей предвзятой жесткой оценке состоявшегося прямого эфира в Facebook, сошлюсь на некоторые наиболее часто упоминаемые вопросы и ответы на них, впрочем, публиковать ответы не имеет смысла, так как, со слов Н. Пашиняна, все, что было обещано, им было выполнено. Итак, наиболее злободневные обещания, по мнению «народного премьера», которые были озвучены пользователями Facebook таковы: никакой чиновник не станет устраивать своих «кумов и сватов» в госаппарат; государственный бюджет пообещали увеличить на 10%; правительство полностью списало 12 миллиардов драмов (более \$ 25 млн) штрафов за превышение скорости на трассах; отменить так называемые штрафы по регистраторам, которые компании, специализирующиеся на установке камер слежения скорости и радаров скорости, установили по всей Армении; устранить и монополии на рынках целого ряда товаров (хотя от этого цены на многие из этих товаров показывают тенденцию роста). Можно было и далее продолжить упоминание о якобы выполненных Н. Пашиняном обещаний, однако это изначально напрасный труд, так как еще в июне 2018 г. мной был дан подробный анализ программы деятельности правительства РА, изложенный в статье «Программа правительства – вызов безопасности Армении» от 5 июня 2018 г., где обосновывалась объективность заглавия статьи. Повторюсь, вызывает серьезную тревогу полная неадекватность правительства РА, руководимого Н. Пашиняном, по противодействию угрозам национальной безопасности Армении.

Естественно, в этих условиях напрашивается вопрос: что же помешало Н. Пашиняну, к примеру, внимательно ознакомиться с уже наработанными программными документами по социально-экономическому развитию наших же союзников России или Казахстана. Взять хотя бы указ президента России от 7 мая 2018 года № 204 «О национальных целях и стратегических задачах развития Российской Федерации на период до 2024 года». Ведь те же самые направления, отраженные в национальных проектах России, имеют куда более актуальное звучание и для Армении.

Будь то здравоохранение, образование, демография, культура, экология, малое и среднее предпринимательство, поддержка индивидуальной предпринимательской инициативы, поддержка занятости и др. Увы, мы в очередной раз стали свидетелями того, что люди, достигшие в должностной иерархии уровня своей некомпетентности, в полном соответствии с принципом некомпетентности Лоуренса Дж. Питера, даже осознавая, что не справляются с этой должностью (а в случае с Н. Пашиняном мы имеем классический пример этого явления, о чем свидетельствует его поведение, когда он оказывается в непонятной для него ситуации), как правило, не могут от нее отказаться. В нашем случае при попытке отказа Н. Пашиняна от должности не приходится сомневаться, что он подвергнется жесткому давлению поводырей так называемой «бархатной революции», опасного для судеб государства действия, на которое были потрачены миллионы долларов из самых разных фондов под благими лозунгами о поддержке демократии, упрочении гражданского общества и прочей изначально лживой ахинеи. Ведь уже сейчас ни один думающий гражданин РА не станет сомневаться в том, что их конечная цель – еще раз подчеркнуть – разрушение армянской государственности. Н. Пашинян, решившись на столь мужественный патриотический шаг, будет подвергнут давлению также и со стороны новоиспеченных депутатов Национального Собрания РА, сослуживцев, занявших высокие государственные должности, единственная заслуга которых заключалась в перекрытии улиц Еревана во время несанкционированных митингов или забрасывании яйцами здания Посольства Российской Федерации, сопровождаемые постоянными требованиями вывода 102-й российской военной базы из Армении, озвучиваемыми не единожды руководителем Государственной контрольной службы Давидом Санасаряном. Заметим, что в настоящее время Н. Пашинян одобрил решение следователя о временном прекращении полномочий главы Государственной контрольной службы все того же печально известного Давида Санасаряна. Так, согласно сообщению пресс-секретаря премьер-министра РА Владимира Карапетяна: «Премьер-министр Армении поручил начальнику второго отдела следственного департамента Службы национальной безопасности Республики Армения майору С. Восканяну обеспечить исполнение решения от 18 апреля 2019 года «О временном прекращении исполнения полномочий» начальника Государственной контрольной службы Армении Давида Санасаряна согласно ч. 2 ст. 151 Уголовно-исполнительного кодекса Республики Армения». Заметим, что в отношении последнего в качестве меры пресечения была применена подписка о невыезде. Примечательна на этот счет запись Никола Пашиняна на своей странице Facebook: «Давид – мой друг, но знайте: в Армении неприкасаемых нет. Будь это оппозиционер или пред-

ставитель власти, революционер или контрреволюционер. Кто этого не понял, пусть пребывает в грезах сержантской ностальгии». Здесь позволим себе задать вопрос бравому на слова «народному премьеру»: а на какой почве зародилась дружба с не скрывающим свою русофобию Д.Санасаряном? Неужто на идентичном восприятии будущего Армении в условиях полного разрыва стратегического союза с Россией, вывода 102-й российской военной базы и далее в этом же духе, к чему не единожды призывал Д.Санасарян? Что же столь сердечно объединяет Никола Воваевича с Давидом дядя Сэмовичем? Уважаемый читатель, это вовсе не риторический вопрос, так как политическая опора нынешних властей сплошь и рядом состоит из Давидов и им подобных.

Бесспорно одно: неоднократные заявления Н. Пашиняна о невозможности резких поворотов во внешней политике, о приверженности армяно-российскому стратегическому союзу – это не что иное, как банальное лукавство с его стороны. Вспомним, что, излагая свои истины в Нагорной проповеди, Иисус Христос предупреждал: «Никто не может служить двум господам: ибо или одного будет ненавидеть, а другого любить; или одному станет усердствовать, а о другом нерадеть. Не можете служить Богу и маммоне» (От Матфея святое благовествование, 6:24). Да простит меня Всевышний, что его бессмертные, пронизанные глубоким смыслом священные слова перекладываю на нашу бренную Землю. Никол Воваевич, скажу вам следующее: нельзя дружить с отъявленным русофобом, который всю свою сознательную жизнь посвятил антироссийской деятельности, именно этим и запомнится Давид Санасарян, и при этом, не испытывая никаких угрызений совести, к месту и не к месту клянясь в приверженности армяно-российскому стратегическому союзу. Как бы сказали в этом случае ереванские друзья моей молодости – милоч, твои замшелые провинциальные уловки в наших суровых реалиях не пройдут, а уж тем более в большой политике. Так что уgomонитесь и давайте вместе подумаем о цивилизованной передаче вами власти патриотическим силам Армении, которые за год вашего разрушительного правления силой провидения, к счастью, еще не перевелись. И чтобы сделать этот процесс безопасным для Республики Армения и Республики Арцах, сделайте первый шаг: посодействуйте, чтобы президент РА Армен Варданович Саркисян вместе с президентом Арцах Бако Сааковичем Саакяном подписали совместный указ двух армянских государств «О создании объединенного Комитета обороны вооруженных сил Республики Армения и Республики Арцах». И это ваш единственный шанс, Никол Воваевич, войти в новейшую историю Республики Армения не как разрушитель, а как государственный муж, который на пике кажущейся славы узрел всю опасность своего дальнейшего пребывания на посту премьер-

министра Республики Армения и добровольно обеспечил бескровную передачу власти.

Причем вновь подчеркну, что главными действующими лицами объединенного Комитета обороны кроме соответствующих должностных лиц Армении и Арцаха (за исключением тех, кто ранее был на стипендии Фонда Сороса и других подрывных международных организаций) должны стать первый президент НКР Роберт Кочарян, Герой Арцаха Серж Саргсян, Герои Арцаха Виталий Баласанян, Самвел Бабаян, Аркадий Тер-Тадевосян (Командос), экс-министр обороны РА генерал-полковник Сейран Оганян, бывший министр обороны Республики Арцах генерал-лейтенант Левон Карапетян, то есть государственные и военные деятели, благодаря профессионализму и несгибаемой воле которых была одержана победа в навязанной Азербайджаном Нагорно-Карабахской Республике войне 1992–1994 гг.

Вместо послесловия. Не хотелось завершать статью на грустной ноте, тем более, что граждане Армении, последователи Армянской Апостольской Святой церкви 21 апреля 2019 года отметили праздник Пасхи – Светлое Христово Воскресение. А для наших русских православных братьев во Христе день Святой Пасхи будет отмечаться 28 апреля 2019 года. Думается, что в нынешнее суровое время испытаний для наших народов на верность своим христианским и общечеловеческим ценностям, отраженным в Библии и святыях писаниях других мировых религий, мы должны вновь и вновь постараться осмыслить глубинный смысл слов из Пасхальной молитвы: «Христос воскрес из мертвых, смертью смерть поправ и сущим во гробех живот даровав».

Со светлым праздником Святой Пасхи, уважаемые читатели.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆ Է

«ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ,
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ»

Հայաստանում 2018թ. ապրիլ – մայիսի պետական հեղաշրջումից (այսուհետ՝ պետական հեղաշրջում) հետո անցել է մեկ տարի, և կարծում եմ, որ եկել է տեղի ունեցածի օբյեկտիվ իմաստավորման ժամանակը: Չեմ թաքցնի, որ այդ ընթացքում ես մշտապես, այսպես կոչված, «թավշյա հեղափոխության» մասին մտորումներս կիսել եմ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) և դաշնակցային Ռուսաստանի քաղաքացիների հետ՝ գրելով մոտ չորս տասնյակ հոդվածներ այդ թեմայով: Դրանցում ներկայացվել է ՀՀ-ում և նրա շուրջ տեղի ունեցած գործընթացների իմ տեսլականը, ավելին՝ պարտքս եմ համարել քննադատաբար իմաստավորել Հայաստանի նոր իշխանությունների գործողությունները, որոնք, ըստ իս, հղի էին վտանգավոր հետևանքներով: Ընդ որում՝ մատնանշել եմ կոնկրետ մարտահրավերներն ու սպառնալիքները հայոց պետականության համար, ներկայացրել դրանց հաղթահարման և չեզոքացման վերաբերյալ իմ մոտեցումները:

Պատահաբար չէ, որ հիշեցի ռուս ընթերցողի մասին և, օգտվելով առիթից, ուզում եմ հատուկ երախտագիտությունս հայտնել REGNUM տեղեկատվական գործակալության գլխավոր խմբագրին (Մոդեստ Կոլերովին), հայկական «Իրավունք» (Հովհաննես Գալաջյան) և «Հայոց Աշխարհ» (Գագիկ Մկրտչյան) հայրենասեր թերթերի, Shame.am (Արտյոմ Խաչատրյան) ինտերնետ պորտալի գլխավոր խմբագիրներին, որոնք պարբերաբար հրապարակել են իմ հոդվածները: Եվ այս երախտագիտությունը բնավ ձևական պատշաճության տուրք չէ, քանի որ պետական հեղաշրջման առաջին իսկ օրերից ՀՀ նոր իշխանություններն իրենց հասցեին ցանկացած քննադատություն ընկալել են (կամ ձևացրել են) ոչ այլ կերպ, քան «հակահեղափոխության» փնտրտուք, դրանք որակել են որպես «սևերի» վտանգավոր դիվերսիոն գործողություններ: Ընթերցողներին հիշեցնենք, որ այդ ընթացքում նրանք, ովքեր դատապարտել են «հեղափոխականների» գործողություն-

ները, վերագրվել են «սներին», ի տարբերություն «սպիտակների», այսինքն՝ նոր իշխանությունների: Եվ նման իրավիճակում հողվածների հրապարակումը, որոնցում վեր են հանվել ՀՀ-ում կատարված պետական հեղաշրջման ողջ խորագաղտնիքները՝ դրանց պարագլուխների կիրառած տեխնոլոգիաների մանրամասն պարզաբանումներով, միանգամայն վտանգավոր բան էր: Ընդ որում՝ հողվածներում ընթերցողների դատին էին ներկայացվում մանրամասն հղումներ «գունավոր հեղափոխությունների» ժամանակակից հեղինակների աշխատություններին՝ ուղղված պետականության քայքայմանը: Մասնավորապես, հղումներ էին կատարվում «թավշյա հեղափոխության» պարագլուխների, իսկ ավելի ձիշտ՝ նրանց ուղեվարների կողմից այն երաշխավորությունների օգտագործմանը, որոնք պարունակվում են «գունավոր հեղափոխությունների» տեսաբաններից մեկի՝ Սթիվեն Մանի «Քաոսի տեսությունը և ռազմավարական միտքը» ոչ անհայտ հողվածում: Նկատենք, որ այդ հողվածը տպագրվել է 1992թ. ԱՄՆ բանակի գլխավոր պրոֆեսիոնալ ամսագրում (US Army War College Quarterly): Եվ ահա, եթե նպատակ դնենք Հայաստանում պետական հեղաշրջման առաջին տարելիցի բնաբան ընտրել, ապա ավելի լավ, քան Սթիվեն Մանի հետևյալ մտքերը նրա վերոնշյալ հողվածից, դժվար թե գտնենք. «Աշխարհը դատապարտված է լինել քաոսային, որովհետև մարդկային քաղաքականության բազմակերպ ակտորները դինամիկ համակարգում... ունեն տարբեր նպատակներ և արժեքներ (Ն.Փաշինյան և K⁰-ի պարագայում դա կասկած չի հարուցում – Ա.Գ.): ...Յուրաքանչյուր ակտոր քաղաքականապես կրիտիկական համակարգերում արտադրում է կոնֆլիկտի էներգիա..., որը սադրում է ստատուս-քվոյի փոփոխություն՝ այդ կերպ մասնակցելով կրիտիկական վիճակի ստեղծմանը... և ցանկացած ուղեգիծ իրավիճակը հանգեցնում է անխուսափելի աղետալի վերակառուցման»: Հարկ է նաև նշել պետական հեղաշրջման ուղեվարների «լայն մտահորիզոնը», որոնք եռանդուն հետևել են «գունավոր հեղափոխությունների» մեկ այլ տեսաբան Զին Շարփի՝ պետական իշխանության դեմ ոչ բռնի պայքարի մեթոդների վերաբերյալ գրքի հեղինակի երաշխավորություններին: Այսպես, ՀՀ-ում պետական հեղաշրջման իրականացման ընթացքում օգտագործվել են ավելի քան 40 երաշխավորություններ «Ոչ բռնի գործողությունների 198 մեթոդներից» («198 Methods of Nonviolent Action»), որոնք նկարագրված են այդ հեղինակի «Բռնապետությունից դեպի դեմոկրատիա» գրքի համանուն հավելվածում: Այդ մասին ավելի վաղ արդեն գրել են:

Հարկ է առանձնապես նշել, որ մինչև պետական հեղաշրջման իրականացման գործնական քայլերի կատարումը՝ մեր պսևդոհեղափոխականների ուղեվարները պարարտ հող էին նախապատրաստել հնարավորինս անցնցում իշխանափոխության համար, դիցուք՝ նրանք միանգամայն լկտի, անտաշ ձևով մի քանի տարի ՀՀ-ում իրականացնում էին «Օվերթոնի պատուհանի» հայեցակարգը, որն այդպես է կոչվել նրա հեղինակի՝ ամե-

րիկացի հասարակական գործիչ Ջոզեֆ Օվերթոնի հիշատակին: Ես բնավ պատահական չէ, որ օգտագործեցի «լկտի» և «անտաշ» մակդիրները: Ինքներդ դատեք, հարգելի ընթերցողներ, չէ՞ որ ընդամենը մեկ տասնամյակ առաջ անգամ ամենամոլորական շաբաթը ՀՀ-ում ոչ ոք երևակայել չէր կարող, որ LQPS հանրային ներկայացուցիչները կարող են Երևան քաղաքում զավթել ոստիկանության բաժանմունքը և, ըստ էության, մնալ անպատիժ կամ էլ զավթել պարեկապահակային ծառայության (այսուհետ՝ ՊՊԾ) գնդի շենքը՝ սպանելով երեք ոստիկանի, իսկ հետագայում դառնալ բողոքի շարունակական ակցիաների ականատեսը, չէ, հարգելի ընթերցող, ոչ թե ոստիկաններին սպանողների դատապարտմամբ, այլ իշխանությունների դեմ՝ ի պաշտպանություն զինված անձանց, որոնք զավթել էին ՊՊԾ շենքը: Էլ չեմ ասում տրանսգենդերին ընծեռված հնարավորության մասին՝ ելույթ ունենալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ամբիոնից և հետոն էլ խրատ կարդալ սեռական փոքրամասնությունների հանդեպ լավ վարքի կանոնների մասին: Այստեղ հարկ է հատկապես նշել այն վտանգը, որը բխում է «Կյանքի խոսք» տոտալիտար կրոնական աղանդի հետևորդների նախապես մանրակրկիտ մտածված և բեմականացված սրբապիղծ գործողություններից: Նրանց հարվածի գլխավոր ուղղությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին է և նրա արժանապատիվ հայրապետ, Ծայրագույն պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ը:

Հայաստանում պետական հեղաշրջումից մեկ տարի հետո արդեն չարժե կասկածել, որ նրա ճարտարապետների մտահղացմամբ իշխանության պետք է գային մարդիկ, որոնք լիովին կհամապատասխանեին չափանիշներից գլխավորին, որը ներկայացված է Լոուրենս Ջ. Պիտերի համանուն՝ «Պիտերի սկզբունքը» գրքում: Ահա թե ինչի մասին է խոսքը. «Հիերարխիկ համակարգում յուրաքանչյուր անհատ միտում ունի բարձրանալու մինչև իր անհրազեկության մակարդակը»: Այս անհերքելի փաստի համոզիչ հաստատումն է ՀՀ գործող կառավարությունը՝ «Ժողվարչապետ» Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Այս մասին կներկայացվի մի փոքր ավելի ուշ: Այսքան մանրամասն ներածությունից հետո նշենք, որ, ինչպես և պետք էր սպասել, Ռուսաստանի Դաշնության REGNUM տեղեկատվական գործակալությունում հրապարակված իմ հոդվածներին բավական խոցված արձագանքել է ոչ անհայտ 1in.am ինտերնետ պորտալը, որը շալյուրեն ֆինանսավորվում է օվկիանոսի այն կողմից, ընդ որում՝ ֆինանսավորվում է ոչ միայն այդ հեռավոր ափերից: Աչքի է զարնում ինտերնետ պորտալի մի փոքր ուշացած արձագանքը, որն ավելի շուտ պայմանավորված էր նրանով, որ իմ հոդվածները՝ հրապարակված ՌԴ REGNUM տեղեկատվական գործակալությունում, ամեն անգամ բավական պատկառելի ընթերցողական լսարան էին հավաքում Հայաստանում: Որպեսզի ասածս մերկապարանոց չինչի, բերեմ ընդամենը որոշ փաստեր: Այսպես, ՀՀ-ում հայտնի Shame.am ինտերնետ պորտալը, որը տառացիորեն մեկ օր անց իր

կայքում տեղադրում էր իմ հոդվածները՝ մինչ այդ հրապարակված ՌԴ REGNUM տեղեկատվական գործակալությունում, վկայում է դրանց հանդեպ ընթերցողական արագ աճող հետաքրքրության մասին: Օրինակ, «Հայոց պետականության հիմքերի խափանումը մտել է եզրափակիչ փուլ» հոդվածի դիտարկումների քանակը կազմել է 369200, ընդ որում՝ ընթերցողների 70,27%-ը, որոնք գնահատել են հոդվածը, այն գնահատել է «գերազանց», 10,81%-ը՝ «լավ», 17,57%-ը՝ «շատ վատ» (տե՛ս www.shame.am/ru/news/view/67166.html): Ընթերցողների մեծ հետաքրքրությունն է առաջացրել նաև ս.թ. մարտի 2-ի «Արևմուտքի պատժամիջոցների պատերազմն ընդդեմ Ռուսաստանի պատերազմ է ԵԱՏՄ յուրաքանչյուր անդամ պետության դեմ» հոդվածը: Այդ հոդվածի դիտարկումների թիվը կազմել է 128565, ընդ որում՝ հոդվածը գնահատողների 84,62%-ը տվել է «գերազանց» գնահատական, միայն 4,62%-ն է տվել «շատ վատ» գնահատականը (տե՛ս www.shame.am/ru/news/view/67081.html): Ընթերցողներին անտարբեր չի թողել նաև «Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական դաշինքի այլընտրանքը պատերազմն է» հոդվածը (տե՛ս www.shame.am/ru/news/view/66907.html), որը կարդացել է 217292 ընթերցող, ընդ որում՝ այն գնահատածների 88,89%-ը հոդվածը համարել է «գերազանց», և միայն 7,41%-ն է այն գնահատել «շատ վատ»: Այս տվյալները ես ներկայացնում եմ ոչ թե իմ առանձնակի նշանակությունն ընդգծելու ցանկությունից, այլ որպեսզի ցույց տամ, որ ներկայում ակնհայտ է Հայաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների պահանջը՝ իմաստավորել պետական հեղաշրջման իսկական նպատակները, ինչպես նաև ակնհայտ է մեր Հայրենիքի վրա, յուրաքանչյուր հայ ընտանիքի վրա կախված աճող վտանգի՝ հայերի համար բնածին երկյուղը: Չէ՞ որ փոքր Հայաստանի համար ընթերցողական լսարանի նման պատկառելի թիվը թանկ արժե: Նշեմ, որ մյուս հոդվածներս՝ հրապարակված REGNUM տեղեկատվական գործակալությունում, իսկ հետո տեղադրված Shame.am կայքում, կարդացել են միջինը 30-50 հազար ընթերցողներ: Այո, հայ հասարակության պահանջարկը՝ ծանոթանալ իշխանությունների գնահատականից տարբեր այլ գնահատականների ՀՀ-ում ընթացող իրադարձությունների մասին, չի կարող չոգևորել: Ընդ որում՝ լավատեսության է մղում այն հանգամանքը, որ կազմակերպիչների կողմից «թավշյա հեղափոխություն» անվանված պետական հեղաշրջման էյֆորիան մարելու և գրոյի հանգեցնելու կայուն միտում է դրսևորում: Այս առնչությամբ չարժե կասկածել, որ այսքան պատկառելի ընթերցողական լսարանը և նրա վերաբերմունքը հեղինակի հրապարակումների հանդեպ լրջորեն մտախոգել են պետական հեղաշրջման հովանավորներին, որոնք վերջին տարիներին տասնյակ ու հարյուր միլիոնավոր դոլարներ են ծախսել Հայաստանում այդ պետական հեղաշրջման կազմակերպման համար պարարտ հող նախապատրաստելու նպատակով: Եվ հանկարծ բացահայտ ռուսամետ կուսակցության (հենց այդպես են, ի պատիվ մեզ, ընկալում «Ազգային Միաբա-

նություն» կուսակցությունը տարատեսակ գրանտակերները) նախագահը՝ ծեր խոնարհ ծառան, համարձակվում է բացել, այսպես կոչված, «թավշյա հեղափոխության» ողջ գաղտնարանները, նրա իսկական նպատակները, դիցուք՝ ներսից խափանել պետականությունը (իսկ դա նրանց միակ նպատակը չէ)՝ դրանով իսկ ստեղծելով անկայունության գոտի Ռուսաստանի հարավային մատույցներում, իսկ այնտեղ էլ՝ պայմաններ Հայաստանից 102-րդ ռուսական ռազմակայանի, «Էրեբունի» օդանավակայանից ռուսական ավիաբազայի, ինչպես նաև ռուս սահմանապահների դուրսբերման համար, սահմանապահներ, որոնք պաշտպանում են հայ-թուրքական և հայ-իրանական պետական սահմանները: Չեմ թաքցնում, որ ինչպես իմ, այնպես էլ բազմաթիվ գործընկերներիս քնծիծաղն ու զմայլանքն է առաջ բերում այն հանգամանքը, երբ 1in.am ինտերնետ պորտալում ի հայտ են գալիս գրպարտչական հոդվածներ և անձնական վիրավորանքներ իմ հասցեին: Փաստ, որը վկայում է գրածներիս ճշմարտացիության, իսկ ընդդիմախոսներիս թուլության մասին: Ավելին, նաև նկարահանվեց օպերատիվ տեսահարցագրույց, որն ի սկզբանե խեղաթյուրում էր և միաժամանակ ցատումնալից դատապարտում ինձ՝ որպես իբր հակապետական հրապարակումների հեղինակի, այն էլ՝ ռուսական REGNUM տեղեկատվական գործակալությունում: Դրա վկան դառնալով՝ ականա մտածեցի, որ անդրօվկիանոսյան քարոզչամեքենայի խոսափողը, ինչպիսին, անվիճելիորեն, 1in.am ինտերնետ պորտալն է, համառությամբ, որը հատուկ է «մարդկանց կողմից չհասկացված չորքոտանի երագողին» (միտքը մեծն Վիկտոր Հյուգոյին է, որն այդպիսի գնահատականով անմահացրել է սովորական ավանակին), պարբերաբար կոչ է անում ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը, չէ՛ նրանից պահանջում է հակապետական գործունեության համար քրեական պատասխանատվության ենթարկել Արտաշես Գեղամյանին: Իմ «հանցավոր» գործունեության վառ դրսևորումը, համաձայն 1in.am-ի քաղաքական հայացքների, առարկայական քննադատությունն էր ՀՀ «Ժողվարչապետի» հասցեին, ինչպես նաև իմ հոդվածներում այն անքակտելի ճշմարտության հաճախակի հիշատակումը, որ տեղի է ունեցել պետական հեղաշրջման պատկառելի ֆինանսական աջակցություն Սորոսի ֆոնդի ու նրա նմանների կողմից: Ինձ «սևացնողների» փաստարկները, ամեն տեսակ հիմարություններից զատ, հիմնվում էին նաև ինձ այնպիսի մտքեր ու պնդումներ վերագրելու վրա, որոնք տրամագծորեն հակադիր են իմ հոդվածներում պարունակվող՝ վերջին ժամանակների իրադարձությունների գնահատականներին: Որպեսզի ասածս մերկապարանոց չինչի, վկայակոչեմ կոնկրետ փաստ: Այսպես, ս.թ. փետրվարի 22-ի «Նիկոլ Փաշինյանը խելահեղ մոլեգնում է» հոդվածում (տե՛ս <https://regnum.ru/news/polit/2578778.html>) ես գրել եմ. «Կարծում եմ, որ անգամ թուրք թղթակցի վերոնշյալ տողերն են լիովին հիմնավորում ՀՀ կառավարության որոշման ճշմարտացիությունը Սիրիայի Արաբական Հանրապետություն Հայաստանից

ռազմամարդասիրական առաքելություն ուղարկելու մասին: Ընդ որում՝ նշեմ, որ, ըստ իս, դա միակ ճիշտ որոշումն էր Հայաստանի իշխանությունների գործունեության ողջ ընթացքում՝ 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումից հետո: Եվ հանկարծ այս իրավիճակում, անամպ երկնքում ճայթած ամպրոպի նման, հնչում է ԱՄՆ Պետդեպարտամենտի ս.թ. փետրվարի 13-ի շշպռանքը Սիրիա Հայաստանից ռազմամարդասիրական առաքելություն ուղարկելու առնչությամբ»: Միևնույն ժամանակ, 1in.am-ի տեսաթերից տարածվում էր ինձ վերագրվող միտքը, միայն թե ուղիղ հակառակ իմաստով: Չէ, չէ, հարգելի ընթերցող, ոչ թե Սորոսի ֆոնդի հերթական նպաստառուի բերանով, այլ լավիակերի, որը մի ժամանակ տգրուկի պես կպել էր 1992–1994թթ. Արցախյան պատերազմի ականավոր ռազմական գործիչներից մեկին ու, զուգահեռաբար, կարծում եմ, նաև բավական պատկառելի հայ բանկիրներից մեկի անձնական խնայողություններին: Ընդ որում՝ ես բոլորովին չեմ բացառում, որ իմ հասցեին զրպարտչական մտավարժանքները նաև այլ նպատակ են հետապնդել: Չէ՞ որ դա լավ հայտ է՝ Սորոսի ֆոնդից և Հայաստանում դեմոկրատիայի ու քաղաքացիական հասարակության ամրապնդման մյուս սերմանողներից գրանտ ստանալու համար, մանավանդ եթե այդ սուտ օպուսների հեղինակը սեռական փոքրամասնության ներկայացուցիչ է: Այո, ինձ մեղադրելով հակապետական գործունեության մեջ, խեղաթուրելով իմ հոդվածների բովանդակությունը, անշուշտ, կատարվել է նաև այն ուժերի պատվերը, որոնք գուցե խանդից, գուցե քաղաքական դաշտի ամայացման նպատակով բնավ չէին ցանկանում հաշտվել REGNUM տեղեկատվական գործակալությունում իմ հրապարակումների հայտնվելու և առավել ևս՝ դրանց հետագա տարածման հետ: Չէ՞ որ դրանցում, ի դժգոհություն «քաղաքական մրցակիցների», հետևողականորեն վեր էր հանվում Հայաստանի և Ռուսաստանի ռազմավարական դաշինքի անայլընտրանքայնությունը ՀՀ անվտանգության ապահովման գործում, հիմնավորվում էր դրա հետագա խորացման, հայ-ռուսական հարաբերությունները մինչև ռազմաքաղաքական դաշինքի բարձրացնելու անհրաժեշտությունը: Նշենք, որ լռության մատնելու նման քաղաքականությունը ծեռնաու էր համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնին: Չեմ կասկածում, որ այս հաշվով համապատասխան պարզաբանումները զեկուցվել են նշյալ հասցեատիրոջ հայաստանյան ներկայացուցչությանը: Իմ հրապարակումների անցանկալի լինելը և միևնույն ժամանակ դրանց վտանգավորությունը պետական հեղաշրջման ուղեվարների համար, կրկնում եմ, հիմնականում պայմանավորված էր նրանով, որ դրանք տեղակայվել են Ռուսաստանի Դաշնության REGNUM տեղեկատվական գործակալության կայքում:

Ես հատուկ եմ գրում որոշակի ուժերի արձագանքի մասին, որոնք ուղղորդում են արևմտյան տարատեսակ հովանավորներին ենթակա ինտերնետ պորտալները, արձագանք, որը կամ խեղաթուրում է հոդվածներիս

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

բովանդակությունը կամ վատաբանում դրանք, կամ էլ լիովին լռության է մատնում ՀՀ անվտանգության հրատապ հարցերը: Կարծում եմ, որ այս հարցում պարզություն մտցնելը սկզբունքային նշանակություն ունի: Չէ՞ որ փոքր Հայաստանում ոչ մեկի համար գաղտնիք չէ, թե ովքեր են այդ ինտերնետ պորտալների «տերերը»: Տարակուսանքս պայմանավորված է նրանով, որ այն պայմաններում, երբ ՀՀ-ում ցանկացած առողջ դատող մարդու միանգամայն հասկանալի է, որ Հայրենիքը վտանգի մեջ է, որ Հայաստանը փորձանքի մեջ է, ուրեմն և նրանք, ում համար թանկ է մեր Հայրենիքի ճակատագիրը, պետք է միավորվեն՝ ստեղծելով դիմակայության միասնական ճակատ ազգային անվտանգության սպառնալիքներին, մեղմ ասած, չգիտես ինչու, նրանք այլ կերպ են վարվում: Ընդ որում՝ հանուն արդարության և լիարժեք պատկերացում ունենալու համար նշենք և այն, որ հայոց պետականության սպառնալիքները, ըստ իս, բխում են բնավ ոչ «ժողվարչապետի» մի ինչ-որ չար մտահղացումից, այլ, որպես կանոն, պետական կառավարման հարցերում նրա լիակատար անիրազեկության օրինաչափ հետևանքն են: Այս հանգամանքը շատ բանով խորանում է նաև նրանով, որ Ն.Փաշինյանի «թիմում» հիմնականում անծինք են, որոնք ոչ մեկ կամ երկու տարի սնվել են տարատեսակ այլածին, Հայաստանին խորթ, երբեմն էլ բացահայտ թշնամական օտարերկրյա ֆոնդերից:

Հարգելի ընթերցող, ես այսքան մանրամասն ներկայացրի այն բարդ իրադրության մասին իմ տեսլականը, որի մեջ է գտնվում Հայաստանը պետական հեղաշրջումից հետո, երբ մեր աչքերի առջև գործնականում անարգել իրականացվում են «գունավոր հեղափոխությունների» արդի տեխնոլոգիաները, որպեսզի հարց տամ՝ իսկ ի՞նչ ենք հակադրում մենք դրան: Ցավով նշեն, որ մենք վկաներն ենք այն բանի, երբ համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի՝ հայոց պետականության քայքայման և Հայաստանում՝ Ռուսաստանի մերձավորագույն ռազմավարական դաշնակից երկրում անկայունության ու լարվածության նոր օջախի ստեղծման համակարգային աշխատանքին, ըստ էության, հակադրվում են եզակի տեղեկատվական հակազորոհներ: Դեռ լավ է, որ այդ պատասխան գործողությունները վերջին ժամանակներս դառնում են ավելի ու ավելի պահանջված ՀՀ բնակչության կողմից: Համոզված եմ, որ Հայաստանի ազգային անվտանգության սպառնալիքների չեզոքացման համարժեք միջոցներ չկիրառելու դեպքում մենք կդառնանք հայ հասարակությունում անխուսափելի կոշտ քաղաքացիական դիմակայության վկաները: Ավաղ, նման եզրահանգում անել ինձ դրդում է Հայաստանում վերջին իրադարձությունների ամբողջ տրամաբանությունը: ՀՀ-ում իրավիճակի նման զարգացումը ափշերոնյան քաղաքական գործիչներին կարող է հանգեցնել Արցախի Հանրապետության դեմ նոր ռազմական ագրեսիա սկսելու գայթակղությանը, ինչը անտարբեր չի թողնի ինչպես Թուրքիային, այնպես էլ Իրանին, էլ չեն ասում Ռուսաստանի մասին:

Եվ ահա այսքան պայթյունավտանգ իրավիճակում հայտարարվում է այն մասին, որ ս.թ. ապրիլի 19-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ուղիղ եթերով պատասխանելու է Facebook օգտատերերի հարցերին: Երկժամյա եթերի ընթացքում, ավաղ, արդարացան վատթարագույն սպասելիքները. «Ժողվարչապետը» Հայաստանի Հանրապետությունում տիրող չափազանց վտանգավոր դրության մասին երանելի անտեղյակության մեջ է: Չէր կարող չտազնապեցնել նաև այն հանգամանքը, որ հարցերի բովանդակությունը՝ հասցեագրված «Ժողվարչապետին», ըստ էության, ցույց տվեց հայ հասարակության կրթյալ հատվածի լիակատար օտարվածությունը գործող իշխանությունից: Չէ՞ որ Facebook օգտատերերի բարձրացրած հարցերի ճնշող մեծամասնությունը կենցաղային ուղղվածություն ուներ: Դա ոչ մի կերպ չի նվազեցնում դրանց նշանակալիությունը, մանավանդ Ն.Փաշինյանի այս կամ այն խոստման տեսանկյունից, խոստումներ, որոնք մեկ տարվա ընթացքում ասես առատության եղջյուրից հորդել են նրա բազմաթիվ ելույթներում: Չէ, հարգելի ընթերցող, ես տազնապում եմ այլ բանից, որ Facebook-ի ուղիղ եթերում այդպես էլ չշոշափվեցին ՀՀ ազգային անվտանգության ապահովման հիմնարար հարցերը, որոնց լուծումից է շատ բանով կախված նաև բարձրացված սոցիալական հարցերի հաջող իրականացումը: Facebook օգտատերերի հարցերին տված պատասխաններում այդպես էլ բախտ չվիճակվեց լսել այն մասին, թե ինչպես են հայկական իշխանությունները մտադիր պաշտպանել ազգային անվտանգության այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսին են՝ հայոց պետականության պահպանումը համակարգային խափանարար աշխատանքի պայմաններում, որն իրականացնում են տարատեսակ գրանտակերները, պետության ու ժողովրդի տեղեկատվական պաշտպանվածությունը չդադարող տեղեկատվական պատերազմի պայմաններում, որը սանձազերծվել է Հայաստանի և Արցախի Հանրապետության դեմ, հայության քրիստոնեական ազգային ինքնության պահպանումը ազգային մշակույթի համակողմանի զարգացման հիման վրա՝ նրա յուրատիպության ամրապնդման պայմաններում, Հայաստանի քաղաքացիների բարեկեցության բարձր մակարդակի ապահովումը՝ ՀՀ բնակչության աղքատության մակարդակի նվազեցմանը, գործազրկության կրճատմանը, թոշակների փուլային բարձրացմանն ուղղված կառավարության կոնկրետ գործողությունների նշմամբ: Էլ չեմ ասում այն մասին, որ այդպես էլ հանելուկ մնաց, թե ինչպես է տեսնում «Ժողվարչապետը» Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարը, ինչ կոնկրետ դասեր են քաղվել 2016թ. Ապրիլյան պատերազմից: Մի խոսքով, Facebook օգտատերերի՝ ՀՀ վաչապետին ուղղված հարցերի բովանդակությանն ուշադիր ծանոթանալը, ինչպես նաև նրա պատասխանները հանգեցնում են բավական տխուր եզրակացությունների, այն է. վկայում են հայ հասարակության մի մասի լիակատար կտրվածությունը արդիականության դաժան իրողություններից: Նրանք բոլորը գտնվում են «թավշյա հեղա-

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

փոխության» հեգեմոնի հմայքի պատրանքների գերության մեջ, կրկնում են, լրիվ կտրված են դաժան իրողություններից, որում հայտնվել է Հայաստանը պետական հեղաշրջումից հետո: Մյուս կողմից՝ այդ ամբողջ երկժամյա եթերը, անշուշտ, չեղեց Facebook օգտատերերի գոնե մի մասի ուշադրությունը շատ ավելի լուրջ խնդիրներից, որոնք պահանջում են անհապաղ լուծում:

Որպեսզի ընթերցողները կասկածներ չունենան Facebook-ի ուղիղ եթերի իմ կանխակալ կոշտ գնահատականի հետ կապված, վկայակոչեմ որոշ՝ առավել հաճախ հիշատակված հարցերն ու դրանց պատասխանները, ի դեպ՝ պատասխանները հրապարակելն իմաստ չունի, քանի որ ըստ Ն.Փաշինյանի՝ այն ամենը, ինչ խոստացել է, նա կատարել է: Եվ այսպես, առավել հրատապ խոստումները, «ժողվարչապետի» կարծիքով, որոնք հնչեցվել են Facebook օգտատերերի կողմից, հետևյալն են. ոչ մի պաշտոնյա իր «քավոր-սանիկներին» պետապարատում չի տեղավորի, պետական բյուջեն խոստացել են ավելացնել 10%-ով, կառավարությունը լիովին չեղարկել է 12 մլրդ դրամ (ավելի քան 25 մլն դոլար) տուգանքներ մայրուղիներին արագության գերազանցման համար, չեղարկել է, այսպես կոչված, ռեգիստրատորների տուգանքները (ընկերություններ, որոնք մասնագիտանում են արագաչափ տեսախցիկների և արագության ռադարների տեղադրմամբ ողջ Հայաստանում), վերացրել է ամբողջ շարք ապրանքների շուկաներում մենաշնորհը (թեև դրանից այդ ապրանքներից շատերի գները աճի միտում են ցուցաբերում): Կարելի է էլի շարունակել Ն.Փաշինյանի իբր կատարած խոստումները, բայց դա ապարոդյուն աշխատանք է, քանի որ դեռևս 2018թ. հունիսին ես մանրամասն վերլուծել եմ ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը 2018թ. հունիսի 5-ի «Կառավարության ծրագիրը՝ Հայաստանի անվտանգության մարտահրավեր» հոդվածում (տե՛ս <https://regnum.ru/news/polit/2426350.html>), որտեղ հիմնավորվել է հոդվածի վերնագրի օբյեկտիվությունը: Կրկնում են, լուրջ տագնապ է հարուցում Ն. Փաշինյանի ղեկավարած ՀՀ կառավարության լիակատար անհամարժեքությունը Հայաստանի ազգային անվտանգության մարտահրավերներին դիմակայելու հարցում:

Բնականաբար, այս պայմաններում հարց է ծագում. ի՞նչը խանգարեց Ն.Փաշինյանին, օրինակ, ուշադիր ծանոթանալ մեր իսկ դաշնակիցներ Ռուսաստանի կամ Ղազախստանի սոցիալ-տնտեսական զարգացման արդեն մշակված ծրագրային փաստաթղթերին: Վերցնենք թեկուզ Ռուսաստանի նախագահի 2018թ. մայիսի 7-ի № 204 հրամանը՝ «Ռուսաստանի Ղաշնության ազգային նպատակների և զարգացման ռազմավարական խնդիրների մասին մինչև 2024 թվականը»: Չէ՞ որ այդ նույն ուղղությունները, որոնք արտացոլված են Ռուսաստանի ազգային նախագծերում, շատ ավելի հրատապ նշանակություն ունեն նաև Հայաստանի համար: Լինի դա առողջապահությունը, կրթությունը, ժողովրդագրությունը, մշակույթը,

էկոլոգիան, փոքր ու միջին ձեռներեցությունը, աջակցությունն անհատական ձեռնարկատիրական նախաձեռնությանը, զբաղվածությանն աջակցելը, թե մեկ այլ բան: Ավաղ, մենք հերթական անգամ վկան դարձանք այն բանի, որ մարդիկ, որոնք պաշտոնական հիերարխիայում հասել են իրենց անիրազեկության մակարդակին՝ Լոուրենս Ջ.Պիտերի անիրազեկության սկզբունքին համապատասխան, անգամ գիտակցելով, որ գլուխ չեն հանում այդ պաշտոնից (իսկ Ն.Փաշինյանի պարագայում մենք ունենք այդ երևույթի դասական օրինակ, ինչի մասին վկայում է նրա վարքագիծը, երբ հայտնվում է իր համար անհասկանալի իրավիճակում), որպես կանոն, չեն կարողանում հրաժարվել դրանից: Մեր պարագայում, եթե Ն. Փաշինյանը փորձի հրաժարվել պաշտոնից, կասկածից վեր է, որ նա կենթարկվի կոշտ ճնշման, այսպես կոչված, «թավշյա հեղափոխության» ուղեվարների կողմից (պետության ճակատագրի համար վտանգավոր գործողություն), որի վրա ծախսվել են ամենատարբեր ֆոնդերի միլիոնավոր դոլարներ՝ դեմոկրատիայի, քաղաքացիական հասարակության ամրապնդման և ամեն տեսակ ի սկզբանե կեղծ անհեթեթության բարեհունչ կարգախոսների ներքո: Չէ՞ որ արդեն հիմա ՀՀ ոչ մի մտածող քաղաքացի չի կասկածի, որ նրանց վերջնականատակը, նորից ու նորից ընդգծում են, հայոց պետականության քայքայումն է: Եթե Ն.Փաշինյանը համարձակվի այդքան քաջարի հայրենասիրական քայլ կատարել, կենթարկվի ճնշման նաև ՀՀ Ազգային ժողովի նորաթուխ պատգամավորների, ինչպես նաև զինակիցների կողմից, որոնք բարձր պետական պաշտոններ են զբաղեցրել, որոնց միակ արժանիքը Երևանի փողոցները փակելն էր չարտոնված հանրահավաքների ժամանակ կամ Ռուսաստանի Դաշնության դեսպանատան վրա ձվեր նետելը, որն ուղեկցվում էր 102-րդ ռուսական ռազմակայանը Հայաստանից դուրս բերելու մշտական պահանջներով, ինչը, օրինակ, ոչ մեկ անգամ տեղի է ունեցել Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Դավիթ Սանասարյանի կողմից: Նշենք, որ ներկայում Ն.Փաշինյանը հավանություն է տվել քննիչի որոշմանը՝ ժամանակավորապես դադարեցնել Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի, այդ նույն տխրահռչակ Դավիթ Սանասարյանի լիազորությունները: Այսպես, համաձայն ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանի հաղորդման՝ «Հայաստանի վարչապետը հանձնարարել է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության երկրորդ բաժնի պետ, մայոր Ս. Ռսկանյանին ապահովել 2019թ. ապրիլի 18-ի որոշման կատարումը «Հայաստանի Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի լիազորությունների կատարման ժամանակավոր դադարեցման մասին», համաձայն Հայաստանի Հանրապետության Քրեակատարողական օրենսգրքի 151 հոդվածի 2-րդ մասի»: Նշենք, որ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չբացակայելու ստորագրությունը: Այս հաշվով հատկանշական է Նիկոլ Փաշինյանի գրառումը Facebook-ի իր էջում.

«Դավիթը նաև իմ ընկերն է, բայց իմացեք. Հայաստանում անծեռնմխելիներ չկան: Լինի ընդդիմադիր, թե իշխանության ներկայացուցիչ, հեղափոխական, թե հակահեղափոխական: Ով սա չի հասկացել, թող մնա սերժանտական նոստալգիայի անուրջներում»: Այստեղ մեզ թույլ տանք հարց տալ խոսքի մեջ քաջարի «Ժողվարչապետին». իսկ ի՞նչ հողի վրա է ծնվել ընկերությունը ռուսաստանցիությունը չթաքցնող Դ.Սանասարյանի հետ: Մի՞թե Հայաստանի ապագայի նույնական ընկալման հիման վրա՝ Ռուսաստանի հետ ռազմավարական դաշինքի լիակատար խզման, 102-րդ ռուսական ռազմական ղուրսբերման (և այսպես շարունակ՝ նույն ոգով) պայմաններում, ինչին քանիցս կոչել է Դ.Սանասարյանը: Ի՞նչն է այդքան սրտագին միավորում Նիկոլ Վոլակիչին ու Դավիթ քեռի Սէմովիչին: Հարգելի ընթերցող, սա բնավ հռետորական հարց չէ, քանի որ ներկա իշխանությունների քաղաքական հենարանը ծայրից ծայր կազմված է Դավիթներից ու նրա նմաններից:

Անվիճելի է մի բան. Ն.Փաշինյանի բազմակի հայտարարությունները արտաքին քաղաքականությունում կտրուկ շրջադարձերի անհնարինության, հայ-ռուսական ռազմավարական դաշինքին հավատարմության մասին ոչ այլ ինչ են, եթե ոչ պարզ խորամանկություն նրա կողմից: Հիշենք, որ Մատթեոսի Ավետարանում ներկայացված Հիսուս Քրիստոսի պատգամներում Բարձրյալը նախազգուշացնում է. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մէկին կատի և միւսին կը սիրի, կա՛մ մէկին կը մեծարի և միւսին կարհամարհի. չէք կարող ծառայել Աստծուն և՛ մամոնային» (Մատթ. 6:24): Թող ների ինձ Բարձրյալը, որ նրա անմահ, խորիմաստ, սրբասուրբ բառերը փոխադրում են մեր մեղսավոր Երկրի վրա: Նիկոլ Վոլակիչ, ասեմ ձեզ հետևյալը. չի կարելի ընկերություն անել երդվյալ ռուսաստանցի հետ, որն իր ողջ գիտակից կյանքը նվիրել է հակառուսական գործունեությանը, դրանով էլ հենց կիշվի Դավիթ Սանասարյանը, և միևնույն ժամանակ, խղճի որևէ խայթ չզգալով՝ տեղի-անտեղի երդվել հայ-ռուսական ռազմավարական դաշինքին հավատարմությամբ: Ինչպես այս պարագայում կասեին իմ երիտասարդ տարիների երևանցի ընկերները՝ հոգյակս, քո զավառական բորբոսնած ֆինտերը մեր դաժան իրողություններում չեն անցնի, մանավանդ մեծ քաղաքականությունում: Այնպես որ, հանդարտվեք ու եկեք միասին մտածենք ձեր կողմից իշխանությունը Հայաստանի հայրենասեր ուժերին քաղաքակիրթ ձևով փոխանցելու մասին, ուժերին, որոնք ձեր կործանարար կառավարման մեկ տարվա ընթացքում նախախնամության ուժով, բարեբախտաբար, դեռ չեն վերացել: Եվ որպեսզի այդ գործընթացն անվտանգ լինի Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար, արեք առաջին քայլը. օժանդակեք, որպեսզի ՀՀ նախագահ Արմեն Վարդանի Սարգսյանը Արցախի նախագահ Բակո Սահակի Սահակյանի հետ ստորագրի երկու հայկական պետությունների համատեղ հրամանագիր «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զինված ուժերի միավորված պաշտպանության կոմիտեի ստեղծման մասին»: Եվ սա

ծեր միակ շանսն է, Նիկոլ Վովակիչ, մտնելու Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության մեջ ոչ թե որպես կործանարար, այլ որպես պետական այր, որը թվացյալ փառքի գագաթնակետին հասկացավ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում իր հետագա գտնվելու ողջ վտանգն ու ինքնակամ ապահովեց իշխանության անարյուն փոխանցումը:

Ընդ որում՝ նորից ընդգծեմ, որ միավորված պաշտպանության կոմիտեի գլխավոր գործող անձինք, բացի Հայաստանի և Արցախի համապատասխան պաշտոնատար անձանցից (բացառությամբ նրանցից, ովքեր մինչ այդ Սորոսի և խափանարար միջազգային այլ կազմակերպությունների թոշակաորներ են եղել), պետք է դառնան ԼՂՀ առաջին նախագահ Ռոբերտ Զոհարյանը, Արցախի հերոս Սերժ Սարգսյանը, Արցախի հերոսներ Վիտալի Բալասանյանը, Սամվել Բաբայանը, Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), ՀՀ պաշտպանության նախկին նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանը, Արցախի Հանրապետության պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը, այսինքն՝ պետական և զինվորական գործիչներ, որոնց պրոֆեսիոնալիզմի ու աննկուն կամքի շնորհիվ ձեռք բերվեց հաղթանակը Ադրբեյջանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը պարտադրված պատերազմում 1992–1994թթ.:

Հետգրության փոխարեն: Չէի ցանկանա հողվածս ավարտել տխուր նոտայով, մանավանդ որ Հայաստանի քաղաքացիները, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդները 2019թ. ապրիլի 21-ին նշեցին Սուրբ Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնը: Իսկ մեր ռուս ուղղափառ եղբայրների համար Սուրբ Զատիկի օրը կնշվի 2019թ. ապրիլի 28-ին: Կարծում եմ, որ մեր ժողովուրդների համար իրենց քրիստոնեական և համամարդկային արժեքներին հավատարմության (որոնք արտացոլվել են Աստվածաշնչում և համաշխարհային մյուս կրոնների սուրբ գրքերում) փորձությունների այս դաժան ժամանակներում մենք պետք է նորից ու նորից ջանանք իմաստավորել Զատիկի օրվա մաղթանքի խոր իմաստը. «Քրիստոս հարեալ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի»:

Շնորհավոր Սուրբ Զատիկ, հարգելի ընթերցողներ:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի I, II, III, V և VI
գումարումների պատգամավոր,
«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԿ ԲՈՐԻՍԻ ԲԱԲՈՒՆԱՆՅԱՆԻՆ**

**«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
30-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հարգարժան Հայկ Բորիսի

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահության անունից ջերմորեն շնորհավորում եմ «Սահմանադրական Իրավունք Միություն» (ՍԻՄ) կուսակցության հիմնադրման 30-ամյակի կապակցությամբ:

Ձեր գլխավորած կուսակցությունն անկախ Հայաստանի նորագույն պատմության ընթացքում մշտապես իր ուրույն դերակատարությունն է ունեցել Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության հաստատման, մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքացիական հասարակության կայուն զարգացման գործում:

Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի տարիներին թե՛ ՍԻՄ կուսակցությունը, թե՛ նրա մարտական դաշնակից «Իրավունք» թերթը լրջագույն աշխատանքներ են կատարել մեր ժողովրդի ներուժը համախմբելու, մոբիլիզացնելու և ազատամարտիկների մարտական ոգին բարձրացնելու վեհ գործում:

Մեր երկրի համար դրամատիկ և ողբերգական 1999 թ. հոկտեմբերի 27-ին ու հետագա օրերին «Սահմանադրական Իրավունք Միություն» կուսակցությունը, «Իրավունք» թերթի խմբագրակազմը սկզբունքային դիրքերից խստիվ դատապարտել են Հայոց անկախ պետականության դեմ իրականացված դավաճանական գործողությունները կատարողներին, անսասան կանգնած են եղել Հայոց պետականության պաշտպանության համար պայքարողների առաջնագծում:

2016 թ. Ապրիլյան պատերազմի օրերին ՍԻՄ կուսակցությունն ու «Իրավունք» թերթն իրենց ամենօրյա գործունեությամբ ոգեշնչում էին պատերազմում Արցախի զինված ուժերին ու Հայաստանից ռազմաճակատ մեկնած կամավորներին սխրանքներ գործելու:

Հատկանշական է նաև այն, որ ՍԻՄ կուսակցությունն ընդդիմադիր

քաղաքական դիրքերից հանդես գալու տարիներին, ապա հետագայում համագործակցելով իշխող Հանրապետական կուսակցության հետ հավատարիմ մնաց իր քաղաքական սկզբունքներին: Հավատարիմ մնալով Հայոց պետականության պահպանման վեհ առաքելությանը՝ Դուք 2018 թ. ապրիլ-մայիսին Հայաստանում իրականացված պետական հեղաշրջման օրերին մնացիք անսասան:

Առանձնահատուկ նշենք ՍԻՄ կուսակցության և Ձեր համարձակ գործողությունները միջազգային տարբեր կազմակերպություններում Արցախի Հանրապետության անկախության այլընտրանքայնությունը հիմնավորապես բացառելիս, մեր երկրի առջև կանգնած մարտահրավերները բարձրաձայնելիս:

«Ազգային Միաբանություն» կուսակցությունը իր գործունեության 22 տարիների ընթացքում սերտորեն համագործակցել է ՍԻՄ կուսակցության հետ թե՛ խորհրդարանական, թե՛ արտախորհրդարանական գործունեության շրջանակներում մեր պետության առջև ծառացած մարտահրավերները դիմակայելու համար մղվող պայքարում և, ի հեճուկս այլևայլ գրանտակեր կազմակերպությունների, այդ համագործակցությունը զարգանում ու խորանում է:

ՍԻՄ կուսակցության հարգարժան գործընկերներ՝ «Ազգային Միաբանություն» կուսակցությունը նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ է մաղթում Ձեզ՝ հանուն Հայոց պետականության կայուն զարգացման, հանուն մեր երկրի առաջընթացի:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն» կուսակցության
նախագահ

ПРЕДСЕДАТЕЛЮ ПАРТИИ «СОЮЗ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО» АЙКУ БОРИСОВИЧУ БАБУХАНЯНУ

ПОСЛАНИЕ ПАРТИИ «НАЦИОНАЛЬНОЕ ЕДИНЕНИЕ» В СВЯЗИ С 30-ЛЕТИЕМ ПАРТИИ «СОЮЗ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО»

Уважаемый Айк Борисович!

От имени президиума партии «Национальное Единение» поздравляю «Союз Конституционное право» (СКП) в связи с 30-й годовщиной со дня основания.

Возглавляемая вами партия всегда играла особую роль в новейшей истории независимой Армении в деле становления демократии, защиты прав человека, устойчивого развития гражданского общества в Республике Армения.

В годы Арцахской национально-освободительной войны и СКП, и ее соратник газета «Иравунк» осуществили серьезнейшую работу в благородном деле укрепления и мобилизации потенциала нашей страны и повышения боевого духа воинов-освободителей.

В драматичный и трагический для нашей страны день – 27 октября 1999 года и в последующие дни партия «Союз Конституционное право» и редакция «Иравунк» с позиций своих принципов резко осудили предателей армянской независимой государственности, непоколебимо стояли на переднем крае борьбы в защиту армянской государственности.

В дни Апрельской войны 2016 года СКП и газета «Иравунк» своей повседневной деятельностью вдохновляли на подвиг Вооруженные силы Арцаха и добровольцев, отправившихся на фронт из Армении.

Примечательно, что партия СКП и в годы, когда выступала в качестве политической оппозиции, и затем сотрудничая с правящей Республиканской партией, оставалась верной своим политическим принципам. Оставаясь верным великой миссии сохранения армянской государственности, вы оставались непоколебимы в дни государственного переворота в Армении в апреле – мае 2018 года.

Особо отметим смелые действия партии СКП и лично ваши в международных организациях в вопросах обоснованного исключения альтернативы независимости Республики Арцах и озвучивания задач, стоящих перед нашей страной.

На протяжении 22 лет партия «Национальное Единение» тесно сотрудничала с партией СКП в рамках парламентской и внепарламентской деятельности в борьбе за противостояние вызовам, стоящим перед нашим государством, против организаций-грантополучателей, и это сотрудничество развивается и углубляется.

Уважаемые коллеги, члены партии СКП, партия «Национальное Единение» желает вам новых успехов и достижений во имя устойчивого развития армянской государственности, во имя прогресса нашей страны.

АРТАШЕС ГЕГАМЯН

Председатель партии «Национальное Единение»

АРЦАХ: КОГДА ИНТЕРЕСЫ ГОСУДАРСТВА ПОДМЕНЯЮТСЯ НЕНАВИСТЬЮ, БЫТЬ БЕДЕ

«Ненависть – удел побежденных».
Конфуций

Не скрою, что после празднования 9 мая 74-й годовщины Победы советского народа в Великой Отечественной войне, 29-летия освобождения Шуши и создания Армии обороны Нагорно-Карабахской Республики трудно было настроиться на написание статьи, в которой вынужден обратить внимание уважаемых читателей на очередное проявление неадекватности действий «народного премьера», наполненных слепой ненавистью к политическим оппонентам. Причем даже в эти дорогие всему армянскому народу светлые праздничные дни. И так, 7 мая т. г. действующий президент Республики Арцах Бако Саакян и второй президент Нагорно-Карабахской Республики Аркадий Гукасян направили письмо в адрес генпрокурора Армении Артура Давтяна. В письме, в частности, было отмечено: «Как известно, каждый год 9 мая в Арцахе торжественно отмечается праздник Победы (имеется в виду в Великой Отечественной войне. – А. Г.), день АО НКР (Армии освобождения Нагорно-Карабахской Республики. – А. Г.) и освобождения Шуши. Согласно традиции, в числе гостей празднеств, проводимых в Степанакерте и Шуши, бывают также все бывшие руководители Арцаха, люди, внесшие свой вклад в Карабахскую войну, стоящие у истоков создания нашего государства и армии, участники освобождения Шуши, те, кто способствовал этой победе. С учетом того, что первый президент Арцаха Роберт Кочарян арестован, просим накануне 9 мая принять соответствующее решение по изменению меры пресечения в его отношении. Мы готовы выступить с любой необходимой публичной гарантией по части его освобождения из изолятора и пребывания на свободе в течение всего периода предстоящего судебного процесса. Надеемся, что вашим решением будет предоставлена возможность для того, чтобы все три руководителя Карабаха участвовали в торжествах по случаю празднования 9 мая в Степанакерте и Шуши, что, несомненно, послужит сигналом солидарности и единства не только для нашего общества, но и всего мира и противника».

В ответ на это обращение президентов Арцаха Генпрокуратура Армении выступила с разъяснением, в котором было отмечено: «...Согласно 151-й статье Уголовного кодекса Армении, мера пресечения может быть изменена органом, осуществляющим уголовное производство. Поскольку это уголовное дело находится в суде общей юрисдикции, Генпрокуратура не является органом, осуществляющим уголовное производство, следовательно, обсуждение заявления, направленного со стороны президентов генпрокурору, не входит в компетенцию Генпрокуратуры».

Более чем уверен, что Бако Саакян и Аркадий Гукасян поступили весьма дальновидно, обратившись не к премьер-министру РА, а в Генеральную прокуратуру. Ведь в случае отказа со стороны Н. Пашиняна решить положительно вопрос, поднятый ими в ходатайстве, мы стали бы свидетелями крайне нежелательного развития событий, а именно: с фактом, когда официальный Ереван своими действиями фактически не желает подавать «сигнал солидарности и единства не только нашему обществу, но и всему миру и противнику». Не говоря уже о том, что для властей предрежащих Армении, то бишь «народного премьер-министра», не имеет никакой цены принимаемое президентами Арцаха обязательство: «Мы готовы выступить с любой необходимой публичной гарантией по части его освобождения из изолятора и пребывания на свободе в течение всего периода предстоящего судебного процесса». Обратите внимание, уважаемый читатель, что здесь даже намек нет на какое-либо вмешательство в предстоящий судебный процесс и принятие по итогам соответствующего решения суда по данному делу.

Казалось, что на этом можно было бы остановиться, особенно с учетом того, что власти Арцаха сохранили достойное сынов этого гордого края молчание. Ан нет, не тут-то было. Уже на следующий день, 8 мая т. г. Н. Пашинян возвратился к этой теме в ходе пресс-конференции и, в частности, заявил: «Я считаю, что юрисконсульты президента Арцаха должны давать ему правильные советы. Дело было направлено в суд, оно вне компетенции Генпрокуратуры. Даже при большом желании генпрокурора он не сможет решить этот вопрос, – далее он продолжил: – Герой Арцаха Манвел Григорян также находится в тюрьме. Почему в своем обращении они не упомянули его? Они присвоили звание Героя Арцаха Манвелу Григоряну. Почему же они не обратились относительно него? Если кому-то кажется, что вменяемое Григоряну в вину преступление более тяжкое, чем предъявленные Кочаряну обвинения, то он ошибается».

Когда слышишь такое из уст «народного премьер-министра», невольно на память приходят видеоматериалы, по несколько раз тиражируемые почти по всем телеканалам Армении, в которых грубо нарушался основополагающий принцип гражданского права – презумпция невинов-

ности в отношении Героя Арцаха Манвела Григоряна, когда, по сути, через эфир предопределялся и направлялся ход следствия. Надо полагать, что уже в ходе следствия многие из инкриминируемых обвинений в адрес М. Григоряна были переквалифицированы, и в итоге вменяемые ему преступления стали «менее тяжкими», чем те, которые предъявлены Р. Кочаряну. То, что первый президент Нагорно-Карабахской Республики, второй президент Республики Армения Роберт Седракович Кочарян в конечном итоге будет признан политическим заключенным и полностью оправдан, думается, сомневаться не приходится, в том числе и самому «народному премьеру». Однако это тема другого анализа. Сейчас же хотелось привести выдержку из моей статьи «Арташес Гегамян: Кочарян мне не друг, но истина дороже», опубликованной 2 августа 2018 года российским ИА REGNUM : «Завершая статью, хотелось бы вкратце обобщить ее суть... Роберт Кочарян мне не друг, повторюсь, не друг, но истина дороже. А истина в том, что намерение устроить судилище над Кочаряном, при этом искусственно, за уши притягивая и вовлекая в этот процесс Россию, – это очередной шаг к разрыву стратегических союзнических отношений между Республикой Армения и Российской Федерацией. Иными словами – это первый шаг на пути к потере армянской государственности. И это не преувеличение. Это – правда».

Чтобы уважаемый читатель не подумал, что я занимаюсь популярностью ранее написанных мной статей, приведу выдержку из другой статьи, вышедшей под заглавием «За «ползучим мятежом» в Карабахе вырисовывается Кремль», опубликованной 10 мая 2019 г. неизвестным автором Minval. az госпожой Нурани, она же Касимова Тофигаханум Фазил кызы. В ней Тофигаханум, в частности, проявляет исключительную сердобольность и беспокойство в отношении «народного премьер-министра» Армении, приводя в своей статье выдержку из его записи в Facebook: «В прессе часто пишут о том, что некоторые пытаются превратить Карабах в очаг контрреволюции, народ «Арцаха» превратит его в очаг революции». Далее Тофигаханум с сожалением отмечает: «Только вряд ли угрозы возымеют ожидаемый эффект: «неповиновение» карабахцы демонстрировали прямо во время его визита (имеется в виду визит Н. Пашиняна. – А. Г.) в оккупированный Карабах. Не говоря о том, что «силовой сценарий» в Карабахе со стороны Еревана – это для Азербайджана еще одно основание для вмешательства и для военной «зачистки» собственных оккупированных земель... А ситуация в Армении изрядно напоминает осень 1997 – весну 1998 года, «ползучий переворот», закончившийся отставкой второго президента Армении Левона Тер-Петросяна. Левон Акопович, напомним, открыто призвал к компромиссу с Азербайджаном, за что и поплатился. И самое главное, по меньшей мере не исключено,

что «Карабахский мятеж» не только и не столько некоторые фигуры в Ереване – за ним явно вырисовывается Кремль (как говорится, приехали. – А. Г.). В самой короткой перспективе угроза такого мятежа свяжет руки Пашиняну на переговорах, которые идут под американской модерацией. Но и отставка «народного премьера» вполне укладывается в планы Москвы. Да, сегодня Никол Пашинян вполне управляем, он не пытается перечить московскому начальству, но доверяет ему все же не до конца (поразительная осведомленность сердобольной Тофигаханум об отношении «московского начальства» к Н. Пашиняну. – А. Г.). Словом, «клубок» продолжает запутываться. Сегодня по понятным причинам остается только гадать, чем закончится этот «ползучий мятеж» в Карабахе с явным иностранным, точнее, российским участием, устоит ли Пашинян...»

Я специально столь подробно изложил позицию азербайджанских властей, да-да, я не оговорился, азербайджанских властей, которым полностью подконтролен и рупором которых является интернет-портал Minval.az, чтобы уважаемый читатель поразмыслил над тем, почему Никол Пашинян и К^О искусственно нагнетают отношения с руководством Республики Арцах к вящему удовольствию апшеронских масс-медиа. Или взять другой пример. Речь, на мой взгляд, о крайне некорректных высказываниях пресс-секретаря премьер-министра Армении, который прокомментировал заявление секретаря Совета национальной безопасности Республики Арцах, Героя Арцаха Виталия Баласаняна. Напомним читателям, что Герой Арцаха Виталий Баласанян с присущей боевому генералу прямоотой на днях заявил о том, что власти Армении должны были проявить уважение к призыву действующего и бывшего президентов Арцаха Бако Саакяна и Аркадия Гукасяна и изменить меру пресечения в отношении Роберта Кочаряна. В «назидание» Виталию Баласаняну пресс-секретарь «народного премьера» заявил: «Странно слышать из уст высокопоставленного арцахского чиновника подобный комментарий. Чиновник его ранга, думаю, должен сохранять соответствующую сдержанность». Вызывает беспокойство, что эти благоглупости относительно высказываний «высокопоставленного арцахского чиновника» отражают отношение самого Н. Пашиняна к действующим руководителям Республики Арцах. Он не делает разницы между Героем Арцаха Виталием Баласаняном (не говоря уже об отношении ко второму и третьему президентам Армении Роберту Кочаряну и Сержу Саргсяну, которых Н. Пашинян обхамил 8 мая т.г. во время своей пресс-конференции) и чиновниками из своего окружения. Взять хотя бы того же самого Давида Санасаряна, начальника Государственной контрольной службы, отстраненного от должности по подозрению в коррупции. Чтобы мое сравнение не показалось грубым, напомним читателям, что главной заслугой Давида Санасаряна было перекрытие улиц Еревана во время несанкционированных митингов нака-

нуне государственного переворота в Армении (апрель–май 2018 года), а также забрасывание яйцами здания Посольства Российской Федерации в Республике Армения, сопровождаемое постоянным выкрикиванием лозунгов с требованием вывода из Армении 102-й российской военной базы. Именно о Д. Санасаряне «народный премьер» в ходе все той же пресс-конференции изрек: «В случае с Давидом Санасаряном я говорю, что сожалею, что люди воспринимают проблему в «братской» логике. Он мой друг, но мой друг не может быть выше закона, то и друг кого-либо еще не может быть выше закона». Почему-то никто из журналистской братии не задался на пресс-конференции вопросом: а с какой это стати русофоб и мастер по забрасыванию яйцами премьер-министром армянского государства воспринимается выше, чем Герои Арцаха, символы победы в Арцахской национально-освободительной войне 1992–1994 годов, коими, бесспорно, являются Роберт Кочарян, Серж Саргсян, Виталий Баласанян, Манвел Григорян, которые в суровые годы войны более двух лет ежечасно смотрели смерти в лицо, более того, не вывозили свои семьи из обстреливаемого с шушинской высоты Степанакерта, вселяя тем самым уверенность в жителей Степанакерта в близкой победе, и которые в настоящее время стали мишенью критики, стали ровней Давиду Санасаряну. Что же касается генерал-лейтенанта Манвела Григоряна, то он также ковал победу со своей самоотверженной супругой Назик Амирян на поле боя в Арцахе. Не хотелось, чтобы у читателей сложилось неверное впечатление о том, что героизмом, проявленным ими в годы Арцахской национально-освободительной войны, я пытаюсь нивелировать якобы совершенные ими же нарушения закона. Нет, уважаемый читатель, на то есть суд, который еще не вынес какого-либо обвинительного приговора, а стало быть, высокопарные «обличительные» речи «народного премьера» могут квалифицироваться в лучшем случае как прямое указание следственным органам о том, в каком направлении проводить следствие, а заодно в качестве подсказки Генпрокуратуре и судебным органам, какой судебный приговор будет принят властями как действие в нужном направлении. Другая оценка подобных комментариев Н. Пашиняна может квалифицироваться не иначе как клевета. Но это также тема другого анализа.

Чтобы не сложилось мнение, что я без особой надобности столь подробно излагаю недавние высказывания «народного премьера», замечу, что причина вполне конкретна: они таят в себе угрозу национальной безопасности Армении и Арцаха. Увы, это не преувеличение. Судите сами: 11 мая т. г. в 23:58 (обратите внимание на час опубликования, уж было невтерпех и надо было часом ранее опубликовать этот материал) электронный портал МОСКВА-БАКУ.RU поместил на своем сайте статью под заглавием «Российский эксперт: Пашинян пока боится делать новые

антироссийские шаги», в которой, в частности, отмечается: «Армянская печать сделала вывод о том, что Пашиняну так и не удалось полностью подчинить себе Степанакерт. Для Пашиняна Карабах остается чем-то вроде Вандеи, «плацдарма контрреволюции». О том, может ли Ереван подавить наконец сопротивление карабахского клана, в интервью portalу «Москва-Баку» рассуждает директор Института политических исследований России Сергей Марков (удивительная заинтересованность апшеронского интернет-портала в «подавлении наконец сопротивления карабахского клана». – А. Г.). Вопрос: «Сергей Александрович, на этой неделе исполнился год с момента прихода Пашиняна к власти. Почему за год ему так и не удалось ослабить, раздробить карабахский клан (может сложиться впечатление, что Н. Пашиняна именно с этой миссией и привели к власти, беда-то какая, пока не получается. – А. Г.)? Лидеры сепаратистского режима не боятся открыто роптать по поводу того, что их лидера Кочаряна не отпустили на праздник хотя бы на одни сутки». – Ответ Сергея Маркова: «Очевидно, что карабахский клан сохранил единство, сохранил влияние в Армении, он остается политическим сердцем Республиканской партии. Для представителей клана очень важно держаться вместе, ведь поодиночке Никол Пашинян их раздавит (опять-таки поражает уверенность политолога в предопределенности и однозначности действий «народного премьера» в отношении действующих и бывших руководителей Республики Арцах.– А. Г.)».

Вопрос: «Ереванская пресса уже написала, что Карабах (Арцах) остался «очагом контрреволюции». В ответ Пашинян написал в своем Facebook: «Если кто-то попытается превратить Арцах в очаг контрреволюции, то народ Арцаха превратит его в очаг революции». Можно ли сказать, что Пашинян угрожает повторить в Степанакерте прошлогодний сценарий?» – С. Марков: «Да, причем более жесткий сценарий. Год назад в Армении революция произошла хотя и при поддержке США и Евросоюза, но все же произошла во многом самостоятельно (судя по тональности С. Маркова, он рад революции, а на самом деле государственному перевороту, разве что его несколько разочаровывает, что инициировали переворот США и Евросоюз.– А. Г.)».

Видимо, С. Марков находится в переписке с Николом Воваевичем, ибо уверовал в байку о том, что «революция во многом произошла самостоятельно», либо он под впечатлением статьи, опубликованной 13 мая т. г. в Minval. az под заглавием «Пашинян: «Мы потратили на революцию в Армении \$200 тысяч» (заметим, что в статье нашли место отрывки из интервью Н. Пашиняна РБК). А сотни миллионов долларов, которые вот уже целое десятилетие на регулярной основе направлялись на поддержание «движителей революции» в виде соросовских и прочих грантов, так это не в счет. Далее с Марков, отработывая, скажем так, моральное, по

азербайджанским критериям, вознаграждение, продолжает: «Если революционные события и произойдут в Степанакерте (Ханкенди), то они будут инспирированы из Еревана. Ереван по-прежнему считает Карабах частью Армении в широком смысле, он продолжает полностью контролировать и бюджет, и вооруженные силы Карабаха. Как известно, это вооруженные силы Армении захватили Карабах, а вовсе не сами карабахцы (насколько надо быть ангажированным со стороны апшеронских взяточдателей, чтобы тиражировать подобную гнусную ложь, оскорбляющую сокровенные чувства, память родных и близких более двадцати пяти тысяч погибших и раненых карабахских добровольцев, которые за освобождение своей Родины от азербайджанских карателей стояли насмерть. – А. Г.). Но после того как будут революционные события, они, думаю, будут поддержаны и самими карабахцами, ведь Пашинян популярен в армянской общине Карабаха».

Не хочется приводить другие высказывания сего политолога, однако в одном он, безусловно, прав, когда утверждает: «Если быть точным, то это личная месть бывшего президента Армении Левона Тер-Петросяна и его давнего соратника Никола Пашиняна (имеет в виду судилище над Робертом Кочаряном. – А. Г.)». В интервью С. Маркова поражает его нескрываемая опека, оправдательные рассуждения относительно печально известного Давида Санасаряна. Так, отвечая на вопрос, почему Пашинян не смог защитить человека из собственного окружения, Марков заявляет: «Идет борьба различных группировок. И карабахский клан сохраняет свое влияние в силовых структурах (поразительное сострадание и желание оправдать откровенного русофоба, соросовского грантоеда Давида Санасаряна. – А. Г.). Пашиняну пока не удалось полностью поставить силовиков под свой контроль (видать, С. Маркову это доставляет особую боль. – А. Г.). Эта борьба продолжается. Вероятно, арест – это видимая часть такой борьбы ... Но точно можно сказать – силовики пытаются защитить свою автономию, они остаются интегрированной частью группировки Кочаряна – Саргсяна и Республиканской партии в целом».

Подобные высказывания откровенного армянофоба с солидным стажем, его стремление этак ненавязчиво поддержать и сопереживать «трудностям», с которыми сталкивается Никол Воваевич, вызывают несколько экстравагантные воспоминания (да простит меня читатель за откровенность), когда одному из парящихся в парилке предлагают либо надеть плавки, либо снять крестик с шеи, чтобы вызвать доверие от сказанных им мыслей. Словом, рассуждения этого «российского» политолога уж очень сильно пахнут азербайджанской нефтью.

Вызывает тревогу другое, что в защитники режима Н. Пашиняна наряду с отдельными российскими политологами записались и вовсе

экзотические организации, к примеру, американский аналитический центр (англ. Atlantic Council) при Организации Североатлантического договора, НАТО. Я вовсе не случайно упомянул об Atlantic Council.

Так, 3 мая т. г. радио «Азатутюн» (армянское отделение радио Свободная Европа / Свобода) опубликовало статью под заглавием «Мошеннические группы под видом «проверки фактов» ведут кампанию против Армении – Atlantic Council», в которой, в частности, написано: «Против премьер-министра и правительства Армении в социальных сетях проводится систематическая кампания, следы которой ведут в Россию, утверждает авторитетный американский аналитический центр Atlantic Council». Радетели демократии из Atlantic Council ссылаются на «расследование экспертами Лаборатории цифровых криминалистических исследований (Digital Forensic Research Lab)», согласно которому: «Как показывает расследование, в прошедшие месяцы некоторые оппоненты (Н. Пашиняна. – А. Г.) объединились под хештегом #SutNikol («Лживый Никол») и начали сложную кампанию, направленную на дискредитацию Никола Пашиняна и его сторонников путем распространения дезинформации и предвзятой информации». Естественно возникает вопрос: а собственно по какому праву аналитический центр при НАТО оставляет за собой право прямого вмешательства во внутренние дела суверенного государства, взяв на себя роль эдакого цензора. Причем вмешивается во внутренние дела государства, являющегося к тому же членом ОДКБ.

С какого это перепуга они так засуетились, отмечая в докладе, что «эти действия не являются искренними (ну да, им ведь очень далеко от искренних, проплаченных Соросом действий разного рода грантоедов. – А. Г.), и они становятся все более и более опасными». Далее лабораторией приводится упоминание организаций, объединившихся в хештег «Лживый Никол». Упомянем и мы название и основателей этих патриотических общественных организаций, которые жизнь в Армении видят такой, какая она есть на самом деле, а самое главное, свое видение они открыто, честно доводят до обманутой соросовской пропагандой граждан РА. Это интернет-порталы AntiFake. am (основатель Нарек Самсонян), Blog News (основатель Константин Тер-Накалян), партия «Адекват» (основатели Артур Даниелян и Нарек Малян). «Вопреки заявлениям о независимости и нейтральности, содержание AntiFake. am в основном сфокусировано на дискредитации Пашиняна, – отмечают эксперты Atlantic Council. – Наиболее обсуждаемые статьи на странице содержат разделяющее общество политические комментарии (можно подумать, что разного рода грантоеды, получая сотни миллионов долларов, в поте лица объединяли армянское общество, не делили его на «черных» и «белых», «революционеров» и «контрреволюционеров». – А. Г.), необоснованные сообщения, которые утверждают, что Пашинян посетил завод,

который не существует, или что Пашинян приписывает себе успехи предыдущего правительства».

Я специально привожу столь подробные выдержки с тем, чтобы показать, «как дорог» Никол Воваевич для натовского аналитического центра Atlantic Council. А вот один из главных их выводов: «Эксперты Atlantic Council утверждают, что они нашли четкие доказательства того, что, по крайней мере, AntiFake.am не полностью контролируется из Армении. Изучение домена показывает, что веб-адрес страницы зарегистрирован в России – в Санкт-Петербурге. Более того, эксперты отмечают, что данные о регистрации этого домена и ответственного за него лица на Whois.am закрыты «из соображений конфиденциальности личных данных». «Это предполагает, что ответственные сайта AntiFake.am предприняли шаги, чтобы скрыть свою идентичность, – отмечают эксперты, подчеркивая, что они нашли доказательства того, что – AntiFake.am может быть связан с лицами или организациями, зарегистрированными в России». Вчитываясь в выдержки из этого доклада, невольно приходишь к шальной мысли, что все интернет-порталы, действующие в Армении, «под колпаком» аналитического центра НАТО. И вдруг неожиданно-негладанно заявляет о себе хештег «Лживый Никол» и 4 аффилированных с ним лица, которые не прошли через сито Atlantic Council. Думается, что проводимая на протяжении последних лет скрупулезная работа Atlantic Council в Армении не могла не увенчаться для них успехом, а именно: свершением государственного переворота в стране, являющейся стратегическим союзником России, и приводом к власти человека, которому чужды подлинные национальные интересы Республики Армения и Республики Арцах. Чтобы моя столь строгая оценка не была воспринята в эмоциональной плоскости, приведу лишь два примера из политической биографии «народного премьер-министра» Армении.

Так, 22 октября 2018 г. ИА REGNUM опубликовало мою статью под заглавием «Армении по пути с Манделой или Мугабе», в которой черным по белому было написано: «Вспомним, что на специальном заседании НС РА от 1 мая 2018 г., в повестке которого был вопрос о выборах премьер-министра РА, депутаты парламента от Республиканской партии Армении Арман Сагателян и Мигран Акопян в своих выступлениях озвучили и представили коллегам номер газеты «Айкакан жаманак» за 22 мая 2001 года, в которой была напечатана статья за подписью в тот период главного редактора этой газеты Никола Пашиняна. Статья вышла под патетическим заглавием «Землю сохраняют любовью, знайте». В ней Н. Пашинян, в частности, пишет: «И стало быть, меня удивляет, что в нашей стране еще есть люди, которые имеют иллюзии относительно захваченных, если хотите освобожденных, если хотите оккупированных территорий. Давайте деликатно обойдем данную болезненную сторону вопроса и

рассмотрим вопрос с точки зрения правил игры. Я не принимаю такую точку зрения, что хорошая дипломатия может сделать так, чтобы эти территории не были бы возвращены Азербайджану ... Ведь эта страна (имеется в виду Армения. – А. Г.) не имеет хозяина, и мы, кто должны быть хозяевами этой страны, оставив наше, *хотим стать хозяевами чужого*» (подчеркнуто мною. – А. Г.).

Следуя своим же советам, Никол Воваевич «землю сохраняет любовью, знайте», только проявление любви у него совершенно оригинальное: людей, героически прошедших через горнило Арцахской национально-освободительной войны, Н. Пашинян страшит, пугая их превращением Арцаха в очаг революции.

А теперь другой факт из недавней истории, весьма убедительно свидетельствующий, мягко выражаясь, о беспринципности «народного премьера». Так, 3 октября 2017 года в парламенте Армении во внеочередном порядке был рассмотрен проект заявления парламента о выходе Армении из Евразийского экономического союза (далее – ЕАЭС). В тот же день прошло голосование по вопросу проекта заявления о выходе Армении из ЕАЭС. «За» принятие этого заявления проголосовала лишь фракция «Елк» («Выход»), руководимая Николом Пашиняном. Заметим также, что проект был представлен оппозиционным блоком «Елк». Примечательно другое: спустя всего лишь полтора года, уже 30 апреля 2018 г., кандидат в премьер-министры в Национальном Собрании в ответ на вопрос вице-спикера НС РА Эдуарда Шармазанова о том, какое из заявлений нужно принимать за основу – оппозиционного депутата Никола Пашиняна о необходимости выхода Армении из ЕАЭС или кандидата в премьеры, заявившего: «Не секрет, что я лично голосовал против вступления Армении в Евразийский экономический союз, что означает, что я не поддерживал членство РА в ЕАЭС. Но тем не менее Армения – член ЕАЭС, и мы, будучи политическими и государственными деятелями, должны считаться с реалиями и фактами». По сути, Пашинян признается, что он вынужден считаться с фактами, а его сердце, подобно сердцу старика из повести Уильяма Сарояна «В горах мое сердце», «осталось в горах, в Шотландии», а в нашем случае – на Западе, который не одно десятилетие через разные гранты щедро финансировал сподвижников Никола Воваевича, совершивших в апреле – мае 2018 года государственный переворот, столь трепетно оберегаемый со стороны Atlantic Council и К^О.

Вместо послесловия. Не хотелось в майские постпраздничные дни завершать статью на минорной ноте. Совершенно произвольно на память пришло признание главнокомандующего русской армией на Кавказе генерала Павла Цицианова. Так, в 1805 году в рапорте императору Александру I он писал: «Шуша с одной стороны окружена высокой каменной

стенной, а с другой укреплена естественным расположением высоких вертикальных скал, против которых во время осады бессильна любая военная стратегия». А царский генерал, историограф Василий Потто в 1826 году писал: «Взять эту крепость открытою силою почти не представляется возможным». Итак, спустя 187 лет – 8 мая 1992 года операция под названием «Свадьба в горах» началась и завершилась победой воинов-добровольцев из Нагорного Карабаха, Армении и Диаспоры. Сегодня, на фоне примитивных попыток очернения отдельных руководителей блестяще проведенной операции «Свадьба в горах», хочется выразить слова искренней благодарности в адрес всех добровольцев Арцахской национально-освободительной войны. Не скрою, что в эти дни, когда один из ярких символов Победы Роберт Седракович Кочарян подвергается политической вендетте со стороны идеологов, обесславивших себя статьями – Левон Тер-Петросян: «Война или мир? Пора стать серьезными» или Никол Пашиян: «Землю сохраняют любовью, знайте», невольно придумался над мыслями, прозвучавшими в интервью третьего президента РА Сержа Азатовича Саргсяна, которое он 9 мая т.г. дал Общественной телекомпании Арцаха: «Должен прямо сказать, чтобы как-то пресечь различные недобросовестные заявления, недобросовестное отношение в течение очень долгих лет, что руководил операцией (освобождения Шуши) Аркадий Тер-Тадевосян – Командос. В операции участвовали только добровольцы, но важно также, что участвовали все тогдашние руководители Нагорного Карабаха. Роберт Кочарян – со стороны Лачина, просто как солдат, с автоматом в руках, Бако Саакян – в только что сформированной роте Степанакерта...». Вдумайтесь пожалуйста, уважаемые читатели: фактический лидер Нагорного Карабаха, как простой воин, с автоматом в руках ковал Победу.

P.S. 12 мая 2019 года в конференц-зале гостиницы «Конгресс» состоялась презентация книги Роберта Кочаряна «Жизнь и свобода». Супруга экс-президента Арцаха и Армении, выступившая на презентации, отметила, что эта книга учит любить Родину. Что ж, сказано верно, однако добавлю от себя: любить Родину так, когда ты готов отдать за нее свою жизнь. Живыми воплощениями такой любви являются Герои Арцаха ...

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ԱՐՑԱԽ. ԵՐԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ ՆԵՆԳԱՓՈԽՎՈՒՄ ԵՆ ԿՈՒՅՐ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ, ԱՂԵՏՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

«Ատելությունը պարտվածների բաժինն է»:
Կոնֆուցիոս

Չեմ թաքցնի, որ մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմում խոր-
հրդային ժողովրդի տարած Հաղթանակի 74-ամյակի, Շուշիի ազատագրման
29-ամյակի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության
բանակի ստեղծման տոնակատարությունից հետո դժվար էր տրամադրվել
գրելու մի հոդված, որում ստիպված եմ հարգելի ընթերցողների ուշադրու-
թյունը հրավիրել «ժողվարչապետի» գործողությունների անհամարժեքու-
թյան հերթական դրսևորման վրա, գործողություններ, որոնք լի են կույր
ատելությամբ քաղաքական ընդդիմախոսների հանդեպ: Ընդ որում՝ անգամ
ամբողջ հայ ժողովրդի համար թանկ այդ լուսավոր տոնական օրերին: Եվ
այսպես, ս.թ. մայիսի 7-ին Արցախի Հանրապետության գործող նախագահ
Բակո Սահակյանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրորդ նա-
խագահ Արկարի Ղուկասյանը նամակ էին ուղարկել Հայաստանի գլխավոր
դատախազ Արթուր Դավթյանի հասցեով: Նամակում, մասնավորապես,
նշված էր. «Ինչպես գիտեք, ամեն տարի մայիսի 9-ին Արցախում հանդիսա-
վորությամբ նշվում է Հաղթանակի տոնը (նկատի է առնվում Հայրենական
մեծ պատերազմում – Ա. Գ.), ԼՂՀ ՊԲ (Լեռնային Ղարաբաղի Հանրապե-
տության Պաշտպանության բանակի – Ա. Գ.) և Շուշիի ազատագրման օրը:
Ավանդույթի համաձայն՝ Ստեփանակերտում և Շուշիում անցկացվող տո-
նակատարությունների հյուր են դառնում, ի թիվս այլ հարգարժան հյուրերի,
Արցախի Հանրապետության բոլոր նախկին ղեկավարները, մարդիկ, ովքեր
իրենց հսկայական ավանդն են ներդրել Արցախյան պատերազմում, կանգ-
նած են եղել մեր պետության և բանակի ստեղծման ակունքներում, մաս-
նակցել են Շուշիի ազատագրմանը, կերտել են մեր Հաղթանակը: Հաշվի առ-
նելով, որ Արցախի Հանրապետության առաջին նախագահ Ռոբերտ Քոչար-
յանը կալանավորված է, խնդրում ենք Ձեզ մայիսի 9-ին ընդառաջ կայացնել
համապատասխան որոշում նրա խափանման միջոցը փոխելու մասին:

Մենք պատրաստ ենք հանդես գալ ցանկացած հրապարակային
երաշխիքով, որն անհրաժեշտ կլինի նրա՝ մեկուսարանից ազատ արձակ-

վելու և կայանալիք դատավարության ողջ ընթացքում ազատության մեջ լինելու համար: Հուսով ենք, որ Ձեր որոշմամբ հնարավորություն կընձեռեք, որպեսզի Արցախի Հանրապետության երեք ղեկավարներն էլ ներկա գտնվեն մայիսի 9-ի տոնակատարություններին Ստեփանակերտում և Շուշիում, ինչը, վստահաբար, համերաշխության և միասնականության ազդակ կդառնա ոչ միայն մեր հասարակության, այլև ամբողջ աշխարհի ու նաև հակառակորդի համար»: Արցախի նախագահների դիմումին ի պատասխան՝ Հայաստանի Գլխավոր դատախազությունը հանդես եկավ պարզաբանմամբ, որում նշված էր. «...ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ խափանման միջոցը կարող է փոփոխվել միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Քանի որ տվյալ քրեական գործը ներկայումս գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում, ՀՀ դատախազությունը տվյալ քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը չէ, հետևաբար՝ նախագահների կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումի քննարկումը ներկա փուլում դուրս է ՀՀ դատախազության լիազորությունների տիրույթից»: Ավելի քան համոզված եմ, որ Բակո Սահակյանը և Արկադի Դուկասյանը բավական հեռատեսորեն են վարվել՝ դիմելով ոչ թե ՀՀ վարչապետին, այլ գլխավոր դատախազին: Չէ՞ որ Ն.Փաշինյանի կողմից նրանց բարձրացրած միջնորդության հարցի դրական լուծումը մերժելու դեպքում մենք կդառնայինք իրադարձությունների չափազանց անցանկալի զարգացման վկաները, այն է. այն փաստի վկաները, երբ պաշտոնական Երևանն իր գործողություններով, փաստորեն, չի ցանկանում «համերաշխության և միասնականության ազդակ դառնալ ոչ միայն մեր հասարակության, այլև ամբողջ աշխարհի ու նաև հակառակորդի համար»: Էլ չեմ ասում այն մասին, որ Հայաստանում իշխանության ղեկին գտնվողների, ասել է թե՛ «ժողվարչապետի» համար ոչ մի արժեք չունի Արցախի նախագահների ընդունած պարտավորությունը. «Մենք պատրաստ ենք հանդես գալ ցանկացած հրապարակային երաշխիքով, որն անհրաժեշտ կլինի նրա՝ մեկուսարանից ազատ արձակվելու և կայանալիք դատավարության ողջ ընթացքում ազատության մեջ լինելու համար»: Ուշադրություն դարձրեք, հարգելի ընթերցող, որ այստեղ անգամ ակնարկ չի արվում գալիք դատավարությանը որևէ միջամտությանը և այս գործով դատարանի համապատասխան որոշման կայացմանը:

Никол Воваевич не мог не знать, что сей «образованный человек» героизировал Рамиля Сафарова, который зарубил топором спящего офицера армянина Гургена Маргаряна, или отметил военными наградами азербайджанских садистов, военнослужащих, которые распространили в социальных сетях кадры, как в дни четырехдневной Апрельской войны 2016 года они с радостью на лицах глумились над трупом армянского солдата (езидского происхождения) Кярама Слаяна, которому отрезали голову и устроили впоследствии фотосессию. Видимо, критерии образованности человека у Никола Воваевича в корне отличаются от общепринятых. Возвращаясь к статье Тофигаханум, поведаем, что же она сказала далее: «И это значит, что Азербайджану надо просто быть готовым к любому повороту событий. В том числе и к необходимости «молниеносной операции» по освобождению Карабаха, и нагорного, и равнинного. Потому как тотальная политическая неадекватность Еревана просто не оставляет другого выхода».

Да, тяжело осознавать, что в столь взрывоопасной ситуации, которая сложилась в армяно-азербайджанских отношениях, на арцахско-азербайджанской границе, руководство «новой Армении» вместо консолидации нации ищет заговорщиков в Республике Арцах. Чем это не тотальная политическая неадекватность, конечно, отнюдь не в понимании Тофигаханум. Неадекватность, которая может подтолкнуть азербайджанских ястребов «к необходимости молниеносной операции по освобождению Карабаха».

У читателей, естественно, может возникнуть вопрос: а как же среагировали на призыв Н. Пашиняна наши партнеры из ЕС и США? Прямо

скажем, весьма своеобразно. Причем настолько своеобразно, что их оценкам удивились даже нейтральные к Азербайджану и Армении масс-медиа. Оценивая реакцию Запада на действия «народного премьера», многие СМИ отмечают, что реакция Запада на действия Н. Пашиняна (речь о его призыве к блокированию зданий всех судов) оказалась противоречивой. Так, по их интегральной оценке Вашингтон и Брюссель выступили по сути с одобрением – они не стали прямо хвалить Н. Пашиняна за блокирование судов, но выразили ему полную поддержку в проведении так называемой судебной реформы. Отмечается также, что легкому порицанию Пашиняна подвергли только докладчики из ПАСЕ и представитель Европейской народной партии из Европарламента. Со своей стороны считаю важным обратить особое внимание на поразительную оперативность в озвучивании заявлений о своем содействии реформированию судебной системы, с которыми спустя буквально считанные часы после объявления Н. Пашиняном своих намерений на этот счет выступили отдельные деятели. Так, 21 мая т.г. посол ЕС в РА Петр Свитальский заявил: «Я сегодня могу подтвердить, что Евросоюз официально готов поддержать глубокие и всеобъемлющие реформы судебной системы, предоставив техническую и финансовую помощь. Я раскрою скобки: речь идет о предметной финансовой поддержке. Мы воспринимаем вчерашнее заявление премьер-министра как очень сильное обязательство, мы ничего не навязываем (кто бы в этом сомневался. – А. Г.), но правительство Армении должно знать, что оно может рассчитывать на нашу помощь» (сайт армянской службы радио «Свободная Европа / Свобода»).

Примечательно также и другое «совпадение»: в тот же день был опубликован ежегодный доклад Еврокомиссии о происходящих в Армении процессах и отношениях ЕС – Армения в период с июня 2018 года по май 2019 года, в котором, в частности, отмечается: «Армения активизировала свои усилия по укреплению и расширению партнерства с Евросоюзом, последовательно признавая ту важную роль, которую ЕС может сыграть в плавной реализации повестки реформ страны». Надо полагать, что в числе главных инструментов по «плавной реализации реформ» были блокирование и захват здания Национального Собрания РА 2 октября 2018 года, в день, когда НС РА приняло поправки в закон «О регламенте Национального Собрания», поправки, которые исключали бы возможность роспуска парламента в случае торпедирования его работы. Заметим, что в соответствии с принятыми поправками в этот закон, если заседание парламента не может состояться из-за отсутствия кворума или в случае, когда создаются препятствия для участия в нем депутатов, то предлагалось приостановить заседание и продолжить его после того, как

эти препятствия будут устранены. То есть законопроект обеспечивал парламенту продолжение работы при отставке премьер-министра, тем самым блокировав планы Никола Воваевича провести внеочередные выборы Национального Собрания РА. Не приходится сомневаться, что в арсенале «плавной реализации реформ» свое достойное место имело сатанистское хамство или, мягко выражаясь, своеобразное прочтение демократии и соблюдения прав человека сторонниками «народного премьера», которые на фасадах зданий и улиц по месту проживания депутатов Национального Собрания из правящей Республиканской партии Армении вывешивали траурные плакаты, оповещающие о кончине того или иного депутата. И это кощунство происходило на глазах у детей и родителей, соседей по дому депутатов Национального Собрания. Вот оно – духовное и политическое убожество главарей государственного переворота в Армении, которых так трепетно оберегают наши западные партнеры.

Продолжая тему предстоящей реформы судебной системы, заметим, что сию долгожданную затею «народного премьера», судя по незамедлительной реакции, с нетерпением ждали в Международном центре переходного правосудия, действующем в США. Как передает армянская служба радио «Голос Америки», уже 22 мая т.г. директор этой службы Анна Мириам Рокателло развернула бурную просветительскую работу по популяризации правосудия переходного периода. Так, в своем интервью она напомнила о том, что, правосудие переходного периода помогает обществу после установления законной власти в стране (стало быть, прежние власти Армении были незаконными, то есть незаконными были парламентские выборы 2 апреля 2017 года, и вовсе не беда, что их законность была подтверждена авторитетными международными организациями, в частности, ПАСЕ и ОБСЕ, не говоря уже самим Николом Воваевичем, который с руководимой им фракцией «Выход» вроде бы никаких нареканий насчет законности НС РА не высказывал) или по окончании войны обратиться к прошлым преступлениям. В контексте Армении мы имеем дело с ситуацией, когда страна хочет укрепить основы демократии (в частности, посредством блокирования здания судов, захвата здания НС РА, перекрытия улиц в ходе несанкционированных митингов) и реформировать государственную систему. Воистину вызывает умиление заботливое, трепетное отношение госпожи Рокателло к нашему Николу Воваевичу. Судите сами: «Я не думаю (госпожа Рокателло. – А. Г.), что Армения опоздала в этом отношении (речь о внедрении правосудия переходного периода. – А. Г.). Наоборот, я думаю, что было бы преждевременно ожидать этого от премьер-министра сразу после смены власти. Ему нужно было сначала объединить правительство и заручиться поддержкой

в парламенте (не может не радовать и одновременно не озадачивать факт появления заокеанского адвоката гегемонов государственного переворота апреля-мая 2018 г. в Армении. – А. Г.). Даже сегодня для реализации этой задачи требуются серьезные усилия – работа, годы работы».

Поддержать свою шефию поспешил старший эксперт Международного центра правосудия переходного периода Рубен Каррансан, который в спешном порядке уже прибыл в Армению (или на подлете) с благородной миссией помочь в разработке программы переходного правосудия. Свою помощь он предваряет разделением армянского общества на «черных» и «белых». Да. Все еще живуче подлое правило человеческих отношений – принцип «разделяй и властвуй» (лат. Divide et impera), который по некоторым источникам был принят на вооружение еще македонским царем Филиппом аж в IV веке до н. э., отцом Александра Македонского (если верить в достоверность письма великого немецкого поэта Генриха Гейне, который об этом утверждал в своем письме из Парижа 12 января 1842 года). Далее Каррансан продолжает: «Первое, что нужно сделать – это избавиться от судей и прокуроров, которые связаны с коррупцией. Для этого необходимо создать процесс, справедливость и прозрачность которого не вызывает сомнений».

Я специально столь подробно излагал эти отнюдь не оригинальные азбучные истины, с которыми не может не согласиться любой здравомыслящий гражданин Армении, чтобы в очередной раз подтвердить следующее. Вся технология оболванивания обремененных повседневной заботой обычных граждан Армении построена на простых механизмах, а именно: населению все время говорят о неоспоримых истинах, созвучных их чаяниям и потребностям, простым естественным желаниям. Одновременно с этим впрыскивают в их подсознание главную мысль, укореняют в сознании граждан постулат о том, что виной всех невзгод и трудностей, бедственного положения являются заранее назначенные продажные и коррумпированные чиновники, пережитки прежних властей. При этом, как правило, обходят стороной главную беду сегодняшней Армении – полную неадекватность «народного премьера» и его команды занимаемым государственным должностям, абсолютное незнание ими элементарных основ государственного управления. И данный факт создает благодатные условия для разного рода коррумпированных чиновников, которым обмануть своих некомпетентных руководителей – раз плюнуть. Следуя по этой наезженной колее, Каррансан предупреждает население Армении о коварстве чиновников, проявляя при этом свою «глубокую озабоченность»: «Я понимаю дилемму премьер-министра Пашиняна: невозможно осуществить правосудие переходного периода (то есть старт начала осуществления правосудия переходного периода – это заранее огово-

ренный и уже свершившийся факт. – А. Г.), избежав сопротивление тех, кто виновен в совершении преступлений (то есть господином Каррансаном виновные уже назначены, а на основополагающее положение гражданского права, презумпцию невиновности ему наплевать. – А. Г.). Они будут отчаянно сопротивляться, использовать имеющиеся у них деньги, они будут использовать учреждения, которые находятся под их влиянием – для борьбы с обвинителями и следователями (вот откуда черпает Никол Воваевич постулаты своих, правда, из раза в раз повторяющихся, пламенных речей. – А. Г.). В случае Армении может иметь место и факт «захвата государства», то есть факт оккупации государства бывшими властями (это посыл в подтверждение «опасений» Н. Пашиняна «о заговоре вокруг Карабаха и госизмене. – А. Г.). Это не уникальный случай, такие случаи имели место и в других странах, с новыми властями которых мы также сотрудничаем».

Хочу, чтобы уважаемый читатель правильно меня понял. Я всецело поддерживаю последовательную и непримиримую борьбу с коррупцией и любыми нарушениями закона, но я не принимаю тактику, когда Республику Армения представляют в качестве такой крайне коррумпированной страны, создают злобный имидж страны изгоя, заранее назначают виновных. При этом и близко не подходят к внедрению в Армении современных, оправдавших себя на практике технологий, которые объективно сводят к минимуму коррупционные риски в системе государственного управления. Взять хотя бы »Smart«-технологии, о которых ранее уже приходилось писать. Нет, Николу Воваевичу такой подход не нужен, ведь его главная цель – создание «законных» оснований для осуществления политической вендетты, для установления своей незыблемой авторитарной власти. Однако и это тема отдельного анализа.

Думается, что незамедлительная реакция П. Свительского, Анны Мириам Рокателло и других представителей стран-партнеров из ЕС и США красноречиво свидетельствуют о том, что наши партнеры еще задолго до Н. Пашиняна были проинформированы о будущем развитии событий в Армении. Событий, которые кукловоды Запада осуществляют с помощью Никола Воваевича. И именно обладая этой информацией заранее проработали формы своей поддержки – «технической», «финансовой», «экспертной» и другими благозвучными действиями. Нам же следует констатировать непреложную истину: «цветные революции» на Украине, в Кыргызстане и Грузии, которые являются слагаемыми американской государственной стратегии построения «глобальных Балкан от Косово до Синьцзяна», ныне небезуспешно получают свое развитие в Армении. При этом отметим, что поводыри главарей государственного переворота в Армении тщательно учли все недоработки, имевшие место

при осуществлении «революции роз» в Грузии в 2003 году, «оранжевой революции» на Украине в 2004 году и евромайдана (с ноября 2013 г. – по февраль 2014 г.), «революции тюльпанов» в 2005 году в Кыргызстане. Достаточно вспомнить душещипательные откровения экс-президента Грузии, экс-главы Одесской области Михаила Саакашвили в эфире радиостанции «Эхо Москвы», которые он озвучил 8 августа 2018 года. «Я считаю, что Никол Пашинян находится на правильном пути. Единственное, что необходимо ему сделать – это изменить систему. Сегодня его приказы выполняются старыми главами правоохранительных органов, но кто дает гарантии, что они не поднимут против него бунт?» Далее, по словам Саакашвили, Пашиняну необходимо было сразу распустить действующий парламент (да простит батоно Михаил своему революционному собрату, что он несколько запоздал с этим делом). Саакашвили инструктирует дальше: «Еще ничего не потеряно. Все остается в силе. Пашинян должен сменить правоохранительную систему, так как успех новоизбранного премьера Армении очень важен для нас (примечательно, что Саакашвили говорит о себе любимом во множественном числе, что вполне закономерно для человека, лишённого гражданства Грузии и 28 июня 2018 года заочно приговоренного к шести годам лишения свободы по делу избиения в 2005 году депутата грузинского парламента Гегашвили, не говоря уже о нем, как о гражданине вселенной, которому запрещен въезд на Украину до 2011 года. – А. Г.). Мой личный совет Пашиняну учиться на наших ошибках (надо отдать должное закулисным кукловодам государственного переворота в Армении, которые, несомненно, извлекли надлежащие уроки из «ошибок» Саакашвили. – А. Г.), а не на своих, потому что потом будет плохо (следует полагать, что Саакашвили наконец-то осознает свою персональную ответственность за создание условий, при которых провозглашение Абхазией и Южной Осетией независимости стало объективной необходимостью. – А. Г.). От успеха Пашиняна сегодня зависит наш успех (видимо, имеет в виду дальнейшее финансирование диверсионных групп фондами Сороса в странах по периметру границ Российской Федерации. – А. Г.)».

Конечно, в этом интервью не обошлось и без выпада в адрес президента Российской Федерации Владимира Владимировича Путина. «Я абсолютно уверен в том, что президент России готов сдвинуть Пашиняна с поста премьер-министра в ближайшее время», – заявил дельфийский оракул наших дней, он же экс-президент Грузии Михаил Саакашвили. Заметим, что с выводами относительно возможных действий президента России батоно Михаил в очередной раз сплеховал, выражаясь проще, – опростоволохился. И это от незнания политики, проводимой президентом В. В. Путиным в отношении стратегических союзников России. Благо что

высшее политическое руководство России неоднократно заявляло о своей искренней любви и доброжелательном отношении и к Армении, и к армянскому народу. Оно также четко обозначило критерии своего отношения к сменяющим друг друга властям Армении, их руководителям. Оно достаточно честно, а самое главное, исходит из интересов Республики Армения, армянского государства, а также 2,5-миллионной армянской диаспоры в России. Суть ее, на мой взгляд, достаточно прозрачна и объективна: Россия воспринимает армянское руководство в той мере, в какой ее политика отражает чаяния всего армянства и, вполне понятно, не противоречит интересам национальной безопасности Российской Федерации, то есть когда действия руководства Армении не в противоречии с обязательствами РА, принятыми в рамках договоров о членстве в ОДКБ и ЕАЭС.

В заключение позволю себе поделиться с читателями своими тревожными выводами относительно событий, на мой взгляд, ожидаемых в ближайшем будущем. Так, по моему убеждению, отсутствие какой-либо вразумительной программы социально-экономического развития Армении хотя бы на ближайшие пять лет, проводимая властями республики губительная для существования двух армянских государств политика разделения армянского народа на «два армянских народа», провокационные попытки поиска властями РА «заговора вокруг Карабаха и госизмены», которые Николом Воваевичем объясняются тем, что некоторые представители «этой коррумпированной системы используют свои личные связи для пропаганды против правительства и премьер-министра», приведут к разрушению основ армянской государственности, неизбежно подтолкнут Азербайджан к развязыванию «молниеносной операции по освобождению Карабаха, и Нагорного, и Равнинного».

Не хотелось бы, чтобы у нашего уважаемого читателя сложилось впечатление, что все западные партнеры в лице политических деятелей, экспертов в рамках »Real politics» или же в силу своих наблюдений и анализов очарованы Николом Воваевичем и находятся в заблуждении или блаженном неведении о происходящем в Армении. Да, следует признать, что властитель душ обезволенных нуждой граждан Армении, одержимых революционным порывом старшекласников и студентов вузов, а также простых честных граждан Армении, с помощью кураторов и технологий, тщательно продуманных стратегами Запада, широко применяя постулаты теории цветных революций, сумел обмануть многих граждан РА. Поэтому приведу весьма интересное высказывание в Twitter-е директора по специальным исследованиям международной организации Freedom Hause Нейта Шенккана, прокомментировавшего призыв Никола Пашиняна о блокировке входов в здания судов на территории Армении: «Опасность в

постреволюционной Армении всегда заключалась в том, что Пашинян, не имея возможности быстро или устойчиво преобразовать страну, скатится к популизму, который привел его к власти. Так и случилось». Признаемся, что, к счастью, и в экспертной среде западных аналитиков еще не перевелись честные люди.

От себя добавлю, что Пашинян уже скатился к опасному популизму, чреватому угрозой потери армянской государственности, а также большим кровопролитием в неизбежной войне, которую развяжет Азербайджан против Республики Арцах. Увы, ослепленные ненавистью к прежнему руководству Армении, нынешние власти РА во главе с ново-явленным «узурпатором» Николом Пашиняном так и не поняли смысла предостережения третьего президента Армении Сержа Азатовича Саргсяна, которое он озвучил в интервью арцахскому телевидению 9 мая 2019 года. Задумаемся о том, что, в частности, сказал в своем интервью третий президент Армении С. А. Саргсян, говоря о слагаемых победы в боях за освобождение Шуши 9 мая 1992 года: «Хотя во время этого (имеются в виду бои за освобождение Шуши. – А. Г.) многие из наших парней погибли, более десятка, но полностью был разгромлен боеспособный батальон (речь об азербайджанском батальоне. – А. Г.). Второе обстоятельство – это то, что в Азербайджане в это время просто шла внутривнутриполитическая грызня, неразбериха, и это тоже нам очень помогло (подчеркнуто мною. – А. Г.)».

Невольно задаешься вопросом: происходящая в наши дни в Армении внутривнутриполитическая грызня, инициируемая Николом Пашиняном, неразбериха, что это – следствие недомыслия и неадекватности или прямая политическая диверсия?

Вместо послесловия. Не хотелось завершать статью на грустной ноте, и к моей радости под рукой оказалась красочно изданная брошюра под заглавием «10 лет ЗАО «Южно-Кавказская железная дорога». Вчитываясь в статистику, характеризующую деятельность ЗАО ЮКЖД, которая является 100% «дочкой» ОАО РЖД, невольно воодушевляешься достижениями этого славного коллектива железнодорожников за последние 10 лет. Быть может, такое восприятие успехов ЮКЖД обусловлено моими деловыми, добрыми взаимоотношениями с начальником «Армянской железной дороги» (1972 – 1991 гг.) Амбарцумом Агасиевичем Кандилянном, большим патриотом СССР, или же близость с прославленным азатамартиком Араратом Хримяном, который с 2000 по 2008 годы был генеральным директором ЗАО «Армянская железная дорога». К сожалению, лично не был знаком с А. Б. Кузнецовым и Ш. Н. Шайдулиным, но знаю об их добром вкладе в развитие ЮКЖД. И наконец, моя радость

А. ГЕГАМЯН

во многом обусловлена рабочими, дружескими отношениями, которые сложились с генеральными директорами ЗАО ЮКЖД Виктором Ивановичем Ребцом и Сергеем Геннадиевичем Валько – высококлассными специалистами железнодорожного транспорта. Именно благодаря их профессионализму и заинтересованной работе последние 10 лет динамика нежелательных транспортных событий снизилась в 6 раз, в инфраструктуру и подвижной состав инвестировано 110 млрд драм, погрузка увеличена на 30%, средний вес поезда – на 490 тонн, установленная скорость возросла в 2,3 раза, производительность труда возросла на 41%. Словом, работа ЗАО ЮКЖД – ярчайший пример эффективного российско-армянского сотрудничества. Увы, власти предрежащие Армении не сочли возможным на государственном уровне отметить праздник наших славных железнодорожников ЗАО ЮКЖД. Им разве что хватило ума в революционном порыве направить в полночь сотрудников Комитета госдоходов Армении в сопровождении силовой поддержки спецназа в офис ЗАО ЮКЖД и устроить там «маски-шоу». С болью и горечью приходится воскликнуть «О времена! О нравы!» (O tempora! O mores!) и выразить надежду, нет, уверенность, что эти порочные нравы в скором времени останутся в прошлом.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ. ՓԱՇԽՆՅԱՆԸ, Ի ԶՈՐՈՒ ՉԼԻՆԵԼՈՎ
ՀԱՍՆԵԼ ԿԱՅՈՒՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ,
ԳԼՈՐՎԵԼ Է ԴԵՊԻ ՊՈՊՈՒԼԻԶՄ

ՊՈՊՈՒԼԻԶՄԸ ՀՂԻ Է ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏՈՎ ԵՎ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱԴՐԲԵԶԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՍԱՆՁԱԶԵՐԾՄԱՄԲ

Եվ այսպես, 2018թ. մայիսի 18-ին Երևանի Ավան և Նոր Նորք համայնքի ընդհանուր իրավասության դատարանը կալանքից ազատեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ, Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին Արցախի Հանրապետության (նախկին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) գործող ու նախկին նախագահներ Բակո Սահակյանի և Արկադի Դուկասյանի երաշխավորությամբ: Ժողդատավոր Դավիթ Գրիգորյանի այս «հանդուգն» անհնազանդությունը «թավշյա հեղափոխության» (նկատի է առնվում 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումը) առաջնորդի՝ Նիկոլ Փաշինյանի կամքին առաջ բերեց նրա «արդարացի» ցատունը: Հաջորդ օրն իսկ Ն.Փաշինյանը կոչ արեց երկրի քաղաքացիներին ս.թ. մայիսի 20-ին վաղ առավոտյան փակել Հայաստանի դատարանների բոլոր մուտքերն ու ելքերը: «Առավոտյան ժամը 08:30-ին փակում ենք հանրապետության դատարանների շենքերի բոլոր մուտքերն ու ելքերը, որպեսզի ոչ ոք չկարողանա ներս մտնել: 12:00-ին ես ելույթ կունենամ իրական ժամանակի ռեժիմով», – իր կողմնակիցներին դիմեց «Ժողվարչապետը» Facebook-ի միջոցով: Ընդ որում՝ նա, մեկնաբանելով դատարանի որոշումը կալանքից Ռոբերտ Քոչարյանին ազատ արձակելու մասին, ասաց, որ «Երկրում հասունանում է հեղափոխության երկրորդ և ամենագլխավոր փուլը, որն ուղղված է դատական համակարգը փոխելուն և այդ ոլորտում ժողովրդական իշխանության հաստատմանը»:

Հատկանշական է, որ նման որոշման անհապաղ ընդունման հիմնավորման համար նա հղում է կատարել հետկյալին. «Կարող եմ բերել միայն մեկ օրինակ. որքանով կարելի է վստահ լինել այն բանում, որ այսօրվա դատական համակարգն ի վիճակի է օբյեկտիվ քննություն վարել մարտի 1-ի այդ նույն գործով (նկատի ունի 2008թ. մարտի 1-ի ցուցարարների, որոնք

համաձայն չէին 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների արդյունքներին, բախումն իրավակարգի ուժերի հետ, որի հետևանքով զոհվեց 10 մարդ, ավելի քան 200-ը վիրավորվեց – Ա. Գ.), այն դեպքում, երբ գործադիր իշխանության տասնյակ հակաիրավական գործողությունները իրականացվեցին գործող դատական համակարգի թուլություններով: Այսպիսով, մենք դարձանք Հայաստանում ծավալվող չափազանց վտանգավոր երևույթի վկաները: Այսպես, արդեն մի ամբողջ տարի Ն.Փաշինյան և ԿՕ-ն մոբիլիզացրել է իր ամբողջ տեղեկատվական ռեսուրսը (այդ թվում և սորոսյան հասարակական կազմակերպությունների կողմից շռայլորեն ֆինանսավորվող) և տասնյակ ինտերնետ պորտալների միջոցով տեղեկատվական ֆոն է ստեղծել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից Հայաստանի սահմանադրական կարգը ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսված եղանակով իբր բռնի տապալելու մասին: Եվ հանկարծ, հարգելի ընթերցող, պատկերացնո՞ւմ եք, այնպես է պատահում, որ առաջին ատյանի դատավոր Դավիթ Գրիգորյանի որոշմամբ դադարեցվում է Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գևորգյանի և 2008թ. ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի ու ՀՀ պաշտպանության փոխնախարար Յուրի Խաչատուրովի քրեական գործը և ուղարկվում Հայաստանի Սահմանադրական դատարան: Իրադարձությունների նման շրջադարձը, երբ դատավորն ինքնուրույն վճիռ է կայացնում՝ ղեկավարվելով օրենքով, և չի դառնում քաղաքական վեցերորդի, «ժողվարչապետի» անձնական վրեժի իրականացման բութ գործիք, սա զարմանք բան է անգամ «նոր Հայաստանի», այսինքն՝ 2018թ. ապրիլ – մայիսի պետական հեղաշրջումից հետո ստեղծված Հայաստանի պայմաններում: Ինչպե՞ս կարող էր Նիկոլ Վովակիչը սրանում չտեսնել անասելի հանդգնության, սրբապղծության դրսևորում, ուղղակի մարտահրավեր իր դեմոկրատական միանձնյա իշխանության հիմքերին: Օ՛հ, խեղճ հայ ժողովուրդ, տես ո՞ւր հասանք: «ժողվարչապետի» վճռականությունը սահման չունի (բնականաբար, ոչ մարտադատում), և նրա արձագանքը սպասել չտվեց: Նա անհապաղ հանդես եկավ ուղիղ եթերով՝ Հայաստանի բոլոր դատարանների մուտքերը փակելու իր կոչի պարզաբանումներով և ցատումնալից ասաց (դեմքի այնպիսի արտահայտությամբ, որը վա՞խ, թե՞ վճռականություն, իսկ ավելի ձիշտ՝ այս երկուսի համադրություն էր մատնանշում). «Հայ ժողովուրդը դատական իշխանությունն ընկալում է որպես հին կոռումպացված համակարգի մնացուկ, որտեղ մշտապես հյուսվում և իրականացվում են դավադրություններ հասարակության դեմ»: Նշենք, հարգելի ընթերցող, որ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում, որոնք տեղի ունեցան 2018թ. դեկտեմբերի 9-ին, գրանցված 2 մլն 573 հազար 579 ընտրողներից քվեարկությանը մասնակցեց ընտրողների 48,99%-ը: Ընդ որում՝ «Իմ քայլը» դաշինքին, որը ղեկավարում է Նիկոլ Փաշինյանը, իրենց ձայնն են տվել 884 հազար 456 ընտրողներ կամ ընտրողների ընդհանուր թվի 34,37%-ը: Այս պայմաններում

հանդես գալ ժողովրդի անունից, ընդ որում՝ անվերապահորեն, տեղի-անտեղի, կարծում եմ, թույլատրելի չէ անգամ «ժողվարչապետին»:

Հարգելի ընթերցող, չեմ թաքցնի, որ անցած շաբաթվա ընթացքում շատ ժամանակ եմ ծախսել՝ ծանոթանալու համար, հնարավորության սահմաններում, տեղեկատվության առավելագույն հնարավոր հոսքին, վերլուծական հոդվածների, հարցազրույցների Նիկոլ Փաշինյանի աննախադեպ գործողությունների վերաբերյալ, որոնց մասին ներկայացվեց վերը: Հիշեցնեմ, որ նա արդեն մեկ տարի ՀՀ գործադիր իշխանության ղեկավարն է, ավելին՝ ձայների 70,43% ունի Ազգային ժողովում: Այս հիշեցումը նրա համար է, որ Նիկոլ Վոլակիչը, իշխանական այսքան պատկառելի լծակներ ունենալով, եթե հանկարծ հրաժարվեր իրեն բնորոշ պոպուլիզմից և զբաղեցրած պաշտոնի հանդեպ փոքրիշատե համարժեքություն ունենար, կարող էր իրականացնել ցանկացած օրենսդրական նախաձեռնություն, ընդունել ցանկացած օրենք դատական համակարգի բարեփոխման մասին: Բնավ չսխալվեցի՝ նշելով, որ մեկ տարվա ընթացքում, քանի որ Հայաստանի խորհրդարանի նախկին կազմը, որտեղ Ն.Փաշինյանը մեծամասնություն չուներ, պետական հեղաշրջումից հետո երբեք չի վիժեցրել որևէ օրինագիծ, որը ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացրել կեղծ հեղափոխականների «Ելք» խմբակցությունը, որի առաջնորդն էր Ն.Փաշինյանը: Անկասկած, «նոր Հայաստանի» իշխանավորներին ոչինչ չէր խանգարում կշռադատված մոտենալ դատական համակարգի բարեփոխմանը, որի կատարելագործումը միանգամայն օրինաչափ գործընթաց է ցանկացած պետության, առավել ևս՝ երիտասարդ դեմոկրատիայով երկրի համար: Ուրեմն, ի՞նչն է դրդել «ժողվարչապետին» դիմելու այսքան հուսահատ, քրեորեն պատժելի քայլի, որը, անկասկած, քիչ թե շատ կայացած դատական համակարգ ունեցող պետությունում իր աշխատանքի դեբյուտը կդարձնե բաց դատավարությունը երկրի գործադիր իշխանության ղեկավարի հանդեպ, որը, համաքաղաքացիներին կոչ անելով փակել դատարանները, ըստ էության, կաթվածահար արեց դրանց աշխատանքը, խոչընդոտեց արդարադատության իրականացմանը, ինչը քրեորեն պատժելի հանցագործություն է: Բայց սա այլ վերլուծության թեմա է:

Իսկ այժմ մտաբերենք ոչ վաղ անցյալի պատմությունը: Այսպես, 2018թ. հուլիսի 10-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, Ելույթ ունենալով Ադրբեջանի կառավարության նիստում, 2018թ. առաջին կիսամյակի գործունեության քննարկման ժամանակ ասաց, որ հայ ժողովուրդը կրկնում է իր խոսքերը, դիցուք. «Ես ասել եմ ՄԱԿ ամբիոնից, որ Հայաստանում եղել է կոռուպցիոն խուճուղի ռեժիմ: Հիմա դա կրկնում է հայ ժողովուրդը (ինչպես և Փաշինյանը, Ալիևը Նիկոլ Վոլակիչին նույնացնում է հայ ժողովրդի հետ, իրո՞ք համախոհներ են – Ա. Գ.)... Հայոց պետականությունն արդեն կործանվել է: Միննույն ժամանակ, արդարությունը հաղթանակել է, իշխող խուճուղի թողել է իշխանությունը: Այստեղ եղել է նաև մեր դերը (ընդգծումը մերն է – Ա.

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Գ.): Չեմ ցանկանում հիմա դա ուռճացնել (չես վիճի՝ վեհանձն է համախոհին փուռը չտալը – Ա. Գ.):»։ Կարծում եմ, որ Ի.Ալիևը ժամանակին է կանգ առել, քանի որ բավական է ուշադիր վերլուծել Հայաստանի «ժողվարչապետի» ելույթից առանձին քաղվածքներ՝ հետևյալ եզրակացությանը հանգելու համար. կարդալով Ն.Փաշինյանի ելույթները՝ երբեմն տպավորություն է ստեղծվում, որ դրանք գրված են ափշերոնյան քաղաքական գործիչների կաբինետներում։ Այլապես չէինք դառնա վկաներն այն բանի, թե ինչպես են նրանք վայելում, օրինակ, ս.թ. մայիսի 20-ին Ն.Փաշինյանի՝ ժողովրդին դիմումի գոհարները։ Ակամա հարց է ծագում. ափշերոնյան քաղաքական գործիչների սրտին դուրեկան այդ ի՞նչ է ասել «ժողվարչապետն» իր այդ ելույթում։ «Ուսումնասիրելով բոլոր փաստերը՝ ես այս ամենի հետևում տեսնում եմ դավադրություն՝ նոր պատերազմ հրահրելու նպատակով և, հնարավոր է, անգամ հանձնել որոշ տարածքներ՝ պատասխանատվությունը դնելով երկրի կառավարության վրա։ Այս գործունեության մեջ տեսնում եմ պետական դավաճանության նշաններ։ Որպես Հայաստանի վարչապետ, պատերազմական իրավիճակներում զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար կդիմեմ ամենակոշտ միջոցների նման դավադրությունները կանխելու համար (այսինքն՝ նախադասության վերջում Նիկոլ Փաշինյանը հաստատում է, որ ինքը չի էլ կասկածում «նման դավադրության» առկայությանը – Ա. Գ.):», – ասել է «ժողվարչապետը»։ Պետք է ենթադրել, որ նա դավադրություն տեսել է Ադրբեջանի պաշտպանության նախարարության տեսահոլովակում, որը ներկայացվել է ափշերոնյան սուլթանության մեդիա-տարածքում տասնյակ հեռուստաալիքներով և ինտերնետ պորտալներով լայնածավալ զորավարժությունների նախօրեին, որոնք մեկնարկել են ս.թ. մայիսի 20-ին (հավանաբար, սորոսյան գրանտակերները հուշել են Նիկոլ Վոլակիչին, որ այնտեղ երևում է հայկական հետք)։ Եվ ահա, տեսահոլովակում կադրեր են ադրբեջանցի զինվորներով, որոնք շարվել են՝ գրելով. «Մեր նպատակը Շուշին է, սպասեք մեզ»։ Համաձայնեք, որ այստեղ հայկական հետքն ակնհայտ է, միայն թե այս ամենին պետք է նայել սորոսյան գրանտակերների աչքերով։ Իսկ գուցե «ժողվարչապետը» «կոնկրետ ուժերի» դավադրություն է տեսել հենց Արցախի Հարապետությունում՝ «նոր պատերազմ հրահրելու նպատակով», ադրբեջանցի դերասան և ռեժիսոր Բահրամ Բադիրզադեի օրերս հրապարակված նոր գրքի շնորհանդեսում, «Իրևանը երեխաների համար» «խաղաղասեր» վերնագրով։ Այդ գրքում մուլախմ Բահրամը բավական ինքնատիպ ձևով է արձագանքում Նիկոլ Փաշինյանի կոչին, որը հնչեցրել է ս.թ. ապրիլի 11-ին ոչ թե մի ինչ-որ տեղում, այլ ԵՆԽՎ ամբիոնից (իմացի՜ր մերոնց)։ «Չափազանց կարևոր է, որ մեզ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ հաջողվեց սկսել կառուցողական երկխոսություն (պետք է ենթադրել՝ հենց այդ խոսակցության արդյունքներով է բացահայտվել որոշ, միայն իրեն ու Իլհամ Ալիևին հայտնի «կոնկրետ ուժերի» դավադրությունը – Ա. Գ.), բայց ես վստահ եմ, որ այն

պետք է անցնի ոչ միայն ղեկավարների, այլ նաև հասարակությունների միջև: Կարևոր է, որպեսզի մենք մեր հասարակությունները պատարստենք խաղաղության, այլ ոչ թե պատերազմի»: Բահրամ Բաղիրզադեն չէր կարող չանսալ Նիկոլ Վոլակիչի կոչին և ս.թ. մայիսի 23-ին ներկայացրել է իր երկը, որից մի կտոր ներկայացնենք հարգելի ընթերցողի դատին. «Եկել է ժամանակը պատշաճը մատուցելու մեր նախնիներին և նրանց մեծ գործերի հանդեպ հարգանքով պատմել ճշմարիտ պատմությունը նրանց հայրենիքի՝ հնագույն քաղաք Իրևանի մասին, որն ստեղծվել է նրանց աշխատանքով ու տաղանդով»: Ընթերցողներին հիշեցնենք, որ Երևան – Էրեբունու հիմնադրման տարեթիվը մ. թ. ա. 782 թվականն է, և Էրեբունին հիմնադրել է Ուրարտուի արքա Արգիշտի 1-ինը: Թե ինչպես կարող էր նա լինել Բահրամ Արիֆօղլիկիչի նախնին, նրա սրտին դուր եկած լեզվով ասած՝ շատ, շատ մեծ գաղտնիք է: Բայց անվիճելի փաստ է, որ ամենավաղ տարիքից ադրբեջանցի երեխաներին ներարկում են թշնամանքի զգացում հայերի և Հայաստանի հանդեպ, նրանց գիտակցության մեջ ձևավորվում է հայի՝ որպես օկուպանտի ու թշնամու կերպարը: Ըստ էության, սրանում ոչ մի նոր բան չկա, առաջին տարին չէ, որ սա ադրբեջանական իշխանությունների կողմից վարվում է որպես պետական քաղաքականություն: Բավական է հիշել, որ 2018թ. փետրվարին Իլիամ Ալիևը Ելույթ ունենալով կառավարող «Ենի Ազերբայջան» կուսակցության 6-րդ համագումարում՝ ասել է. «Իրևանը մեր պատմական հողն է, և մենք՝ ադրբեջանցիներս, պետք է վերադառնանք այդ հողեր, դա մեր քաղաքական և ռազմավարական նպատակն է, և մենք պետք է դրան աստիճանաբար մոտենանք»: Ըստ երևույթին, ստրատեգ Ն.Փաշինյանը, ուսումնասիրելով ադրբեջանցի իր գործընկերոջ խոսքի այս փաստերը, դրանցում խորաթափանցորեն բացահայտել է դավադրությունը՝ հրահրելու նոր պատերազմ (բայց, չգիտես ինչու, ոչ թե Ադրբեջանի, այլ հայկական «դավադիրների» կողմից), այդ գործունեության մեջ տեսել է «պետական դավաճանության» նշաններ Արցախի Հանրապետության «կոնկրետ ուժերի» կողմից: Ի՞նչ է նշանակում այս ամենը: Բացարձակ անհամարժեքություն ավիշերոյան սուլթանության ռազմատենչ բարձրաստիճան քաղաքական գործիչների կողմից Հայաստանի և Արցախի ազգային անվտանգության սպառնալիքի ընկալման հարցում: Իսկ գուցե սա Արևմուտքի ռազմավարների կողմից մանրակրկիտ ծրագրված քաղաքականություն է, որն իրականացնում է Նիկոլ Վոլակիչը և K^O-ն՝ բաղկացած հիմնականում տարատեսակ սորոսյան լափակերներից և ազդեցության գործակալներից, որոնց վերջնական նպատակը հայոց պետականության հիմքերի խարխուլումն է՝ հայկական երկու պետություններում՝ Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում ապրող հայ ժողովրդի միասնության ու եղբայրության անսասան հիմքերի սասանմամբ: Ավաղ, ասածս չափազանցություն չէ, ավելին՝ նման գնահատականները զուրկ չեն հիմքից: Այսպես, 2019թ. մայիսի 17-ին News. Day.az ինտերնետ

պորտալը հրապարակեց Ջուլֆուլար Իբրահիմովի հոդվածը բավական պերճախոս վերնագրով՝ «Ղարաբաղյան կլանից Փաշինյանին կարող է փրկել միայն Ադրբեջանը»: Համաձայնեք, հարգելի ընթերցող, որ վերնագիրն ինքը պերճախոս վկայում է ադրբեջանական իշխանությունների առանձնակի սրտացավ վերաբերմունքի մասին Նիկոլ Վոլակիչի անձի հանդեպ: Չէ՞ որ հանրահայտ է, որ News.day.az-ը ալիկյան քարոզչության բազմաթիվ խոսափողներից մեկն է: Այս ինչ հոգատարության դրսևորում է Հայաստանի «ժողվարչապետի» ճակատագրի հանդեպ, որին հանձն է առնում փրկել Ադրբեջանը: Ահա թե ինչ է պատմում մեզ իր հոդվածում մուալիմ Ջուլֆուլարը. «Ղարաբաղյան կլանն իրականում շատ ավելի ուժեղ է, քան մտածում էին վերջապես սեփական երկրում իշխանության հասած երևանցիները: Որտեղի՞ց է հոդվածագրին հայտնի՝ ի՞նչ էին մտածում իշխանության հասած երևանցիները, կարծում եմ՝ անտեղի հարց չէ: Երկրորդ՝ նշենք, որ ադրբեջանական էլիտայի սրտին հարազատ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Հալեպի ծնունդ է, իսկ Նիկոլ Փաշինյանը Երևանին մի փոքր մոտ է ծնվել՝ Իջևանում: Ադրբեջանցի հեղինակի խոսքերը պարզապես անվնաս պասաժ չեն, քանի որ դա հետապնդում է միանգամայն կոնկրետ նպատակ՝ ընթերցողների ենթագիտակցության մեջ մտցնել «երկու հայ ժողովուրդ» հասկացությունը՝ վտանգավոր սահմանում, որն արժարժել է նաև ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, ս.թ. մայիսի 20-ի իր դիմումում՝ հայտարարելով. «Կան կոնկրետ ուժեր, որոնք փորձում են պառակտում մտցնել երկու հայ ժողովրդի միջև»: Ուշադրություն դարձրեք նման սահմանմանը, որը, փաստորեն, տարբերություն է դնում, տարանջատում է միասնական հայ ժողովրդին: Ընդ որում՝ սա պարզապես բանավոր խոսքի վրիպում չէ, քանի որ նրա ելույթը գրված էր թղթին: Ընդ որում՝ դառնացնում է այն, որ վերոնշյալ հոդվածը News.day.az-ում, ոչ առանց հիմքի, սկսվում է սրա վերաբերյալ ծաղրով. «Հայտնի է ականջից ձգված «երկու հայկական պետությունների» հայեցակարգը: Բայց այսօր առաջին անգամ լսեցինք այնպիսի անհեթեթություն, ինչպիսին է «երկու հայ ժողովուրդը»: Ինչպես ասում են, հասանք այնտեղ, որ անգամ ադրբեջանցի լրագրողն է «երկու հայ ժողովուրդ» ձևակերպումն ընկալում որպես անհեթեթություն:

Որպեսզի Ն.Փաշինյանի վերջին գործողությունների մասին ադրբեջանական իշխանությունների արձագանքի պատկերն ամբողջական լինի, մեջբերում կատարենք արևելագետ Դմիտրի Վերխոտուրովի հարցազրույցից «Մոսկվա-Բաքու» ինտերնետ պորտալին 2019թ. մայիսի 22-ին, որը, ըստ իս, «ժողվարչապետի» հերոսական ջանքերի անկանխակալ ընկալումն է «թավշյա հեղափոխության» երկրորդ, գլխավոր փուլի իրականացման ճանապարհին: Իսկ գլխավորն այն է, որ հարցազրույցն արտացոլում է արևելագետ-փորձագետի անկողմնակալ դիրքորոշումը: Եվ այսպես, «Մոսկվա-Բաքու» պորտալի թղթակցի հարցին՝ «Չէ՞ որ Փաշինյանն արդեն մեկ տարի իշխանությունում է: Ինչո՞ւ էր նա ստիպված գնալ նման միջոց-

ների: Ամբոխ հավաքել և դատավորներին չթողնել իրենց աշխատատեղեր: Պետության ղեկավարն իրեն այնպես է պահում, ասես դեռ ընդդիմություն է», հետևել է այս պատասխանը. «Ըստ երևույթին, նրա հեղինակությունը սասանվել է: Մի մոռացեք, որ Փաշինյանը պոպուլիստ է: Նա իշխանության է եկել հենց պոպուլիզմի ալիքի վրա (չի բացառվում, որ նրան իշխանության են բերել հայ ժողովրդին «երկու հայ ժողովրդի» բաժանելու նպատակով, առաքելությամբ, իսկ պոպուլիզմն օգտագործվել է որպես իշխանության զավթման գործիք – Ա. Գ.): Եվ նրան մինչև հիմա պետք են հենց այդպիսի կոնֆլիկտներ, որոնց ընթացքում նա կարող է մոբիլիզացնել զանգվածների աջակցությունը, հանդես գալ առաջնորդի դերում: Նա այդ կերպ ամրացնում է իր դիրքերը»:

Մտահոգում է նաև մեկ այլ հանգամանք՝ «ժողվարչապետի» և Ադրբեջանի իշխանությունների գնահատականների լիակատար համընկնումը: Որպեսզի ասվածը մերկապարանոց չինչի, կոնկրետ օրինակ բերեմ: Այսպես, ս.թ. մայիսի 20-ին ոչ անհայտ Minval.az ինտերնետ պորտալը, որը Ի.Ալիևի խոսափողն է, հրապարակեց քաղաքական մեկնաբան Թոֆիգախանում Ֆազիլ կզիի, որը հոդվածները ստորագրում է Նուրանի կեղծանունով, հոդվածը՝ «Փաշինյանը խուճապի մեջ է. Ադրբեջանը պետք է պատրաստ լինի ցանկացած սցենարի» վերնագրով: Ահա թե ինչ է նա, մասնավորապես, գրում իր հոդվածում. «Բայց կյանքի իրավունք ունի նաև այն վարկածը, որ «ղարաբաղցիներն» իրոք կարող են սադրել ձակատի գծում «թեժ սցենար» (Ն.Փաշինյանը դա անվանում է «դավադրություն՝ նոր պատերազմ սադրելու նպատակով» – Ա. Գ.) , իսկ քանի որ ուժերի դասավորությունը (և սա դեռ մեղմ է ասված) հօգուտ Հայաստանի չէ, ապա այն կավարտվի հերթական կորուստներով Երևանի համար (համաձայն Ն.Փաշինյանի՝ «հնարավոր է, անգամ հանձնել որոշ տարածքներ՝ պատասխանատվությունը դնելով երկրի կառավարության վրա» – Ա. Գ.)... Բայց և այնպես, ակնհայտ է, որ այսօր ձակատի գծում բարձր է սադրանքների ռիսկը: Իսկ Հայաստանի քաղաքական դաշտում պարզապես չկան ընկալելի և ազդեցիկ քաղաքական գործիչներ, որոնց հետ կարելի է ոչ թե պարզապես հանդիպել և ձեռք սեղմել, այլև շանս լինի իսկապես առաջ մղելու բանակցությունները [վայ, վայ, ինչ դաժան ու անարդար է ասված, և ինչ սև երախտամոռություն: Մի՞թե Թոֆիգախանումը չգիտի, որ 2018թ. հոկտեմբերի 30-ին լրագրողների հետ զրույցում Ն.Փաշինյանը գովել է նրա պատրոնին՝ նշելով. «Նա (Իլհամ Ալիևը – Ա.Գ.) կիրթ մարդու տպավորություն թողեց – Ա. Գ.]: Նիկոլ Վոլակիչը չէր կարող չիմանալ, որ այդ «կիրթ մարդը» հերոսացրել էր Ռամիլ Սաֆարովին, որը կացնահարել էր քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանին կամ զինվորական պարզեներ է շնորհել ադրբեջանցի զինվորականներին, որոնք սոցիալական ցանցերում տարածել էին, թե ինչպես են 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին ադրբեջանցի զինվորականները ծածկալը դեմքերին ծանակում հայ

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

զինվորի՝ ազգությամբ եզդի Քարամ Սլոյանի անշունչ մարմինը, որի գլուխը կտրել էին և ֆոտոսեսիա էին կազմակերպել: Հավանաբար, Նիկոլ Վոլակիչի համար կիրթ մարդու չափանիշները արմատապես տարբերվում են բոլորի կողմից ընդունվածներից: Վերադառնալով Թոֆիգախանումի հողվածին՝ ներկայացնենք, թե ինչ է ասել նա այնուհետև. «Եվ դա նշանակում է, որ Ադրբեջանը պետք է պատրաստ լինի իրադարձությունների ցանկացած շրջադարձի: Այդ թվում և Ղարաբաղի ազատագրման «ակնթարթային գործողության»՝ թե՛ լեռնային, թե՛ դաշտավայրային: Քանի որ Երևանի համատարած քաղաքական անհամարժեքությունը պարզապես այլ ելք չի թողնում»:

Այո, դժվար է գիտակցել, որ հայ-ադրբեջանական սահմանին հայ-ադրբեջանական հարաբերությունների այսքան պայթյունավտանգ իրավիճակում, «նոր Հայաստանի» ղեկավարությունը ազգի համախմբման փոխարեն դավադիրներ է փնտրում Արցախի Հանրապետությունում: Ինչո՞ւ սա համատարած քաղաքական անհամարժեքություն չէ, իհարկե՝ բնավ ոչ Թոֆիգախանումի ընկալմամբ: Անհամարժեքություն, որը կարող է ադրբեջանցի բազեներին դրդել «Ղարաբաղի ազատագրման ակնթարթային գործողության անհրաժեշտության»:

Ընթերցողը, բնականաբար, կարող է հարցնել. իսկ ինչպե՞ս արձագանքեցին Ն.Փաշինյանի կոչին ԵՄ և ԱՄՆ մեր գործընկերները: Ուղղակի ասենք՝ բավական ինքնատիպ: Ընդ որում՝ այնքան ինքնատիպ, որ նրանց գնահատականներից զարմացել էին անգամ Ադրբեջանի ու Հայաստանի հանդեպ չեզոք մաս-մեղիաները:

Այսպես, գնահատելով «ժողվարչապետի» գործողություններին Արևմուտքի արձագանքը՝ շատ ԶԼՄ-ներ նշում են, որ Արևմուտքի արձագանքը Ն.Փաշինյանի գործողություններին (խոսքը բոլոր դատարանների շենքերը փակելու նրա կոչի մասին է) հակասական է: Նրանց հավաքական գնահատականով՝ Վաշինգտոնը և Բրյուսելը, ըստ էության, հանդես են եկել հավանությամբ. նրանք ուղղակի չեն գովել Ն.Փաշինյանին դատարանները փակելու համար, բայց լիակատար աջակցություն են հայտնել նրան «դատական բարեփոխում» իրականացնելու հարցում: Նշվում է նաև, որ Փաշինյանին թեթևակի կշտամբել են միայն ԵԽԽՎ զեկուցողները և Եվրախորհրդարանի Եվրոպական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչը: Իմ կողմից կարևոր եմ համարում հատուկ ուշադրություն հրավիրել դատական համակարգի բարեփոխմանն իրենց աջակցությունը հայտնելու զարմանալի օպերատիվության վրա՝ Ն.Փաշինյանի կողմից այս հաշվով իր մտադրությունները հայտնելուց տառացիորեն ժամեր անց: Այսպես, ս.թ. մայիսի 21-ին ՀՀ-ում ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկին ասաց. «Ես այսօր կարող եմ հայտարարել, որ Եվրամիությունը պաշտոնապես պատրաստ է աջակցել դատական համակարգի խորքային և համապարփակ բարեփոխումներին՝ տեխնիկական ու ֆինանսական օգնություն տրամադրելով: Ես կբացեմ փակա-

գծերը. խոսքն առարկայական ֆինանսական աջակցության մասին է: Մենք վարչապետի երեկվա հայտարարությունն ընկալում ենք որպես շատ ուժեղ պարտավորություն, մենք ոչինչ չենք պարտադրում (ով էլ կասկածեր – Ա.Գ.), բայց Հայաստանի կառավարությունը պետք է իմանա, որ կարող է մեր օգնության հույսն ունենալ» (<https://azatutyun.am/a.2995224.html>, «Ազատ Եվրոպա/ Ազատություն» ռադիոյի հայկական ծառայություն): Հատկանշական է նաև այն «համընկնումը», որ նույն օրը հրապարակվեց Եվրահանձնաժողովի ամենամյա զեկույցը Հայաստանում տեղի ունեցող գործընթացների և ԵՄ-Հայաստան հարաբերությունների մասին, 2018թ. հունիսից 2019թ. մայիս շրջանում, որում, մասնավորապես, նշվում է. «Հայաստանն ակտիվացրել է իր ջանքերը Եվրամիության հետ գործընկերության ամրապնդման և ընդլայնման ուղղությամբ՝ հետևողականորեն ընդունելով այն կարևոր դերը, որը ԵՄ-ը կարող է խաղալ երկրի բարեփոխումների օրակարգի սահուն իրագործման մեջ»: Պետք է ենթադրել, որ «բարեփոխումների սահուն իրականացման» գլխավոր գործիքների շարքում էին 2018թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ Ազգային ժողովի շենքի շրջափակումն ու զավթումը այն օրը, երբ ՀՀ ԱԺ-ն ընդունել էր լրացումներ «Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրենքում, լրացումներ, որոնք կբացառեին խորհրդարանի ցրումը նրա աշխատանքը վիժեցնելու պարագայում: Նշենք, որ այդ օրենքում ընդունվելիք լրացումներին համապատասխան, եթե խորհրդարանի նիստը չի կարող տեղի ունենալ քվորումի բացակայության կամ այն դեպքում, երբ խոչընդոտներ են ստեղծվում դրան պատգամավորների մասնակցության համար, ապա առաջարկվում էր դադարեցնել նիստը և այն շարունակել այդ խոչընդոտների վերացումից հետո: Այսինքն՝ օրինագիծն ապահովում էր խորհրդարանի անխափան աշխատանքը վարչապետի հրաժարականի դեպքում՝ դրանով իսկ արգելակելով Նիկոլ Վոլակիչի ծրագրերը՝ անցկացնել ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: Չարժե կասկածել, որ «բարեփոխումների սահուն իրականացման» զինանոցում իր արժանի տեղն ուներ «ժողվարչապետի» կողմնակիցների սատանայական անտաշությունը, դեմոկրատիայի և մարդու իրավունքների պաշտպանության ինքնատիպ ընկալումները, որոնք Հայաստանի կառավարող Հանրապետական կուսակցության պատգամավորների ապրած շենքերի ձակատներին և փողոցներում մահապատահներ էին կախում, որոնցով տեղեկացնում էին այս կամ այն պատգամավորի մահվան մասին: Եվ այս սրբապղծությունը տեղի էր ունենում Ազգային ժողովի պատգամավորների երեխաների և ծնողների, դրկիցների աչքերի առջև: Ահա Հայաստանում պետական հեղաշրջման պարագլուխների հոգևոր ու քաղաքական տականքությունը, որոնց այդքան գորովալից պաշտպանում են մեր արևմտյան գործընկերները:

Այսպես, շարունակելով դատական համակարգի սպասվող բարեփոխման թեման՝ նշենք, որ «ժողվարչապետի» այս երկար սպասված մտափոխմանը անհամբերությամբ սպասում էին Անցումային արդարադատության

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

միջազգային կենտրոնում, որը գտնվում է ԱՄՆ-ում: Ինչպես տեղեկացնում է «Ամերիկայի ծայնի» հայկական ծառայությունը, արդեն ս.թ. մայիսի 22-ին այդ ծառայության տնօրեն Աննա Միրիամ Ռոկատելոն բուռն լուսավորչական աշխատանք սկսեց անցումային արդարադատության հանրահռչակման ուղղությամբ: Այսպես, իր հարցազրույցում նա հիշեցրեց այն մասին, որ անցումային արդարադատությունն օգնում է հասարակությանը երկրում օրինական իշխանության հաստատումից հետո (ասել է թե՛ Հայաստանի նախկին իշխանություններն անօրինական էին, այսինքն՝ անօրինական են եղել 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունները, և բնավ խնդիր չէ, որ դրանց օրինականությունը հաստատվել է հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից, մասնավորապես՝ ԵԽՆԿ-ի և ԵԱՀԿ-ի, էլ չեն ասում հենց Նիկոլ Վոլակիչի մասին, որն իր ղեկավարած «Ելք» խմբակցության հետ միասին կարծես թե առարկություններ չէր հայտնել ՀՀ ԱԺ օրինականության հաշվով) կամ պատերազմի ավարտից հետո դիմել նախկին հանցագործություններին: Հայաստանի համատեքստում մենք գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ երկիրը ցանկանում է ամրապնդել դեմոկրատիայի հիմքերը (մասնավորապես, դատարանների շենքերը փակելու, ՀՀ ԱԺ շենքը զավթելու, չարտոնված հանրահավաքների ժամանակ փողոցները փակելու միջոցով) և բարեփոխել պետական համակարգը: Իրոք, զմայլանք է առաջացնում տիկին Ռոկատելոյի հոգատար, գորովալից վերաբերմունքը մեր Նիկոլ Վոլակիչի հանդեպ: Ինքներդ դատեք. «Ես (տիկին Ռոկատելոն – Ա. Գ.) չեմ կարծում, որ Հայաստանն ուշացել է այս առումով (խոսքը անցումային արդարադատության ներդրման մասին է – Ա. Գ.): Ընդհակառակը, ես կարծում եմ, որ ժամանակավրեպ կլիներ սպասել դա վարչապետից անմիջապես իշխանափոխությունից հետո: Նա պետք է սկզբում միավորեր կառավարությունը և հավաստիանար խորհրդարանի աջակցության հարցում (չի կարող չուրախացնել և չմտահոգել Հայաստանում 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջման հեգեմոնների անդրօվկիանոսյան փաստաթանի հայտնվելու փաստը – Ա. Գ.): Անգամ այսօր այդ խնդրի իրականացման համար լուրջ ջանքեր են պահանջվում՝ աշխատանք, տարիների աշխատանք»:

Շեֆուհուն աջակցել շտապեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի ավագ փորձագետ Ռուբեն Կարանսան, որը շտապ կարգով արդեն ժամանել է Երևան (կամ ճանապարհին է) ազնիվ առաքելությամբ՝ օգնել մշակելու անցումային արդարադատության ծրագրեր: Իր օգնությունը նա ազդարարում է հայ հասարակությունը «սևերի» և «սպիտակների» բաժանելով: Այո, դեռևս կենսունակ է մարդկային հարաբերությունների ստոր կանոնը՝ «բաժանիր և տիրիր» սկզբունքը (լատ.՝ *Dived et impera*), որը, ըստ որոշ աղբյուրների, որդեգրել էր Ալեքսանդր Մակեդոնացու հայրը՝ Ֆիլիպ Մակեդոնացին, դեռևս մ. թ. ա. 4-րդ դարում (եթե հավատանք գերմանացի մեծ պոետ Հայնրիխ Հայնեի նամակի հավաս-

տիությանը, որն այդ մասին պնդել է 1842թ. հունվարի 12-ին Փարիզից գրած իր նամակում): Այնուհետև Կարանսան շարունակում է. «Առաջինը, որ պետք է անել, դատավորներից և դատախազներից ազատվելն է, որոնք կապված են կոռուպցիայի հետ: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել գործընթաց, որի արդարությունը և թափանցիկությունը կասկածներ չեն հարուցում»: Հատուկ այսքան մանրամասն են ներկայացնում այս բնավ ոչ ինքնատիպ այբբենական ճշմարտությունները, որոնց չի կարող չհամաձայնել Հայաստանի յուրաքանչյուր առողջ դատող քաղաքացի, որպեսզի հերթական անգամ հաստատեն հետևյալը. Հայաստանի՝ ամենօրյա հոգսի տակ կքած սովորական քաղաքացիների հիմարացման ամբողջ տեխնոլոգիան կառուցվում է պարզ մեխանիզմների հիման վրա, դիցուք. բնակչությանն անընդհատ ասում են անվիճելի ճշմարտություններ, որոնք համահունչ են նրանց ակնկալիքներին և պահանջմունքներին, պարզ ու բնական ցանկություններին: Դրա հետ միաժամանակ, նրանց ենթագիտակցության մեջ ներարկում են իրենց գլխավոր միտքը, արմատավորում քաղաքացիների գիտակցության մեջ այն կանխադրույթը, որ բոլոր դժվարությունների և աղետների, փորձանքների մեղավորը նախապես նշանակված ծախու և կոռումպացված պաշտոնյաներն են, նախկին իշխանությունների մնացուկները: Ընդ որում՝ որպես կանոն, շրջանցում են այսօրվա Հայաստանի գլխավոր փորձանքը՝ «ժողվարչապետի» ու նրա թիմի լիակատար անհամարժեքությունն իրենց զբաղեցրած պաշտոններին, պետական կառավարման տարրական հիմունքների չիմացությունը: Եվ այս փաստը պարարտ հող է ստեղծում տարատեսակ կոռումպացված չինովնիկների համար, որոնց համար իրենց ոչ բանիմաց ղեկավարներին խաբելը մեկից մեկ է: Ընթանալով այս տրորված արահետով՝ Կարանսանը Հայաստանի բնակչությանը նախազգուշացնում է պաշտոնյաների նենգության մասին՝ արտահայտելով իր խոր մտահոգությունը. «Ես հասկանում եմ վարչապետ Փաշինյանի դիլեման. անհնար է իրականացնել անցումային արդարադատություն (այսինքն՝ անցումային արդարադատության իրականացումն սկսելու մեկնարկը նախապես պայմանավորված և կատարված փաստ է – Ա. Գ.)՝ խուսափելով նրանց դիմադրությունից, ովքեր մեղավոր են հանցագործություններ կատարելու մեջ (այսինքն՝ պարոն Կարանսանի կողմից մեղավորներն արդեն նշանակված են, իսկ քաղաքացիական իրավունքի հիմնարար դրույթի՝ անմեղության կանխավարկածի վրա նա թքած ունի – Ա. Գ.): Նրանք հուսահատ կդիմադրեն, կօգտագործեն իրենց ունեցած փողը, նրանք կօգտագործեն այն հաստատությունները, որոնք գտնվում են նրանց ազդեցության տակ՝ պայքարելու համար մեղադրողների և քննիչների դեմ (ահա թե որտեղից է իր կանխադրույթները վերցնում Նիկոլ Վոլակիչը, իհարկե, ամեն անգամ կրկնվող բոցավառ ելույթների համար – Ա. Գ.): Հայաստանի պարագայում կարող է տեղի ունենալ նաև «պետության զավթման» փաստ, այսինքն՝ պետության օկուպացիայի փաստ նախկին իշխանությունների կողմից (այս

Ա. գեղաստ

ուղերծը՝ ի հաստատումն Ն.Փաշինյանի «երկյուղների» Ղարաբաղի շուրջ դավադրության և պետական դավաճանության մասին – Ա. Գ.): Սա եզակի դեպք է, նման դեպքեր տեղի են ունեցել նաև այլ երկրներում, որոնց նոր իշխանությունների հետ մենք նույնպես համագործակցում ենք»:

Ցանկանում եմ, որպեսզի հարգելի ընթերցողն ինձ ճիշտ հասկանա: Ես լիովին կողմնակից եմ կոռուպցիայի և օրենքի ցանկացած խախտման դեմ հետևողական ու անհաշտ պայքարին, բայց չեմ ընդունում այն մարտավարությունը, երբ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում են որպես կոռումպացված մի ինչ-որ երկիր, ստեղծում են իզոպոլ երկրի չարաբաստիկ կերպար, նախապես նշանակում են մեղավորներ: Ընդ որում՝ անգամ չեն էլ մոտենում երկրում արդիական, իրենց արդարացրած տեխնոլոգիաները ներդնելուն, որոնք օբյեկտիվորեն նվազագույնի կհասցնեին կոռուպցիոն ռիսկերը պետական կառավարման համակարգում: Վերցնենք, թեկուզ «Smart» տեխնոլոգիաները, որոնց մասին ավելի վաղ գրել եմ: Չէ՛, Նիկոլ Վոլանիչին նման մոտեցումը պետք է, չէ՞ որ նրա գլխավոր նպատակը քաղաքական վենդետայի իրականացման համար «օրինական» հիմքեր ստեղծելն է՝ իր անսասան ավտորիտար իշխանության հաստատման նպատակով: Սակայն սա ևս առանձին վերլուծության թեմա է:

որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ Նիկոլ Փաշինյանի վարած բանակցային գործընթացի ուղղվածությունը Արցախի Հանրապետության ղեկավարության ընկալմամբ ոչ այլ ինչ է, եթե ոչ հողերի վաճառք, որոնք ազատագրվել են Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի հազարավոր հայերի, մեր միասնական հայրենիքի՝ միացյալ Հայաստանի հայրենասերների կյանքի գնով: Իսկ ինչ վերաբերում է իբր նրան, թե Արցախի ղեկավարությունը տեղյակ չէ բանակցային գործընթացի մանրամասներին, ապա դա լիակատար անհեթեթություն է, պրիմիտիվ հնարք՝ հետին թվով արդարացնել իր պարտավորական դիրքորոշումը բանակցային գործընթացում: Այսինքն՝ Ն.Փաշինյանը, ըստ էության, խոսում է այն մասին, որ Ղարաբաղյան կարգավորման քննարկվող մոտեցումներում ոչ մի նոր բան չկա, բայց և այդ «հինն» էլ հայտնի չէր Արցախի ղեկավարությանը. ահա վերջին տեղեկատվական արտահոսքերի իսկական նպատակը: Այնինչ, Նիկոլ Վովակիչն այդքան էլ միամիտ չէ, ինչպես ցանկանում է ներկայանալ՝ նման անհեթեթություն ասելով: Ով՞ ով, բայց նա հիանալի հասկանում է, որ նրան իշխանության են «բերել» բնավ ոչ Հայաստանում դեմոկրատիայի խորացման, քաղաքացիական ինստիտուտների ամրապնդման անգուսպ ցանկությունից: Ոչ, մեկ անգամ ևս ոչ, հարգելի ընթերցող: Հայաստանում «դեմոկրատական փոփոխությունների» ջատագովների գլխավոր նպատակը «ժողվարչապետին» աջակցություն ցուցաբերելն է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մասին նրա իսկ պատկերացումների իրագործման մեջ, որոնք կոնկրետ արտահայտված են Լեռնային Ղարաբաղի շուրջ ազատագրված տարածքների ճակատագրի մասին նրա «մարգարեական» խոսքերում: Ընթերցողին հիշեցնենք Ն.Փաշինյանի «Հողը սիրելով են պահում, իմացե՛ք» հոդվածի մասին՝ հրապարակված «Հայկական ժամանակ» թերթում 2001թ. մայիսի 22-ին, որի խմբագիրն էր այդ ժամանակ ինքը՝ «ժողվարչապետը»: Ինչի մասին էր բարբառում նա այդ հոդվածում. «Եվ ուրեմն, ինձ զարմացնում է, որ մեր երկրում դեռ կան մարդիկ, ովքեր իլյուզիաներ ունեն գրավյալ, եթե կուզեք՝ ազատագրված, եթե կուզեք՝ օկուպացված տարածքների վերաբերյալ: Եկեք նրբանկատորեն շրջանցենք հարցի ամենացավոտ կողմը և հարցը դիտարկենք խաղի կանոնների տեսակետից: Ես չեմ ընդունում այն տեսակետը, թե լավ դիվանագիտությունը կարող է այնպես անել, որ այդ տարածքները չվերադարձնեն Ադրբեյջանին... Ախր, էս երկիրը (նկատի ունի Հայաստանը – Ա. Գ.) տեր չունի, և մենք, որ պետք է լինենք այս երկրի տերը, մերը թողած ուզում ենք տեր լինել ուրիշին» (ընդգծումը մերն է – Ա. Գ.): Վերադառնալով Ն.Փաշինյանի վերջին արտահայտություններին իբր Արցախի Հանրապետության ղեկավարության անտեղյակության մասին՝ նշենք, որ այս հարցերին ցանկացած արձագանք արցախյան ղեկավարության կողմից անխուսափելիորեն կդառնար Ն.Փաշինյանի՝ իր տիկնիկավարների հետ միասին, շահարկումների և սակարկության առարկա առ այն, որ Ղարաբաղյան հակա-

մարտության կարգավորման առաջարկվող տարբերակը վաղուց մերժվել էր Հայաստանի նախկին իշխանությունների կողմից, ավելին՝ արդեն լիովին մոռացվել է Արցախի Հանրապետության իշխանությունների կողմից: Իսկ ինչ վերաբերում է Ն.Փաշինյանի՝ ինքնատիպության հավակնող մտքերին իբր «պարերի գծով» չխոսկան «գործընկերոջ» վերաբերյալ, թող այդ թեմայի շուրջ իրենց նեղություն տան խորհելու նրա «ինտելեկտուալ» խորհրդականները (հերթական սադրանքների արանքում), ընդ որում՝ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի՝ իրեն իսկ՝ թանկագին Նիկոլ Վոլակիչին տված պատասխանի համատեքստում:

«Վերջերս Հայաստանի Հանրապետության վարչապետը տրամադրել է մեզ որոշ փաստաթղթեր բանակցային գործընթացի մասին: Մենք էլ մեր հերթին Հայաստանի Հանրապետության վարչապետին ենք փոխանցել բանակցային գործընթացին առնչվող մեզ մոտ առկա փաստաթղթերի փաթեթը (ինչը վկայում է Ն.Փաշինյանի անբավարար տեղեկացվածության մասին, շնորհակալություն Բակո Սահակյանին «ժողվարչապետի» մասին հոգալու համար – Ա. Գ.): Առհասարակ, և՛ հիմա, և՛ նախկինում Ադրբեյջանի հետ բանակցություններից առաջ ու դրանցից հետո Հայաստանի Հանրապետության իշխանությունները տեղյակ էին պահում Արցախի ղեկավարությանը քննարկվող հարցերի և վերջին զարգացումների մասին: Ընդհանրապես, ուզում եմ ընդգծել, որ շահարկումներ (Արցախի նախագահը, անշուշտ, իրավացի է՝ «ժողվարչապետի» խոսքերը շահարկում գնահատելով – Ա. Գ.) թույլ չտալու լավագույն և գուցե միակ հնարավորությունը լիարժեք ձևաչափի (բանակցային գործընթացի – Ա. Գ.) վերականգնումն է՝ Արցախի անմիջական մասնակցությամբ», – այսպիսին էր Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի պատասխանը, որը նա տվել է «Արցախպրեսի» և «Ազատ Արցախի» հարցազրույցում 2019թ. հունիսի 5-ին: Չեմ թաքցնում, որ ուժեղ էին Արցախի Հանրապետության նախագահի հարցազրույցի ամփոփիչ խոսքերը. «Մեր ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մեր միասնականությունն է, և անթույլատրելի եմ համարում այն խարխլելուն ուղղված ցանկացած քայլ՝ լինի դա Արցախում, Հայաստանում, թե Սփյուռքում (սա անկեղծ և անմիջական մեղադրանք է, այսպես ասենք, իմ ընկալմամբ՝ Նիկոլ Փաշինյանի հասցեին համաշխարհային հայության միասնականության նպատակաուղղված խարխլման վերաբերյալ – Ա. Գ.): Անընդունելի եմ համարում դավադրական պահելաձևն (իմ կողմից ավելացնեմ՝ Նիկոլ Վոլակիչի – Ա. Գ.) առհասարակ... Մենք ունենք մեկ Հայրենիք, և բոլորիս պարտքն է անել ամեն ինչ նրա միասնականությունը պահպանելու համար»: Իմ կողմից ավելացնեմ. մենք ունենք մեկ Հայրենիք՝ միացյալ Հայաստան: Նրա բարգավաճումը հայ ժողովրդի միասնականության մեջ է:

Հարգելի ընթերցող, այսքան մանրամասն ներկայացնելով վերջին օրերի իրադարձությունները՝ ակամա ինձ բռնեցի այն մտքի վրա, որ ինքս էլ հայտնվել եմ «ժողվարչապետի» ուղեվարների, այսինքն՝ անձանց կամ

կազմակերպությունների ծուղակում, որոնք իրականացնում են Հայաստանի Հանրապետության «արտաքին կառավարումը», որոնց ավելի ու ավելի հասանելի են դառնում Հայաստանի կենսագործունեության գործընթացների հանդեպ մշտական վերահսկողություն սահմանելն ու իրականացնելը, ներառյալ անգամ քաղաքական բանավեճերը՝ սեփական շահերին և նպատակներին համապատասխան: Ինչ նկատի ունեն: Այսպես, ս.թ. ապրիլի 24-ին ԱՄՆ Rand Corporation հետախուզական-վերլուծաբանական կենտրոնն իր կայքում (www.rand.org/pubs/reasearch_briefs/RB10014.html) հրապարակել է «Ռուսաստանի գերլարումը. մրցակցություն շահավետ դիրքերից» զեկույցը՝ պատրաստված ԱՄՆ կառավարության պատվերով, որում մանրամասն ներկայացված է, թե ինչպես քանդել Ռուսաստանի Դաշնությունը (որը Հայաստանի Հանրապետության մերձավոր դաշնակիցն է, խաղաղության երաշխավորն Անդրկովկասում) ներսից և դրսից: Եվ ահա, այդ խնդրի կատարման հիմնական կետերի թվում լարվածության ստեղծումն է ԽՍՀՄ նախկին երկրներում և նրանց հետ տնտեսական կապերի խզումը: Դա և՛ Ուկրաինան է, և՛ Վրաստանը, էլ չեն ասում Մերձբալթիկայի մասին: Նշենք, որ զեկույցում չեն շրջանցվել Հայաստանն ու Ադրբեջանը: Ընդ որում՝ զեկույցի հեղինակները նշում են, որ Ռուսաստանի հետ ԱՄՆ մրցակցությունը Հարավային Կովկասում կոժվարանա աշխարհագրության և պատմության պատճառով (*Expanding ties in the South Caucasus – competing ecomomically with Rossia – would be difficult becouse of geography and history*): Միևնույն ժամանակ, նշենք, որ ՌԴ պաշտպանության նախարարի խորհրդական Անդրեյ Իլնիցկին ս.թ. մայիսի 29-ին «Զվեզդա» հեռուստաալիքի եթերում, պարզաբանելով, թե ինչ միջոցներ է ձեռնարկելու Միացյալ Նահանգները Ռուսաստանի ապակայունացման համար, նշել է. «Նրա համար գերակա և դեբյուտային սխեմա է Ուկրաինան, Նահանգներն ակտիվորեն սկսում է դեպի Կովկաս նայել (ասենք ավելին՝ ընդհուպ զբաղվում է հայոց պետականության սասանմամբ – *Ա. Գ.*), թիրախում է պահում Բելառուսը, Սիրիան շարունակելու է խառնել»: Նա նաև նշել է, որ Վաշինգտոնն էլ ավելի շատ ուշադրություն է սկսում հատկացնել Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերություններին, և, Ա.Իլնիցկու խոսքով, կարող է «խաղարկել» նրանց հակասությունները: Այս համատեքստում միանգամայն այլ հարթությունում է երևում Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեթիկի հոդվածը՝ «Հայ-ադրբեջանական Դարաբաղյան հակամարտություն. խնդրի աղբյուրները և կարգավորման հեռանկարները», որից մեջբերումներ են հրապարակել Ադրբեջանի առաջատար ինտերնետ պորտալները:

Ինչո՞վ է հատկանշական Ռամիզ Մեթիկի հոդվածը և որո՞նք են հենց հիմա այն գրելու դրդապատճառները: Այս հարցերին պատասխանելու համար բավական է ծանոթանալ այն բանին, թե ինչպիսին է մուլախիմ Ռամիզին պատկերանում Դարաբաղյան հակամարտության կարգավորումը:

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Հույս ունեն, որ հարգելի ընթերցողները ներողամտաբար կվերաբերվեն, որ ես ստիպված եմ փոքր-ինչ հանգամանալիորեն մեջբերումներ կատարել այդ հոդվածից, որպեսզի ոչ մեկի մոտ չպարզված հարցեր չմնան: Եվ այսպես, այդ հոդվածում նշվում է, որ ադրբեջանական կողմը համաձայնել է քննարկման ընդունել «Ղարաբաղյան զինված հակամարտության դադարեցման մասին» համաձայնագիրը, որը կողմերին ներկայացրել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները 1997թ. սեպտեմբերին: Մասնավորապես, հոդվածում ասվում է. «Այդ համաձայնագրի հիմքում վերցվել է կարգավորման այսպես կոչված «փուլային» մոտեցումը՝ ուղղված զինված հակամարտության հետևանքների հետևողական վերացմանը, և Մինսկի կոնֆերանսի գործընթացում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի սահմանումը: Ծրագրի համաձայն՝ առաջին փուլում ազատագրվում էին Լեռնային Ղարաբաղի շուրջ վեց շրջանները, տարածաշրջանում սկսվում էր խաղաղության հաստատմանն ուղղված ԵԱՀԿ գործողությունը, տեղահանված ժողովուրդը վերադառնում էր ազատագրված տարածքներ և վերականգնվում էին հիմնական հաղորդակցությունները հակամարտության գոտում: Երկրորդ փուլում որոշվում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, ինչպես նաև նախատեսվում էր Լաչինի և Շուշիի շրջանների շուրջ դրության կարգավորումը»: Ընդ որում՝ հոդվածագիրը համեստորեն լռում է, որ «Լեռնային Ղարաբաղի սահմանվող կարգավիճակ» ասելով ադրբեջանական կողմը համաձայն էր միայն «Լեռնային Ղարաբաղի ամենամեծ ինքնավարությանն Ադրբեջանի Հանրապետության կազմում»: Հետո ավելի հետաքրքիր է. Ռ.Մեխիկը նշում է, որ կարգավորման այս տարբերակին նախնական համաձայնություն հայտնել է նաև Հայաստանի այն ժամանակվա նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ավելին՝ մուսլիմ Ռամիզը հղում է կատարում Հայաստանի առաջին նախագահի ոչ անհայտ հոդվածին. «Զնայած իր քաղաքական ընդդիմախոսների խիստ քննադատությանն այս ծրագրի ընդունման նպատակահարմարության հարցում՝ նա (Լ.Տեր-Պետրոսյանը – Ա. Գ.) «Հայաստանի Հանրապետություն» թերթում հրապարակեց ծրագրային բնույթի հոդված՝ «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» վերնագրով, որտեղ ներկայացրել է խնդրի իր տեսլականի հիմնական թեզիսները: Այդ հոդվածի թեզիսները չեն կորցրել իրենց արդիականությունը նաև այսօր (ոչ ոք չի էլ կասկածում, որ հոդվածն այսօր էլ ադրբեջանական կողմի սրտով է – Ա. Գ.)»: Այնուհետև Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարը մանրամասն վերլուծում է Լ.Տեր-Պետրոսյանի հոդվածը, անգամ հիշատակում է նրա հայտարարությունը 1998թ. հունվարի 8-ին Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի նիստում: Ընդ որում՝ հոդվածագիրը հատկապես կանգ է առնում Հայաստանի համար տնտեսական շահերի վրա, եթե համաձայնագիրն ընդունվի: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ, վերադառնալով այսօրվա իրողություններին, Ռամիզ Մեխիկը տարակուսած հայտարարում է. «Տպավորություն է

ստեղծվում, որ Փաշինյանը փորձում է հայ-ադրբեջանական, դարաբաղյան հակամարտության պատասխանատվությունը զցել ուրիշի ուսերին: Նա մեկ հայտարարում է, որ իրավունք չունի բանակցություններ վարել Ղարաբաղի անունից, մեկ դիմում է հայ ժողովրդին հայտարարությամբ, որ հենց ժողովուրդը պետք է որոշի այս խնդիրը (նրա զարմանքը «ժողվարչապետի» դիրքորոշումից ծածուկ հուսախաբություն է պարունակում առ այն, թե արդյոք այս նպատակով չեն Նիկոլ Փաշինյանին բերել իշխանության Ջորջ Սորոսի՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի բարեկամի երկրի լափակերները – Ա. Գ.): Դա ցուցադրում է, որ Փաշինյանը, գործնականում, չի ցանկանում լուծել հակամարտությունը և տարբեր պատրվակներ է գտնում դրա համար: Եվ եթե այդ պատրվակները գեղեցիկ են հնչում որպես կոչեր, ապա գործնական տեսակետից դրանք անհիմն են»: Կարդալով այս տողերը՝ ականա դեմքիս ժպիտ է առաջանում այն գիտակցությունից, որ արդեն Ադրբեջանի պաշտոնատար անձինք են հասկանում, որ Հայաստանում պետական հեղաշրջման մտահղացումը չի կարող նրանց տալ ցանկալի արդյունքներ: Իսկ այս դեպքում Իլհամ Ալիևի ինքնագոհ հայտարարությունն այն մասին, որ «Կա մեր դերը Հայաստանի քաղաքական ասպարեզից Սերժ Սարգսյանի քրեական ռեժիմի արտաքսման հարցում: Ես չեմ ցանկանում այդ մասին խոսել և ուռձացնել մեր դերը», որն արել է 2018թ. հուլիսին Ադրբեջանի կառավարության նիստում, ադրբեջանական կողմին չի բերում ակնկալվող և ցանկալի արդյունքները Հայաստանին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գովերգվող համաձայնագրի պարտադրման հարցում: Մի՞թե Ն.Փաշինյանի տիկնիկավարները հույս ունեին, թե Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական ժառանգորդ, միաժամանակ նաև կարգավորման նման մոտեցումների ջատագով Նիկոլ Վոլակիչը (դրա վկայությունն է նրա վերոնշյալ՝ 2001թ. մայիսի 22-ի հոդվածը) կկարողանա հայ ժողովրդին պարտադրել այդքան կործանարար համաձայնագիր, որը հղի է ոչ միայն Արցախի Հանրապետության ամայացմամբ, այլ նաև Զանգեզուրի, Սյունիքի մարզի կորստյամբ: Այո, «ժողվարչապետը» հնարամտության հրաշքներ է ցուցադրում, ամեն կերպ ջանում է պառակտել Հայաստանում և Արցախի Հանրապետությունում ապրող հայ ժողովրդի միասնությունը: Ընթերցողներին հիշեցնենք, որ 2017թ. ապրիլի 2-ին Հայաստանի Ազգային ժողովի ընտրություններում Հայ ազգային կոնգրեսի և Հայաստանի ժողովրդական կուսակցության դաշինքը հանդես էր գալիս Ղարաբաղյան հակամարտության կարգավորման այս դիրքերից, որոնց մասին իր հոդվածում հիացական պատմում է Ռամիզ Մեխիկը: Արդյունքում՝ նրանք հավաքեցին ընտրողների ձայների 1,66%-ը: Բլոտի, մասնավորապես, «քուանշ» տերմինի այս լավ գիտակը (ինչպես պարզաբանեց ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստում Նիկոլ Վոլակիչը, երբ քննարկվում էր ՀՀ զլխավոր դատախազության 2016թ. հաշվետվությունը, «քուանշը» տերմին է, որն օգտագործվում է «բլոտ» թղթախաղում և նշանակում է կասկածել

հակառակորդի խոսքերին) հիմա ինքն էլ արժանացել է այդ տերմինին: Նրան դադարում են վստահել Հայաստանում պետական հեղաշրջման անդրսահմանային սցենարիստները: Եվ այդ անվստահությունը հնչեցվում է նաև «թավշյա հեղափոխության» պատվիրատուների կողմից: Համաձայնեք, հարգելի ընթերցող, երբ գիտակցում ես, որ «ժողվարչապետը» համակողմանի զարգացած անձ է, մի տեսակ շնչելը հեշտանում է: Բայց ախր «ժողվարչապետը» իրոք ջանում է դուր գալ արևմտյան գրանտատուներին, ավելին՝ ժամանակ առ ժամանակ նեղացածի կեցվածք է ընդունում «Նոր Հայաստանի» իշխանություններին ցուցաբերվող անբավարար ֆինանսական օգնության համար, հավանաբար, Հայաստանի տնտեսությունում խոստացված ներդրումների փաստացի բացակայության պատճառով: Ընդ որում՝ նա կամ մոլորված է այս հարցում, կամ ձևացնում է, թե մոլորված է: Չէ՞ որ պետական հեղաշրջումը ֆինանսավորված էր Ռուսաստանի հարավային մատույցներում իրավիճակի ապակայունացման, հայ ժողովրդի միասնության խարխլման, «թավշյա հեղափոխություն» Արցախի Հանրապետություն արտահանելու նպատակով: Այս ամենը «Նոր Հայաստանի» իշխանավորների արևմտյան ուղեվար-ստրատեգների մտահղացմամբ՝ պարարտ հող կստեղծեր Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ պատերազմ սանձազերծելու և իր, ավելի ձիշտ՝ իր ռազմավարական գործընկերների՝ Թուրքիայի ու Իսրայելի վերահսկողության տակ վերադարձնելու համար 105 կիլոմետրանոց սահմանը Արցախի Հանրապետության ազատագրված տարածքի և Հայաստանի բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետության միջև: Այո, հարգելի ընթերցող, այս հարցում Թուրքիան և Իսրայելը բնավ հակառակորդներ չեն, այլ մրցակիցներ: Եվ հենց այս հարթությունում պետք է մոտենանք հաճախակի դարձած զորավարժություններին, որոնք վերջին ժամանակներս անցկացնում են Ադրբեջանն ու Թուրքիան: Այսպես, ս.թ. մայիսի 25-ին չէր հասցրել Ադրբեջանն ավարտել լայնածավալ օպերատիվ-մարտավարական զորավարժությունները 10 հազար զորակազմի, 150 միավոր տանկերի և այլ զրահատեխնիկայի, տարբեր տրամաչափի մինչև 200 հրթիռա-հրետանային սարքերի, համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի (ՀԿՌՀ) և ականանետների, 35 ինքնաթիռների և ուղղաթիռների մասնակցությամբ, երբ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ ս.թ. հունիսի 7 – 11-ը Նախիջևանում իրականացվելու է «Անսասան եղբայրություն – 2019» համատեղ մարտավարական զորավարժությունների վերջին փուլը: Նկատենք, որ դրանց մասնակցելու են մինչև 5 հազար զորակազմ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից և թուրքական զինված ուժերից, ավելի քան 200 միավոր զրահատեխնիկա, մինչև 180 հրթիռա-հրետանային սարքեր և ՀԿՌՀ ու ականանետներ, 21 ինքնաթիռ և ուղղաթիռ, ինչպես նաև անօդաչու թռչող սարքեր (իսրայելական արտադրության) և այլն: Արդեն ակնհայտ է, որ Ադրբեջանը պատրաստվում է պատերազմ

սանձագերծել Արցախի Հանրապետության դեմ, ընդ որում՝ լարվածության մեջ պահելով Հայաստանի ու Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանը:

Մեր տարածաշրջանում ստեղծված իրավիճակի այսքան հանգամանալի վերլուծությունը, թվում է, պետք է վերջապես սթափեցնեի Ն.Փաշինյան և ԿՕ-ին ու Հայաստանի քաղաքական դասին առհասարակ: Բայց ոչ, տպավորություն է ստեղծվում, որ դա ոչ մեկի գործը չէ: Հայաստանի եթերը, ինտերնետ պարբերականները, բոլոր լրատվամիջոցները լցված են կամ ասես առատության եղջյուրից, ժողվարչապետի կողմից հորդող տարատեսակ անհեթեթությունների պսակագերծմամբ, կամ դավադրության տեսության հայկական վարկածներով, որն իբր պատրաստվում է նախկին իշխանությունների և Արցախի Հանրապետության գործող ղեկավարության կողմից: Իրոք, ասես մի ինչ-որ խաբկանք լինի, որը շատ է հիշեցնում շոտլանդացի պոետ Ջոն Վիլսոնի «Ժանտախտավոր քաղաքի» հայտնի կերպարներին, երբ քաղաքում տիրում է ժանտախտի համաճարակը (1665թ. Լոնդոնի ժանտախտը), իսկ այդ ժամանակ մի քանի մարդիկ սեղան են բացում փողոցում և խրախճանք կազմակերպում ու երգում թախծոտ երգեր: Չեմ ցանկանում դրամատիկացնել իրավիճակը, բայց ականա մտաբերում եմ նորահայտ տոնի՝ «Քաղաքացու օրվա» տոնակատարության սյուժեների տեսանյութերը, որը հիշվեց երևի թե միայն նրանով, որ «ժողվարչապետը» Երևանի կենտրոնում քաղաքացիներին օգնեց խորոված պատրաստել և, որպեսզի ցրի կասկածները սույնի ուտելի չլինելու վերաբերյալ, առաջիններից մեկը համտեսեց խորովածը: Ինչպես կասեր լուսահոգի Իվան Սերգենիչ Տուրգենևը, մեր «ժողվարչապետը», ինչպես և Բազարովը, «մինչև եղունգի ծայրը դեմոկրատ է»: Իսկ որ ամեն օր արցախա-ադրբեջանական սահմանից ստացվում են ամփոփագրեր Հայրենիքի զոհված երիտասարդների մասին, արցախա-ադրբեջանական սահմանին պատկառելի զինված ուժերի կուտակման մասին, դա, եթե դատելու լինենք Նիկոլ Փաշինյանի վարքագծով, պարզվում է՝ այնքան էլ կարևոր չէ:

Չէի ցանկանա, որ ընթերցողները տպավորություն ստանան, թե տողերիս հեղինակն ինքն է ենթարկվել դավադրության տարատեսակ տեսություններին, բայց չեմ կարող ուշադրություն չդարձնել հետևյալ փաստին: Այսպես, Ավիգդոր Էսքինը՝ իսրայելցի հայտնի հրապարակախոսը և հասարակական գործիչը, միանգամայն անսպասելի դիմել է Նիկոլ Վոլակիչ Փաշինյանի թեմային, ավելի ճիշտ՝ նրա պաշտպանությանը, հավանաբար, արցախյան «դավադիրներից»: Նա ս.թ. ապրիլի 28-ին հանդես է եկել ռուսաստանյան REGNUM լրատվական գործակալությունում՝ «Մոտենում է Հայաստանում Փաշինյանի կառավարման մեկամյակը» հոդվածով՝ «Ինչո՞ւ են ռուսական ՋԼՄ-ները վանում մերձավոր դաշնակցին» ենթավերնագրով: Ներկայացնելով Հայաստանի վարչապետի պաշտոնում Փաշինյանի աշխատանքի գոյություն չունեցող հաջողությունները, որոնք հնչեցվել են

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Նիկոլ Վովակիչի կողմից Ստրասբուրգում, ԵՆԽՎ խորհրդաժողովում (մասնավորապես, 51 հազար նոր աշխատատեղերի ստեղծման մասին), Ավիգոր Էսքինը գրում է. «Նիկոլ Փաշինյանի քաղաքական գիծն ուղղված է Եվրոպայի, ԱՄՆ-ի և Իսրայելի հետ հարաբերությունների զարգացմանը, բայց, առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ դաշինքի ամրապնդմանը: Մենք դա տեսնում ենք ՄԱԿ-ում Հայաստանի քվեարկությամբ: Այսպես, Երևանը հետևողականորեն Ռուսաստանի հետ ՄԱԿ-ում քվեարկել է Ղրիմի և Մոսկվայի համար կարևոր այլ հարցերի վերաբերյալ»:

Չէի ցանկանա նորից ներկայացնել հայտնի լրագրողի գովաբանական խոսքերը Նիկոլ Վովակիչի հասցեին: Ավաղ, այլ պետության վարչապետի գործողություններին քաղաքական գնահատական տալը, այն էլ՝ բնավ չխորանալով այդ բարձր պաշտոնին նրա հայտնվելու վայրիվերումների մեջ, չվերլուծելով նրա մերձավոր շրջապատի քաղաքական դույնն, որն իր ամբողջության մեջ զարշափոտ հակառուսական, ռուսատյաց փունջ է կազմում, կարծում եմ, այնքան էլ կոռեկտ չէ: Էլ չեմ ասում Ա. Էսքինի գովերգած այդ քաղաքական գործչի անձի երկվության մասին ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին անդամությունը գնահատելիս, գնահատականներ, որոնք նա մինչ այդ հնչեցրել էր ՀՀ Ազգային ժողովի ամբիոնից: Հատկանշական է, որ Ա. Էսքինի հոդվածն ավարտվում է հռետորական հարցով. «Բայց ո՞րն է կարևորագույն դաշնակցի հետ ոչ բարեկամական մթնոլորտի սրման իմաստը: Ի՞նչ է դա տալիս Մոսկվային»: Միանշանակ ասեմ, որ «կարևորագույն դաշնակցի հետ» ոչ բարեկամական մթնոլորտի ոչ մի սրում Ռուսաստանի կողմից չի եղել և չկա: Ինչ է, ռուսական մամուլը չարձագանքի բարձրաստիճան պաշտոնյաների, փաշինյանական իշխանական դուրսաթուլկների գործողություններին, որոնք Երևանում Ռուսաստանի դեսպանության ուղղությամբ ձվեր են նետում կամ այրում ռուսական դրոշը, անթաքույց հանդես են գալիս հեռուստատեսությամբ և մամուլում բացահայտ հակառուսական ելույթներով: Չեմ ուզում կասկածել Ավիգոր Վալերիչի մղումների անկեղծությանը, որն այդքան եռանդուն պաշտպանում է Նիկոլ Վովակիչին, բայց, կարծում եմ, որ այդ պաշտպանությունը շատ ավելի համոզիչ կլիներ, եթե նա, Իսրայելում հարգված հրապարակախոսը, աջակցեր Հայաստանի «ժողվարչապետին», որպեսզի նա մղեր Իսրայելի Քնեսեթին ճանաչել ու դատապարտեր 1915 – 1923 թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը: Կարծում եմ, որ այդ քայլը կգերազանցեր մի քանի հոդվածներին, որոնք հրապարակվում են անգամ այնքան հեղինակավոր պարբերականում, ինչպիսին է ռուսաստանյան REGNUM լրատվական գործակալությունը:

Հետգրության փոխարեն: Ավանդույթի համաձայն՝ նշեմ, որ չէի ցանկանա հոդվածս ավարտել տազնապալի նոտայով, թեև լավատեսության համար, ցավոք, որևէ հիմք չկա: Այնուամենայնիվ, նշեմ, որ օրերս Հայաս-

տանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը տեղական ինտեր-
նետ պորտալներից մեկին տված հարցազրույցում ասել էր. «Ամենայն հա-
վանականությամբ, աշնանը Հայաստան կգան Հենրի Քիսինջերը և այդ նույն
Ջոզեֆ Նայը»: Ցավով նշենք, որ ողջ չէ Ջեֆրեյս Բեթզինսկին, թե չէ չարժե
կասկածել, որ նա էլ չէր հրաժարվի մեր, անկասկած, շնորհաշատ դիվա-
նագետի հրավերից, որը հիմա Հայաստանի Հանրապետության նախագահ
է աշխատում: Չեմ թաքցնի, շատ հետաքրքիր կլինեն, օրինակ, Հարվարդի
համալսարանի պրոֆեսոր, Ջ. Ֆ. Քենեդու անվան պետական կառավարման
դպրոցի ղեկավար Ջոզեֆ Նայից լսել նրա կարծիքն այն մասին, թե ինչպես
է գնահատում 2018թ. ապրիլ-մայիսին նրա՝ Ջոզեֆ Նայի «փափուկ ուժի»
(soft power) «թավշյա հեղափոխության» հայեցակարգում պարունակվող
երաշխավորությունների կիրառման արդյունքները: Հույս ունեմ, որ բավա-
կան հետաքրքիր կլինեն նաև ամերիկացի այդ նշանավոր քաղաքագետի
գնահատականները «ժողվարչապետի» չափազանց անմաքուր գործողու-
թյունների մասին Հայաստանի նախագահի նկատմամբ, որոնց արդյունքում
հարգելի Արմեն Վարդանովիչը ստիպված էր երկրորդ անգամ ՀՀ Ազգային
ժողովի հաստատմանը ներկայացնել Վահե Գրիգորյանի թեկնածությունը, և
որը, հիշեցնենք ընթերցողներին, ավելի վաղ անտակտ էր արտահայտվել
ՀՀ նախագահ Ա. Վ. Սարգսյանի մասին, անգամ կասկածի տակ առնելով
նրա լեգիտիմությունը: Ջոզեֆ Նայից գոնե կիմանանք, թե որքանով են
Նիկոլ Վոլանսիչի գործողությունները համահունչ «փափուկ ուժի» հայե-
ցակարգի ոգուն:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

ЧТО-ТО С ПАМЯТЬЮ ЕГО ... СТАЛО

РЕЧЬ ПОЙДЕТ О ПАМЯТИ РУСЛАНА ИМРАНОВИЧА

«Не судите, да не судимы будете,
ибо каким судом судите, таким будете судимы;
и какою мерою мерите, такую и вам будут мерить».
(Евангелие от Матфея, глава 7.1,2)

Итак, 12 июня небезызвестный азербайджанский информационный интернет-портал Naqqin.az опубликовал статью Руслана Хасбулатова под заглавием «Подлинный удар нанесла Армения, начав войну против Азербайджана» с подзаголовком «Справедливое признание».

Статья начинается с предложения «У нас не хотят понять одну вещь: подлинно смертельный удар по Советскому Союзу нанесла Армения, начав войну с Азербайджаном». Прочитав такое, можно было со спокойной совестью отбросить в сторону эту галиматью, если бы авторство этих строк не принадлежало одному из главных действующих лиц развала СССР, который президент России Владимир Владимирович Путин в послании Федеральному Собранию Российской Федерации (апрель 2005 года) назвал «крупнейшей геополитической катастрофой века».

Напомним читателям, каковы заслуги Руслана Имрановича Хасбулатова в этом злодеянии против советского народа.

Немного истории. 12 декабря 1991 года на сессии Верховного Совета РСФСР, на которой председательствовал муаллим Руслан, он призывал ратифицировать Беловежские соглашения, подписанные в декабре 1991 года Республикой Беларусь, Российской Федерацией (РСФСР) и Украиной как государствами-учредителями СССР. Здесь, уважаемый читатель, заметим, что соглашение было принято в нарушение Закона СССР от 03. 04. 1990 г. № 1409-1 «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР». Отметим, что соглашение подписали высшие должностные лица и главы правительств трех республик: Борис Ельцин и Геннадий Бурбулис от Российской Федерации (РСФСР), Станислав Шушкевич и Вячеслав Кебич от Республики

Беларусь, Леонид Кравчук и Витольд Фокин от Украины. Как уже отмечалось, Хасбулатов председательствовал на этом заседании и рьяно призывал ратифицировать Беловежское соглашение, что и было сделано. И это несмотря на то, что, согласно действовавшей на тот момент Конституции РСФСР, для ратификации соглашения необходимо было создать высший орган государственной власти – Съезд народных депутатов РСФСР, поскольку соглашение затрагивало государственное устройство Российской Федерации как части Союза ССР и тем самым влекло за собой необходимость проведения изменений в Конституцию.

Для полноты картины приведем отдельные цитаты из интервью Р. Хасбулатова по данной тематике. 10 апреля 2014 года, в интервью ИА REGNUM под заглавием «Развал СССР – дело рук Ельцина, Кравчука и Шушкевича, а не Горбачёва: интервью с Русланом Хасбулатовым» на вопрос корреспондента ИА REGNUM: «Распад СССР во многом был следствием действий, которые осуществляло руководство РСФСР во главе с Ельциным. Не было бы более корректно возлагать ответственность за распад СССР на Бориса Ельцина и его тогдашнюю команду?». Ответ муаллима Руслана: «Я в 90-х об этом и писал. Ельцин уже умер, но живы другие непосредственные участники и соучастники распада Союза ССР (то есть Хасбулатов полностью согласен с подобной формулировкой – обвинением, но надо и других не забывать. – А. Г.)».

Разумеется, надо дать объективную оценку всем силам, которые в 1991 году влияли и могли влиять на ход событий в СССР. Давно пора назвать Беловежские соглашения преступным заговором (почему-то ратификацию соглашения на заседании Верховного Совета от 12 декабря 1991 года, где Р. Хасбулатов самолично дирижировал над узакониванием этого преступного заговора, в данной ситуации попросту забыл). Чтобы у читателей не возникло вопросов, отметим, что по итогам голосования законопроекта о ратификации Беловежских соглашений голоса распределились следующим образом: «за» – 188 (76,1 %), «против» – 6 (2,4 %), «воздержалось» – 7 (2,8 %). Против постановления о ратификации Беловежских соглашений проголосовали С. Бабурин, Н. Павлов, В. Исаков, И. Константинов, С. Полозков, В. Балала, П. Лысов. Естественно, фамилия Р. Хасбулатова значилась в проголосовавших «за» ратификацию «преступного заговора».

Заметим, что в апреле 1992 года Съезд народных депутатов России, несмотря на усилия Ельцина и Хасбулатова, трижды отказался ратифицировать Беловежское соглашение и исключить из текста Конституции РСФСР упоминание о Конституции и законах СССР. Справедливости ради отметим, что впоследствии это стало одной из при-

чин противостояния Съезда с президентом Ельциным и в дальнейшем привело к трагическим событиям октября 1993 года.

Уважаемый читатель может задаться вопросом, а к чему обращаться к очередному развенчанию двуликих людей, совершенно случайно на волне перестройки оказавшихся у руля государственного управления братской Российской Федерации. Вопрос в том, что и сегодня, чтобы сбросить с себя косвенное соучастие в распаде СССР, муаллим Руслан с чисто юношеской энергией раздает интервью «Деловой газете» Татарстана или же интернет-порталу www.business-gazeta.ru/article/427760, где с упорством, достойным лучшего применения, повторяет ту же несуслазницу. Так, на вопрос корреспондента интернет-портала business-gazeta.ru: «На тот момент от СССР уже отошла вся Прибалтика (1988–1989 гг.). Но получается, что настоящий, смертельный удар по Советскому Союзу еще не был нанесен ...», – Хасбулатов отвечает: «Нет, Прибалтика еще не отошла. По-настоящему она отделилась после армянских событий. К сожалению, у нас не хотят понять одну вещь: подлинно смертельный удар по Советскому Союзу нанесла Армения, начав войну с Азербайджаном из-за Нагорного Карабаха, на который она не могла претендовать (по крайней мере, в такой форме вооруженных действий). Закавказский фронт распался: большинство встало на сторону Армении, другие поддерживали Азербайджан. В этой ситуации союзный центр проявил абсолютную, невозможную терпимость к конфликтующим сторонам – там, где нужно было просто жестко навести порядок. Очень жестко и с применением огнестрельного оружия».

Подобное заявление иначе как мракобесием не назовешь. Детально рассматривать события 1988–1991 годов, которые свидетельствуют об абсолютно законном решении, принятом населением Нагорного Карабаха 10 декабря 1991 года об объявлении независимости Нагорно-Карабахской Республики, думаю, нет необходимости. Повторюсь лишь, что это решение в полной мере соответствовало как нормам Международного права, так и букве и духу действующих в то время законов СССР. Напомним забывчивым искажителям истории, что Нагорно-карабахская проблема обострилась в 1988 году, когда в ответ на требование населения Карабаха о самоопределении, азербайджанские власти организовали резню и этнические чистки армян на всей территории Азербайджана, особенно жестокие и кровавые в Сумгаите, Баку и Кировабаде (видимо, Хасбулатов именно подобную расправу имел в виду, но уже не на уровне азербайджанских властей, а на уровне СССР). Упомянутая муаллимом Русланом война с Азербайджаном была развязана самим Азербайджаном разбойным нападением 1 января 1992 года азербайджанского агдам-

ского батальона под командованием Якуба Рзаева в сопровождении шести танков и четырех БТР на армянское село Храморт (на востоке Нагорного Карабаха), этому последовали вооруженные нападения азербайджанских вооруженных сил с применением танков, БТР и реактивных установок залпового огня «Град». Уже с 31 января 1992 года азербайджанцы развернули массированное нападение с применением тяжелых вооружений по всему периметру границы Нагорно-Карабахской Республики с Азербайджаном (напомним, что Декларация о независимости Нагорно-Карабахской Республики была принята 6 января 1992 года). Теперь краткая констатация фактов о событиях тех лет в Прибалтийских республиках.

Так, 3 июня 1988 года в Литовской ССР было основано движение «В поддержку перестройки» «Саюдис», сначала негласно, затем открыто ставящее своей целью выход из состава СССР и восстановление независимого литовского государства. А уже в ночь на 11 марта 1990 года Верховный Совет Литовской ССР во главе с Витаутасом Ландсбергисом провозгласил независимость Литвы. На территории республики было прекращено действие Конституции СССР и возобновлено действие литовской конституции 1938 года.

В Эстонской ССР в апреле 1988 года был образован Народный фронт Эстонии в поддержку независимости, формально не ставивший своей целью выход Эстонии из СССР, но ставший базой для ее достижения. Уже 16 ноября 1988 года Верховный Совет Эстонской ССР большинством голосов принял Декларацию о суверенитете Эстонии.

В Латвийской ССР в период 1988–1990 годы происходит существенное усиление Народного фронта Латвии, выступавшего за независимость, усиливается борьба с интерфронтом, выступающим за сохранение членства Латвии в СССР. 4 мая 1990 года Верховный Совет Латвийской ССР принял Декларацию о независимости Литовской Республики.

Неужели Р. Хасбулатов не знал об этих исторических фактах? Или же если знал о них, в чем его неумное желание сколь лживо, столь и цинично обвинить Армению в нанесении «подлинно смертельного удара по Советскому Союзу»? И весь абсурд в том, что свои интервью-поклепы он приурочил к празднику Дня России, который и в Армении 12 июня т.г. сотни наших граждан отпраздновали в добром, торжественном мероприятии, устроенном Посольством Российской Федерации в Республике Армения. Если же муаллим Руслан не знал о датах провозглашения независимости Прибалтийских республик и о том, что война между Азербайджаном и Нагорно-Карабахской Республикой была завязана Азербайджаном спустя полтора-два года после провозглашения незави-

симости Прибалтийскими республиками, то, естественно, возникает вопрос: какую цель преследовал профессор Р. Хасбулатов? Видимо, в наши дни, когда в Закавказье и вокруг него сложилась крайне напряженная обстановка, у недругов России велик соблазн создать информационный фон для развязывания Азербайджаном новой военной агрессии против Республики Арцах. Скажем, что, к сожалению, муаллим Руслан, сознавая свою эту роль или нет, играет с огнем и во вред России, поэтому в своем стремлении он не оригинален. Просто он подхватил тему, недавно вброшенную в медиапространство главой администрации президента Азербайджана Рамизом Мехтиевым, который днями ранее выступил со статьей «Армяно-азербайджанский Нагорно-Карабахский конфликт: источник проблемы и перспективы урегулирования». Видимо, муаллим Руслан попытался увязать «источники проблемы» с им же выдуманным лживым посылом о якобы «подлинно смертельном ударе Армении по Советскому Союзу». Согласитесь, уважаемый читатель, что профессору Хасбулатову негоже своими провокационными статьями беречь все еще не заживающие раны всего армянства – от сумгаитской, бакинской и кировабадской резни армян в 1988–1990 гг., совершенных азербайджанскими боевиками из Народного фронта Азербайджана. И без Хасбулатова охочих на это грязное дело хватает. Заметим также, что то ли случайно, то ли совершенно случайно в рамках проходящей в Баку учредительной конференции Бакинской парламентской платформы по диалогу и сотрудничеству, которая начала свою работу 12 июня т.г., вице-спикер Великого народного собрания Турции Сурея Садея Билгич в своем выступлении счел обязательным заявить, что Нагорно-карабахский конфликт должен быть урегулирован в рамках территориальной целостности Азербайджана. Надо полагать, что этот турецкий политик под диалогом и сотрудничеством понимает действия, полностью игнорирующие призывы президентов стран-сопредседателей Минской группы ОБСЕ, которые четко определили концептуальные основы Нагорно-карабахского урегулирования. И еще одно, прямо скажем, тревожное совпадение: в учредительной конференции приняли участие депутаты Милли меджлиса Азербайджана, вице-президент Бундестага Германии Томас Оперман, вице-спикер турецкого парламента Сурея Садея Билгич, а также руководство ПА ОБСЕ (состав стран-участниц учредительной конференции невольно вызывает воспоминания о трагических событиях Геноцида армян 1915–1923 гг. в Османской империи).

Вместо послесловия. Еще в конце 2016 года были обнародованы секретные документы ЦРУ – план тайной спецоперации против СССР.

Этот план состоял из 10 пунктов. Американцам понадобилось 10 шагов, чтобы разрушить великую империю – Советский Союз. Не скрою, уважаемый читатель, что, прочитав псевдоисторические изыски муаллима Руслана, я невольно проникся состраданием к их автору. Ведь до какой же степени надо быть в блаженном неведении о том, что происходило в мире в 80–90-х годах XX века, чтобы пороть, подобно Руслану Имрановичу, чушь об авторстве «смертельного удара по Советскому Союзу» со стороны Армении. Я счел своим долгом еще и еще раз прочитать подробности тайной операции ЦРУ по уничтожению Советского Союза.

Не хочу подробно останавливаться на всех десяти шагах, которые являются ярчайшим свидетельством продуманной, системной работы спецслужб США по разрушению государства-противника, СССР. Приведу лишь выдержки, характеризующие шаг № 10, Спусковой крючок: «В СССР это произошло в конце 1980-х (то есть время, когда нажали на спусковой крючок по развалу СССР. – А. Г.). Экономические проблемы приводят к продуктовому дефициту. Страна встает в длинные очереди за предметами первой необходимости. «Агенты влияния» обещают людям достойную жизнь и демократические свободы (думается, что эти строки вызовут особые ассоциации и воспоминания о событиях начала 90-х XX века в России. – А. Г.). Народ покупают за джинсы, колу и жвачку и выводят на улицу. В некоторых регионах начинаются табачные бунты. Среди элит царит предательство (подчеркнуто мною. – А. Г.). Возникает паника, и страна становится неуправляемой». После августовского путча 1991 года деятельность Совета Министров РСФСР была парализована, в такой обстановке Руслан Имранович вынужден был превратить Президиум Верховного Совета РСФСР в реальное правительство. И он вместе с аппаратом парламента России управлял всеми делами страны до формирования «правительства реформаторов». К сведению Р. Хасбулатова: 17 января 1983 года на стол президенту США Рональду Рейгану был положен документ (так называемая директива «Национальные секретные руководящие инструкции» – National Security Decision Directives), который по сути являлся планом по расшатыванию СССР и предполагал тайные наступательные операции против Советского Союза.

Уважаемый читатель, не хотелось завершать статью на столь тревожной ноте, обусловленной тем, что из уст ученого, а муаллим Руслан ученый, не слышали правдивого слова о судьбоносных 90-х годах нашей общей Родины – СССР, но, видимо, говоря нелепицы относительно причин распада Советского Союза, Хасбулатов, отбросив в сторону всякую мораль, придерживался изречения французского писателя и философа Альбера Камю, который заслуженно получил нарицательное имя при

А. ГЕГАМЯН

жизни «Совесьть Запада». Речь об известном изречении Альбера Камю: «Ответственность перед историей освобождает от ответственности перед людьми. В этом ее удобство». Вспомним, что Альбер Камю в 1957 году стал лауреатом Нобелевской премии по литературе. Что ж, муаллим Руслан уж никак не дотягивает до Нобелевской премии по истории, но вполне может быть награжден азербайджанской государственной наградой, скажем, орденом «За службу отечеству».

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ՄԻ ԲԱՆ ՊԱՏԱՀԵԼ Է ՆՐԱ ... ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆԸ

ԽՈՍՔԸ ԳՆԱԼՈՒ Է ՌՈՒՍԼԱՆ ԻՄՐԱՆՈՎԻԶԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի՛ դատեք, որ չդատվեք: Որովհետև ինչ
դատաստանով որ դատեք,
նրանով եք դատվելու, և ինչ չափով որ չափեք,
դրանով պիտի չափվի ձեզ»:
(Ավետարան ըստ Մատթեոսի, գլուխ 7. 1, 2)

Եվ այսպես, հունիսի 12-ին ոչ անհայտ ադրբեջանական Haqqin.az տեղեկատվական ինտերնետ պորտալը հրապարակեց Ռուսլան Խասբուլատովի հոդվածը՝ «Իսկական հարվածը հասցրեց Հայաստանը՝ պատերազմ սկսելով Ադրբեջանի դեմ» վերնագրով, «Արդարացի խոստովանություն» ենթավերնագրի ներքո:

Հոդվածն սկսվում է «Մեզ մոտ չեն ցանկանում հասկանալ այդ բանը. իսկական մահացու հարվածը խորհրդային Միությանը հասցրեց Հայաստանը՝ պատերազմ սկսելով Ադրբեջանի դեմ» նախադասությամբ: Նման բան կարդալով՝ կարելի էր հանգիստ խղճով մի կողմ նետել այդ ցնդաբանությունը, եթե տողերը չպատկանեին ԽՍՀՄ փլուզման գլխավոր գործող անձանցից մեկին, փլուզում, որին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինը Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովին հղած ուղերձում (2005թ. ապրիլ) անվանել էր «դարի խոշորագույն աշխարհաքաղաքական աղետ»:

Ընթերցողներին հիշեցնենք, թե որոնք են Ռուսլան Իմրանովիչ Խասբուլատովի արժանիքները խորհրդային ժողովրդի դեմ այս չարագործության մեջ:

Մի քիչ պատմություն: 1991թ. դեկտեմբերի 12-ին ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի նիստում, որը նախագահում էր մուլախմ Ռուսլանը, նա կոչ արեց վավերացնել Բելովեժյան համաձայնագիրը՝ ստորագրված 1991թ. դեկտեմբերին Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության (ՌԽՖՍՀ) և Ուկրաինայի կողմից որպես ԽՍՀՄ հիմնադիր պետություններ: Այստեղ, հարգելի ընթերցող, նշենք, որ համաձայնագիրն ընդունվել էր ի խախտումն ԽՍՀՄ 03. 04. 1990թ. թիվ 1409-1 օրենքի («ԽՍՀՄ-ից միութենական հան-

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

րապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»): Նշենք, որ համաձայնագիրը ստորագրել էին երեք հանրապետությունների բարձրագույն պաշտոնատար անձինք և կառավարությունների ղեկավարները. Բորիս Ելցինը և Գենադի Բուրբուլիսը Ռուսաստանի Դաշնությունից (ՌԽՖՍՀ), Ստանիսլավ Շուշկևիչը և Վյաչեսլավ Կեբիչը Բելառուսի Հանրապետությունից, Լեոնիդ Կրավչուկը և Վիտոլդ Ֆոկինն Ուկրաինայից: Ինչպես արդեն նշվեց, Խասբուլատովը նախագահում էր այդ նիստում և եռանդուն կոչ էր անում վավերացնել Բելովեժյան համաձայնագիրը, ինչն էլ արվեց: Եվ դա՝ չնայած այն բանին, որ համաձայն այդ պահին գործող ՌԽՖՍՀ Սահմանադրության, համաձայնագրի վավերացման համար անհրաժեշտ էր գումարել ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների համագումար (պետական իշխանության բարձրագույն մարմինը), քանի որ համաձայնագիրը վերաբերում էր Ռուսաստանի Դաշնության պետական կարգին՝ որպես ԽՍՀՄ մի մասի, և դրանով իսկ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն էր առաջացնում:

Պատկերի ամբողջականության համար որոշ մեջբերումներ կատարենք այս թեմայի վերաբերյալ Ռ.Խասբուլատովի հարցազրույցից: Այսպես, 2014թ. ապրիլի 10-ին REGNUM տեղեկատվական գործակալության հարցազրույցում՝ «ԽՍՀՄ փլուզումը Ելցինի, Կրավչուկի և Շուշկևիչի ձեռքի գործն է, ոչ թե Գորբաչովի. հարցազրույց Ռուսլան Խասբուլատովի հետ» վերնագրով, REGNUM տեղեկատվական գործակալության թղթակցի հարցին՝ «ԽՍՀՄ փլուզումը շատ բանով հետևանքն էր այն գործողությունների, որոնք իրականացնում էր ՌԽՖՍՀ ղեկավարությունը Ելցինի գլխավորությամբ: Ավելի կոռեկտ չէ՞ր լինի ԽՍՀՄ փլուզման պատասխանատվությունը դնել Բորիս Ելցինի և նրա այն ժամանակվա թիմի վրա», – հետևում է մուսլիմ Ռուսլանի պատասխանը. «Ես 90-ականներին այդ մասին էլ գրում էի: Ելցինն արդեն մահացել է, բայց ողջ են ԽՍՀՄ փլուզման մյուս անմիջական մասնակիցներն ու համամասնակիցները (այսինքն՝ Խասբուլատովը լիովին համաձայն է նման մեղադրանք-ձևակերպմանը, բայց պետք է նաև մյուսներին չմոռանալ – Ա. Գ.)... Հասկանալի է, պետք է օբյեկտիվ գնահատական տալ բոլոր ուժերին, որոնք 1991թ. ազդեցին և կարող էին ազդել իրադարձությունների ընթացքի վրա ԽՍՀՄ-ում: Վաղուց ժամանակն է Բելովեժյան համաձայնագիրն անվանել հանցավոր դավադրություն (չգիտես ինչու, 1991թ. դեկտեմբերի 12-ի Գերագույն խորհրդի նիստում, որտեղ նա անձամբ ուղղորդում էր այդ հանցավոր դավադրության օրինականացումը, համաձայնագրի վավերացումն այս իրավիճակում նա պարզապես մոռացել է – Ա. Գ.):»): Որպեսզի ընթերցողների մոտ հարցեր չառաջանան, նշենք, որ Բելովեժյան համաձայնագրի վավերացման մասին օրինագծի քվեարկության արդյունքներով ձայները բաշխվեցին հետևյալ կերպ. «կողմ»՝ 188 (76,1%), «դեմ»՝ 6 (2,4%), «ձեռնպահ»՝ 7 (2,8%): Բելովեժյան համաձայնագրի վավերացման որոշման դեմ էին քվեարկել Ս.Բա-

բուրինը, Ն.Պավլովը, Վ.Իսակովը, Ի.Կոնստանտինովը, Ս.Պոլոզկովը, Վ.Բալալան, Պ.Լիսովը: Բնականաբար, Ռ.Խասբուլատովի ազգանունը հանցավոր դավադրության վավերացմանը «կողմ» քվեարկողների մեջ էր:

Նշենք, որ 1992թ. ապրիլին Ռուսաստանի ժողովրդական պատգամավորների համագումարը, չնայած Ելցինի և Խասբուլատովի ջանքերին, երեք անգամ հրաժարվեց վավերացնել Բելովեժյան համաձայնագիրը և ՌԽՖՍՀ Սահմանադրությունից հանել ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների մասին հիշատակումը: Հանուն արդարության նշենք, որ հետագայում դա դարձավ նախագահ Ելցինի հետ համագումարի դիմակայության պատճառներից մեկը և այնուհետև հանգեցրեց 1993թ. հոկտեմբերի ողբերգական իրադարձություններին:

Հարգելի ընթերցողը կարող է հարց տալ՝ իսկ ինչո՞ւ անդրադառնալ երկերեսանի մարդկանց հերթական պսակագերծմանը, որոնք միանգամայն պատահականորեն վերակառուցման ալիքի վրա հայտնվեցին եղբայրական Ռուսաստանի Դաշնության պետական կառավարման դեկին: Հարցն այն է, որ այսօր էլ, որպեսզի իր վրայից հանի ԽՍՀՄ փլուզման անուղղակի մասնակցությունը, մուսլիմ Ռուսլանը ուղղակի պատանեկան էներգիայով հարցազրույց է տալիս Թաթարստանի «Դելովայա գազետա»-ին կամ www.business-gazeta.ru/article/427760 ինտերնետ պորտալին, որտեղ ավելի լավ կիրառման արժանի համառությամբ կրկնում է այդ նույն բարբաջանքը: Այսպես, business-gazeta.ru ինտերնետ պորտալի թղթակցի՝ «Այն ժամանակ ԽՍՀՄ-ից արդեն առանձնացել էր Մերձբալթիկան (1988-1989թթ.): Բայց ստացվում է, որ իսկական, մահացու հարվածը Խորհրդային Միությանը դեռևս հասցված չէր...» հարցին Խասբուլատովը պատասխանում է. «Ոչ, Մերձբալթիկան դեռ չէր առանձնացել: Այն իրականում առանձնացավ հայկական իրադարձություններից հետո: Ցավոք, մեզ մոտ չեն ցանկանում հասկանալ մի բան. իսկական մահացու հարվածը Խորհրդային Միությանը հասցրեց Հայաստանը՝ պատերազմ սկսելով Ադրբեյջանի դեմ Լեռնային Ղարաբաղի պատճառով, որին հավակնել չէր կարող (համենայնդեպս՝ զինված գործողությունների նման ձևով): Անդրկովկասյան ճակատը փլուզման ենթարկվեց. մեծամասնությունը կանգնեց Հայաստանի կողմը, մյուսներն աջակցում էին Ադրբեյջանին: Այս իրավիճակում միութենական կենտրոնը բացարձակ, անհնարին հանդուրժողություն ցուցաբերեց հակամարտող կողմերի հանդեպ, այնտեղ, որտեղ պետք էր պարզապես խիստ կարգուկանոն մտցնել: Շատ խիստ և հրազենի օգտագործմամբ»: Նման հայտարարությունն այլ կերպ, քան սատանայություն չես անվանի: 1988 – 1991թթ. իրադարձությունները, որոնք հիրավի վկայում են 1991թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի բնակչության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման վերաբերյալ բացառապես օրինական հիմքերով ընդունած որոշումների մասին, կարծում են, մանրամասն դիտարկելու անհրաժեշտություն չկա, դրանք խիստ ակներև

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

են: Միայն կրկնեմ, որ այդ որոշումը լիովին համապատասխանում էր ինչպես Միջազգային իրավունքի նորմերին, այնպես էլ այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենքների տառին և ոգուն: Պատմության մոռացկոտ խեղաթյուրողներին հիշեցնենք, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը սրվեց 1988թ., երբ ի պատասխան Ղարաբաղի բնակչության ինքնորոշման պահանջի ադրբեջանական իշխանությունները կազմակերպեցին ջարդեր և էթնիկ զտումներ հայերի դեմ Ադրբեջանի ամբողջ տարածքում, որոնք հատկապես դաժան ու արյունահեղ էին Սումգաիթում, Բաքվում և Կիրովաբադում (հավանաբար, Խասբուլատովը հենց նման հաշվեհարդարը նկատի ուներ, բայց արդեն ոչ ադրբեջանական իշխանությունների, այլ ԽՍՀՄ մակարդակով): Մուալիմ Ռուսլանի կողմից հիշատակվող պատերազմն Ադրբեջանի դեմ սանձազերծվեց հենց Ադրբեջանի կողմից՝ Յակուբ Ռզակի հրամանատարությամբ, հայկական Խրամորթ գյուղի (Լեռնային Ղարաբաղի արևելքում) դեմ վեց տանկերի և չորս զրահամեքենաների ուղեկցությամբ, դրան հաջորդեցին ադրբեջանական զինված ուժերի հարձակումները՝ տանկերի, զրահամեքենաների և «Գրադ» համազարկային կրակի հրթիռային համակարգերի կիրառմամբ: Արդեն 1992թ. հունվարի 31-ից ադրբեջանցիներն ուժեղացված հարձակում սկսեցին ծանր սպառազինությունների կիրառմամբ Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանի ողջ պարագծով (հիշեցնենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հռչակագիրն ընդունվել է 1992թ. հունվարի 6-ին):

Այժմ ներկայացնենք մերձբալթյան հանրապետություններում այն տարիների իրադարձությունների փաստերը:

Այսպես, 1988թ. հունիսի 3-ին Լիտվական ԽՍՀ-ում հիմնադրվեց «վերականգնման աջակցության» «Սայուդիս» շարժումը, որը սկզբում ծածուկ, հետո՝ բացահայտ նպատակ դրեց դուրս գալ ԽՍՀՄ կազմից և վերականգնել անկախ լիտվական պետությունը: Իսկ արդեն 1990թ. մարտի 11-ի գիշերը Լիտվական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ Վիտաուտաս Լանդսբերգիսի գլխավորությամբ, հռչակեց Լիտվայի անկախությունը: Հանրապետության տարածքում դադարեցվեց ԽՍՀՄ Սահմանադրության և վերականգնվեց 1938թ. լիտվական Սահմանադրության գործողությունը:

Էստոնական ԽՍՀ-ում 1988թ. ապրիլին կազմավորվեց Էստոնիայի ժողովրդական ձակատը՝ հաջակցություն անկախության, որը ձևականորեն նպատակ չդրեց Էստոնիայի դուրս գալը ԽՍՀՄ-ից, բայց որը դարձավ հիմք դրան հասնելու համար: Արդեն 1988թ. նոյեմբերի 16-ին Էստոնական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ձայների մեծամասնությամբ ընդունեց Էստոնիայի ինքնիշխանության մասին Հռչակագիրը:

Լատվիական ԽՍՀ-ում, 1988 – 1990թթ., էապես ուժեղանում է Լատվիայի ժողովրդական ձակատը, որը հանդես էր գալիս հանուն անկախության, ուժեղանում է պայքարն «Ինտերֆրոնտի» դեմ, որը հանդես էր գալիս ԽՍՀՄ-ին Լատվիայի անդամակցությունը պաշտպանելու օգտին:

1990թ. մայիսի 4-ին Լատվիական ԽՍՀ Պերագոյն խորհուրդն ընդունեց «Լատվիայի Հանրապետության անկախության մասին հռչակագիրը»:

Մի՞թե Ռ.Խասբուլատովը չգիտեր այս պատմական փաստերի մասին: Կամ էլ իմանալով դրանց մասին՝ ո՞րն է նրա անզուսպ ցանկությունը՝ որքան կեղծ, այնքան էլ անպատկառ մեղադրել Հայաստանը «խորհրդային Միությանն իսկապես մահացու հարված հասցնելու» մեջ: Եվ ամբողջ անհեթեթությունն այն է, որ իր կեղծ մեղադրական հարցազրույցները նա հարմարեցրել է Ռուսաստանի օրվա տոնին, որը նաև Հայաստանում ս.թ. հունիսի 12-ին մեր հայրյուրավոր քաղաքացիներ տոնեցին բարի, հանդիսավոր միջոցառմամբ, որը կազմակերպել էր Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը: Իսկ եթե մուալիմ Ռուսլանը չգիտեր մերձբալթյան հանրապետությունների անկախության հռչակման ամսաթվերի և այն մասին, որ պատերազմը Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև սանձազերծվել էր Ադրբեջանի կողմից մերձբալթյան հանրապետությունների անկախության հռչակումից մեկուկես-երկու տարի հետո, ապա, բնականաբար, հարց է ծագում. այդ ժամանակ ի՞նչ նպատակ էր հետապնդում պրոֆեսոր Ռ.Խասբուլատովը: Հավանաբար, մեր օրերում, երբ Անդրկովկասում և նրա շուրջ ստեղծվել է չափազանց լարված իրադրություն, Ռուսաստանի չարականների մեջ մեծ է գայթակղությունը՝ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից նոր ռազմական ագրեսիա հրահրելու տեղեկատվական ֆոն ստեղծելու համար: Ասենք, որ, ցավոք, մուալիմ Ռուսլանը, գիտակցելով, թե ոչ իր այդ դերը, կրակի հետ է խաղում և ի վնաս Ռուսաստանի, ուստի իր այդ ծգտման մեջ նա ինքնատիպ չէ: Պարզապես նա որսացել է թեման, որը վերջերս նետվել է մեդիա-տարածք Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեթիևի կողմից, որն օրեր առաջ հանդես էր եկել «Հայ-ադրբեջանական դարաբաղյան հակամարտություն. հիմնախնդրի աղբյուրը և կարգավորման հեռանկարները» հոդվածով: Հավանաբար, մուալիմ Ռուսլանը փորձել է «հիմնախնդրի աղբյուրները» շաղկապել իր իսկ հորինած սուտ ուղերձի հետ՝ իբր «խորհրդային Միությանը Հայաստանի իսկապես մահացու հարվածի» մասին: Համաձայնեք, հարգելի ընթերցող, որ պրոֆեսոր Խասբուլատովին վայել չէ իր սադրիչ հոդվածներով փորփրել ողջ հայության դեմևս չսպիացած վերքերը 1988 – 1990թթ. Սումգաիթի, Բաքվի և Կիրովաբադի ջարդերից, որոնք իրականացրին Ադրբեջանի ժողովրդական ձակատի հրոսակախմբերը: Առանց Խասբուլատովի էլ այս կեղտոտ գործի սիրահարները քիչ չեն: Նշենք նաև, որ պատահաբար, թե միանգամայն պատահաբար Երկխոսության և համագործակցության Բաքվի խորհրդարանական պլատֆորմի՝ Բաքվում ընթացող հիմնադիր համաժողովի շրջանակում, որն աշխատանքն սկսեց ս.թ. հունիսի 12-ին, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի փոխնախագահ Սուրեա Սադեա Բիլգիչն իր ելույթում պարտադիր համարեց հայտարարել, որ Ղարաբաղյան հակամարտությունը

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

պետք է կարգավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում: Պետք է կարծել, որ այդ թուրք քաղաքական գործիչը երկխոսության և համագործակցության տակ հասկանում է գործողություններ, որոնք լիովին անտեսում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համառոտագրված երկրների նախագահների կոչերը, որոնք հստակ սահմանել են Ղարաբաղյան կարգավորման հայեցակարգային հիմքերը: Եվս մեկ, անկեղծ ասենք, տագնապալի համընկնում. հիմնադիր համաժողովին մասնակցում էին Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավորներ, Գերմանիայի Բունդեսբադի փոխնախագահ Թոմաս Օպերմանը, Թուրքիայի խորհրդարանի փոխնախագահ Սուրեա Սադեա Բիլգիչը, ինչպես նաև ԵԱՀԿ ԽՎ ղեկավարությունը (հիմնադիր համաժողովի անդամ-երկրների կազմը ակամա հուշեր է ծնում Օսմանյան կայսրությունում 1915 – 1923թթ. Հայոց ցեղասպանության ողբերգական իրադարձությունների մասին):

Հետգրության փոխարեն: Դեռևս 2016թ. վերջին հրապարակվեցին ԱՄՆ ԿՀԿ գաղտնի փաստաթղթերը՝ ԽՍՀՄ-ի դեմ գաղտնի հատուկ գործողության պլանը: Այդ պլանը բաղկացած էր 10 կետից: Ամերիկացիներին 10 քայլ էր պետք մեծ կայսրությունը՝ Խորհրդային Միությունը, քանդելու համար: Չեմ թաքցնի, հարգելի ընթերցող, որ, կարդալով մուսլիմ Ռուսլանի կեղծ-պատմական մտավարժանքները, ակամա կարեկցանքով լցվեցի դրանց հեղինակի հանդեպ: Այդ ի՞նչ աստիճանի երանավետ անգիտության մեջ պետք է գտնվել առ այն, ինչ տեղի էր ունենում աշխարհում 20-րդ դարի 80 – 90-ական թվականներին, որպեսզի, ինչպես Ռուսլան Իմրանովիչը անհեթեթություն բարբաջեց Հայաստանի կողմից «Խորհրդային Միությանը մահացու հարված հասցնելու» մասին: Ես պարտքս համարեցի նորից ու նորից կարդալ ԿՀԿ գաղտնի գործողության մանրամասները Խորհրդային Միության վերացման ուղղությամբ:

Եվ այսպես, 2019թ. հունիսի 25-ին Երևան քաղաքի Վերաքննիչ դատարանը որոշեց չեղարկել առաջին ատյանի դատարանի վճիռը կալանքից Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ազատելու մասին, որը մեղադրվում է սահմանադրական կարգի տապալման մեջ, և որոշեց նորից կալանքի տակ վերցնել նրան: Դատավոր Ա.Դանիելյանը հրապարակեց դատավճիռը. «Առաջին ատյանի դատարանի 18. 05. 2019թ. որոշումը չեղարկել: Անձնական երաշխիքները մեղադրյալ Ռոբերտ Քոչարյանի հանդեպ որպես խափանման միջոց չեղարկել և նրա հանդեպ կիրառել ձերբակալություն»: Ընթերցողներին հիշեցնենք, որ ս.թ. մայիսի 18-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը՝ Դավիթ Գրիգորյանի նախագահությամբ, փոխեց ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը և ազատ արձակեց նրան՝ Արցախի Հանրապետության (նախկին անվանումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) նախագահ Բակո Սահակյանի և այդ պաշտոնում նրա նախորդի՝ Արկադի Դուկասյանի երաշխավորությամբ: Նշենք, որ 2018թ. հուլիսից Ռոբերտ Սեդրակի Քոչարյանն արդեն երրորդ անգամ է կալանքի տակ վերցվում: Չեմ թաքցնի, որ Վերաքննիչ դատարանի դատավճռի հրապարակման օրը մեծ էր գայթակղությունը անձամբ կոնկրետ փաստերով հիմնավորելու մեղադրանքների ողջ անհերթելությունը, որոնք վերագրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ, ՀՀ երկրորդ նախագահ Ռ.Քոչարյանին: Սակայն ձեռնպահ մնացի նման բան անելուց այն պարզ պատճառով, որ այդ խնդրով պրոֆեսիոնալ բարձր մակարդակով արդեն մեկ տարի անթերի զբաղվում են նրա փաստաբանները: Ավելին, ես ինքս էլ արդեն քանի անգամ հրապարակածս հոդվածներում կոնկրետ օրինակներով ապացուցել եմ, որ Ռ.Քոչարյանին ներկայացված մեղադրանքները և դատաստանը սարքված քաղաքական հետապնդում են, դասական քաղաքական վենդետայի օրինակ, իսկ նրա անմեղությունը, համոզված եմ, ամենամոտ ապագայում առաջին իսկ անաչառ դատավարությամբ կապացուցվի: Նշենք, որ դատավճռի հրապարակումից հետո անցած երեք օրվա ընթացքում ՀՀ ամբողջ մեդիա-տարածքը լցված է տեղի ունեցողի փոխբացառող գնահատականներով: Ընդ որում՝ հարկ է նշել, որ իրավագիտության ոլորտի պրոֆեսիոնալների ճնշող մեծամասնության կարծիքը հակվում է Վերա-

քննիչ դատարանի դատավճռի ամփոփումն լինելուն, այն դեպքում, երբ «Ժողվարչապետ» Նիկոլ Փաշինյանի սխրակիցները չէին թաքցնում իրենց վայրի հիացմունքը պատահածից և Վերաքննիչ դատարանի այդ վճիռը մատուցում էին հասարակությանը որպես «թավշյա հեղափոխության» (նկատի ունենալով 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումը) հերթական հաղթանակ: Չեմ թաքցնում, որ իրական ժամանակի ռեժիմում ուշադիր հետևելով դատավարությանը՝ երբեմն նողկանքի զգացողություն եմ ունեցել: Հենց միայն ՀՀ իշխանությունների բեմադրած թատերականացված ներկայացումը պերճախոս վկայում է ներկա իշխանությունների անբարոյության մասին: Խոսքն այն մասին է, որ Վերաքննիչ դատարանի նիստում, որը քննարկում էր Արցախի Հանրապետության գործող և նախկին նախագահների անձնական երաշխավորության հարցը Ռոբերտ Քոչարյանի հանդեպ, հատուկ հրավիրվել էին 2008թ. մարտի 1 – 2-ի ողբերգական դեպքերի զոհերի անդառնալի կորստից ու վշտից կքած հարազատներն ու մերձավորները: Իշխանությունների նպատակը նույնքան նսեմ է, որքան և պարզունակորեն պարզ՝ շեղել հասարակության ուշադրությունը գործի էությունից: Ընթերցողներին հիշեցնենք, որ 2008թ. փետրվարի 19-ին կայացած ՀՀ նախագահական ընտրություններում նախագահի թեկնածուներից մեկի՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցները հրաժարվեցին ընդունել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը Սերժ Սարգսյանի հաղթանակի մասին, և Լ.Տեր-Պետրոսյանի թիմի կողմից հրահրվելով և Նիկոլ Փաշինյան ու K⁰-ի ակտիվ մասնակցությամբ դուրս եկան զանգվածային բողոքի ակցիաների, ընդ որում՝ կատարեցին հակաիրավական գործողություններ և անկարգություններ, որոնց հետևանքով զոհվեց 10 քաղաքացի, այդ թվում՝ երեք ոստիկան, մոտ 200 մարդ վնասվածքներ ստացավ: Ընթերցողը կարող է հարցնել. իսկ ինչո՞ւ եմ այդքան սուր բնութագրում Վերաքննիչ դատարանի նիստին այդ օրերին ողբերգականորեն զոհված ՀՀ քաղաքացիների հարազատներին ու մերձավորներին հրավիրելու փաստը: Պատասխանն ակնհայտ է. «Ժողվարչապետի» և K⁰-ի գործողություններն ամեն կերպ ուղղված էին հայ հասարակության պառակտման խորացմանը, ընդ որում՝ նրանք չէին զլանում տարածել բացահայտ սուտ, հմտորեն մանիպուլացնելով վշտից կոտրված մարդկանց տրամադրությունները: Կրկնում եմ, այդ նիստում քննարկվում էր Ռոբերտ Քոչարյանին կալանքից ազատելու մինչ այդ ընդունված որոշումը չեղարկելու հարցը՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության գործող և նախկին նախագահների երաշխավորությունները: Վերաքննիչ դատարանի այդ նիստը, նորից ու նորից նշենք, չէր քննարկում 2008թ. մարտի 1 – 2-ին մեր քաղաքացիների զոհվելու հանգամանքները:

Չեմ հոգնեցնի ընթերցողներին սրա մասին հետագա մանրամասներով, միայն նշեմ, որ վերջին երեք օրերի իրադարձություններն ամենայն համոզությամբ վկայում են այն մասին, որ պետական հեղաշրջման տիկնիկավարները այս անգամ էլ հասան առաջադրված նպատակին: Իսկ

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Նրանց նպատակն այն էր, որպեսզի, օգտագործելով այս դատական ֆարսը, շեղեն Հայաստանի քաղաքական դասի և առհասարակ հայ հասարակության ուշադրությունը (բանակերպների, քաղաքական բանավեճերի, տարատեսակ էկզոտիկ ակցիաների նախաձեռնմամբ) արևմտյան ստրատեգիաների բազմաքայլ կոմբինացիաների պսակագերծումից, որոնց գլխավոր մտադրությունը իրավիճակի ապակայունացումն է Ռուսաստանի հարավային մատույցներում: Խոստովանենք, որ առաջին քայլն այդ ճանապարհին արվեց 2018թ. ապրիլ – մայիսին պետական հեղաշրջման իրականացմամբ: Ռուսաստանի և Հայաստանի չարականների զինանոցում Ղրղզստանում, Վրաստանում, Ուկրաինայում գունավոր հեղափոխությունների ընթացքում պետականության, մեր դեպքում՝ հայոց պետականության հիմքերի սասանման վաղուց փորձարկված տեխնոլոգիաներն են հայկական երկու պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև անվստահության մթնոլորտի հրահրմամբ, հայ հանրությունում այնպիսի իրադրության սերմանմամբ, երբ բնավ չի ընկալվում այն, ինչ տեղի է ունենում: Իսկ դա անխուսափելիորեն պարարտ հող կստեղծի Ադրբեջանի կողմից Արցախի դեմ ռազմական ագրեսիա սկսելու համար՝ այն հույսով, որ իրականացնի նրանց ուղեվարների բաղձալի նպատակը՝ Ադրբեջանին վերադարձնել Իրանի Իսլամական Հանրապետության հետ 105 կիլոմետրանոց սահմանի վերահսկողությունը: Ներկայում սահմանի այդ հատվածը գտնվում է Արցախի անվտանգության գոտում և պահպանվում է նրա զինված ուժերի կողմից: Եվ այսօր չարժե կասկածել, որ սահմանի այդ հատվածը, որը վերահսկվում է Արցախի զինված ուժերի կողմից, Իրանի շուրջ ծավալվող իրադարձությունների համատեքստում բացառիկ կարևոր նշանակություն ունի ինչպես ԱՄՆ-ի և Իսրայելի, այնպես էլ, անշուշտ, Թուրքիայի համար: Ուրեմն, ադրբեջանական կողմը համոզված է այդ երկրների բացարձակ աջակցության հարցում իր ցանկացած գործողությունների պարագայում, որոնք վերջին հաշվով ռազմական գործողության հնարավորություն կբացեն՝ արցախա-իրանական 105 կիլոմետրանոց սահմանի վերահսկողությունն ապահովելու հարցում: Հենց այս դիրքերից է պետք դիտարկել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովի Media.Az ինտերնետ պորտալին 2019թ. հունիսի 25-ին տված «Էլմար Մամեդյարով. Ընդհանուր առմամբ, հանդիպումը Վաշինգտոնում օգտակար էր» վերնագրով հարցազրույցի հետևյալ տողերը: Ի պատասխան թղթակցի՝ «Հանդիպումից հետո տարածված հայտարարություններում և մեկնաբանություններում նշվում է, որ համառոտագահները երկու կողմերի ուշադրությանն են ներկայացրել ինչ-որ առաջարկություններ: Ի՞նչ կարող եք ավելի ընդարձակ ասել այս առիթով» հարցի՝ Մամեդյարովն ասել է. «Այստեղ նախ և առաջ հարկ է հստակ պատկերացնել, որ Ադրբեջանի օկուպացված տարածքների ազատագրումը և այնտեղ ադրբեջանցի հարկադրյալ տեղահանվածների վերադարձը առանցքային տարրերից մեկն է հակամարտության կարգավորման վերաբերյալ մինչև հիմա քննարկված բոլոր փաստա-

թղթերում»: Ես հատուկ կանգ չառա հակամարտության գոտում խաղաղարար ուժերի տեղակայման հնարավորության հարցի վրա, քանի որ այդ տեղեկությունը մանրամասն լուսաբանված է REGNUM լրատվական գործակալության կողմից՝ Ստանիսլավ Տարասովի ս.թ. հունիսի 24-ի «Լեռնային Ղարաբաղում կարող են հայտնվել միջազգային խաղաղարարներ» հոդվածում: Այնուհետև, ընթերցողներին հիշեցնենք, որ ս.թ. մայիսի 30-ին 1NWES.AZ ինտերնետ պորտալը հրապարակել է Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհրիևի հոդվածը, որում մուլալիմ Ռամիզը, մասնավորապես, գրում է. «Եվ այսպես, վերաբնակեցման քաղաքականությունը, որն իրականացվում էր Ցարական Ռուսաստանի և խորհրդային իշխանության կողմից երկու դար շարունակ, հանգեցրեց տարածաշրջանի ժողովրդագրական լանդշաֆթի էական փոփոխության: Այդ գործընթացի եզրափակիչ ակորդը դարձավ 1988 – 1993թթ. ավելի քան 250 հազար ադրբեջանցիների արտաքսումը Հայաստանից և մոտ 700 հազար ադրբեջանցիների արտաքսումը Լեռնային Ղարաբաղից ու Ադրբեջանի յոթ օկուպացված շրջաններից (ուղերձն ակնհայտ է, մոտ մեկ միլիոն ադրբեջանցիներ կբնակեցվեն Արցախի անվտանգության գոտում – Ա.Գ.): Այստեղ մուլալիմ Ռամիզի երևակայությունը, անկասկած, չափից հեռուն է գնում: Հայաստանում ու Արցախի անվտանգության գոտում, և բուն Լեռնային Ղարաբաղում էլ ապրել է ոչ ավելի, քան ադրբեջանական ծագում ունեցող 300 հազար մարդ, այսինքն՝ 70 հազար մարդով քիչ, քան հայ ազգության հարկադրյալ վերաբնակները, որոնք ապրել են Նախիջևանի ԻԽՍՀ-ում, Բաքվում, Կիրովաբադում (այժմ՝ Գյանջա), Ադրբեջանական ԽՍՀ Շեքիի, Շենախիի, Ջաքաթալայի, Խանլարի և հայաբնակ այլ շրջաններում: Այսպես, 1979թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրում էր 475786 հայ, իսկ 10 տարի անց, 1989թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրող հայերի թիվը կազմում էր 390505 մարդ: Իսկ ներկայում Ադրբեջանում ապրող հայերի թիվը կազմում է մոտ 170 մարդ, որոնցից 104-ը՝ Բաքվում, մյուսները՝ գյուղական վայրերում:

Ընդ որում՝ մուլալիմ Ռամիզը, խոսելով «տարածաշրջանի ժողովրդագրական լանդշաֆթի էական փոփոխության» մասին, չգիտես ինչու, համեստորեն լռում է այդ պաշտոնական վիճակագրության մասին, լռություն է պահպանում իրեն լավ հայտնի՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալի՝ ռուսական խորհրդային կառավարությանը 1920թ. ապրիլի 26-ին գրած հայտնի նամակի մասին՝ Հայաստանի դեմ համատեղ գործողությունների վերաբերյալ: Մեջբերում կատարենք այդ նամակից. «Անգորա, 26 ապրիլի 1920թ.: ... Երկրորդ. եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության միջոցով կստիպեն Վրաստանին դաշինքի մեջ մտնել և քշել անգլիացիներին Կովկասի տարածքից, թուրքական կառավարությունը ստանձնում է իմպերիալիստական Հայաս-

տանի դեմ ռազմական գործողությունը (և այս սրբապիղծ տողերը «իմպերիալիստական Հայաստանի» մասին գրվել են Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության սկսվելուց ընդամենը 5 տարի հետո, որը շարունակվել է նաև Մուսթաֆա Քեմալի կողմից Թուրքիայի փաստացի ղեկավարման օրոք, ընդհուպ մինչև 1923թ. – Ա. Գ.) և պարտավորվում է ստիպել Ադրբեջանական հանրապետությանը մտնել խորհրդային պետությունների շրջանակ» (vstrokax.net/istoriya/predlozhenie-kemalya-k-rossii): Կես տարի անց Մուսթաֆա Քեմալի առաջարկն ընդունեց ի կատարում անձամբ Իոսիֆ Ստալինը: Այսպես, 1920թ. նոյեմբերի 9-ին Ստալինը, ելույթ ունենալով ԱԿ(Բ)Կ (Ադրբեջանի բոլշևիկյան կոմունիստական կուսակցության) Կենտկոմի, ՌԿ(Բ)Կ (Ռուսաստանի կոմունիստական բոլշևիկյան կուսակցության) Կենտկոմի Կավբյուրոյի, Ագրիեդկոմի և Բաքվի գործադիր կոմիտեի միավորված նիստում, ասաց. «Եթե ցանկանան իմանալ, թե ում են պատկանում Ջանգեզուրի հովիտն ու Նախիջևանը, ապա Հայաստանի ներկայիս կառավարությանը դրանք հանձնել չի կարելի, կլինի խորհրդային, այդ ժամանակ կարելի է»: Հետագայում՝ 1920թ. նոյեմբերի 30-ին, խորհրդային Ադրբեջանի կառավարությունը հանդես եկավ դիմումով՝ «Բոլորին, բոլորին, բոլորին», որում Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Միրզա Հուսեյնովը հայտարարեցին ողջ աշխարհին ի գիտություն Հայաստանի հետ տարածքային վեճերի դադարեցման և Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրն ու Նախիջևանը խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս ճանաչելու մասին: Նրանց դիմումում ասվում էր. «Ադրբեջանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անունից հայ ժողովրդին հայտարարեք Ադրբեջանի հեղկոմի նոյեմբերի 30-ի որոշումը. Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը, ապստամբած գյուղացիներից ստանալով ուրախալի լուրը Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման մասին, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի ու Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայկական Սոցիալիստական Հանրապետության մաս (ընդգծումը մերն է – Ա. Գ.)»: Այնուհետև, չնայած շանտաժին և ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի անդամների վրա ճնշմանը, 1921թ. հուլիսի 4-ին Լեռնային Ղարաբաղը խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկվելու մասին որոշումը դառնում է պլենումի քննարկման առարկա: Նշենք նաև, որ այդ հարցի քննարկման ժամանակ առաջ եկան երկու տեսակետներ, ուստի քվեարկության դրվեց որոշման երեք տարբերակ. «ա) Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում»: Այս որոշման օգտին քվեարկում են. ինքը՝ Նարիման Նարիմանովը, վրաց նացիոնալ-ուկլոնիստ Ֆիլիպ Մախարաձեն և այն տարիներին համոզված ստալինական Հմայակ Նազարեթյանը: Դեմ՝ Գեորգի Օրջոնիկիձեն, Ալեքսանդր Մյասնիկովը, Սերգեյ Կիրովը և Յակով

Ֆիզատները, «բ) հանրաքվեն անցկացնել ամբողջ Ղարաբաղում՝ հաշվի առնելով ողջ բնակչությունը, ինչպես հայերին, այնպես էլ մուսուլմաններին»։ Այս առաջարկության օգտին քվեարկում են՝ Ն.Նարինանովը և Ֆ.Մախարաձեն, «գ) Ղարաբաղի լեռնային մասը ներառել Հայաստանի կազմում»։ Որպեսզի «պլեբիսցիտը անցկացվի միայն Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ հայերի մեջ», սրա օգտին քվեարկում են Գ.Օրջոնիկիձեն, Ա.Մյասնիկովը, Յա.Ֆիզատները, Ս.Կիրովը, Հ.Նազարեթյանը։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշում է կայացնում. «Լեռնային Ղարաբաղը ներառել Հայաստանի ԽՍՀ կազմում, հանրաքվեն անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում»։ Այս որոշումն ընդունելուց հետո Ադրբեջանի ղեկավարությունը չի հանձնվում և պահանջում է «այն կարևորությունից ելնելով, որն ունի Ղարաբաղյան հարցը Ադրբեջանի համար», դրա վերջնական որոշումը տեղափոխել ՌԿ(բ)Կ Կենտկոմ, այսինքն՝ հարցի լուծումը, ըստ էության, թողնել Իոսիֆ Ստալինի հայեցողությանը, որն այն տարիներին ղեկավարում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմը։ Հարցը ՌԿ(բ)Կ Կենտկոմի հայեցողությանը հանձնելու հարկ չեղավ։ Հաջորդ օրն իսկ՝ 1921թ. հուլիսի 5-ին, Ստալինն ինքը եկավ ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի նոր նիստին, որը նրա իսկ կոշտ ճնշման ներքո ընդունեց մինչ այդ ընդունված որոշմանն ուղիղ հակառակ որոշում, որը ոչ մի ընդհանուր բան չունեւ Միջազգային իրավունքի հռչակված սկզբունքների և նորմերի հետ (նկատի է առնվում այն փաստը, որ երրորդ երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի կուսակցական մարմինը որոշում է կայացնում երկու այլ երկրների տարածքային հարցերի շուրջ)՝ «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում» (<https://poisk-ru.ru>)։ Ես հատուկ այսքան մանրամասն ներկայացրի այն տարիների իրադարձությունները, որոնք հետագայում դարձան Ղարաբաղյան հակամարտության աղբյուրը։ Կարծում եմ, որ այս նախապատմությունը համոզիչ կերպով հաստատում է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-ի որոշումը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագրի ընդունման մասին, որն ընդունվել է ԽՍՀՄ օրենքներին լիովին համապատասխանությամբ, ըստ էության, օբյեկտիվորեն պահանջված էր և Իոսիֆ Ստալինի կամայական գործողություններով ոտնահարված պատմական արդարության վերականգնման ակտ էր։ Եվ ահա, Ռամիզ Մեթիևը, թեև հողվածը վերնագրել է «Հայ-ադրբեջանական ղարաբաղյան հակամարտություն. խնդրի աղբյուրները և կարգավորման հեռանկարները», ցավոք, չիմացության, ավելի շուտ՝ խնդրի իսկական աղբյուրների ճշգրիտ իմացության պատճառով իր հողվածում այդպես էլ չի հիշատակում այս պատմական փաստերի մասին։ Դե ինչ, պատահում է։ Ամբողջական պատկերի համար նշենք նաև, որ Լեռնային Ղարաբաղի կեղծ լայն ինքնավարությունը վերածվեց նրան, որ ադրբեջանական իշխանությունը բոլոր միջոցներով փոխեց բնակչության ժողովրդագրությունը հոգուտ ադրբեջանական հեռուն գնացող նկրտում-

ների, մասնավորապես՝ հողվածի սկզբում հիշատակված և արդեն 25 տարի, բնավ ոչ պատահականորեն, կրկնվող պնդումների առ այն, որ «Ադրբեջանի օկուպացված տարածքների ազատագրումը և այնտեղ ադրբեջանցի հարկադրյալ տեղահանվածների վերադարձը մինչև հիմա հակամարտության կարգավորման վերաբերյալ քննարկվող փաստաթղթերի առանցքային տարրերից մեկն է»: Բնականաբար, հարց է ծագում. իսկ ինչո՞ւ Ադրբեջանի այդքան սրտացավ պետական այրերը ոչ մի անգամ չեն հիշատակում հայ հարկադրյալ տեղահանվածների մասին, որոնց թիվը, ամենահամեստ հաշվարկներով, հասնում է 400 հազար մարդու: Բայց դա այլ վերլուծության թեմա է: Իսկ այժմ, վերադառնալով Վերաքննիչ դատարանի ս.թ. հունիսի 25-ի՝ Հայաստանի ազգային անվտանգության տեսակետից վտանգավոր որոշմանը, նշենք, որ այն առաջ է բերել անթաքույց հիացմունք ադրբեջանական լրատվամիջոցներում: Էլ չեմ ասում մաղձի բուռն պոռթկման մասին, որը ժայթքում են փշերոնյան սուլթանության այդ նույն ԶԼՄ-ները Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցի հետ կապված, որը նա տվել է ս.թ. հունիսի 24-ին Հայաստանի հեռուստաալիքներից մեկին, այսինքն՝ երրորդ ձեռքակալությունից մեկ օր առաջ: Կարծում ենք, որ Ռոբերտ Սեդրակովիչի հայ, մեղմ ասած, ընդդիմախոսները այդպես էլ չորսացին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահի, ՀՀ երկրորդ նախագահի գլխավոր մեսիջներից մեկը, որը հնչեց նրա հարցազրույցում: Այսպես, բացահայտելով Արցախի Հանրապետության քաղաքացիների հավաքական կերպարը՝ Ռոբերտ Քոչարյանի ամբողջ ելույթով կարմիր թելի պես անցնում էր միտքը արցախցիների մասին՝ որպես բանակ-ազգի, որն անձնուրաց պաշտպանել է իր այդպես էլ ծնկի չեկած Հայրենիքը: Տարիներ առաջ՝ դեռևս 2011-ին, այդ միտքը բավական տարողունակ և հուզական արտահայտեց Հայաստանի ականավոր ազգային գործիչ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, լուսահոգի Սոս Արտաշեսի Սարգսյանն իր խոր փիլիսոփայական նամակում՝ հասցեագրված ադրբեջանական մտավորականությանը: Մեջբերեմ միայն առանձին հատվածներ այդ նամակից, որոնք այսօր էլ հնչում են ավելի քան արդիական. «Դուք ինչ է, լրջորեն պատրաստվում եք պատերա՞զմ սկսել: Թանկագին իմ հարևաններ, ոչինչ չի՝ ստացվի, բացի անմեղ զոհերից: Ինչո՞ւ: Շատ պարզ. ձեզ համար Ղարաբաղը տարածք է, իսկ մեզ համար՝ սուրբ Հայրենիք: Պատերազմի դրդապատճառները բացարձակ տարբեր են, և զինվորների հոգեբանական տրամադրվածությունը նույնպես տարբեր է: Ընդհանրապես, մենք ի վերջո դեմ չենք, քանզի, իմացած լինեք, լրջորեն մտածում ենք մեր Նախիջևանն ու Գանձակը վերադարձնելու մասին (խոսքը Կիրովաբադի և հարակից շրջանի մասին է, որը ներկայում Գյանջա է կոչվում – Ա. Գ.): Կարծում եմ, որ ուղղակի իմաստ կա, որպեսզի Ադրբեջանի պաշտպանության նախարարը ուշադիր կարդա այս նամակը լրիվ ու ջանա հասկանալ Սոս Սարգսյանի խոսքերի իմաստը, ինչպես նաև դիտի Ռոբերտ Քոչարյանի 2019թ. հունիսի 24-ի հեռուստահարցազրույցը: Իհար-

կե, չի խանգարի, որ այս մասին մտածի նաև Ափշերունի սուլթանը, որն անգուսպ (տպավորություն է ստեղծվում՝ ինքնահաստատման համար) սկսել է ավելի հաճախ վատաբանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարներին՝ հանձինս Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի և Սերժ Ազատի Սարգսյանի: Հիշենք պաշտպանության նախարարի մտքի գոհարները՝ նշենք, որ ադրբեջանցի վոեվոդան Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպման նախօրեին ասել էր. «Միջազգային իրավիճակը թույլ չի տալիս Ադրբեջանին պատերազմ սկսել»:

Հարգելի ընթերցողը կարող է տարակուսած կշտամբել ինձ այն բանում, թե ինչու եմ ես, չգիտես ինչու, լռության մատնում Հայաստանի իշխանությունների ուղղակի վտանգավոր գործողությունները, որոնք Իրանի շուրջ ձևավորվող ծայրահեղ բարդ միջազգային իրադրությունում, ավշերոնյան բազենների կողմից անընդմեջ հնչող տագնապալի հայտարարությունների պայմաններում մեզ մոտ՝ Հայաստանում, իրականացնում են Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի հերոսների վարկաբեկման քաղաքականություն: Ասվածի հաստատման վերջին օրինակը Արցախի Հանրապետության նախագահների (գործող և նախկին) երաշխավորության արհամարհումն է ՀՀ Վերաքննիչ դատարանի կողմից: Այստեղ կարելի է բերել բազմաթիվ այլ փաստեր ևս, որոնք վկայում են նման պնդման ապացուցելիությունը: Սակայն, կարծում եմ, որ դրա անհրաժեշտությունը չկա: Զէ՞ որ Հայաստանում 2018թ. ապրիլ – մայիսի պետական հեղաշրջման հեղեմներն իրենց անդրովկիանոսյան ուղեվարների կողմից իշխանության բերվեցին հենց այդ նպատակով՝ նսեմացնելով և պատվազրկելով Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի կենդանի խորհրդանիշներին, Արցախի հերոսներին՝ հանձինս Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Վիտալի Բալասանյանի, Մանվել Գրիգորյանի, Սեյրան Օհանյանի և շատ ու շատ այլ հերոսների, խափանել նրանց տոկոնությունն ու Արցախի պաշտպանության գործողություններում իրենց ճշմարտացիության համոզվածությունն ինչպես զինված ուժերում, այնպես էլ ազգ-բանակում: Հարգելի ընթերցողը կարող է զարմանալ՝ մտածելով, թե ինչու եմ այդ մասին այսքան հանգիստ, չեզոք գրում: Եվ իրավացի կլինի: Իմ պատասխանը պարզ է. Նիկոլ Փաշինյան և K^O-ն, հայոց պետականության հիմքերի սասանման նման քաղաքականություն վարելով, ջանալով ձևավորել անվստահության մթնոլորտ արցախյան ղեկավարությունում և ընդհանրապես հասարակությունում, սրընթացորեն մոտեցնում է իր քաղաքական ֆիասկոն, իսկ դա, անշուշտ, բխում է հայկական երկու պետությունների շահերից: Պակաս կարևոր չէ նաև մեկ այլ գործոն՝ պայմանավորված ներկայիս հայ կեղծ հեղափոխականների կործանմամբ: Խոսքն այն մասին է, որ իրադարձությունների այսպիսի զարգացումն ամենայն համոզությամբ համաշխարհային քաղաքականության հայտնի կենտրոնին ցույց կտա ակնհայտ իրողությունը. ցանկացած հայ քաղաքական գործիչ, որքան էլ հմտորեն, պետությունների

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

քայքայման ամենաարդիական տեխնոլոգիաների կիրառմամբ Հայաստանում բերվի իշխանության, դատապարտված է անգոյության, եթե ոտնձգի սրբություն սրբոցի՝ միավորված Հայաստանի՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անկախության դեմ:

Հետգրության փոխարեն: Ստեղծված ավանդույթի համաձայն՝ չէի ցանկանա հոգվածս ավարտել տխուր նոտայով, և ինձ օգնության եկավ հերթական հրապարակումը Հայաստանում հակառուսական քարոզչության գլխավոր լրատվամիջոցում՝ «Ժամանակ» թերթում, ինչպես նաև 1in.am ինտերնետ պարբերականում: Այսպես, թերթի ս.թ. հունիսի 27-ի առաջնորդողը վերնագրված է՝ «ՀՀ-ն անտարբերության մատնեց Ռոբերտ Քոչարյանի ուղերձը» (խոսքը ՀՀ երկրորդ նախագահի ս.թ. հունիսի 24-ի հարցազրույցի մասին է): Առաջնորդողի հեղինակները որդեգրել են ի սկզբանե մտացածին իբր գլխավոր միտքը Ռոբերտ Քոչարյանի մեկժամյա հարցազրույցից, որը հանգեցվում է հայ հասարակության բոլոր առողջ ուժերի միավորման կոչին ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում, դիմակայելու համար Նիկոլ Փաշինյանի ու նրա ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավերիչ քաղաքականությանը: Վերնագիրն արդեն վկայում է այն մասին, որ նրանք խնդիր են դրել՝ բացահայտ ստի արծարծմամբ շեղել ընթերցողների ուշադրությունը բավական լուրջ մեղադրանքներից, որոնք ներկայացված են Հայաստանի Հանրապետական կուսակցության հայտարարությունում: Այդ հայտարարությունը դատավճիռ է «Ժողովրդավետի» և նրա խառնամբոխի հանցավոր գործունեությանը: Մեջբերեմ միայն որոշ հատվածներ այդ լրջագույն փաստաթղթից.

«— Վերաքննիչ քրեական դատարանը կոպտորեն ոտնահարել է մրցակցային դատավարության սկզբունքը և կայացրել է բացառապես քաղաքական որոշում:

— Նշված գործընթացը որևէ աղերս չունի ժողովրդավարության, իրավունքի գերակայության և դատական իշխանության անկախության հետ:

— Ռոբերտ Քոչարյանի՝ թվով երրորդ կալանավորումը շարունակվող քաղաքական վրեժխնդրության հերթական դրսևորումն է, որով փորձ է արվում նաև շեղել հայ ժողովրդի ուշադրությունը երկրում օրեցօր կուտակվող բազում խնդիրներից:

— Երկրում շարունակաբար խրախուսվում է հասարակության պառակտման գործընթացը, որն առավել վտանգավոր է դառնում տարածաշրջանային խիստ մտահոգիչ մարտահրավերների ֆոնին»:

Վերլուծելով Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցի և Հայաստանի Հանրապետական կուսակցության հայտարարության գլխավոր ուղերձները՝ կարող եմ ասել, որ դրանք փոխլրացնում են միմյանց, իսկ դրանց գլխավոր մեսիջը մեկն է՝ Հայաստանի Հանրապետությունը վտանգի մեջ է, վտանգը կանխելը բոլորի սուրբ պարտքն է, ում համար թանկ է միավորված Հայաս-

տանի՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ճակատագիրը:

Հ.Գ. Երբ գրում էի այս հոդվածը, մտաբերեցի քսանամյա վաղեմության դեպքեր, ավելի շուտ՝ իմ հարցազրույցը հայտնի գրող և հրապարակախոս, հեռուստալրագրող և հասարակական գործիչ Մերուժան Տեր-Գուլանյանին՝ ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի (1999թ.) ընտրություններին ընդամաք: «Իրավունք և միաբանություն» դաշինքը, որի ղեկավարումը վստահված էր ձեր խոնարհ ծառային, այն ժամանակ սերտորեն համագործակցում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանի հետ: Ժողովրդի մեջ համառորեն լուր էր պտտվում այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի և Սամվել Բաբայանի միջև թաքուն թշնամանք կա: Բնականաբար, հարցազրուցավարը պիտի գայթակղվեր հարցնելու այս թեմայի մասին, ինչն էլ արեց: Իմ պատասխանը նույնքան անկեղծ էր, որքան և պարզ: Մարդիկ, ովքեր անցել են պատերազմի ահավոր փորձությունների միջով, ամեն օր նայել են մահվան աչքերին, ենթարկել մահացու վտանգի իրենց հարազատներին ու մտերիմներին, նրանք միանգամայն այլ որակի մարդիկ են: Նրանց չես կոտրի ու չես կռվեցնի, քանի որ նրանք հաշվետու են հերոսաբար ընկած իրենց ընկերների, հարազատների ու մերձավորների առջև: Եվ ահա, կցանկանայի, որպեսզի այս ամենից դասեր քաղեին քաղաքական այն բոլոր պատեհապաշտները, որոնք Հայաստանի և Արցախի համար վճռորոշ այս օրերին երազում են տեսնել Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի հերոսներ Ռոբերտ Քոչարյանին և Սերժ Սարգսյանին բարիկադների հակառակ կողմերում: Դե ինչ, ինչպես ասում են, «Զուր աշխատանքի արտել», թեև ՆԷՊ-ի ժամանակները վաղուց արդեն անցել են, բայց այս արտելը դեռ կենսունակ է: Ես քաղաքական նախագուշակումների կողմնակից չեմ, ուստի չկասկածելով կանխատեսումներիս անխափանելիությանը՝ Հայաստանի և Արցախի հայրենասերների միջավայրում պառակտման սիրահարներին կարող եմ հայտարարել. «մեծահարգ» պարոնայք, ձեր տեղը գարշահոտ ջրափոսն է կամ գրական լեզվով ասած՝ դուք շուտով կհայտնվեք կեղտի մեջ: Եվ, ինչպես ասվում է, լավագույն ցանկություններով՝ ձեր իսկ կանխագծած երթուղուն հասնելու ճանապարհին:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի I, II, III, V և VI
գումարումների պատգամավոր,
«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

АРТАШЕС ГЕГАМЯН: КОНСОЛИДАЦИЯ ГЕРОЕВ АРЦАХСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ ВОЙНЫ – ЗАЛОГ СОХРАНЕНИЯ МИРА В ЗАКАВКАЗЬЕ

Вместо предисловия. Приступив к чтению этой статьи, читатель вполне резонно может задаться вопросом: почему ее автор уже длительное время не имеет публичных выступлений по армянским телевизионным каналам, в чем причина «молчания». Признаюсь, что такой вопрос будет весьма уместен, но, увы, мое «молчание» отнюдь не является моим выбором. Сказать, что и до государственного переворота апрельская 2018 года я был частым гостем отечественных телеканалов, было бы сильным преувеличением, впрочем, возлагать ответственность за это на известное учреждение, расположенное на ул. Америкян, 1, также не соответствовало бы действительности. Справедливости ради заметим, что за три-четыре года до государственного переворота, в соответствии с новейшими технологиями разрушения армянского государства, стратегами Запада была поставлена задача – обезличить политическое поле Республики Армения с тем, чтобы в дальнейшем не потребовалось больших усилий по его фрагментации на «черных» и «белых». А то, что политики, наделенные властными полномочиями, а ныне отнесенные к разряду «черных», не разгадали этот коварный замысел недругов Армении, – тоже неоспоримый факт. К сожалению, политика информационной изоляции «инакомыслящих», к которым относятся убежденные сторонники безальтернативности стратегического союза России и Армении, все еще продолжается, что тоже является непреложной истиной.

Видимо, заокеанские поводыри «белых» отдают себе отчет в том, все еще не до конца решены поставленные ими задачи: дестабилизация положения в южном подбрюшье России и другие вопросы, о чем будет изложено в статье.

Слава богу, что все еще сохранилась возможность делиться с гражданами Армении и России своими тревогами и размышлениями на сайте Российского информационного агентства REGNUM, в печатных изданиях медиахолдинга «Иравунк» и интернет-портале Shame.am.

По сложившейся практике последних лет я порой, через не могу, стараюсь внимательно знакомиться с публикациями азербайджанской прессы. Не скрою, что это занятие не из приятных, причем отнюдь не только в силу полной ангажированности главных масс-медиа апшеронского султаната, которые временами показывают чудеса изворотливости, подтасовки фактов из нашей реальной жизни. Нет, не только в силу этого, а потому, что в них особое место отводится тиражированию откровенной лжи. Вместе с тем я осознаю, что было бы проявлением неоправданной самоуспокоенности пренебрежительное отношение, казалось бы, к отдельным, но при этом весьма опасным публикациям, которые, если рассматривать в их совокупности, делают тебя очевидцем тщательно продуманной информационной войны. В них вырисовывается весьма профессиональная технология ведения информационной войны против двух армянских государств – Республики Армения и Республики Арцах. Сказать, что это своеобразное ноу-хау азербайджанских стратегов информационной войны – было бы преувеличением. Вся техника по манипулированию сознанием своих читателей, будь они в Азербайджане или за рубежом, сводится к четкому следованию постулатам небезызвестного злодея по оболваниванию широких народных масс Йозефа Геббельса: «Пропаганда утрачивает силу, как только становится явной ... Чем чудовищнее ложь, тем охотнее толпа верит в нее».

Чтобы не томить уважаемых читателей своими теоретическими выкладками, перейду непосредственно к сути вопроса. Итак, 3 июля т.г. азербайджанский интернет-портал Contact.Az со ссылкой на информационное агентство Туран опубликовал статью под интригующим заглавием «Сенсация или факт? О письме Пашияна Столтенбергу». Прочитав заголовок, первое, что пришло на память, – известный диалог из водевиля «Ханума» Авксентия Цагарели, написанного аж в 1882 году. Вспомним диалог между Акопом, приказчиком богатого купца Микича, и князем Ваном из блестяще поставленного в 1972 году в ленинградском Большом драматическом театре Георгием Товстоноговым спектакля «Ханума». Итак, Акоп рекламирует: «Хочешь купаться – вот Кура, вот твой дом, хочешь умыться – вот Кура, вот твой дом, хочешь напиться – вот Кура, вот твой дом, хочешь топить – вот Кура, вот твой дом!». Этому следует возражение: «Позволь, позволь, позволь! А если наводнение?» Следует ответ Акопа: «Э-э, слушай. Где Кура и где твой дом?» Этот диалог как нельзя красноречиво отражает подлинную суть современной пропаганды апшеронского султаната. Так о чем же поведал нам Contact.Az? (<http://www.contact.az/ext/news/2019/7/free/politics%20news/ru/82091.htm>). «Российское издание gosnews.ru опубликовало документ (с чего они взяли, что этот материал является документом, непонятно. – А. Г.), утверждая, что это письмо

премьер-министра Армении Никола Пашиняна генсеку НАТО Йенсу Столтенбергу. *«Пашинян замыслил неожиданный ход: сдать Арцах Азербайджану, о чем и сообщает в письме Столтенбергу (обратите внимание, что азербайджанский агитпроп вовсе и не ставит под сомнение существование письма. – А. Г.). Таким хитрым способом Пашинян планирует предотвратить заговор, устроив заговорщикам из Нагорного Карабаха такую жизнь, что им будет не до свержения руководства Армении»* (подчеркнуто мною. – А. Г.), – утверждает московское издание .

Обратите внимание, азербайджанское информагентство в подсолнечие читателей впрыскивает информацию о заговоре, как о не подлежащей сомнению данности, впрочем, представляя как неоспоримое утверждение и то, что «заговорщики из Нагорного Карабаха». Не правда ли, трогательная «забота» о «народном премьер» Армении Николе Пашиняне? Далее Contact.Az пишет: «Борьба с коррупцией напоминала сведение счетов с бывшим руководством страны. На этом фоне появились слухи о подготовке к свержению Пашиняна со стороны карабахских военных. По версии московского издания, чтобы избежать революции, Пашинян задумал сдать Карабах Азербайджану (авторы хотят выдать желаемое за действительное, так как именно сдача земель зоны безопасности чревата революцией. – А. Г.), о чем и сообщает в письме Столтенбергу... Данный материал, скорее всего, фейк. Но важно, что он исходит от России, где не скрывают своего недовольства Пашиняном и стремятся подорвать его поддержку со стороны населения».

Здесь азербайджанские стратеги, прямо скажем, могут создать «серьезную конкуренцию персонажу из «Ханумы» приказчику Акопу, то есть азербайджанский агитпроп в этом случае совсем запутался. С одной стороны, по утверждению азеров, московское издание этак ненавязчиво предупреждает Н. Пашиняна о якобы готовящемся заговоре со стороны Нагорного Карабаха и при этом для пущей убедительности замечает, что «он (фейк) исходит от России». Далее, чтобы совершенно отвести сомнения в подлинных намерениях Н. Пашиняна, азербайджанские агитпроповцы крайне великодушно подсказывают России, ссылаясь на эту же статью, что Пашинян выполнил основную задачу, поставленную перед ним еще год назад кураторами, приведшими его к руководству Армении. Речь идет «об устранении преград на пути вступления Армении в НАТО, что обеспечит его поддержку со стороны Запада». Согласитесь, уважаемый читатель, что сие утверждение сколь примитивно, столь и коварно. Уже не раз приходилось писать, что закордонные кураторы привели Н. Пашиняна к власти с целью дестабилизации ситуации в южном подбрюшье России посредством нагнетания атмосферы напряженности между Арменией и Арцахом, отстранения от руководства вооруженными

силами Республики Арцах закаленных в Карабахской национально-освободительной войне боевых генералов. Словом, с целью создания благоприятных условий для развязывания Азербайджаном новой военной агрессии против Республики Арцах. При этом в числе первоочередных целей, которые ставят перед собой азербайджанские ястребы, является овладение апшеронским султанатом зоны безопасности Арцаха, ныне контролируемой вооруженными силами Республики Арцах и имеющей 105-километровую границу с Исламской Республикой Иран. Думается, не имеет смысла вновь говорить о крайней заинтересованности США, Израиля и Турции в опосредованном, да и прямом контроле над этим участком карабахско-иранской границы.

Весьма примечательно, что в день публикации в московском издании gosnews.ru уж очень понравившейся азербайджанской стороне статьи (создается впечатление, что они воспринимают каждое предложение статьи, как свое родное дитя), в другом московском издании «Москва-Баку» 1 июля т.г. было опубликовано интервью «Сергей Марков: Армянский премьер боится идти на договоренности с Азербайджаном». Симптоматично, что интервью было дано С. Марковым, который сегодня, безусловно, удерживает пальму первенства в лоббировании азербайджанских интересов. Он, азербайджанский пропагандист, вдруг воспылал нежными чувствами, заботой к своему брательнику Николу Воваевичу. Так, на вопрос корреспондента «Москва-Баку»: «Сергей Александрович, обмен удерживаемыми лицами стал результатом переговоров глав МИД Азербайджана и Армении по реализации гуманитарных шагов между сторонами Нагорно-карабахского конфликта. Как оцениваете случившееся?», – последовал ответ: «Обмен удерживаемыми лицами между Азербайджаном и Арменией показал волю руководства двух государств к миру. Это особенно важно в тех условиях, в которых сегодня находятся переговоры, в условиях, когда премьер-министр Армении Никол Пашинян, с одной стороны, хотел бы мира, но внутривнутриполитическая ситуация в стране не позволяет ему пойти на конкретные мирные шаги. Армянский премьер боится идти на договоренности с Азербайджаном по карабахскому урегулированию, поскольку полагает, что компромисс с азербайджанской стороной может привести к заговору против него и его свержению». Читая эти строки, невольно вспомнил фрагмент из обращения «народного премьера» к народу от 20 мая т.г., когда он заявил: «Изучив все факты, я вижу за всем этим заговор с целью развязать новую войну и, возможно, даже сдать некоторые территории, переложив ответственность на правительство страны. Усматриваю в этой деятельности признаки государственной измены». Ну как после таких признаний Никола Пашиняна не сказать слов поддержки провидцу Сергею Маркову, который посредством

азербайджанского интернет-портала делится только ему и Николу Пашиняну известной информацией о заговоре и делает это с благими намерениями, чтобы подданные апшеронского султаната прониклись любовью и уважением к миротворцу Николу Воваевичу. Прониклись уважением, как это имело место быть в случае с его духовным наставником, первым президентом Республики Армения Левон Тер-Петросяном, которого и поныне цитируют не без восхваления благодарные азербайджанские масс-медиа. Причем к своей нескрываемой радости они сейчас констатируют их духовную близость. Так, 3 июля т.г. интернет-портал Aze.Az опубликовал статью под заглавием «Среди сепаратистов Карабаха идет борьба за власть». Анализируя эту статью, складывается впечатление, что наконец-то сбылась еще недавно казавшаяся утопической мечта армянской пятой колонны – иметь свой пропагандистский рупор не только в Армении, армянской Диаспоре, но и ... в Азербайджане. Да, да, уважаемый читатель, я не оговорился, в Азербайджане. Вдумайтесь, что пишет этот азербайджанский интернет-портал: «То, что Никол Пашинян формировался как политик в АОД и был соратником Левона Тер-Петросяна, знают все, а то, что он выполняет все директивы Армянского национального конгресса (АНК), стало известно лишь сейчас. Их СМИ пишут (не без удовлетворения отмечает Aze.Az. – А. Г.), что расследование преступлений 1 марта подчинено письменным директивам, составленным на основе данных группы по сбору фактов во главе с Андраником Кочаряном и Седой Сафарян... Вторым шагом в этом направлении стало создание временной депутатской комиссии по расследованию четырёхдневной войны под председательством верного соратника Тер-Петросяна Андраника Кочаряна. При этом главной задачей комиссии является дискредитация и устранение генералитета, что, по мнению экспертов, приведет к ослаблению армии (читая эти строки в азербайджанском интернет-издании, приходишь к однозначному выводу, что основной потребитель этой информации – вооруженные силы Азербайджана, ибо подобная галиматья не может не поднять их боевой дух. – А. Г.). Весьма примечательно, что один из подзаголовков этой статьи таков: «Время стать серьезными» (заглавие известной статьи Левона Тер-Петросяна «Война или мир? Время стать серьезнее» от 1 ноября 1997 года, которая привела к его отставке). Вот что написано под этим подзаголовком: «Вместе с тем Тер-Петросян должен доказать, пусть даже руками Пашиняна, что в 1997 году прав был он, а не те самые «известные силы» – то есть «карабахский клан», – которые вынудили его подать в отставку по причине несогласия с его планами покончить с войной и начать строительство мирного и процветающего государства (видимо, авторам этих слов известно о том, что Тер-Петросян был обязан кому-то доказывать

свою правоту и приверженность своей пораженческой политике, при этом почему-то скромно умалчивается, что под строительством «мирного и процветающего государства» подразумевается Армения без Нагорно-Карабахской Республики. – А. Г.)». Думается, нет смысла приводить другие перлы, полеты мысли автора статьи, впрочем, как и приводить цитаты из других подобных публикаций. Важно здесь подчеркнуть, что в своей совокупности все эти публикации преследует вполне определенную цель: с одной стороны, дискредитировать благородную идею, положенную в основу Карабахской освободительной войны, а именно спасение армянского населения Арцаха от геноцида, с другой – представить героев этой борьбы одиозными, коррумпированными личностями. Читатель может недоуменно отметить, что в моем изложении не было подтверждений второго вывода. Да, я специально не привел их циничные выводы в адрес действующих и прежних лидеров Арцаха, чтобы не тиражировать их клевету и ложь.

Возвращаясь к статье «Новая революция неизбежна», опубликованной на сайте gosnews.ru, хотелось бы отметить, что меня настораживает, что статья опубликована на российском интернет-портале. Если это фейк, то первые публикации на этот счет со стороны апшеронского агитпропа дают основание предположить, что в ближайшие дни в Армении щедро финансируемые Соросом, десятки интернет-изданий начнут очередную антироссийскую истерию. Первые ласточки антироссийских публикаций не заставили себя ждать. Так, 3 июля т.г. один из рупоров антироссийской пропаганды в Армении газета «Жаманак» опубликовала статью под заглавием «Какой мандат реет над Арцахом. Необходимость люстрации», в которой, по сути, говорится об использовании Москвой фактора ареста Роберта Кочаряна для расчленения системы безопасности Армении. Как говорится, дожили до такого маразма, когда надежного, испытанного гаранта обеспечения безопасности Армении Россию обвиняют в расчленении системы безопасности Армении, то есть обвиняют в некоем самоуничтожении на региональном уровне. На этом газета не остановилась. Уже сегодня, 4 июля т.г., вышла публикация под заглавием «Революция есть угроза для режима Путина. Через Кочаряна Кремль подал сигнал Армении». Концентрированное содержание этой мути в заглавии статьи. Не приходится сомневаться в том, что центральное место в ожидаемой информационной вакханалии будут занимать конспирологические утверждения о якобы плетущемся заговоре против «народного премьера» с целью поколебать его волю в борьбе с коррупцией, с карабахским кланом, «продажными судьями». При этом, естественно, властные борзописцы за всем этим будут усматривать «козни Кремля». Более того, с новой энергией будет продолжена политика властей, пре-

следующих цель любой ценой дискредитировать руководство Республики Арцах, не говоря уже о новых гнусных попытках увязать все это с известным судилищем над первым президентом Нагорно-Карабахской Республики, вторым президентом Республики Армения Робертом Седраковичем Кочаряном.

Чтобы читатель долго не размышлял, к чему Азербайджану подобные едва прикрываемые, сердобольные сопереживания за судьбу «народного премьера» Армении, прямые намеки на только им известные подстрекательские действия с российской стороны в отношении Никола Воваевича, подскажем, где искать корни этого явления. Опосредованный ответ на эти вопросы прозвучал 3 июля т.г. в поздравительном письме президента Азербайджана Ильхама Алиева президенту США Дональду Трампу по случаю национального праздника Соединённых Штатов Америки – Дня независимости. Так, очевидно, что апшеронский султан свел свои поздравления к двум основным вопросам: первый – важность поддержки Соединёнными Штатами азербайджанских проектов, служащих диверсификации источников и транспортировки энергоресурсов; второй – урегулирование «армяно-азербайджанского нагорно-карабахского конфликта». Что касается первой части поздравления И. Алиева, то его подтекст однозначен – для Азербайджана важна поддержка энергетических проектов «от деструктивных посягательств» с российской стороны. А касательно урегулирования Нагорно-карабахского конфликта, то для ясности процитируем апшеронского султана: «Вместе с тем неразрешённость армяно-азербайджанского нагорно-карабахского конфликта остаётся самой болезненной проблемой, с которой столкнулся наш народ. В результате военной агрессии Армении против нашей страны Нагорный Карабах и прилегающие к нему 7 районов, являющиеся исконными азербайджанскими землями, были оккупированы, более миллиона наших соотечественников изгнаны из родных очагов. Конфликт должен быть урегулирован мирным путем и справедливо в соответствии с нормами и принципами международного права, на основании требований соответствующих резолюций Совета Безопасности ООН, положений Хельсинкского Заключительного акта в рамках территориальной целостности нашей страны (что до остальных 9 принципов Хельсинкского Заключительного акта, так это не в счет. – А. Г.). Мы возлагаем в этом деле большие надежды на последовательную и решительную позицию США как сопредседателя Минской группы ОБСЕ и на лично ваши, господин президент, усилия». И Ильхам Алиев может смело добавить, что Азербайджан со своей стороны делает все для того, чтобы заслужить возлагаемые на США надежды, а именно: на ведущих азербайджанских интернет-порталах последовательно публикуются откровенно антироссийские статьи (можно

привести множество примеров, хотя бы из небезызвестного интернет-издания Minval.az), весьма изоощренно поддерживают «народного премьера» Армении, который окружил себя соросовскими прихлебателями-русофобами, более того, делает все для подрыва боевого духа нации-армии Республики Арцах, устраивая судилище над первым президентом НКР, вторым президентом РА Робертом Кочаряном, который воспринимается со стороны руководства России как убежденный приверженец российско-армянского стратегического союза.

Словом, азербайджанский агитпроп действует по заветам Джона Болтона. Все их подбострастные усилия понравиться дяде Сэму не перечсть.

Вместе с тем справедливости ради заметим, что столь же лестными словами, правда, апеллируя не поддержкой со стороны России альтернативных энергетических проектов, а другими «вескими» доводами, Ильхам Алев поздравил бы и президента России Владимира Путина. И вовсе не случайно, что, вчитываясь в строки поздравительного письма апшеронского султана Дональду Трампу, вспомнил его панегирики в адрес президента России, а заодно и исторические аналогии из жизни Шарля Мориса де Талейрана, князя Беневентского. Например, некоторые весьма характерные эпизоды из жизни князя Беневентского, которые присущи и нашему герою Апшерона. Так, Талейран был в Париже, когда король Франции Карл X издал фактически уничтожающие конституцию ордонансы 25 июля 1830 года. 27 июля 1830 г. вспыхнула революция и за три дня снесла прочь престол Карла X. Личный секретарь Талейрана Кольмаш был в эти дни при нем, при князе Беневентском. Ежеминутно поступали новые известия о битве между революцией и войсками. Слушая грохот выстрелов и звуки набата, несшиеся со всех колоколен, Талейран сказал Кольмашу: «Послушайте, бьют в набат. Мы побеждаем!» Кольмаш изумленно спросил: «Мы? Кто же, князь, побеждает?» «Тише, – последовал ответ Талейрана, – ни слова больше: я вам завтра это скажу». Этот характерный для Талейрана разговор происходил 28 июля 1830 г. На другой день революция победила. Так вот, уважаемый читатель, не сомневаюсь в том, что, развяжи Азербайджан новую агрессию против Республики Арцах и в самое короткое время убедившись, что проигрывает ее, Ильхам Алиев с целью спасения лица и предотвращения окончательного поражения, как это было ранее, все свои надежды по регулированию Нагорно-карабахского конфликта станет возлагать не на президента США, а уже на президента Российской Федерации Владимира Владимировича Путина.

Вместо послесловия. Не секрет, что в современных технологиях по разрушению государств особое место отводится информационной войне,

которая воздействует на сознание масс людей и является частью борьбы за сохранение или свержение действующей власти. В нашем случае имеем дело с тщательно продуманной технологией информационного нивелирования провалов действующих властей Армении и лично «народного премьера» Никола Пашиняна. При этом кукловоды последнего на профессиональном уровне реализуют на практике манипулирование информацией, используя правдивую информацию таким образом, чтобы из нее были сделаны неверные выводы. В арсенале информационной войны псевдореволюционеров Армении особое место занимает распространение дезинформации или же создание заведомо ложной информации. Чтобы не быть голословным, сошлюсь на конкретный пример.

Так, 12 апреля т.г. премьер-министр Армении Никол Пашинян на встрече с представителями армянской общины Страсбурга рассказал об успехах, якобы имевших место в республике за 10 месяцев после государственного переворота апреля–мая 2018 года. «Во всех странах мира после революции в экономике наблюдается рецессия. Однако после революции в Армении отмечен экономический рост. За эти десять месяцев открыта 51 тысяча рабочих мест, что составляет порядка 10% всего рынка труда» – как передала пресс-служба главы армянского правительства, сообщил «народный премьер». Спустя всего лишь пять дней после этого заявления в ходе правительственного часа в Национальном Собрании РА один из оппозиционных депутатов уличил его, Никола Воваевича, мягко выражаясь, в озвучивании дезинформации. При этом оппозиционным депутатом приводилась конкретная официальная статистика о выплатах в Фонд страхования военнослужащих, которые за указанный Пашиняном период выросли всего лишь на сумму 5 млн 26 тысяч драмов, что является подтверждением того, что были вновь созданы или вышли из «тени» в лучшем случае 5026 работников, то есть в 10 раз меньше озвученной Николом Воваевичем цифры. Уличенный во лжи «народный премьер» пошел, как говорят в народе, в сады, где на деревьях растет печенье. Немало сугубо манипулятивных и дезинформационных тезисов прозвучало и в ходе пресс-конференции Никола Пашиняна, созванной в связи с годовщиной его избрания на пост премьер-министра РА, 8 мая т.г., – будь то о кредитных договорах, о разгрузке пенитенциарных учреждений или об уничтожении документов в Службе национальной безопасности Армении. Конечно, можно было на конкретных примерах остановиться более подробно на этих вопросах, чтобы наглядно показать – манипуляции и распространение дезинформации составляют суть деятельности Никола Воваевича и руководимого им правительства. Но это тема другого анализа. Здесь же важно отметить, что манипуляции и дезинформация в области экономики и социальных отношений, безусловно,

Чтобы у читателей не сложилось мнение, что лицо сегодняшней армянской интеллигенции представляют одни лишь приспособленцы, замечу, что это далеко не так. Приведу свежий пример. Так, 27 июля т.г. в здании культурного центра-музея «Грант Матевосян» собрались представители интеллигенции, в том числе всемирно известные композитор Тигран Мансурян и оперная певица Асмик Папян. Все они были обеспокоены одной проблемой, а именно тем, что сегодня культурный центр-музей имени знаменитого армянского писателя Гранта Матевосяна, как в тот день отметил директор фонда «Грант Матевосян», сын писателя Давид Матевосян, находится в бесхозном состоянии. Исполнительной власти Армении, в частности, Николу Пашиняну до этого нет дела, ибо есть дела куда более важные: к примеру, крутить по Еревану на туристическом автобусе и взвалить на свои «могучие» плечи (после месячного хождения по городам и весям Армении в сопровождении дворняжки по кличке Чало с рюкзаком на плечах, естественно, наберешься силы) обязанности гида, причем выполняя эту работу безвозмездно. Какое благородство, подумает читатель. Благо что президент РА Армен Варданович

Саркисян в ходе рабочего визита в Лорийскую область счел своим долгом посетить родное село выдающегося прозаика Гранта Матевосяна Агнидзор. Тем самым он в деликатной форме показал все интеллектуальное убожество исполнительной власти, которой нет дела до культурного центра-музея «Грант Матевосян».

Не приходится сомневаться, что любой уважающий себя гражданин Армении и Арцаха, который способен непредвзято оценивать происходящее сейчас в Армении, при встрече с Николом Пашиняном с чистой совестью может не поздороваться с ним. А если подумать глубже, то и перекреститься не помешало бы.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՍԱԴՐԱՆՔԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ

Նախաբանի փոխարեն: 2019թ. օգոստոսի 31-ին լրացավ նշանավոր վիրաբույժ-ուռուցքաբան, Հայաստանի Հանրապետության (<<) Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Հայրո Միխայիլի Գալստյանի ծննդյան 80-ամյակը: Նայելով հոբելյարի մեծարման երեկոյի հյուրերի ուրախ դեմքերին՝ ինձ չէր լքում հավաքվածների զգացումների եռամիասնության մասին միտքը, որն արտացոլվում էր նրանց աչքերում: Դա Հայրո Միխայիլովիչի հետ հոգեհարազատության զգացումն էր, երախտագիտության զգացումը նրան անժանոթ հազար-հազարավոր կյանքերի փրկության համար, ինչպես նաև Հայրենիքի հանդեպ անկատար մնացած պարտքի զգացումը, որն զգում ես մի մարդու հետ շփվելիս, որի կյանքը արարման լուռ սխրանքի կենդանի մարմնավորումն է: Կսահմանափակվեմ միայն պրոֆեսոր Հ.Մ. Գալստյանի՝ նրա կենսական սիմֆոնիայի լեյթմոտիվի մասին խոստովանությամբ՝ արդարություն, հանդուրժողություն, երախտագիտություն և արժանապատվություն: Այո, հենց այսպիսին է Հայրո Միխայիլովիչի կենսափոխակերպությունը, որը, համոզված եմ, կանխորոշում է նրա ճակատագիրը նաև գալիք տասնամյակների համար, ինչի մասին բավական պատկերավոր արտահայտվել է ինքը՝ հոբելյարը. «Այսօր օգոստոսի 31-ն է, վաղը սկսվում է աշունը, սկսվում է տերևաթափը, բայց ծառերը կանգնած են շարունակում իրենց կյանքը: Տարիների հետ մենք մեծանում ենք, և ինչպես տերևներն են ընկնում ծառերից, այնպես էլ մեզ լքում են մեր մերձավորները, բայց մենք շարունակում ենք ապրել կանգնած...»: Եվ ոչինչ, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս իշխանությունը պետական մակարդակով չնշեց Ձեր փառապանծ 80-ամյա հոբելյանը, նրանցից այլ վերաբերմունք չես էլ սպասի, քանի որ նրանք տեղյակ չեն ոչ արդարության զգացումին, ոչ հայ ժողովրդի արժանի զավակների հանդեպ երախտագիտության զգացմանը: Զէ՞ որ Դուք, Հայրո Միխայիլովիչ, հպարտ կանգնած, անսասան ծառ եք, որ Ձեր 60-ամյա արարմամբ վերածնել եք կյանքեր հազար-հազարավոր հայ օջախներում:

ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԿՅԱՆՔ ՁԵՁ, ՀԱՅՐՈ ՄԻՒՆՅԻՆ ԳԱՄՏՅԱՆ:

Ստեփանակերտում Փաշինյանի բացահայտ սադրիչ ելույթը Ադրբեյջանի կողմից Արցախի դեմ հնարավոր ագրեսիայի համար նպաստավոր տեղեկատվական ֆոն է ստեղծել: Եվ իր այդ բարեհիմարությունը նա մտադիր է կրկնել Լոս Անջելեսում: Իսկական մտադրությունը մեկն է. ձեռք բերել իբր ողջ հայության աջակցությունը Հայաստանի և Արցախի վերամիավորման գործում: Իսկ արկածախնդրության արյունալի հետևանքները ու դրա պատասխանատվությունը նա կջանա դնել ողջ հայ ժողովրդի ուսերին: Ավաղ, Փաշինյանը սրանով գրոյի հավասարեցրեց ԵԱՀԿ Մինսկի խմբի գոյությունը:

Մինչ հողվածը սկսելը՝ ինձ համար կարևոր էր, որ ինքս մանրագնին և անաչառ կերպով հասկանայի, թե ինչ է իրականում կատարվում մեր օրերում Հայաստանում: Ուշադիր վերլուծելով ինտերնետ պարբերականների հրապարակումների, Facebook-յան ուղիղ եթերների, դրանց արձագանքների և քաղաքական թեմատիկային անդրադարձող հանրաժանոթ հեռուստահաղորդումների որքան հնարավոր է լայն ընդգրկում, ես ամենահակասական զգացողություններ ունեցա: Գերակշռողը ինչ-որ վիրտուալ աշխարհի զգացողությունն էր, որում ահա արդեն 16 ամիս գտնվում է Հայաստանը: Այդ աշխարհը ներառում է թե՛ ափսոսանք, թե՛ ցասում այն փաստի գիտակցումից, որ հնագույն հայկական քրիստոնեական քաղաքակրթությունը, հայ ժողովուրդն այսքան անպաշտպան են և հայտնվել են ազգի այլասերման, նրա քրիստոնեական ընտանեկան ավանդույթների սասանման որքան պրիմիտիվ, նույնքան էլ նենգ տեխնոլոգիաների ազդեցության ներքո: Արդյունքում՝ մեր քաղաքացիներից շատերը դարձել են այն հայեցակարգի զոհերը, որն ամբողջովին ջնջում է հանրային ելույթներում կարծիքների թույլատրելի շրջանակի առկայությունը, արհամարհում հանրային բարոյականության նորմերը, հայեցակարգ, որը հայտնի է որպես «Օվերթոնի պատուհան»: Երբ, օրինակ, հայկական ընտանիքի ավանդույթների տեսակետից անընդունելի բաները, որոնք ժամանակակից տերմինաբանությամբ կազմում են ԼԳԲՏ հանրույթի էությունը, արդեն դադարում են արմատական լինել և մատուցվում են հայ հանրությանը որպես միանգամայն ընդունելի իրողություններ: Ավելին, Հայաստանի գործող իշխանությունները ցանկանում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի միջոցով օրինականացնել պետականությունը խափանող այդ սողոմական դրսևորումները՝ դրանով իսկ դրանց հաղորդելով մի ինչ-որ խելամտություն՝ իրենց իսկ սեփական «թավշյա հեղափոխական բարոյականության» տեսակետից, որոնց հետևում են Հայաստանում 2018-ի ապրիլ–մայիսի պետական հեղաշրջման (այսուհետ՝ պետական հեղաշրջում) գլխավոր իրականացնողները: Այո, այո, հարգելի ընթերցող, իմ այս պնդումը հիմնված է արդեն ս.թ. աշնանը ՀՀ Ազգային ժողովի նիստում, այսպես կոչված, Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու ցանկության վրա, որը հմտորեն ազդարարվում է որպես կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության կանխման ու

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

դրա դեմ պայքարի կոնվենցիա: Ընդ որում՝ բավական խորհրդանշական է, որ այդ կոնվենցիայի «ամենալուսավորյալ» կողմնակիցները ԼԳԲՏ հանրության, ասել է թե՛ պետական հեղաշրջման հիմնական շարժիչ ուժերից մեկի ներկայացուցիչներն են, որոնք այժմ իրենց միանգամայն արտոնյալ են զգում ՀՀ իշխանական կառույցներում: Այն, որ Ստամբուլյան կոնվենցիան երկհատակ ճամպուրկ է, կասկածից վեր է, որտեղ, ինչպես դիպուկ նկատել է բուլղար հոգեբույժ և աստվածաբան Նիկոլայ Միխայլովը, երրորդ սեռի և գլոբալ սեռական հեղափոխության գաղափարաբանության հետ ասոցիացիաները գտնվում են ոչ թե ընթերցողների, այլ գրողների ուղեղներում: Եվ միանգամայն սպասելի էր, որ Հայ Առաքելական եկեղեցին վճռականորեն դատապարտեց Ստամբուլյան կոնվենցիայի փաստացի էությունը: «Բռնության, ինչպես և ցանկացած չարիքի կանխարգելումը և դրա դեմ պայքարը պետք է իրագործվեն այնպիսի միջոցառումներով, որոնք պատճառ չեն հանդիսանա նոր մեղքի ու նոր չարիքի: Այս առումով խիստ մտահոգիչ ու անընդունելի են կոնվենցիայում առկա որոշ գաղափարներ ու հասկացություններ... Հիշյալ սահմանումները (կոնվենցիայի 4-րդ հոդված, 3-րդ բաժին – Ա. Գ.), փաստորեն, ճանաչում են անձի՝ անգամ սեփական «սեռը ընտրելու ազատության» իրավունքը: Մարդու իրավունքների և ազատությունների քրիստոնեական ուղղափառ ընկալումը բացառում է մարդու աստվածաստեղծ ինքնության աղճատումը կամ փոփոխությունը: Նկատի առնելով, որ ազգային-հոգևոր մեր ինքնության և անվտանգության շահերի տեսանկյունից կոնվենցիայում առկա են խիստ մտահոգիչ դրույթներ ու հասկացություններ՝ հորդորում ենք հայրենի իշխանության պատասխանատու մարմիններին գերծ մնալ փաստաթղթի վավերացումից», – ասվում է Հայ Առաքելական եկեղեցու (այսուհետ՝ ՀԱԵ) եպիսկոպոսների և թեմակալ առաջնորդների 2019թ. հուլիսի 26-ի հայտարարությունում: ՀԱԵ այսքան սկզբունքային և իմաստուն գնահատականն այսօրվա Հայաստանում շատ թանկ արժե: Ընթերցողներին հիշեցնենք, որ, թերևս, Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման ամենաակտիվ ջատագովը Հայաստանում՝ տխրահռչակ Լարա Ահարոնյանը, Ն.Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հոգաբարձուների խորհրդի անդամ է: Զգոնությունը չկորցնելով՝ գոհունակությամբ ցանկանում են նշել, որ պետական հեղաշրջումից հետո ՀԱԵ-ն և անձամբ Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին հեղինակագրվելու բոլոր ստոր փորձերը, ավելի պարզ ասած, «գրողի ծոցն» անցան: Այս պարագայում «գրող» ասելով նկատի ունեն Նիկոլ Վովակիչի կողմից քնքշորեն փայփայվող «Կյանքի խոսք» տոտալիտար կրոնական աղանդը, ԼԳԲՏ հանրությոնը և, մեղմ ասած, սատանայական խառնամբոխի ներկայացուցիչներին: Խառնամբոխ, որն իր նսեն և ուխտադրուժ հարձակմամբ 2018-ի հուլիսին ներխուժեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարան՝ վերջնագրեր ներկայացնելով Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին, որը մեծ հարգանք է վայելում ՀԱԵ

խկական հետևորդների, աշխարհի ամբողջ հայության շրջանում: Նիկոլ Փաշինյանի թիմի նորահայտ անաստվածները, ավելի շուտ հենց ինքը՝ Փաշինյանը, հավանաբար, սթափ ծանրութթև անելով պառակտումը (որը նրանց հաջողվել էր մտցնել հայ հասարակությունում) Հայ Առաքելական եկեղեցու վրա տարածելու ողջ վտանգը, ժամանակավորապես հրաժարվեցին իրենց սատանայական մտահղացումն իրականացնելուց: Դե ինչ, այնուամենայնիվ, խոստովանենք, որ պարզևը գտավ իր հակահերոսին: Այսպես, «Նոր Հայաստան, նոր հայրապետ» նախաձեռնության ղեկավարներից մեկը՝ Կարեն Պետրոսյանը, իր հակաեկեղեցական նկրտումներից ընդամենը մի քանի օր հետո՝ 2018թ. հուլիսի 12-ին, նշանակվեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրիի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, պատասխանելով իր հետագա հասարակական գործունեության վերաբերյալ հարցին, հպարտորեն ասաց. «Իհարկե, կշարունակեմ պարտականություններիս կատարումը (նկատի ունի ՀԱԵ և նրա հայրապետի հեղինակագրկման գծով անպատկառ պարտականությունները – Ա. Գ.): Ես դրա համար բավական ժամանակ ունեմ (ի դեպ, մեր հակահերոսին՝ սատանայապաշտին, այս պատասխանի անկեղծության մեջ դժվար է կշտամբել. եթե «Ժողվարչապետը» ժամանակ ունի մեկ ու քառորդ ժամկա ընթացքում Երևանի քաղաքապետի հետ ջուր ծեծել Հայաստանի՝ աղբի մեջ կորած մայրաքաղաքում մաքրություն մտցնելու հարցերի շուրջ, կամ էլ հասարակական հիմունքներով աշխատանքային ժամին զբոսաշրջիկների ուղեվարի դեր ստանձնել Երևանում ավտոբուսով շրջագայող զբոսաշրջիկների համար, ապա, բնականաբար, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն աշխատանքից ազատ ժամանակ կունենա՝ ու կունենա՝): Գյումրիից Երևան ճանապարհն այնքան էլ երկար չէ (մանավանդ եթե ձրի ես երթեկում, պետական մեքենայով – Ա. Գ.), ազատ ժամանակ ես Երևանում կշարունակեմ աշխատանքս «Նոր Հայաստան, նոր հայրապետ» նախաձեռնության շրջանակում»:

Թող ների ինձ հարգելի ընթերցողը մերօրյա հայկական իրականության անհեթեթության դրսևորումներից մեկի այսքան մանրամասն պարզաբանման համար: «Ժողվարչապետի» բացարձակ, ընդ որում՝ վտանգավոր անպատասխանատվության հերթական դրսևորումը դարձավ նրա ելույթը ս.թ. օգոստոսի 5-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում: Ն.Փաշինյանի այս ելույթն այլ կերպ, քան հմուտ սադրանք չես անվանի: Որպեսզի ընթերցողները տպավորություն չստանան, թե գնահատականս կանխակալ է, որոշ «մտքեր» մեջբերեմ հանրահավաքում նրա այդ ելույթից: Այսպես, խոսելով այն մասին, որ Հայաստանը հանդես է գալու որպես Արցախի Հանրապետությունում ազատ ընտրությունների անցկացման երաշխավոր, Նիկոլ Վովակիչը նախազգուշացրեց միայն իրեն հայտնի այն բոլոր խմբերին, որոնք կփորձեն «ներգրավել արտաքին ուժերին

ներհայկական խնդիրների լուծման համար, դրանք կարժանանան կոշտ դիմակայության հայ ժողովրդի և նրա լեզվատիմ կառավարության կողմից»։ Սրանով իսկ Ն.Փաշինյանն, ըստ էության, ուղիղ տեքստով հայտարարում է այն մասին, որ մինչ այժմ Արցախի Հանրապետությունում (նախկինում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում) տեղի ունեցած բոլոր ընտրություններն ազատ չեն եղել։ Դե ինչ, կարելի է շնորհավորել հակադարաբաղյան ադրբեջանական քարոզչության գաղափարախոսներին, քարոզչություն, որն արդեն գրեթե երեսուն տարի հայտարարում է «Արցախի Հանրապետության իշխանությունների ոչ լեզվատիմ լինելու» մասին, ընդ որում՝ միջազգային հանրության համար այնքան էլ էական չէ, թե ում և ինչ նկատի ունեն այդ ձևակերպմամբ։ Երկրորդ նվերն ադրբեջանական քարոզչությանը թեզիսն է «արտաքին ուժերին ներհայկական խնդիրների լուծմանը ներգրավելու» մասին, որը նորից կասկածի տակ է դնում Արցախի ինքնորոշված ժողովրդի այժմ արդեն ազատ կամարտահայտումը։ Այսպես, հանրահավաքի ժամանակ Փաշինյանի խոսքում որպես երկրորդ նշված կոնսենսուսում ասվում է. «Բոլոր այն ուժերը, ովքեր կփորձեն օտար ուժերի ներգրավել ներհայկական, ներհայաստանյան հարցեր լուծելու համար, բոլոր այն ուժերը, ովքեր մեր երկրում հանդես կգան որպես օտարերկրյա շահերի ներկայացուցիչ, պիտի արժանանան և կարժանանան հայ ժողովրդի և նրա լեզվատիմ ներկայացուցիչ Հայաստանի կառավարության հակադեցությանը»։ Խորանալով Ստեփանակերտի հանրահավաքում Նիկոլ Վոլակիչի արտահայտած այս տողերի մեջ՝ ոչ առանց հիացմունքի, բայց հարկադրված փաստում են, որ դեմագոգիա էլ կա, դեմագոգիա էլ, որ պոպուլիզմի գոհարները, որոնք օրգանապես բնորոշ են պետական հեղաշրջման առաջնորդներին, իրենց տեսակի մեջ ունիկալ են։ Մտածեք միայն, հարգելի ընթերցող, որ ներքին գործերին օտարերկրյա միջամտության կոշտ հակադեցության մասին բարբառում է մեկը, որին իշխանության են բերել, հիմնականում, հենց այդ օտարերկրյա շահերի ֆիգուրանտները (Սորոսի ֆոնդի և ամեն տեսակ դեմոկրատական ինստիտուտների տարատեսակ լափակեր հասարակական կազմակերպությունները, որոնք արտահայտում են անդրօվկիանոսյան գերտերության առաջատար կուսակցությունների՝ գունավոր հեղափոխությունների գլխավոր սերմանողների շահերը, ինչպիսիք են «Կյանքի խոսք» տոտալիտար կրոնական աղանդը, ԼԳԲՏ հանրույթը և դիվերսիոն այլ թափթիուկներ), որոնք շռայլորեն ֆինանսավորվում են արտասահմանից։ Ակամա մտաբերում են հայ նշանավոր գրող Դերենիկ Դեմիրճյանի «Հայը» էսսեի տողերը. «Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես։ Իր չափը չափազանցն է. զարմանալի՝ հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է»։ Ինչ վերաբերում է «Ֆավորիտին», չէ՞, հարգելի ընթերցող, Գրիգորի Պոստոմկինի՝ Եկատերինա II-ի ֆավորիտի մասին չէ խոսքը, այլ մեր Նիկոլ Վոլայի Փաշինյանի՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի (և ոչ միայն), «Կյանքի խոսք» տոտալիտար կրո-

նական աղանդի, ԼԳԲՏ հանրությանի և Հայաստանի նախկին իշխանություններից հուսահատվածների, կարիքից ու չիրականացած հույսերից կամագրկված քաղաքացիների ֆավորիտի: Հարգելի ընթերցող, տեսեք, թե 2001թ. մայիսի 22-ին իր «Հողը սիրելով են պահում, իմացե՛ք» հոդվածում՝ «Եվ ուրեմն, ինձ զարմացնում է, որ մեր երկրում դեռ կան մարդիկ, ովքեր իյուզգիաներ ունեն գրավյալ, եթե կուզեք՝ ազատագրված, եթե կուզեք՝ օկուպացված տարածքների վերաբերյալ: Եկեք նրբանկատորեն շրջանցենք հարցի ամենացավոտ կողմը և հարցը դիտարկենք խաղի կանոնների տեսակետից: Ես չեմ ընդունում այն տեսակետը, թե լավ դիվանագիտությունը կարող է այնպես անել, որ տարածքները չվերադարձնենք Ադրբեջանին... Ախր, էս երկիրը (նկատի ունի Հայաստանի Հանրապետությունը – Ա. Գ.) տեր չունի, և մենք, որ պետք է լինենք այս երկրի տերը, մերը թողած ուզում ենք տեր լինել ուրիշին», այսպիսի տողեր գրողը ինչ է ասում 18 տարի անց, ս.թ. օգոստոսի 5-ին Ելույթ ունենալով Ստեփանակերտի հանրահավաքում. «Շատերը հարցնում են՝ իսկ ինչո՞ւ Արցախի մասին ոչինչ ասված չէ: Պատասխանը շատ պարզ է, որովհետև Արցախը Հայաստան է, և վերջ»:

Ի դեպ, «Ժողվարչապետը» այսպիսի ծայրահեղությունների մեջ էր ընկնում նաև այն ժամանակ, երբ խոսում էր Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) Հայաստանի անդամակցության թեմայի մասին: Այսպես, դեռևս ՀՀ ԱԺ պատգամավոր եղած ժամանակ՝ 2017-ին, «Ելք» խմբակցությունը Ն.Փաշինյանի գլխավորությամբ ՀՀ ԱԺ-ում նախաձեռնեց Եվրասիական տնտեսական միությունից Հայաստանի Հանրապետության դուրս գալու հարցի քննարկումը: Այն ժամանակ Նիկոլ Վոլակիչն ասաց, որ Հայաստանը ԵԱՏՄ է մտել «ոչ թե կամովին, այլ հարկադրաբար»: Այնուհետև, «հավասարակշռություն պահպանելով ծայրահեղություններում», Ն.Փաշինյանը ՀՀ վարչապետ լինելուց արդեն մոտ մեկ տարի անց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մոսկովյան կենտրոնատեղիում ասաց. «Եթե մենք կարծում ենք, որ դա սխալ որոշում է, դա չի նշանակում, որ սխալի շտկման համար պետք է ուղիղ հակառակ քայլեր կատարենք»: Սիա այսպիսի բաներ, ինչպես ասում են՝ «իմացի՛ր մերոնց» (մերոնց ասելով՝ նկատի ունեն ներկայիս հայկական «Օլիմպոսի» երկդիմի նորահայտ Յանուսներին): Իհարկե, «Ժողվարչապետի» քաղաքական նախաձեռնությունների գազաթնակետը պետք է համարել ս.թ. օգոստոսի 12-ի կոչը, որը հնչել է նրա Facebook-յան էջի ուղիղ եթերից. «Վաղուց էի ուզում հանդիպել Լոս Անջելեսում ապրող մեր հայրենակիցների հետ ամենահայկական (Միացյալ Նահանգների) քաղաքում: Մեր շատ հայրենակիցներ սպասում էին և սպասում են դրան (ավելին, իրենց տեղը չեն գտնում քաղաքական կեղծ մեսիային սպասելիս – Ա. Գ.): Անցած տարի այդ հանդիպումը կազմակերպել, երբ ես Նյու Յորքում էի, չստացվեց իմ (աշխատանքային) գրաֆիկի և այլ հանգամանքների պատճառով, – ասել է Նիկոլ Վոլակիչը և շարունակել, – հույս ունեմ, որ մենք կքննարկենք նաև այն օրակարգը, որի մասին խոսեցինք

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Ստեփանակերտում: Կարծում եմ, կկազմակերպենք հզոր և շատ ջերմ հայկական հավաք, մի քաղաքում, որը շատերն իրավացիորեն անվանում են սփյուռքի (հայկական) «մայրաքաղաք»: Այդ քաղաքը «թավշյա հեղափոխության (իմա՝ պետական հեղաշրջման – Ա. Գ.)» կարևորագույն կենտրոններից մեկն է դարձել»:

Բացառապես բարի մղումներով՝ ԱՄՆ իշխանություններին իրենց երկիր Նիկոլ Վոլակիչի կողմից «թավշյա հեղափոխության» արտահանման հնարավոր փորձերից զգուշացնելն իմաստ չունի, թեկուզև այն պարզ պատճառով, որ այնտեղ չկա... ամերիկյան դեսպանություն: Դե ինչ, մի բանում Նիկոլ Վոլակիչն իրավացի է, դիցուք՝ խոսելով այն մասին, որ «այդ քաղաքը դարձել է «թավշյա հեղափոխության» կարևորագույն կենտրոններից մեկը»: Բավական է հիշել, թե ինչպես իրական ժամանակի ռեժիմում, շուրջօրյա, «Ազատություն» ռադիոյի հայկական բաժինը, որը գոյությունը պահում է ամերիկյան հարկատուների փողերով, ուղիղ տեսականություններ կազմակերպեց Երևանի և Լոս Անջելեսի միջև, որոնց ընթացքում «հայ հեղափոխականներին» իրենց կրթոտ ելույթներով ոգևորում էին լոսանջելեսահայերը, որոնք, հավանաբար, վստահ էին, որ իրենց գործողություններն արժանանալու են ԱՄՆ իշխանությունների հավանությանը: Այս առնչությամբ նշենք, որ Նիկոլ Վոլակիչի կոչի հենց հաջորդ օրն իր ծանրակշիռ խոսքը՝ հաջակցություն լոսանջելեսահայերի հրավերի՝ ս.թ. սեպտեմբերի 22-ին ելույթ ունենալ Լոս Անջելեսի Գրանդ պարկում, ասաց «անհաշտ» խորհրդարանական ընդդիմության ոչ անհայտ ներկայացուցիչ, «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավոր Արման Բաբաջանյանը, որը Facebook-ի իր էջում ուղիղ եթերով հայտարարեց. «Լոս Անջելեսի իմ հայրենակիցներ, կոչ եմ անում ձեզ մի կողմ դնել ձեր բոլոր տարածայնությունները Հայաստանի իշխանությունների հետ (թե ինչում է Ա.Բաբաջանյանը տեսել այդ տարածայնությունները, ինչպես Վինի Թուխի համար՝ մեծ, մեծ գաղտնիք է, հավանաբար, տեղեկություն ունենալով պետական փողերով ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հաճախակի ուղևորությունների արդյունքների մասին – Ա. Գ.) և անհամաձայնությունը, ու մեկ մարդու պես մասնակցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը, որը տեղի կունենա 2019թ. սեպտեմբերի 22-ին Լոս Անջելեսի Grand Park-ում»:

Հասկանալու համար, թե այդ որ «սկզբունքային» հարցերում է «Լուսավոր Հայաստանը» ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանի «Իմ քայլը» խմբակցությանը, հիվանդ երևակայություն պետք է ունենալ: Մի խոսքով՝ ուզում ես բացականչել Նաիրա Սարգսյանի անկեղծ խոսքերը. «Դիմակները պատռված են, պարոնայք: Ինչ-որ մեկի խիղճն, ավաղ, մաքուր չէ: Կեղծավորությունն է պարահանդեսի տերը...», իհարկե, այս սրտահույզ խոսքերը գրվել են շատ ավելի ողբերգական օրվա առթիվ՝ հայ ժողովրդի ցավի օրը, երբ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի

օրը Թուրքիայում նշում էին Չանաքկալեի ճակատամարտի (որը հայտնի է որպես Գալիպոլիի ճակատամարտ) 100-ամյակը:

Հայաստանի ներքաղաքական կյանքում ստեղծված իրավիճակն ավելի ամբողջական պատկերացնելու համար, ըստ իս, հարկ է անպայման ուշադրություն դարձնել չդադարող տեղեկատվական պատերազմին, որը Հայաստանի իշխանությունները, ոչ առանց դրսից արվող հուշման, պետական հեղաշրջման առաջին օրվանից հայտարարեցին սեփական ժողովրդին: Ոչ, հարգելի ընթերցող, խոսքը Հայաստանի բնակչությանը գալիք սերունդների համար «թավշյա հեղափոխության» «բախտորոշ» նշանակության մշտական հիշեցմամբ հիմարացնելու մասին չէ, խոսքը նաև Ստեփանակերտում օգոստոսի 5-ին Ն.Փաշինյանի հնչեցրած ֆանտաստիկ հաջողությունների մասին չէ, որոնք Հայաստանը դատապարտված է իրականացնել մինչև 2050 թվականը: Խոսքն այլ բանի մասին է: Ծանոթանալով տասնյակ ինտերնետ պարբերականների քաղաքական թեմաներով հրապարակումներին և վերլուծելով հեռուստահաղորդումները, գալիս ենք այն եզրահանգման, որ Հայաստանի իշխանությունների համար գոյություն ունեն միայն մի քանի խնդիրներ, որոնց մեջ գերական, անկասկած, մեր քաղաքացիների գիտակցության մեջ ի սկզբանե ոչ ճիշտ ինֆորմացիա ներարկելն է այն մասին, որ 2008թ. մարտի 1-ի (այդ օրը ՀՀ-ում նախագահական ընտրություններից հետո, ոստիկանության և առաջին նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի կողմնակիցների միջև, որոնք համաձայն չէին ընտրությունների արդյունքների հետ, տեղի ունեցած բախումների հետևանքով Երևանի կենտրոնում զոհվեցին մեր 10 համաքաղաքացիներ, որոնցից 8-ը հանրահավաքի մասնակիցներ էին, 2-ը՝ ոստիկաններ, իսկ շուրջ 300 հոգի տարբեր մարմնական վնասվածքներով հասցվեց հիվանդանոցներ) ողբերգության 10 զոհերի արյունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ, Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խղճին է: Ընդ որում՝ վերջին ամիսների բնութագրական միտումը մեր քաղաքացիների գիտակցության մեջ մեկ այլ վտանգավոր ապատեղեկատվության սերմանումն է այն մասին, որ հեղված արյունը Արցախի հերոս, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանի (Օգանովսկու) և Արցախի Հանրապետության զինված ուժերի մոտ 200 սպաների խղճին է, որոնք Լեռնային Ղարաբաղից ուղարկվել էին Երևան՝ ցուցարարների հետ հաշվեհարդար տեսնելու համար: Նշենք, որ այս վարկածն այնքան ցանկալի էր Ադրբեջանի և ոչ միայն ու ոչ այնքան, համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի համար, որ դրա արծարծմանը, այդ ողբերգական իրադարձություններից 11 տարի հետո, միացավ նաև բրիտանական BBC հեռուստառադիոկորպորացիայի ռուսական ծառայությունը, որը 2019թ. օգոստոսի 7-ի եթերից հետո հրապարակեց իր բացառիկ «հետաքննությունը»՝ «Ո՞վ գնդակահարեց ցուցարարներին Երևանում 2008 թվականին. քննությունը մատնանշել է Ղարաբաղից եկած ջոկատը» վերնագրով: Այսպես, կարդալով այդ վտանգավոր հրապարակումը՝ առաջին բանը, ինչի

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

մասին մտածում ես, այն է, որ Հայաստանի թշնամիները, հայտնվելով ցեյտնոտում, անգուսպ շտապում են: Այսպես, մի կողմ նետելով թվում է, թե քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկը, որն է անմեղության կանխավարկածը (ընթերցողներին հիշեցնենք, որ այս սկզբունքի էությունն այն է, որ անձն անմեղ է համարվում, քանի դեռ հանցագործություն կատարելու նրա մեղքը չի ապացուցվել դատարանի օրենքի ուժ ստացած դատավճռով), BBC-ն բազմանշանակ և անվերապահորեն հայտարարում է (մի ոմն Գրիգոր Աթանեսյանի միջոցով). «Նյութերից մենք իմացանք, որ քննիչները կարծում են. ցուցարարների դեմ կրակ բացեցին ղարաբաղյան ուժայինները, որոնց հրամանատարն էր գեներալ Կարապետյանը (գործով անցնում է որպես վկա), նրա ջոկատը տեղակայվել էր նախագահի աշխատակազմի նկուղում, ջոկատ այցելում էին երկու նախագահները՝ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը»:

Իսկ հիմա համեմատենք Ն.Փաշինյանի ս.թ. օգոստոսի 5-ի Ստեփանակերտի ելույթի՝ մինչ այս բերված հատվածը ս.թ. մայիսի 21-ին իր իսկ հնչեցրած ելույթի մտքերի հետ, որն իբր նվիրված էր դատական համակարգի բարեփոխումներին: Սակայն ընդարձակ մեջբերումներ չենք կատարի Նիկոլ Վովակիչի խոսելացավի ու մերձդատական մտավարժանքից, նշենք միայն, որ նրա ելույթի մեխը հայտարարությունն էր այն մասին, որ Հայաստանում կան կոնկրետ ուժեր, որոնք փորձում են պառակտում մտցնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակիչների միջև: Նրա խոսքով՝ «կոռումպացված համակարգի որոշ ներկայացուցիչներ օգտագործում են իրենց անձնական կապերն Արցախում կառավարության և վարչապետի դեմ քարոզչության համար»: Հետո ավելի հետաքրքիր է:

«Ուսումնասիրելով բոլոր փաստերը՝ ես այս ամենի հետևում տեսնում եմ դավադրություն նոր պատերազմ սանձազերծելու նպատակով և, գուցե, անգամ որոշ տարածքներ հանձնել (իսկապես, տեղին կլինի ասել՝ «գող, սիրտը դող» – Ա. Գ.)՝ պատասխանատվությունը դնելով երկրի կառավարության վրա: Այս գործունեության մեջ պետական դավաճանության նշաններ եմ տեսնում: Որպես Հայաստանի վարչապետ, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար կղիմեմ ամենակոշտ միջոցների՝ նման դավադրությունները կանխելու համար», – ահեղ հայտարարել է Ն.Փաշինյանը:

Կարելի է այլ մեջբերումներ էլ կատարել Նիկոլ Վովակիչի ու նրա թավշեհեղափոխական տրուբադուրների ելույթներից, բայց դրանց ինտեգրալ էությունը նույնն է՝ մասնատել հայ ժողովրդի անսասան եռամիասնությունը՝ Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և հայկական Սփյուռքի: Այ սրանում է Նիկոլ Փաշինյան և K⁰-ի ուղեվարների դավադրության բովանդակությունը, իսկ նրանց վերջնանպատակը կառավարվող (բնականաբար՝ իրենց կողմից) քաոսի ստեղծումն է Ռուսաստանի հարավային մատույցներում հեռահար նպատակներով, որոնց մասին քանիցս արդեն գրել եմ (տե՛ս REGNUM, «Հայաստան. մի տրտնջացեք ձեր

կառավարությունից, պարզապես փոխեք այն», «Հապաղումը բռնապետությունը վերացնելու հարցում սպառնալիք է Հայաստանի անվտանգությանը» և այլն): Նշեն, որ այս թեմայի վերաբերյալ հրապարակումներին ընթերցողը կարող է ծանոթանալ REGNUM տեղեկատվական գործակալությունում՝ Արտաշես Գեղամյանի հեղինակային էջում:

Թող ների ինձ հարգելի ընթերցողը այսքան ընդարձակ տեղեկության համար՝ ի հաստատումն տեղեկատվական պատերազմի միայն մեկ ուղղության, որը սանձազերծել են Հայաստանի ներկայիս իշխանությունների արևմտյան տիկնիկավար-ստրատեգները հայոց պետականության և հայ ժողովրդի դեմ:

Տեղեկատվական պատերազմի երկրորդ ուղղությունը մեր քաղաքացիների գիտակցության մեջ այն կեղծ պնդման հետևողական սերմանումն է, թե Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում որևէ շոշափելի դրական փոփոխության բացակայությունը նախկին իշխանությունների չարամիտ նկրտումների ու դավերի, ինչպես նաև «Ժողովրդի վստահությունը չվայելող դատական համակարգի» հետևանքն է: Ընդ որում՝ նմանատիպ հրապարակումների ողջ ուղղվածությունը ծառայում է միայն մեկ նպատակի՝ հիմնավորել «Ժողվարչապետի» որքան պրիմիտիվ, նույնքան էլ վտանգավոր ձևակերպումը, որի համաձայն՝ հայ հասարակությունը բաժանված է «սպիտակների», այսինքն՝ հեղափոխականների, հանձինս Նիկոլ Վոլակիչի, նրա կողմնակիցների՝ մի կողմից, և «սևերի»՝ ռևանշ տենչացող ՀՀ նախկին իշխանությունների: Հավանաբար, իրականում գոյություն ունեցող երկնագույններին, որոնք քիչ չեն իշխանական կառույցներում, Նիկոլ Վոլակիչը՝ իրենց թույլտվությամբ, դասել է «սպիտակների» շարքում: Խոստովանենք, որ որքան հմտորեն, նույնքան էլ նպատակասլաց փորձում են հայ հասարակությանը ստիպել Փաշինյանի («Իմ քայլի» իր թիմով) և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության միջև (Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, Ռոբերտ Քոչարյանի հետ միասին) ընտրություն կատարելուն: Այնպես որ, «կոնսենսուս մինուս մեկ» բանաձևը, որը ճիշտ ժամանակին հնչեցրեց Հայաստանի երկրորդ նախագահին իր երրորդ ձերբակալությունից մեկ օր առաջ, ըստ էության, ՀՀ-ին և Արցախի Հանրապետությանը ներկայում Հայաստանում իշխանությունը զավթած հինգերորդ շարայան կողմից հայտարարված տեղեկատվական պատերազմին դիմակայելու համարժեք բանաձևն է: Ընդ որում՝ տխուր մտորումների տեղիք է տալիս նաև Ռոբերտ Քոչարյանին աջակցող և Սերժ Սարգսյանին լոյալ տեղեկատվական ռեսուրսների տերերի քաղաքականությունը, որոնք, իրենց ինտերնետ պարբերականները և հեռուստաթերը տրամադրելով միևնույն քաղաքական գործիչներին, որոնց հանդեպ ոչ մի պահանջ չկա, ջուր են լցնում տեղեկատվական պատերազմի՝ հասարակությունը «հեղափոխականների» և «ռևանշիստների» բաժանման գծով համակարգողների ջրաղացը: Բայց սա այլ վերլուծության թեմա է:

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական առօրյայի վերոնշյալ փաստերը բավական համոզիչ կերպով ի ցույց են դնում Հայաստանի ու Արցախի Հանրապետության խոցելիությունը տեղեկատվական, ուրեմն և ազգային անվտանգության տեսակետից: Ընդ որում՝ հակահայկական հիստերիայի սանձազերծման գործում էական օգնություն են ցուցաբերում նաև արևմտյան ստրատեգներին ենթակա, իրենց ռուսատյաց ուղղվածությամբ ոչ անհայտ հայկական մաս-մեղիաները: Այսպես, 1in. am ինտերնետ պարբերականը, որի գլխավոր խմբագիրն է վերոնշյալ տխրահռչակ (օրերս իրեն որպես Նիկոլ Վոլակիչի դաշնակից բացահայտած մոլի ռուսատյաց) Արման Բաբաջանյանը, որը ս.թ. օգոստոսի 11-ին 1in. am ինտերնետ պարբերականի կայքում տեղադրել է հոդված «Պատրուշևը գալիս է Ստեփանակերտի ելույթի հետքերով» վերնագրով, որում, մասնավորապես, ասվում է. «Համենայն դեպս, ակնառու է, որ օգոստոսի 5-ի ելույթում (խոսքը Ստեփանակերտում Փաշինյանի ելույթի մասին է – Ա. Գ.) հնչել են շրջադարձային արտահայտություններ, որոնք առերևույթ առնչվելով արցախյան հարցին, համահայկական օրակարգին, խորքային առումով վերաբերել են անվտանգության ռեգիոնալ համակարգին՝ դրա լայն իմաստով ու շրջանակով: Իսկ դա արդեն միջազգային ընդգրկման հարց է, և այդ իմաստով Ռուսաստանի հետաքրքրությունը հատկանշական է մի քանի առումով: Նախ՝ ռուս-թուրքական և ռուս-ադրբեջանական հարաբերությունների կառուցվածքի և Կովկասի անվտանգության համակարգի ռուս-թուրքական «դաշնակցության» առումով: Գործնականում, Նիկոլ Փաշինյանի ելույթում արվող շեշտադրումները ուղղակիորեն դնում են այդ դաշնակցության ապագայի հարցը՝ Ռուսաստանը կա՛մ Հայաստանի հետ է հայկական անվտանգության համակարգի պաշտպանության շրջանակում, կա՛մ ռուս-թուրք-ադրբեջանական շրջանակում է՝ Հայաստանի դեմ»:

Հոդվածի հեղինակը ծանրամիտների համար անկեղծացել է և բացել Նիկոլ Վոլակիչի սադրիչ ելույթի իսկական էությունը: Իսկ որ Ստեփանակերտում նրա ելույթի գլխավոր շեշտադրումները պատրաստվել էին անդրօվկիանոսյան տիկնիկավարների կողմից, սրանում կասկածելու հարկ չկա, քանի որ, չնայած իր ողջ տնայնագործ արտիստիզմով հանդերձ, զգացվում էր, որ Փաշինյանը նյարդայնանում է և հնչեցնում ոչ իր մտքերը: Այդ սկզբից ևեթ անհեթեթ եզրահանգումներով, որոնք անտեսում են ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության փաստն իսկ, ինչպես նաև «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին 2013թ. հունիսի 25-ի պայմանագրի» առկայությունը, էլ չեմ ասում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 2015թ. դեկտեմբերի 23-ի «Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի ստեղծման մասին» համաձայնագրի մասին, բացահայտվում է այդ հոդվածի ողջ

կողմնակալությունը: Բնական է, որ 1in. am-ի խմբագրությունում հիմնալի գիտեին այդ միջպետական փաստաթղթերի մասին, բայց, նրանց համար, ըստ երևույթին, շատ կարևոր էր արծարծել հերթական սուտ տեղեկատվությունը Հայաստանի՝ իր ռազմավարական դաշնակցի հանդեպ Ռուսաստանի հնարավոր գործողությունների մասին: Այնուհետև հոդվածում ասվում է. «Նիկոլ Փաշինյանը ավելի վաղ հայտարարել է, որ Հայաստանի դեմ պատերազմի (նկատի ունի Արցախի դեմ Ադրբեյջանի սանձազերծած քառօրյա պատերազմը 2016թ. ապրիլին – Ա. Գ.) պատասխանատուն Ռուսաստանն է, որն ի գործ էր կանխարգելել այդ պատերազմը: Ի գործ էր թե ոչ՝ սա կարող է անգամ վիճելի լինել (տեսեք, թե ինչ մեծահոգություն է ռուսաստյաց ինտերնետ պարբերականի կողմից, որը Ռուսաստանի համար «արդարանալու» սողանցք է թողնում – Ա. Գ.), սակայն հարցն այն է, թե Հայաստանը ինչ նշաձող է դնում Մոսկվայի առաջ: Միաժամանակ, օգոստոսի 5-ին էլ Հայաստանն իր առաջ է դնում բարձրագույն նշաձող, և այդ իմաստով Կրեմլը, անշուշտ, պետք է պատասխանի լուրջ հարցադրումների (բնավ զարմանալի չէ, որ այս ռուսաստյաց պարբերականի կուրատորների պատկերացմամբ՝ քաղաքական արկածախնդրությունը որակվում է որպես «բարձրագույն նշաձող» – Ա. Գ.): Պատրուշկի այցը թերևս այդ համատեքստում է: Նա գալիս է Երևանում Ստեփանակերտի ելույթից դժգոհություն հայտնելու՞, թե՞ գալիս է ելույթի վերաբերյալ հետագա քննարկումների, իրավիճակը հասկանալու, գնահատելու, Հայաստանի նշաձողերը շոշափելու համար, որի հիման վրա Կրեմլը կոփտարկի Մոսկվայի հետագա անելիքները»:

Թող ների ինձ հարգելի ընթերցողը, որ այսքան մանրամասն եմ մեջբերում այս քաղաքականամերձ բարբաջանքը: Հավատացեք, որ սա հարկադրյալ միջոց է՝ հասկանալու համար հոդվածի հեղինակների, ավելի շուտ՝ նրանց անդրօվկիանոսյան պատվիրատու-ուղեվարների իսկական մտադրությունը: Իսկ մտահղացումը հստակ երևում է այս հոդվածի ամփոփիչ մասում, որտեղ ասվում է. «Իսկ այստեղ (Հայաստանում և նրա շուրջ – Ա. Գ.) իրավիճակը, իհարկե, բոլորովին միարժեք չէ, որովհետև, ի վերջո, ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ պատերազմով, թե առանց դրա, ռուս-թուրք-ադրբեյջանական գործակցության տիրույթում Ռուսաստանն այլևս անդառնալի ծուղակում է, և դրանից դուրս գալու ռեզիոնալ հնարավորությունը Հայաստանի անվտանգության նշաձողերի բարձրացումն է: Բանն այն է, որ Թուրքիան ու Ադրբեյջանը Մոսկվային գործնականում վաղուց են դրել «կամ-կամ»-ի առաջ, և այստեղ, որքան էլ տարօրինակ հնչի, նահանջի ճանապարհ կարող է ապահովել Հայաստանը, եթե Մոսկվային իր հերթին դնի «կամ-կամ»-ի առաջ: Մոսկվայում ավելի ու ավելի բորբոքվող ներհամակարգային պայքարում, որտեղ հանգուցալուծվելու է Պուտինի երկրորդ ժամկետի դիլեման, որոշակի շրջանակներն ունեն Հայաստանի այդ «կամ-կամ»-ի կարիքը»:

Թվում էր, թե այս տողերից հետո սույն հոդվածի հեղինակները որպես Հ.Գ. կարող էին գրել միակ պահանջվող նախադասությունն այն մասին, որ Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պլատոնովիչ Պատրուշևը գալիս է Հայաստան իր հայ գործընկեր Արմեն Գրիգորյանին շնորհակալություն հայտնելու նպատակով, որն ավելի վաղ աչքի էր ընկել Ռուսաստանի Դաշնության պետական դրոշմ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանության շենքի առջև այրելով և, իհարկե, Նիկոլ Վովակիչին, որը բացահայտ ռուսատյաց մամուլի միջոցով «նախազգուշացնում» է Ռուսաստանին գալիք փորձանքների մասին: Ես արդեն քանիցս գրել եմ իրենց զբաղեցրած պաշտոններին Ն.Փաշինյան և ԿՕ-ի բացարձակ անհամապատասխանության մասին: Ավելին, ս.թ. օգոստոսի 4-ին REGNUM տեղեկատվական գործակալությունը հրապարակեց իմ հոդվածը՝ «Հապաղումը բռնապետությունը վերացնելու հարցում սպառնալիք է Հայաստանի անվտանգությանը» վերնագրով, որը, ավաղ, համարժեք հակահարված չէ, քանի որ պետք է ընդունել որպես պարզ լինելություն. ՀՀ-ի հանդեպ համակարգային տեղեկատվական դիվերսիային դիմակայելու հարցում հաջողության հասնելու համար հարկ է այդ համակարգին հակադրել էլ ավելի կատարյալ, անդրօվկիանոսյան ուղեվարների մտահոլացումների ողջ վտանգավորությունը պսակազերծող համակարգ, ուղեվարներ, որոնք մանիպուլացում են ՀՀ-ում իշխանության հասած իրենց խամաճիկներին: Մանավանդ այնպիսի պայմաններում, երբ մենք գործ ունենք ԱՊՀ տարածքում գունավոր հեղափոխությունների բեմադրիչների մանրակրկիտ մտածված գործողությունների հետ: Այս եզրահանգման օբյեկտիվության մեջ համոզվելու համար բավական է ծանոթանալ այն գնահատականներին, որոնք այս հաշվով տրվել են բավական լուրջ ինտերնետ պարբերականներում: Ընդ որում՝ հատկանշական է, որ որոշ հրապարակումներ օգնում են Հայաստանում հրաշքով պահպանված՝ առողջ բանականությունը չկորցրած քաղաքական գործիչներին, որոնց համար թանկ է հայկական երկու պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ճակատագիրը, ծանոթանալով դրանց, օբյեկտիվ վերլուծել Նիկոլ Վովակիչի և նրա քաղաքական «մերձավորների» արտաքին քաղաքականության կոպիտ ձախողումները: Այսպես, ս.թ. օգոստոսի 13-ին REGNUM տեղեկատվական գործակալությունը հրապարակել է Միրա Հասանովայի հարցազրույցը «Հանուն Ադրբեջանի» հասարակական ֆորումի նախագահ, քաղաքագետ Էլդար Նամազովի հետ՝ «Ինչո՞վ է սպառնում Հայաստանին «աշխարհաքաղաքական կողմնորոշման» փոփոխությունը» վերնագրով: Այսպես, պատասխանելով REGNUM-ի թղթակցի հարցին Մոսկվայի և Բաքվի միջև երկկողմ քննարկում սկսելու հնարավորության մասին՝ երկխոսությանը Լեռնային Ղարաբաղի հնարավոր ներգրավմամբ, ադրբեջանցի քաղաքագետն ասել է. «Շատ փորձագետներ նախկինում էլ նման գաղափար արտահայտել են. դարաքաղյան

հակամարտության կարգավորման հարցերն ավելի ճիշտ է լուծել Բաքու-Մոսկվա բանակցությունների ձևաչափով: Ինձ թվում է, որ այս գաղափարի առաջնդման ամենալուրջ ազդակը տվել է Հայաստանի նոր ղեկավար Նիկոլ Փաշինյանը: Խոսքը նրա հայտնի հայտարարության մասին է, որ Ղարաբաղում լայնամասշտաբ պատերազմի վերսկսվելու պարագայում դրա պատասխանատվությունը կկրի Մոսկվան (ուշադրություն դարձրեք, թե ինչպես է այդ եզրահանգումը առնչակցվում ավելի վաղ 1in. am-ի հոդվածներում հրապարակված գնահատականներին – Ա. Գ.), քանի որ միայն նա է ի գործու գտելու Ադրբեջանին ուժի կիրառումից, ուղերձի շատ հետաքրքիր տրամաբանություն է, այդպես չէ՞: Տարածքները զավթում է Հայաստանը, դրանք ազատելուց հրաժարվում է Հայաստանը, բայց եթե Ադրբեջանն ազատագրի այդ հողերը ուժի կիրառմամբ, մեղավոր լինելու է Ռուսաստանը»:

Կարդալով այս տողերը՝ հայ կեղծ-հեղափոխականների ուղեվարները գոհունակության զգացողությամբ կարող են թեթևացած շունչ քաշել. հայկական 1in. am ինտերնետ պարբերականում տրված ազդանշանը ճիշտ ժամանակին որսացել է ադրբեջանցի քաղաքագետը: Այնուհետև ադրբեջանցի քաղաքագետը շարունակում է. «Իսկ ո՞րը կլինի Փաշինյանի հաջորդ քայլը, եթե Ադրբեջանն ազատագրի օկուպացված տարածքները և դրա մեղավոր հայտարարվի Ռուսաստանը: Հայաստանը կշարունակի՞ դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ: Թե՞, մեղավոր հայտարարելով Ռուսաստանին, Փաշինյանը կանի այն, ինչը նա և իր թիմը հայտարարել են իրենց առաջնահերթությունը դեռ ընդդիմադիր եղած ժամանակ՝ կխզի դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ ու կշրջվի դեպի ինտեգրում եվրատլանտյան ընկերակցությանը, ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցությանը»:

Ծանոթանալով սրան՝ առաջին բանը, որ ուզում ես անել, Միրա Հասանովային և Էլզար Նամազովին շնորհակալություն հայտնելն է իրենց անկեղծության և նախօրոք արված նախազգուշացման համար, չէ՞, ոչ թե Նիկոլ Փաշինյանին ու նրա սխրակիցներին, այլ Հայաստանի հայրենասերներին Արցախի Հանրապետությունում և նրա շուրջ իրադարձությունների զարգացման հնարավոր սցենարներից մեկի մասին: Սցենար, որի կենսագործումը ադրբեջանա-թուրքական քաղաքական իսթեբլիշմենթի բաղձալի երազանքն է, էլ չեմ ասում արևմտյան ստրատեգների մասին, որոնք անպայման կօգտվեն հնարավորությունից՝ իրենց վերահսկողության տակ վերցնելու Արցախի Հանրապետության անվտանգության և Իրանի Իսլամական Հանրապետության 105 կիլոմետրանոց սահմանը, ինչի մասին արդեն բազմիցս գրել եմ: Կարելի է տասնյակ այլ հրապարակումներ բերել ամենատարբեր ինտերնետ պորտալներից (ռուսական և ոչ միայն), որոնցում օբյեկտիվ գնահատական է տրվում Հայաստանի «ժողվարչապետի» բացահայտ անհամարժեք գործողություններին, որոնք ուղղված են Հայաստանի և Արցախի Հանրապետության միջև հարաբերությունների

լարվածության թեժացմանը, ինչը հղի է նրանով, որ կարող է գայթակղել Ափշերոնի սուլթանությանը լայնամասշտաբ պատերազմ սկսելու Արցախի Հանրապետության դեմ: Ավաղ, Ադրբեջանի կողմից հնարավոր ռազմական ագրեսիայի արդարացման համար նպաստավոր տեղեկատվական ֆոն ստեղծվել է Ստեփանակերտում ս.թ. օգոստոսի 5-ին Ն.Փաշինյանի բացահայտ սադրիչ ելույթով: Եվ իր այդ իսկապես բարեհիմնարությունը նա մտադիր է կրկնել ս.թ. սեպտեմբերի 22-ին Լոս Անջելեսի Grand Park-ում: Սույն արարքի իսկական մտահղացումը հետևյալն է՝ ձեռք բերել իբր ողջ հայության աջակցությունը Հայաստանի և Արցախի վերամիավորման գործում: Կարելի է մտածել, որ այս ակտը տասնմեկ միլիոնանոց հայերից որևէ մեկի սրտով չի լինի: Իսկ այս քաղաքական արկածախնդրության արյունալի հետևանքները և դրա պատասխանատվությունը Նիկոլ Վոլակիչը կփորձի իր ուսերից նետել ողջ հայ ժողովրդի վրա: Ես գիտեմ, թե որքան ստոր կարող է հետագայում մեկնաբանվել այն, ինչի մասին գրում եմ: Ավաղ, սա է ճշմարտությունը, քանզի իր այդ կարգախոսով Ն.Փաշինյանը փաստորեն գրոյացրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի գոյությունը, ավելին՝ արհամարհել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների կոչերը, որոնք վերջին տասը տարիների ընթացքում հինգ անգամ հանդես են եկել համատեղ հայտարարություններով Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ: Եթե 2008թ. մարտի 1-ին Ն.Փաշինյանը և նրա ընկերներն իրենց սադրիչ կոչերով պատճառ դարձան Հայաստանի 10 քաղաքացիների մահվան, իսկ հիմա այդ հանցագործության մեղավորներ փնտրում են իրենցից դուրս, ապա նրա ներկայիս սադրիչ ելույթը կարող է ունենալ շատ ավելի արյունալի հետևանքներ: Ուստի ես հակված եմ այն մտքին, որ ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշևի այցը հետապնդել է միայն մեկ նպատակ՝ զգուշացնել Հայաստանի ներկայիս քաղաքական ղեկավարությանը գերծ մնալ հետագա սադրանքներից, որոնք կարող են Անդրկովկասի տարածաշրջանը ներքաշել լայնամասշտաբ արյունահեղ պատերազմի մեջ: Եվ այս մասին Նիկոլ Վոլակիչը չպետք է մոռանա, քանի որ, Աստված մի արասցե, եթե նման բան պատահի, նա ոչ այնքան հեռավոր վայրերում մի թեթև «նստելով» կամ էլ պայմանական ժամանակից շուտ ազատ արձակվելով գլուխը չի ազատի [հավանաբար, արդեն համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի (և ոչ միայն) առջև արդեն այն ժամանակ ծրագրված ապագա «արժանիքների» համար, որն էլ, ըստ էության, նրան բերեց իշխանության]...

Հետգրության փոխարեն: Զէի ցանկանա հողվածս ավարտել տխուր նոտայով, բարեբախտաբար, մտաբերեցի լուսավոր տոնական համերգը՝ նվիրված հայկական պարի ռաիվիրայի՝ Armenian Europe Music Awards երաժշտական մրցանակի դափնեկիր, Փարիզում «Պարի աստվածուհի» ճանաչված Սոֆի Դևոյանի 70-ամյա հոբելյանին: Սոֆի Արկադևնային շնորհավորելու էին եկել հարազատները, գործընկերները և նրա տաղանդի

երկրպագուները, բազմաթիվ երիտասարդ հանդիսատեսներ: Կ.Ս. Ղեմիրձյանի անվան համերգասրահում, որը լեփլեցուն էր հանդիսատեսներով, յուպիտերներից բացի շողարծակում էին նաև հարյուրավոր երիտասարդ աղջիկների ու պատանիների՝ Սոֆի Ղևոյանի «Պարի և հոգու թատրոնի» սաների աչքերը: Պետք է արժանին մատուցել Հայաստանի իշխանությունների խորաթափանցությանը, որոնցից ոչ մեկը ժամանակ չէր գտել ներկա գտնվելու հոբելյանական այս համերգին: Ինչո՞ւ օգտագործեցի խորաթափանցություն բառը, ընդ որում՝ առանց չափերտների, դե, պարզապես, որովհետև Հայաստանի ներկայիս իշխանություններին խորապես խորթ են ազգային մշակույթը, նրա անձնուրաց կրողները, ովքեր աննկատ են մնում նրանց կողմից: Չէ՞ որ հոբելյանական համերգը կազմակերպվել էր բացառապես «Պարի և հոգու թատրոնի» կոլեկտիվի ուժերով: Ի դեպ, ՀՀ իշխանությունների կողմից այդպես էլ մոռացված մնաց խորապես ազգային կոլորիտ ունեցող հայ ականավոր կոմպոզիտոր, «Հայ Բեթհովեն» անունն ստացած Ավետ Տերտերյանի 90-ամյա հոբելյանը: Այս մասին վերջերս ցավով ու ափսոսանքով նշեց օպերային աշխարհահռչակ երգչուհի Հասմիկ Պալյանը: Նիկոլ Վոլակիչը հոբելյաններից շատ ավելի կարևոր գործեր ունի, օրինակ, կրկնում եմ, Երևանի քաղաքապետի հետ Երևան քաղաքի աղբահանությանը նվիրված «խոսքուգրույցները»: Այս առնչությամբ չեմ կարող չհիշել երկու տարի առաջ տեղի ունեցած հոբելյանական հանդիսությունները, որոնք նվիրված էին արդիականության անգուգական կինոգործիչ Արտավազ Փելեշյանի 80-ամյակին, Հայաստանի Պետական ազգային ակադեմիական երգչախմբի անգերազանցելի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Հայաստանի ազգային հերոս Հովհաննես Չեքիջյանի 90-ամյակին: Այս հոբելյաններին նվիրված հանդիսությունները կազմակերպվել էին Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի հովանու ներքո, և մշակույթի նշանավոր գործիչների մեծարման այդ ավանդույթը խորապես բնորոշ էր «հակահեղափոխական», «ռևան-շիստական» ուժերի առաջնորդներին, քանզի նրանք Արցախի ազգային-ազատագրական պատերազմի տարիներին, ամեն օր ուղիղ նայելով մահվան աչքերին, հիանալի հասկանում էին, որ պաշտպանելով Արցախը՝ նրանք պահպանում են ամենասրբազանը՝ հայկական ոգին, որը ձևավորվել է մեր ժողովրդի բազմադարյա մշակութային ավանդույթներով, քրիստոնեական արժեքներին հայերի անմնացորդ նվիրվածությամբ: Երբ գրում էի այս տողերը, մտաբերեցի Սոֆի Ղևոյանի խոսքերը հարցազրույցից. «Հիշում եմ մի դեպք, ես հինգ տարեկան էի, մտա սենյակ, որտեղ հայրս նստած էր ընկերների հետ, բոլոր տղամարդիկ ոտքի կանգնեցին մեկից բացի, հայրս այն ժամանակ ասաց. աղջիկս, այ, նրան կարող ես չբարևել»: Կարծում եմ, որ օգտակար կլինի, եթե այս խոսքերի իմաստի շուրջ մտածեն Նիկոլ Փաշինյանի տրուբադուրները, որոնք Հայաստանում յուրաքանչյուր իշխանափոխության ժամանակ, «Հարսանիք Մալինովկայում» ֆիլմի հերոս

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Պոպանդոպուլոյի նման փոխում են իրենց «սպիտագվարդիականի» գլխարկը «կարմիրգվարդիականի» գլխարկով: Եվ այդպես էր անընդհատ, ախր, Պոպանդոպուլոն շատ անհանգիստ ժամանակներում էր ապրում:

Որպեսզի ընթերցողները տպավորություն չստանան, որ այսօրվա հայ մտավորականության դեմքը ներկայացնում են միայն հարմարվողականները, նշեն, որ բնավ այդպես չէ: Թարմ օրինակ բերեն: Այսպես, ս.թ. հուլիսի 27-ին «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի շենքում հավաքվել էին մտավորականության ներկայացուցիչներ, այդ թվում՝ աշխարհահռչակ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը և օպերային երգչուհի Հասմիկ Պապյանը: Նրանք բոլորը մտահոգ էին մի խնդրով, այն է՝ այսօր հայ հանրահայտ գրող Հրանտ Մաթևոսյանի անվան մշակութային կենտրոն-թանգարանը, ինչպես այդ օրը նշեց գրողի որդին՝ «Հրանտ Մաթևոսյան» հիմնադրամի տնօրեն Դավիթ Մաթևոսյանը, անխնամ վիճակում է: Հայաստանի գործադիր իշխանությանը, մասնավորապես՝ Նիկոլ Փաշինյանին, դա չի հուզում, քանի որ շատ ավելի կարևոր գործեր կան, օրինակ՝ Երևանում շրջել զբոսաշրջային ավտոբուսով և իր «հզոր» ուսերին վերցնել (Հայաստանի քաղաքներով ու գյուղերով Չալո շան հետ մեկ ամիս, ուսապարկն ուսին, շրջելուց հետո, բնականաբար, լավ ուժ կհավաքեր) զբոսաշրջիկների ուղեվարի պարտականությունները, ընդ որում՝ այդ աշխատանքը կատարելով անվարձահատույց: Ի՞նչ վեհանձնություն՝ կմտածի ընթերցողը: Լավ է, որ ՀՀ նախագահ Արմեն Վարդանի Սարգսյանը Լոռու մարզ կատարած աշխատանքային այցելության ընթացքում իր պարտքը համարեց այցելել մեծահամբավ արձակագիր Հրանտ Մաթևոսյանի հայրենի գյուղ՝ Ահնիժոր: Դրանով իսկ նա նրբանկատորեն ցույց տվեց գործադիր իշխանության ողջ մտավոր ողորմելիությունը, որին հետաքրքիր չէ «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանը:

Չարժե կասկածել, որ Հայաստանի և Արցախի՝ իրեն հարգող յուրաքանչյուր քաղաքացի, որն ի գորու է անաչառ գնահատել այժմ Հայաստանում տեղի ունեցողը, Նիկոլ Փաշինյանին հանդիպելիս մաքուր խղճով կարող է չբարևել նրան: Իսկ եթե ավելի խոր մտածենք, ապա խաչակնքելն էլ չէր խանգարի:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի I, II, III, V և VI
գումարումների պատգամավոր,
«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

НЕ ДАТЬ ПАШИНЯНУ ВТЯНУТЬ АРМЕНИЮ И АРЦАХ В ВОЙНУ!

Россия никоим образом не вмешивалась в процесс прихода к власти Пашиняна, в противном случае нашла бы инструменты для воздействия. Если же армяне, очарованные Пашиняном, хотят полностью оторвать все шланги от России, включая и сырьевые, то сделать это никогда не поздно. О карабахской политике Н. Пашиняна говорить долго нет смысла, его действия говорят об одном: регион снова втягивают в войну. Очевидно, что Пашинян ведет Армению к катастрофе – геополитической, экономической.

4 сентября 2019 года Конституционный суд Республики Армения (далее – КС РА) частично удовлетворил иск первого президента Республики Арцах (прежнее название Нагорно-Карабахская Республика), второго президента РА, оспаривавшего конституционность положений, на основании которых он был арестован. Председатель КС РА Грайр Товмасян огласил решение, в котором, в частности, говорится: «Признать не соответствующей Конституции (РА) и недействительной статью уголовно-процессуального кодекса «Обстоятельства, исключаящие производство по уголовному делу и уголовное преследование» по части, не предусматривающей неприкосновенность должностных лиц, наделенных особой защищенностью». Словом, как пояснил журналистам решение КС РА адвокат второго президента РА Арам Вардеванян, арест Р. Кочаряна нарушает его право на личную свободу и «если не решена проблема неприкосновенности, то арест не может применяться». Решением КС РА политическая вендетта, развязанная премьер-министром РА и К^О в отношении Роберта Кочаряна, по части его ареста КС РА отменена. Чтобы полнее представить, какие возможные события последуют далее, вспомним некоторые факты из недавнего прошлого. Но прежде чем приступить к изложению этих событий, заметим, что буквально через несколько часов после оглашения постановительной части решения КС РА вся соросовская информационная карательная дружина обрушила шквал критики и угроз на членов КС РА. Беспочвенность обвинений поражала

воображение, причем их ангажированность, синхронность и разноплановость критики вновь убеждали в том, что против армянского государства ведется открытая информационная война. Да, да, уважаемый читатель, я не оговорился, против армянского государства, потому что все действия сторонников «народного премьера» направлены на подрыв одной из основополагающих ветвей власти – судебной системы Армении в целом. Читая панегирики в адрес КС РА, его председателя – достойного уважения высокопрофессионального специалиста по конституционному праву Грайра Товмасына и его столь же высококвалифицированных коллег – членов КС РА, поражаешься цинизму их оппонентов. Абсурдность обвинений зашкаливает вплоть до того, что одного из соавторов новой редакции Конституции Республики Армения, а именно Грайра Товмасына обвиняют в незнании Конституции. Не правда ли, здесь уместны аналогии, да простит меня Всевышний за такое сравнение, с «великим инквизитором» Ф. М. Достоевского. Чтобы читателю, неискушенному в тонкостях юриспруденции, было понятно о чем речь, выскажусь образно. На минуту вспомним отклики десятков художественных критиков, которые с 1915 года вплоть до наших дней обсуждают одну из самых известных картин в русском искусстве «Черный квадрат» Казимира Малевича. Ведь рассматривая картину как новое слово в кубизме, футуризме или «заумном реализме», критики в конечном итоге сошлись на том, что картина К. Малевича создана в новой художественной системе, названной «супрематизмом». Однако при всем многообразии оценок и характеристик никто из художественных критиков не поставил под сомнение главное – картина написана в черном цвете, в котором художник исследовал базовые возможности цвета (в нашем случае статьи КС РА) и композиции (взаимосвязь конституционных статей), в составе которого также присутствуют «черный круг» и «черный крест», то есть наличествует черный цвет, в нашем случае Конституция РА. Но, как говорится в известной поговорке – «кто платит, тот и заказывает музыку». Словом, дешевая вакханалия по дискредитации решения КС РА, ничего общего не имеющая с Конституцией РА, буквально на глазах перевоплощается в прямые угрозы принятия послушным Николу Воваевичу и Дьёрдю Шорошу, сыну Тивадора Шварца, известному больше как Джордж Сорос, Национальным Собранием РА закона о роспуске КС РА. Подытоживая хамские выпады против КС РА, скажем, что государственный переворот апреля–мая 2018 г. вступает в свою завершающую стадию – в стадию окончательного разрушения армянской государственности. А сподвижники «народного премьера» все более подпадают под известное определение из письма французского адмирала де Пана к известному журналисту времен Великой французской революции Малле дю Пану (ошибочно приписываемое Морису

Талейрану) о том, что «они ничему не научились и ничего не забыли». Здесь имеется в виду, что сторонники свергнутой во Франции династии Бурбонов воспрями духом в период Директории (1794–1799 гг.), надеясь на скорую реставрацию монархии. Так и Н. Пашинян со своими сторонниками не забыли правовой беспредел, царившей в Армении в 1991–1997 годах, сопровождаемый разграблением и распродажей нуворишам во власти и их приближенным по бросовым ценам национального богатства Армении, заказными убийствами неугодных аодовскому режиму деятелей (имеются в виду годы правления Армянского общенационального движения во главе с первым президентом РА Левоном Тер-Петросяном), и ничему не научились, так как Никол Пашинян и К^О своими действиями делают все для реставрации преступного режима АОД в новом обличьи в виде захвата власти как исполнительной, так и законодательной, которая обеспечивается существенным большинством фракции «Мой шаг» в Национальном Собрании РА. Увы, это стало возможным вследствие недоработок президентов РА Р. Кочаряна и С. Саргсяна, в годы правления которых Тер-Петросяновский режим так и не получил адекватной политической и, что более важно, правовой оценки.

Я специально ничего не редактировал, чтобы моими возможными оппонентами не был обвинен в приведении «вырванных из общего контекста цитат». Вдумайтесь, уважаемый читатель, «По пяти участкам Амулсарского проявления подсчитано ориентировочно 76 тонн урана, а с учетом урана на ториевом участке общие его запасы могут быть оценены в 100 тонн». Таким образом, эксплуатация Амулсарского золотоносного месторождения, тая в себе риски экологической катастрофы в плане отравления воды озера Севан (Lydian Armenia планирует использовать около 100 тонн цианида натрия в год. То есть в ходе десятилетнего срока освоения Амулсарского месторождения в гидросферу Армении будет сброшено 1000 тонн цианида), таит в себе куда более опасную угрозу радиоактивного заражения населения Республики Армения. То есть мы вправе утверждать, что под угрозой само существование армянской государственности. Увы, это не преувеличение, а всего лишь констатация реальных угроз и вызовов национальной безопасности. В этих условиях, если смотреть правде в глаза, не будет преувеличением утверждение о том, что отстранение Никола Воваевича Пашиняна от должности премьер-министра – не только главное условие предотвращения агрессии Азербайджана, но и гарант существования армянского государства – Республики Армения. То есть разговоры относительно потери инвестиционной привлекательности РА и т. д. и т. п. – всего лишь банальное словоблудие, призванное отвлечь внимание от истинных геополитических замыслов известного центра силы мировой политики и его ближайшего союзника на Ближнем Востоке.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ՓԱՇԽՆՅԱՆԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈ ԱՂՐԲԵԶԱՆԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԿԱՆԽՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆ Է

Ահա արդեն մեկուկես տարի Հայաստանի Հանրապետության ամենատարբեր շերտերը ճաշակում են պետական հեղաշրջման պտուղները, որը տեղի ունեցավ 2018թ. ապրիլ–մայիսին: Սույն հոդվածում ես հերթական անգամ օրինակներ չեմ բերի հաստատելու համար, որ Հայաստանի ներկա իշխանությունների գործողությունները լիովին համապատասխանում են Բոստոնի Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտի աշխատակից Ջին Շարփի բեսթսելեր դարձած գրքում շարադրված հանձնարարականներին. գիրքը լույս է տեսել 1993թ. «Բռնապետությունից ժողովրդավարություն» վերնագրով: Նշեմ միայն, որ այդ գրքի հավելվածը «Ոչ բռնի գործողությունների 198 մեթոդ» (Gene Sharp. »The 198 Methods of Non Violent Action») վերնագրով դարձել է գործնական ձեռնարկ Հայաստանում պետական հեղաշրջման պարագլուխների, ավելի ճիշտ՝ նրանց անդրկուլիսյան տիկնիկավարների համար: Այս մասին հարգելի ընթերցողն ավելի մանրամասն կարող է ծանոթանալ 2018թ. մայիսի 18-ին «Аргументы недели в Армении» շաբաթաթերթում հրապարակված «Արտաշես Գեղամյան. Հայաստանը չի՞ դառնա կույրերի կույր ուղեվարների գոհը» (iravunk.com/ru/news/8429), 2019թ. մարտի 29-ին հրապարակված «Հայոց պետականության հիմքերի խափանումը» (regnum.ru/news/polit/2601722.html) հոդվածներում:

Սակայն պնդել, թե պետական հեղաշրջումից հետո ՀՀ իշխանությունները ձեռնամուխ են եղել ստեղծարար աշխատանքի՝ կնշանակեր բացարձակապես չհասկանալ այն գործընթացները, որոնք մեր օրերում տեղի են ունենում Հայաստանում: Պետական հեղաշրջումը կամ «թավշյա հեղափոխությունը», ինչպես այն անվանում են ՀՀ «Ժողվարչապետ» Նիկոլ Վոլակիչն ու ԿՕ-ն, մտել է եզրափակիչ փուլ՝ հայոց պետականության քայքայման փուլ: Հարգելի ընթերցողները կարող են տարակուսած հարցնել. իսկ այդ ի՞նչ վախից դրված են նրանք քանդում պետությունը, որտեղ ունեն լիակատար իշխանություն օրենսդիր և գործադիր մարմիններում: Եվ հարցը միանգամայն տեղին կլինի, թեկուզև այն հաշվառմամբ, թե ով է Հայաստանում հիմա իշխանությունում: Պատասխանը կլինի շատ պարզ. լիակատար անձեռնհասությունը, որը խորանում է մեր տարածաշրջանում համաշ-

խարհային քաղաքականության ուժի կենտրոնի և նրա կամակատարների կողմնակալությամբ, որին Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական դաշինքը, մեր երկրի բարեկամական հարաբերություններն Իրանի Իսլամական Հանրապետության հետ խիստ խանգարում են իրականացնել իր հեգեմոն նկրտումները Հարավային Կովկասի տարածաշրջանում: Այսպես, ընդամենը մի քանի տարի առաջ անգամ մղծավանջային երազում հնարավոր չէր պատկերացնել, որ մի երկրում, որը մեր թվականության 301 թվականին աշխարհում առաջինն է ընդունել Քրիստոնեությունը որպես պետական կրոն, իշխանության կգան իրենց զբաղեցրած պաշտոններին միանգամայն անհամարժեք անձինք՝ ռազմաշունչ պոպուլիստ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, որին երկրպագուները քնքշորեն «ժողվարչապետ» են ասում: Կարծում ենք, որ ՀՀ ներկայիս իշխանությունների լիակատար անհամարժեքությունը լիովին հիմնավորված է իմ (թող ների ինձ ընթերցողն անհամեստության համար) «Իշխանությունների անհամարժեքությունը սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգությանը» հոդվածում, որը հրապարակվել է 2019թ. հունիսի 17-ին REGNUM տեղեկատվական գործակալությունում (regnum.ru/news/polit/2649024.html): Հոդվածում ներկայացված տազնապների հաստատումն են նոր բողոքի հուզումները, որոնք ընդգրկել են հայ հասարակության մի մասին ՀՀ կառավարության չափից ավելի չկշռադատված, իսկ ավելի շուտ՝ օվկիանոսի այն կողմից թելադրված գործողությունների պատճառով: Նկատի ունեն Հայաստանի այն քաղաքացիների բողոքի շարժումը, ովքեր համաձայն չեն Ամուլսարի ոսկու հանքի շահագործման աշխատանքների շարունակման հետ: Որպեսզի ընթերցողներին հասկանալի լինի որն է հարցի էությունը, նշենք, որ Ամուլսարում, որը գտնվում է Հայաստանի հարավ-արևելքում, Արփա և Որոտան գետերի մեջտեղում, հայտնի Ջերմուկ առողջարանային քաղաքի մոտ, 2006թ. պաշտոնական վարկածի համաձայն, երկրաբանները հայտնաբերեցին Հայաստանում ոսկու ամենախոշոր հանքավայրը: Հանուն արդարության նշենք, որ իրականում դրանից առաջ էլ մեր երկրաբաններին ու նաև Հայկական ԽՍՀ իշխանություններին ստույգ հայտնի էր մեր ընդերքի յուրաքանչյուր քառակուսի մետրի պարունակությունը Հայաստանի ողջ տարածքում: Սակայն պաշտոնական Երևանը ոչ միայն չի ազդարարել այդ տեղեկությունը, այլև, ավելին, դրա լուսաբանման վրա տաբու դրվեց, քանի որ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը հիանալի հասկանում էր հանրապետության ընդերքի արդյունաբերական շահագործման կործանարար էկոլոգիական հետևանքները: Արդեն ավելի քան չորս տասնամյակ անց ավելի հստակ են մտաբերում իմ գրույցը Հայկական ԽՍՀ ականավոր պետական գործիչ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, լուսահոգի Կարեն Սերոբի Դեմիրճյանի հետ: Այդ տարիներին Կարեն Սերոբովիչի օգնականը լինելով, ընդունված կարգի համաձայն, աշխատանքային օրվա սկզբին ես զեկուցում էի նրան մամուլի նորությունների

մասին: Մի անգամ, օգտվելով առիթից, ես հարցրի. իսկ ճիշտ է՞, որ Հայաստանի հարավ-արևելքում, Մեղրիի, Ազիզբեկովի, Եղեգնաձորի շրջանների ընդերքում (հենց այստեղ է գտնվում Ամուլսարի հանքը) կան ոսկու և ուրանի հանքեր: Կարեն Սերոբովիչը մտահոգ հայացքով նայեց ինձ և հետաքրքրվեց, թե որտեղ են կարդացել այդ մասին: Այդ ժամանակ ես նրան խոստովանեցի գրույցի մասին, որը նախօրեին ունեցել էի փեսայիս՝ Ռուդոլֆ Արամայիսի Հարությունյանի հետ, որը երկար տարիներ եղել էր Մեղրիի շրջանի երկրաբանահետախուզական արշավախմբի ղեկավարը, իսկ հետագայում՝ Երկրաբանության վարչության պետի տեղակալ, Հայկական ԽՍՀ գլխավոր երկրաբան: Նշեմ, որ Ռուդոլֆ Արամայիսովիչը բարձրորակ երկրաբան էր ու դեռևս 1972թ. երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածուի թեզ էր պաշտպանել՝ «Հայկական ԽՍՀ Մեղրիի շրջանի ոսկու հանքավայրերի և հանքակուտակումների երկրաբանությունը» թեմայով: Կ. Ս. Դեմիրճյանը, բացատրություններս լսելով, իրեն հատուկ բարյացակամ հեզմանքով հանձնարարեց, որ փեսայիս հաղորդեմ իր խրատը՝ մոռանալ այդ թեման: Դա ասվել էր ինձ համար հասկանալի՝ երևանյան համուիստով խոսվածքով, որը գրականի թարգմանած նշանակում էր՝ գլուխս մի արդուկեք, ուղեղս էլ մի պուդրեք: Հիմնալի իմանալով հանրապետության համար անվերականգնելի հնարավոր էկոլոգիական կորուստների մասին՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը երկրի արդյունաբերական զարգացման ապագան տեսնում էր ռադիոէլեկտրոնային արդյունաբերության լայն ներդրման և հաշվողական տեխնիկայի մշակման ու արտադրության ծեռնարկություններ բացելու մեջ: Եվ պետք է գոհունակությամբ խոստովանել, որ այս առումով Հայաստանը ԽՍՀՄ միութենական հանրապետությունների ավանգարդում էր: Թող ների ինձ հարգելի ընթերցողն այս նոստալգիական հուշերիս համար այն փառապանծ տարիների մասին: Այսքան մանրամասն չէի ներկայացնի դրանք, եթե այսօր մենք չդառնայինք Հայկական ԽՍՀ առաջնորդների կանխատեսումների ակտուալության ականատեսները, որոնք, ավաղ, մեր խառնակ ժամանակներում վիճարկվում են մեր ամերիկյան գործընկերների կողմից: Այո, այո, հարգելի ընթերցող: Դեռևս 2018թ. հուլիսին «Ազատություն» ռադիոյի թղթակցի հետ գրույցում ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսն ընդգծեց, որ պոտենցիալ ներդրողների համար նաև շատ կարևոր է, թե ինչպես կառավարությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, կլուծի էկոլոգիական ոլորտում առկա խնդիրները: Որպես օրինակ Ռ. Միլսը ներկայացրեց Ամուլսարի ոսկու հանքի շահագործումը. «Ամերիկացի պոտենցիալ ներդրողները ցանկանում են տեսնել, թե ինչպես է կառավարությունը վերաբերվում այն խնդիրներին, որոնք կապված են ինչպես ամերիկյան, այնպես էլ տեղի ընկերությունների հետ: Արժանանո՞ւմ են արդյոք դրանք արդարացի վերաբերմունքի, երբ քննում են դրանց հարկային գործունեությունը: Նրանք նաև հետևում են այն հարցերին, որոնք կապված են Lydian ընկերության և

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

այն բանի հետ, թե ինչպես է կառավարությունը լուծում նման զգայուն և վիճելի հարցերը, արժանանում է արդյոք Lydian ընկերությունը արդարացի վերաբերմունքի այդ գործընթացում» («ԱՄՆ դեսպանը խոսեց Ամուլսարի ոսկու հանքի շահագործման մասին – Նորություններ», <http://dialogorg.ru/news/071818-snchfutoy/>): Էլ ավելի խանդավառալի հոգատարություն և միաժամանակ տարակուսանք այս հաշվով դրսևորեց Հայաստանում Ամերիկյան առևտրային պալատը (Am Cham), որը վերջերս նամակով դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին այն իրավիճակի առիթով, որը երկար ժամանակ ստեղծվել է «Lydian Armenia» ընկերության Ամուլսարի հանքի շուրջ: Նամակում, մասնավորապես, նշվում է. «Համոզված ենք, որ ներդրումների հանդեպ արդարացի և իրավաչափ վերաբերմունքը չափազանց կարևոր է ոչ միայն տեղի և արտասահմանյան ընկերությունների համար, որոնք Am Cham-ի անդամներ են, այլև տնտեսության զարգացումն ու ժողովրդի բարեկեցությունն ապահովելու... Մենք ափսոսում ենք այն առիթով, որ 3-րդ աուդիտի անցկացումից հետո և այն դեպքում, երբ դուք հաստատեցիք (նկատի ունի իրեն՝ Նիկոլ Վոլակիչին, իրեն սիրելիին – Ա. Գ.) Lydian Armenia-ի համապատասխանության փաստը էկոլոգիական բարձր չափորոշիչներին (հղումը «Ժողվարչապետի» և նրա ղեկավարած կառավարության ձեռնհասությանը էկոլոգիայի հարցերում հպարտության զգացում է առաջացնում մեր կառավարության համար և նրա «պրոֆեսիոնալիզմի» բացառիկության գիտակցում, ինչում ընթերցողը կհամոզվի ստորև – Ա. Գ.), նրա իրավունքը ծրագրի տարածքի հանդեպ դեռևս չի վերականգնվել և, ավելին, քննարկվում է ևս մեկ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի անցկացման հնարավոր անհրաժեշտությունը... Դա միանշանակ բացասական ազդակներ է ուղղում պոտենցիալ ներդրողներին (որոնք, պետք է կարծել, հերթ են կանգնել, որ որքան հնարավոր է շուտ ներդրումներ անեն Հայաստանի տնտեսությունում և որոնք անկախության 28 տարիների ընթացքում դեռ չեն հասել – Ա. Գ.) և Հայաստանը դարձնում երկիր, որը իրապուրիչ չէ ներդրումների համար: Հաշվի առնելով այն, որ պետությունը ջանքեր չի խնայում Հայաստան ներդրումներ ներգրավելու համար (հանուն արդարության նշենք, որ ՀՀ կառավարության ջանքերի շնորհիվ մեկուկես տարում ուղղակի օտարերկրյա ներդրումները Հայաստանի տնտեսությունում էապես կրճատվել են – Ա. Գ.), պոտենցիալ ներդրողները միևնույն ժամանակ նշում են, որ ներդրումներ կատարող օտարերկրյա ընկերությունները Հայաստանում պաշտպանված չեն և արժանանում են անարդարացի վերաբերմունքի»: Իրոք նախանձելի հոգատարություն է, չէ՞, Հայաստանում ներդրումների ներգրամվան մասին («Իրավիճակն Ամուլսարի շուրջ Հայաստանն անհրապույր է դարձնում ներդրումների համար, Am Cham», 2 սեպտեմբերի 2019թ., <https://news-armenia.am/news/economy/situatsiya-vokrug-amulsara-delaet-armeniy-neprivlekatelnoy-dly-investitsiy-amcham>): Ընթերցողներին տեղեկացնենք

այն մասին, որ քիչ չեն մասնագետները, ովքեր Ամուլսարի հանքի շահագործումն անվանում են չարդարացված իրագործման համար, ընդ որում՝ ուրանի պաշարների առկայության մասին տեղեկությունը, չիմացությամբ, թե՞ այլ պատճառներով, լռության է մատնվում: Նշենք նաև, որ այսօրվա դրությամբ Ամուլսարի ապացուցված և հավանական պաշարները կազմում են 2,42 մլն ունցիա ոսկի (մոտ 75 տոննա) և 11,29 մլն ունցիա (մոտ 351 տոննա) արծաթ: Նշենք, որ Lydian International ընկերությունը, համաձայն ներկայացված ծրագրի, նախատեսում է 0,7 գրամ ոսկի կորզել մեկ տոննա հանքանյութից՝ խոստանալով ՀՀ պետական բյուջե վճարել տարեկան \$30 մլն:

Կարծում եմ, որ ընթերցողն իրավունք ունի տալու ևս մեկ հարց, այն է. այդ ինչո՞ւ է հանկարծ վերջին ամիսներին բողոքի շարժման նման կտրուկ ակտիվացում տեղի ունեցել Ամուլսարի ոսկու հանքի շահագործման շուրջ: Չէ՞ որ խնդիրը նոր չէ: Այս հարցին պատասխանելու համար որոշ պարզաբանումներ կատարենք ոչ հեռավոր անցյալից: Այսպես, 2018թ. նոյեմբերին (այսինքն՝ Հայաստանում 2018թ. ապրիլ–մայիսի պետական հեղաշրջումից հետո) ՀՀ Քննչական կոմիտեի (այսուհետ՝ ՔԿ) հատկապես կարևոր գործերի հետաքննության Գլխավոր վարչությունում հայտարարվեց Ամուլսարի ոսկեբեր կվարցիտային հանքի շահագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցության միջազգային գնահատականի ընթացակարգի մասին, ինչպես նաև «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի և հանքի շահագործման ժամանակ էկոլոգիական և սոցիալական ազդեցության գնահատականի հաշվետվությունների փորձաքննության համար»: Մինչ այդ տեղեկացվել էր, որ ՔԿ-ում քաղաքացուց ստացվել էր տեղեկություն շրջակա միջավայրի աղտոտման մասին »Lydian Armenia» ՓԲԸ-ի կողմից Ամուլսարի ոսկեբեր կվարցիտների հանքի շահագործման ժամանակ: Ըստ երևույթին, հայտատուները լավ տեղեկացված են, որ Քննչական կոմիտեում քիչ չեն բարձրադրոժեսիոնալ մասնագետները ոչ միայն Հայաստանում սահմանադրական կարգի տապալման մասով մտացածին «քաղաքական հանցագործությունների» հետաքննության գծով, այլև էկոլոգիայի ոլորտում: Հատկանշական է նաև ՔԿ հաղորդումն այս հաշվով. «Նյութերի պատրաստման ընթացքում տվյալներ ստացվեցին այն մասին, որ ՀՀ Բնության պահպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձինք, տեղեկացված լինելով շրջակա միջավայրի քիմիական աղտոտման վտանգավոր ռիսկերի մասին՝ սույն համալիրի շահագործման դեպքում, միտումնավոր թաքցրել են բնակչությունից շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունը քիմիական նյութերով, որոնք վտանգավոր են մարդկանց կյանքին և առողջությանը»: Գովելի է, կմտածի ընթերցողը, որ ՔԿ-ն ի վերջո հասել է ճշմարտությանը: Հետո ավելի հետաքրքիր է: Ինչպես ընդգծում է ՔԿ-ն, հաշվի առնելով, որ պատրաստված նյութերում ակնհայտ են հանցագործության նշանները,

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

որոնք նախատեսված են ՀՀ Քրեական օրենսգրքի 282 հոդվածի 1-ին մասում, քրեական գործ է հարուցվել (ինչը կենցաղային լեզվի թարգմանած նշանակում է շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունների թաքցնում կամ միտումնավոր աղավաղում): Մշակված է քննչական պլան, և նախաձեռնվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ ապահովելու համար համակողմանի, օբյեկտիվ և լիակատար հետաքննություն»: Ուզում ես բացականչել՝ ցնծացե՛ք, Հայաստանի քաղաքացիներ, ՔԿ-ն, որն անձամբ «Ժողվարչապետի» խնամարկյալն է, և որը ցայժմ ասոցացվում էր Հայաստանի քաղաքացիների գիտակցությունում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդեպ մոգոնված քրեական գործի հետ, վերջապես վերադարձել է օրենսդրական դաշտ... և արդյունքները երկար սպասել չտվեցին: Այսպես, արդեն ս.թ. օգոստոսի 28-ին Նիկոլ Վովակիչը տեսակոնֆերանս անցկացրեց Earth Link Advanced Resources Development (ELARD) միջազգային փորձագիտական խմբի հետ, որը նախօրեին՝ ս.թ. օգոստոսի 15-ին, ՔԿ քրեական վարույթի շրջանակում «հարուստ» Հայաստանի համար բավական համեստ գումարով՝ \$400 հազարով հրապարակեց իր եզրակացությունը, որից հետևում է, որ էկոլոգիական սպառնալիքներ Ամուլսարի շահագործումից չկան, իսկ հնարավոր ռիսկերը վերահսկելի են: Անդադրում Նիկոլ Վովակիչը ս.թ. սեպտեմբերի 9-ին Facebook-ի իր էջում հերթական ուղիղ եթերով ասաց, որ ներկա պահին չկան իրավական հիմքեր արգելելու Ամուլսարի հանքի շահագործումը, ուստի կոչ արեց Ջերմուկի բնակիչներին ապաշրջափակել Ամուլսարի հանք տանող բոլոր ճանապարհները: Նշենք նաև, որ ս.թ. սեպտեմբերի 5-ին բացահայտ ահաբեկչական հովեր ունեցող «Սասնա ծռեր» կուսակցության ղեկավարները, որոնք իրենց քաղաքական գործունեությունն սկսել են Երևան քաղաքի պարեկապահակային ծառայության գնդի զինված զավթմամբ և երեք ոստիկանի սպանությամբ, ընդունվել են իր՝ Նիկոլ Վովակիչի կողմից, և նրանց ղեկավար Ժիրայր Սեֆիլյանի խոսքով՝ նախազգուշացրել են անվախ «Ժողվարչապետին» այն մասին, որ շատերն անհամբերությամբ սպասում են, թե երբ է Փաշինյանը հանելու հանքի շահագործման արգելքը, որովհետև անմիջապես կսկսվեն անկարգություններ և հուզումներ, ստիպված կլինեն գործի դնել ոստիկանությունը, և այդ ժամանակ Փաշինյանի վարկանիշը կհասնի գրոյի: Հետաքրքիր է, որ Սեֆիլյանը, ընդ որում, խոստովանել է, որ «Սասնա ծռերը» նույնպես կապստամբի, եթե Ամուլսարը թույլ տան շահագործել: Պակաս հետաքրքիր չէ նաև այն, որ անթաքույց ռուսատյաց, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Բաբաջանյանը դեռևս ս.թ. օգոստոսի 20-ին Facebook-ի իր էջում գրել էր. «Իշխանությունների բացարձակ անգործությունը վերոնշյալ մեկուկես տարում (պետական հեղաշրջումից հետո – Ա. Գ.) հիմնավորված է դարձնում այն վարկածը, որ հեղափոխական իշխանությունը (նկատի ունի Նիկոլ Վովակիչին և ԿՕ-ին – Ա. Գ.) սկզբից ևեթ ուներ հանքի շահագործման հանգուցալուծման մասին

որոշումը, և պատվիրված կասկածելի միջազգային փորձաքննությունն ընդամենը ժամանակ չափելու միջոց էր: Անհաջող միջոց: Իշխանությունները, հասարակության հետ այս չափազանց կարևոր հարցի վերաբերյալ երկխոսություն վարելու, իրական երկխոսության գնալու փոխարեն գնացին ըստ էության ստվերային ճանապարհով, ինչի արդյունքում իշխանությունների համար հիմք դարձավ ոչ թե հասարակության կարծիքը, այլ կասկածելի միջազգային փորձաքննությունը»: Հիշեցնենք ընթերցողներին, որ այս նույն գործիչը երկու-երեք օր առաջ Facebook-ի իր էջի ուղիղ եթերով ասել էր. «Իմ հայրենակիցներ Լոս Անջելեսից, կոչ եմ անում ձեզ մի կողմ դնել ձեր բոլոր տարածայնությունները Հայաստանի իշխանությունների հետ և անհամաձայնությունը, և մի մարդու պես մասնակցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը, որը տեղի կունենա 2019թ. սեպտեմբերի 22-ին Լոս Անջելեսի Grand Park-ում»: Թե ինչ պատկերացում ունի Բաբաջանյանը Grand Park-ի չափերի մասին, որտեղ հանրահավաքի է կանչում մոտ 1 մլն լոսանջլեցցի հայերին, միայն իրեն է հայտնի: Թեև այդքան խիստ չեմ լինի գնահատականներիս հարցում, գուցե նա ֆանտաստ է, ինչպես և ֆրանսիացի ֆանտաստ գրող Իվ Գանդոնը: Սա, իհարկե, վիճելի պնդում է, բայց մենք իրավունք ունենք ենթադրելու, որ իրականում մի բանում նա իրավացի է՝ այն հարցում, որ «հեղափոխական իշխանությունը սկզբից ևեթ ուներ հանքի շահագործման հանգուցալուծման մասին որոշումը, և պատվիրված կասկածելի միջազգային փորձաքննությունն ընդամենը ժամանակ չափելու միջոց էր»: Ափսոս, որ նա չի շարունակում միտքն այնուհետև՝ պնդելու լիակատար հիմնավորմամբ, որ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հովանավորյալների ու սորոսյան ֆոնդերի լափակերների մեծ մասի բոլոր ելույթները իմիտացիա են, որ կոչված է «հերոսացնելու» «ժողվարչապետի» վճռական քայլերը, որ դեմ է գնում իր կողմից խռովված քաղաքացիներին: Որպեսզի ընթերցողները կարծիք չկազմեն, թե ես մինչև վերջ չեմ բացահայտում իմ անձնական վերաբերմունքը Ամուլսարի շահագործման հարցում, ասեմ հետևյալը: Ցանկացած առողջ դատող մարդ, նախքան սպառիչ պատասխան տալը Ամուլսարի հանքի շահագործման նպատակահարմարության հարցին, պետք է մանրակրկիտ ուսումնասիրի դրա վերաբերյալ գիտական հետազոտությունները, հատկապես Հայաստանի էկոլոգիական անվտանգության տեսակետից: Այսպես, դեռ 2015թ. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությունը՝ գիտությունների դոկտորներ Ս.Ն. Նազարեթյանի, Ռ.Ռ. Դուրգարյանի, Տ.Ա. Շահբեկյանի, Ա.Գ. Գրիգորյանի և Լ.Բ. Միրզոյանի հեղինակությամբ, հրատարակեց «Հայաստանի տարածքի տարածաշրջանային բեկվածքները ըստ երկրաֆիզիկական տվյալների և դրանց սեյսմիկության» գիրքը <http://www.geokniga.org/bookfiles/geokniga-regionalnye-razlomy-territorii-armenii-po-geofizicheskim-dannym-i-ih-seysmi.pdf>, որը տպագրման է երաշխավորվել ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակ-

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

ների նախարարության Սեյսմիկ պաշտպանության ծառայության գործակալության գիտատեխնիկական խորհրդի կողմից: Այդ գրքում գիտական հիմքերի վրա ուսումնասիրված են Հայաստանի տարածքի տարածաշրջանային բեկվածքները երկրաֆիզիկական տվյալների համալիրի, ուժեղ երկրաշարժերի գեներացման հարցում դրանց դերի, սեյսմիկ վտանգի հիման վրա, հաշվի առնելով միջնաժամկետ սեյսմիկ կանխատեսման որոշ մեթոդներ: Մասնավորապես, 77-րդ էջի 5.4 նկարում պատկերված է «Տարածաշրջանային բեկվածքների»՝ ըստ կարևոր ձգողական բնութագրերի մասնատման սխեման, իսկ 100-րդ էջում (նույն գրքի), 7.3 նկարում պատկերված է «Երկրաշարժերի էպիկենտրոնների և Հայաստանի տարածքի ակտիվ բեկվածքների» քարտեզը: Եվ ահա, տարածաշրջանը, որն ընդգրկում է Ամուլսարի հանքը, գտնվում է սեյսմաակտիվ բեկվածքների խմբում՝ էպիկենտրոնում Չարլզ Ռիխտերի սանդղակով ավելի քան 6,6 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի հնարավորությամբ:

Լուրջ ուսումնասիրության են արժանի այն տազնապները, որոնք արտահայտել է ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սաղաթեյանը, որոնք նա հայտնել է Hetq.am ինտերնետ պորտալի հարցազրույցում: Պատասխանելով թղթակցի՝ հարևան համայնքների վրա Ամուլսարի հանքի շահագործման ազդեցության հնարավոր հետևանքների մասին հարցին՝ հարգարժան պրոֆեսոր Ա.Սաղաթեյանն ասել է. «Իսկ ինչո՞ւ միայն ազդեցության ենթակա համայնքները: Ես կասեի՝ ամբողջ հանրապետությունը: Ամուլսարի հանքը հարուստ է I եւ II դասի վտանգավորության թունավոր նյութերով, որոնք լեռան քանդելուց հետո շատ արագ կմոբիլիզացվեն: Դրանք շատ ակտիվ կներգրավվեն երկրաբանաքիմիական կազմում և իրենք թունավորության շնորհիվ կդառնան գերիշխող: Այս երևույթը նկատվում է Կապանի, Քաջարանի, Արմանիսի բոլոր սուլֆիդային հանքերում: Անձեռնմխելի վիճակում հանքն իր բնական վիճակում է գտնվում, հանքաքարում այդ տարրերը «քնած» վիճակում են, բայց հենց որ մենք սկսենք քանդել, դրանք կմոբիլիզացվեն՝ վարակելով ողջ շրջակա միջավայրը: Դրանց ազդեցիվության ազդեցությամբ ընդերք-ջուր-բուսականություն համակարգում հանքի տարրերը երկրորդ պլան են մղվում: Բնությունը չունի ծանր մետաղներից ինքնամաքման մեխանիզմ: Դրանց ազդեցությունը մարդու վրա զգացվում է ոչ անմիջապես, քանի որ դրանք ոչ հոտ ունեն, ոչ համ: Թունավոր սննդամթերքների ազդեցությունն ի հայտ է գալիս տասնյակ տարիներ հետո և չափազանց բացասական ձևով. օնկոլոգիական հիվանդություններ, վերարտադրողական և ժառանգական ֆունկցիայի ախտահարումներ: Ծանր մետաղները էմբրիոթունավոր են, այսինքն՝ ազդում են հղի կանանց վրա, մուտացիա են ծնում, այսինքն՝ ազդում են ժառանգականության վրա, քաղցկեղածին են՝ քաղցկեղ են առաջացնում: Այս խնդիրը մենք փաստորեն ունենք Հայաստանի տարբեր շրջաններում,

բայց, այն չլուծելով, շտապում ենք ստեղծել նորը՝ Ամուլսարի հանքի տեսքով»: Այս առնչությամբ չի կարելի չհիշատակել Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Լ.Ն. Մկրտչյանին: Այսպես, իր «Ապագայի բժշկությունը դա կանխարգելիչ բժշկությունն է» հոդվածում, որը հրապարակվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Ապագա բժիշկ» ամսագրի հունիսյան համարում, Լևոն Նիկիտովիչն ուղղակի մատնանշում է այն մասին, որ «Օնկոլոգիական հիվանդությունների աճի վտանգավոր պատճառը էկոլոգիայի համատարած վատթարացումն է, որը հանգեցնում է մեծահասակների և տարեց մարդկանց հակաուռուցքային կայունության խորացող թուլացման»: Ավելին, լինելով Մկրտչյանի «Սաղմնային հակաուռուցքային մոդուլատորի (ՍՀՈՄ - LM) ստացման և կիրառման միջոցի» ստեղծողը, որն ամրագրվել է Ռուսաստանի Դաշնության N 22/080 պատենտով, պրոֆեսոր Լ. Ն. Մկրտչյանը գրում է. «Բացատրություն չկա, թե ինչու է «քաղցկեղի կանխարգելման բարձրարդյունավետ միջոցը, որը պատրաստ է արդյունաբերական արտադրման համար», տարիներ մնում չպահանջված: Մի՞թե այդքան ամենագոր է անառողջ կորպորատիվ շահը հակաքաղցկեղային պայքարում»: Սակայն սա առանձին ուսումնասիրության թեմա է, ընդ որում՝ բավական արդիական, քանի որ Հայաստանում վերջին 20 տարիներին գրանցվել է օնկոլոգիական հիվանդությունների 70% աճ: Ավելին, 2016թ. սկզբին World Life Expectancy («Կյանքի տևողությունն աշխարհում») պարբերականը հրապարակել է զեկույց քաղցկեղի խնդրի վերաբերյալ, որի համաձայն՝ 2014թ. 172 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է «պատվավոր» առաջին տեղն օնկոլոգիական հիվանդություններից մահացության ցուցանիշով: Ավաղ, Հայաստանի «հեղափոխական» իշխանությունները նման «կենցաղային» խնդիրներով զբաղվելու ժամանակը չունեն, մանավանդ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը, որը ջանադիր է միայն իր «թշնամիներին» որոնելիս, ընդ որում՝ հանձինս բավական արժանի և Հայաստանում առողջապահության ոլորտում մեծ հարգանք վայելող մասնագետների:

Հարգելի ընթերցողը միանգամայն իրավացիորեն կարող է մտածել, որ ես շատ շեղվեցի գլխավոր թեմայից: Միանգամայն հնարավոր է, սակայն, չեն թաքցնի, որ դրանում իմաստ կար: Այսպես, վերոնշյալ հետազոտություններից ոչ մեկը, որոնք վերաբերում են Ամուլսարի հանքի շահագործման էկոլոգիական ռիսկերին, անգամ չի էլ հիշատակվում ELARD-ի և մոնիթորինգ իրականացնող այլ կազմակերպությունների հաշվետվություններում: Այս, մեղմ ասած, կազուսի պատասխանը որքան ցինիկ, նույնքան էլ պարզ է. «Ժողվարչապետը» պատրաստվում է այցելել ԱՄՆ, ընդ որում՝ ոչ միայն որպեսզի ս.թ. սեպտեմբերի 22-ին մասնակցի լուսանջելեսյան Grand Park-ի հանրահավաքին, այլև որպեսզի, ինչը նրա հիվանդագին ինքնա-

Ա. զԵՂԱՄՅԱՆ

սիրության համար չափազանց կարևոր է, վերջապես շփվի ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ և պատմի նրան «հայ Մանդելայի», ավելի շուտ՝ վերջերս մահկանացուն կնքած Ռոբերտ Մուզաբեի (Նիկոլ Վովակիչի պաշտոնապես հայտարարված կուռքերը) աննկունության մասին քեռի Սեմի ցուցումները կատարելու գործում, հետևել գեկուցի, որ կատարել է ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Միլսի հանձնարարությունները և Հայաստանի Ամերիկյան առևտրային պալատի՝ Am Cham-ի համառ հանձնարարականները: Իսկ եթե ամերիկյան կողմն ավելի խորանա, ապա կպարզի, որ Նիկոլ Վովակիչը համեստորեն լռել է այն մասին, որ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման վերականգնման իր որոշմամբ դեմ է գնացել ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության Արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի կամքին, որը «խորապես միջամտել է ինքնիշխան հայկական պետության ներքին գործերին» նրանով, որ Facebook սոցիալական ցանցում հրապարակել է ընտանեկան լուսանկարներ՝ մակագրությամբ. «Առաջին արձակուրդս անցկացրի ընտանիքիս հետ հավատարմագրման երկրում, Զերմուկում: Տպավորված էինք բնության գեղեցկությամբ և հարստությամբ: Ցանկանում ենք Հայաստանին հաջողություններ ամառանոցային և առողջարանային զբոսաշրջային պոտենցիալի զարգացման գործում: Ուրախ ենք, որ այն ըստ արժանվույն է գնահատվում շատ ռուսաստանցիների կողմից»: Եվ այնուհետև կպատմի այն մասին, որ դեսպանի այս երախտագիտական խոսքերից հետո ծավալվել է հերթական ցածրահարգ հակառուսական տեղեկատվական բարբաջանքը: Այսպես, ս.թ. սեպտեմբերի 12-ին այդ իրադարձությանը նվիրվեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության տխրահռչակ հակառուսական տեղեկատվական խոսափողի՝ «Ժամանակ» թերթի առաջնորդողը (ru.1in.am/1268002.html)՝ «Որն է հայ ժողովրդի իմաստությունը. ՌԴ դեսպանի կարծիքն ու լուսանկարը» վերնագրով: 1in.am-ի վերլուծաբանները, մասնավորապես, գրել են. «Ամուլսարի հարցը Հայաստանի ներքին խնդիրն է և պետք է լուծվի մի կողմից երկրի վարկանիշը, մյուս կողմից՝ բնությունը չվնասելու տրամաբանությամբ, հայտարարել է Հայաստանում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը՝ նշելով, որ վստահ է՝ հայ ժողովուրդը բավական իմաստուն է կառավարության հետ այդ հարցի լուծումը գտնելու համար»: Այնուհետև 1in.am-ը հարց է տալիս. «Իսկ հաշվի առնելով այն, որ ՌԴ դեսպանը բավականին հմուտ դիվանագետ է (ինչին չի կարելի չհամաձայնել – Ա. Գ.) մթնոլորտն ու նրբերանգները պատկերացնելու համար, թերևս անկասկած է, որ նա շատ լավ էր պատկերացնում իր լուսանկարի, այսպես ասած, տողատակային ընկալումն ու իմաստը (և այստեղ նույնպես կասկածելու հարկ չկա – Ա. Գ.): Թե ինչու ՌԴ դեսպանը բաց չէր արտահայտվում Ամուլսարի հանքի շահագործման դեմ, պայմանավորվում է թերևս նրանով, որ դա կդիտվեր ներքին գործերին միջամտություն: Իհարկե, այստեղ կա ամերիկյան դիվանագետների հանգամանքը, որոնք բաց տեքստով մտահոգվում են հանքի ճակատագրով (ի

տարբերություն ՌԴ դեսպանի, որը մտահոգ է այս հիասքանչ շրջանի բնության պահպանությամբ – Ա. Գ.): Բայց նրանք մտահոգվում են Հայաստանի բիզնես, ներդրումային վարկանիշի հիմնավորմամբ (որքան հուզիչ, նույնքան էլ կեղծ – Ա. Գ.), նաև արտաքին ներդրումների հեռանկարի՝ համարելով, որ «Լիդիանի» աշխատանքի արգելափակումը կարող է արգելափակել Հայաստանի ներդրումային հեռանկարը»: Ես կներկայացնեմ առաջնորդողի հեղինակների ևս մեկ կանխակալ և անհեթեթ մտահանգումը, որոնք ՌԴ դեսպանի այս մաստեր-կլասում մի ամբողջ դավադրություն են տեսել, դիցուք. «Հայաստանի տնտեսության մեջ բավական մեծ ներկայացվածություն ունի հենց ռուսական կապիտալը՝ կամ անմիջական, կամ օլիգարխիկ ասոցիատիվ տարբերակներով: Բնական է, որ Մոսկվան չունի այդ ստատուս-քվոյի փոփոխության մեծ ցանկություն: Քաղաքակա՞ն է այդ ցանկությունը՝ Կրեմլի մակարդակով, թե՞ կորպորատիվ, որի սպասարկմանն իր տողատակային ծառայությունն է բերել ՌԴ դեսպանը, դժվար է ասել, սակայն անկասկած է, որ կա քաղաքական ու տնտեսական մրցակցության լուրջ խնդիր, և Ռուսաստանը կամ առնվազն ռուսական շրջանակներ, իրենց հայաստանյան «պրովայդերների» հետ միասին, մեղմ ասած, չահագորգված չեն Հայաստանում այդպիսի մրցակցությամբ: Այն դեպքում, երբ Հայաստանի ինքնիշխան շահը պահանջում է լրիվ հակառակը»: Պետք է կարծել, որ Նիկոլ Վոլակիչը, ինչպես արդեն գրել ենք, լինելով տիեզերական մասշտաբի ստրատեգ, լրիվ ամերիկյան ձևով է հասկանում, թե որն է «Հայաստանի ինքնիշխան շահը»:

Հասկանալու համար ամերիկյան կողմի այսքան անթաքույց չահագորգվածությունը Ամուլսարի ոսկու հանքի չահագործման հարցում՝ մեջբերեմ որոշ տվյալներ »Lydian International«-ի բաժնետերերի մասին: Այսպես, ընկերության 8 հիմնական բաժնետերերի թվում է »Orion Mine Finance Managment I-ALimited« օֆշորային ընկերությունը, որի բաժնետերերից է Red Kite Partners Limited-ը: Համաձայն Բերմուդյան կղզիների կառավարության պաշտոնական կայքում տեղադրված տեղեկության՝ Red Kite Partners Limited-ի տնօրենը լորդ Մայքլ Ֆարմերն է, որը բնութագրվում է որպես «բարեպաշտ քրիստոնյա», Կարմիր ուրուր ու Միստր պղինձ՝ բավական հայտնի անձնավորություն է Մեծ Բրիտանիայում. բրիտանացի գործարար է, Մեծ Բրիտանիայի Պահպանողական կուսակցության դոնորը 2001 թվականից, կուսակցության նախկին գանձապետը, Լորդերի պալատի «ցմահ պերը»: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ մենք իրավունք ունենք ենթադրելու, որ Նիկոլ Վոլակիչի կողմից դիրքորոշումը փոխելը, հավանաբար, ոչ վերջին հերթին բացատրվում է արևմտյան բիզնեսի բավական ազդեցիկ պարագլուխների մեծ շահով, համաձայն 1in.am-ի տերմինաբանության՝ «օլիգարխիկ ասոցիատիվ» ձևով կապված աշխարհիս հզորների՝ համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի հետ:

Ես հատուկ այսքան մանրամասն կանգ առա Ամուլսարի խնդրի վրա, քանի որ այս թեմայի շուրջ տեղի ունեցող ամեն ինչ վերջին հաշվով առաջ է

բերում այժմ արդեն նոր անդունդ հայ հասարակությունում Ամուլսարի ոսկու հանքի շահագործման կողմնակիցների և հակառակորդների միջև՝ հնարավոր էկոլոգիական ռիսկերի և Հայաստանի ազգային անվտանգության սպառնալիքների մասին հիմնավորված բացատրությունների լիակատար բացակայության ֆոնին: Այո, այո, հարգելի ընթերցող, հայոց պետության ազգային անվտանգության սպառնալիքների: Չէ՞ որ, եթե մտածենք, թե ինչ էր տեղի ունենում Հայաստանում վերջին մեկուկես տարում, ապա անխուսափելիորեն կարելի է գալ այս եզրահանգման. ամեն բան արվել է հայոց պետականության կորստի համար: «Հեղափոխական իշխանությունների» ուղեվարներն իրենց դրածոների միջոցով Հայաստանի քաղաքացիներին կանգնեցրել են ընտրության առջև մի կողմից՝ «սպիտակների», այսինքն՝ իշխանությունների ու «Կյանքի խոսքը» տոտալիտար կրոնական աղանդի, ԼԳԲՏ հանրույթի և սորոսյան լափակերների ակտիվիստ-կամակատարների, մյուս կողմից «սևերի»՝ նախկին իշխանությունների ներկայացուցիչների և նրանց միջև, ովքեր հիացած չեն երկրի գործող իշխանավորներից: Նրանք Արցախի 1992–1994թթ. ազգային-ազատագրական պատերազմի հերոսների վարկաբեկման վայրի քարոզչություն են սկսել, որն ուղեկցվում է ՀՀ իշխանությունների՝ «թավշյա հեղափոխությունն» Արցախի Հանրապետություն արտահանելու փորձերով, բնակչության շրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների հանդեպ անվստահության մթնոլորտի ստեղծմանը, հայկական երկու պետությունների միջև պառակտում մտցնելուն ուղղված նպատակաուղղված աշխատանքի միջոցով... Մեր օրերում Նիկոլ Վոլակիչն ու ընկերակիցները փորձում են մասնատել հայ հասարակությունը՝ այն բաժանելով Ամուլսարի ոսկու հանքի յուրացման կողմնակիցների և հակառակորդների: Ընդ որում՝ հարկ է հատկապես նշել, որ Հայաստանի իշխանավորների անդրօվկիանոսյան ուղեվարների պլաններն այնքան լուրջ են, որ սկսել են կեղծ ընդդիմություն ձևավորել Նիկոլ Վոլակիչի երեկվա զինակիցներից: Ավելին, նրանք վարում են հնուտ քաղաքականություն տեղեկատվական դաշտում, որի նպատակն է՝ մեր քաղաքացիների գիտակցության մեջ ձևավորել ՀՀ «հեղափոխական» իշխանությունների անայլընտրանքայնությունը, քանի որ որպես վերջիններիս քաղաքական հակակշիռ, շնորհիվ նրանց ջանքերի, հանդես են գալիս նախկին կոռումպացված իշխանությունները: Միևնույն ժամանակ նշենք, որ Փաշինյան և ԿՕ-ի վերահսկողությանը չենթարկվող առկա տեղեկատվական ռեսուրսը նույնպես օգտագործվում է կոշտ կանոնակարգված ձևով, այն է՝ իրենց հնարավորությունները տրամադրելով միայն «ընտրյալների վաստահելի շրջանակին», որոնց հանդեպ անձամբ ես պահանջներ չունեմ: Սակայն սույն փաստը նորից նիկոլվոլակիչյան քաղաքական օգտին է խաղում՝ ուղղվելով հայ հասարակությունը «սևերի» ու «սպիտակների» բաժանելուն: Ուստի, միանգամայն սպասելի էր, որ նման իրավիճակը Հայաստանում աննկատ չմնաց ափշերոնյան սուլթանությունում:

Եվ բնավ պատահական չէր այն փաստը, երբ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Ադրբեջանի առաջիկա պլանների մասին պալատական լրագրողի հարցին Իլիան Ալիևը պատասխանեց որքան հնարավոր է հակիրճ՝ ասելով, որ այդ գործում շտապել պետք չէ, քանի որ այսօր Հայաստանն Ադրբեջանի փոխարեն կատարում է սուլթանատին անհրաժեշտ աշխատանքը: Այստեղ, սակայն, նշենք, որ ափշերոնյան սուլթանը մի փոքր խորամանկել է՝ ակնարկելով ադրբեջանական իշխանությունների անգործությունն այս հարցում: Այսպես, ս.թ. սեպտեմբերի 13-ին Minval.az ինտերնետ պորտալում հրապարակվեց հոդված «Պատերազմի փորձ. Ադրբեջանը կիրականացնի մասշտաբային զորավարություններ» վերնագրով (<https://minval.az/news/123919909>), որում նշվում է. «Ադրբեջանի ԶՈւ-ն սեպտեմբերի 16–20-ին լայնամասշտաբ օպերատիվ-տակտիկական զորավարություններ կանցկացնի տարբեր զորատեսակների մասնակցությամբ... Զորավարություններին կմասնակցի 10 հազար մարդ զինծառայողների զորակազմից, ավելի քան 100 միավոր տանկ և զրահատեխնիկա, տարբեր տրամաչափի 120 հրթիռահրետանային սարքավորում, համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր և ականանետեր, մինչև 20 միավոր բանակային և ճակատային ավիացիա, ինչպես նաև տարբեր նշանակության անօդաչու թռչող սարքեր: Զորավարությունների ընթացքում, որոնք կանցկացվեն բարդ պայմաններում, լեռնային, անտառային, ժայռապատ տեղանքներում (ճիշտ ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռելիեֆը – Ա. Գ.) և ռադիոէլեկտրոնային իրադրությունում, կկատարվեն առաջնագծի, հիմնական հարվածող խմբավորումների հետ փոխգործակցող շրջանցող ջոկատների, ինչպես նաև հրետանու, ավիացիայի և մարտակարգի այլ տարրերի հարթ գործողությունների կազմակերպման խնդիրներ»: Ավաղ, պետք է խոստովանենք, որ այդ հրապարակման վերնագիրը շատ տեղին է ընտրվել: Բայց մենք բնավ չպետք է հուսահատվենք, քանզի մեր գերագույն գլխավոր հրամանատար Նիկոլ Փաշինյանը (ռազմական ժամանակ) նախօրոք ասիմետրիկ պատասխան է պատրաստել. պատահական չէ, որ ս.թ. սեպտեմբերի 22-ին կիրավիրվի հանրահավաք Լոս Անջելեսի Grad Park-ում, և արդեն հայտարարվել է գալիք հանրահավաքի 30 հազար մասնակիցների մասին: Իսկ հետո, համոզված եղեք, հարգելի ընթերցողներ, լսելով անկրկնելի պոպուլիստ Նիկոլ Վովակիչի բոցավառ խոսքը՝ հանրահավաքի մասնակիցները՝ լի հայրենասիրական զգացումներով, կնետվեն դեպի ամերիկյան ժայռոտ լեռներ, իսկ հետո դուրս կգան Ատլանտյան օվկիանոսի ափ (թեև Խաղաղ օվկիանոսն ավելի մոտ է), իսկ այնտեղից էլ... դե, մինչև Լեռնային Ղարաբաղ մոտիկ է ու մոտիկ: Գլխավորը, որպեսզի քամին համընթաց լինի ... Մի խոսքով, ճանաչի՜ր մերոնց:

Հարգելի ընթերցող, ներողամիտ եղիր քննարկվող թեմայից այսքան ազատ շեղումիս համար, այն հարկադրյալ է, քանզի ես Փաշինյանի ու նրա խառնամբոխի հանցավոր անհոգությունը ռելիեֆային ներկայացնելու այլ

Ա. գԵՂԱՄՅԱՆ

միջոց չգտա, երբ ողջ հայության՝ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի պո-տենցիալի համախմբման փոխարեն սույն ստրատեգիա գրառված է Face-
book-յան դատարկաբանություններով և ջուր ծեծելով: Մեկ շաբաթ առաջ
REGNUM տեղեկատվական գործակալությունում հրապարակվեց իմ հոդ-
վածը՝ «Փաշինյանի սադրանքը Ստեփանակերտում սպառնում է պատե-
րագնով Հայաստանի և Արցախի դեմ» վերնագրով ([https://regnum.ru/news/
polit/2692788.html](https://regnum.ru/news/polit/2692788.html)): Հիմա մենք պետք է փաստենք նոր անվիճելի ճշմար-
տությունը՝ Ն.Փաշինյանի հեռացումն իշխանությունից և ՀՀ-ի ու Արցախի
Հանրապետության պաշտպանության միավորված կոմիտեի ստեղծումը՝
դրա կազմում 1992–1994թթ. ազգային-ազատագրական պատերազմի ցայս-
օր մարտունակ բոլոր հերոսների ներգրավմամբ, հայկական երկու պետութ-
յունների դեմ Ադրբեջանի նոր ռազմական ագրեսիայի կանխման պարտա-
դիր պայմանն է: Իսկ Նիկոլ Վոլակիչի հեռացումը կարելի է ձևակերպել որ-
պես ծառայողական գործուղում ԱՄՆ՝ ավելի մանրամասն ծանոթացնելու
հայոց պետականության կործանման գծով ամերիկացի մեր գործընկերների
հարկատուներին այն «ծեռքբերումներին», որոնք տեղի են ունեցել ՀՀ-ում
պետական հեղաշրջումից հետո: Բնականաբար, իր ելույթից առաջ կարճ
հաշվետվություն ներկայացնելով Ջոն Բոլթոնի, Ռիչարդ Միլսի և Հայաստա-
նում Ամերիկյան առևտրային պալատի պատգամների իրականացման գծով
կատարած աշխատանքի մասին:

Հետգրության փոխարեն: Ա.թ. սեպտեմբերի 15-ին REGNUM տեղե-
կատվական գործակալությունը հրապարակեց հոդված՝ «Փաշինյանի հեռա-
ցումը Ադրբեջանի ագրեսիայի կանխման գլխավոր պայմանն է» վերնա-
գրով: Ընդամենը մեկ օրվա ընթացքում Shame. am կայքում դիտումների
թիվը գերազանցել է 26680-ը, ընդ որում՝ հոդվածը գնահատող ընթերցողնե-
րի 80% թվից այն «գերազանց» գնահատել է 74,29%-ը, «լավ»՝ 5,71%-ը:
Միևնույն ժամանակ, ընթերցողներից շատերը խնդրել են ավելի մանրա-
մասն պարզաբանել հոդվածում հպանցիկ հիշատակված տեղեկությունն
Ամուլսարի ոսկու հանքում ուրանի պաշարների առկայության մասին: Որ-
պեսզի ընթերցողները տպավորություն չստանան, որ ավելի վաղ ընդամենը
գեղեցիկ խոսքի համար էի հիշատակել Հայաստանի ականավոր պետական
գործիչ Կարեն Սերոբի Դեմիրճյանի կոշտ արձագանքը Հայաստանի
ընդերքում ուրանի առկայության մասին իմ տեղեկատվությանը (որ ստացել
էի երկրաբանության ոլորտի բարձր պրոֆեսիոնալ մասնագետ Ռուդոլֆ
Արամյանի Հարությունյանից), որոշ մանրամասներ ներկայացնեմ այս
հաշվով: Այսպես, դեռևս 2007թ. «Горный журнал»-ի թիվ 6-ում (ի գիտություն
ընթերցողների՝ «Горный журнал»-ը լեռնագործության և հանքագիտության
ոլորտի հնագույն պարբերականն է՝ հիմնադրված 1825թ. Ալեքսանդր I-ի
հրամանով) հրապարակվեց երկրաբանահանքաբանական գիտությունների
դոկտոր Գ. Պ. Ալոյանի հոդվածը՝ «Հայաստանի ռադիոակտիվ հումքի ռե-

սուրսային պոտենցիալը և դրա յուրացման հեռանկարները» վերնագրով: Նշենք նաև, որ «Горный журнал»-ը բավական հեղինակավոր ամսագիր է լեռնագործության և հանքագիտության ոլորտում, իսկ 2018թ. ՌԴ Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ-ի որոշմամբ ամսագիրը ներառվեց «Առաջատար գրախոսական գիտական ամսագրերի և պարբերականների ցուցակում, որոնցում պետք է հրապարակվեն գիտությունների դոկտորի և թեկնածուի գիտական աստիճանի հայցորդների ատենախոսությունների հիմնական գիտական արդյունքները»: Եվ ահա, Գ. Պ. Ալոյանի վերոնշյալ հոդվածում կարդում ենք. «Համաձայն հայ և ռուս մասնագետների տվյալների՝ հանրապետությունում հայտնաբերվել է ուրանի (և մասամբ թորիումի) 34 հանք, որոնք գտնվում են երկրաբանական ու կազմաբանական տարբեր պայմաններում և, լինելով տարբեր աստիճանի կամ անգամ սակավ ուսումնասիրված, կարող են հզոր հանքային պոտենցիալ հանդիսանալ էներգետիկ ոլորտի մի շարք խնդիրների հետագա լուծման համար: ...Վայոց ձորի խումբը ներկայացված է Վարդենիսի, Գորտունի, Զովաշենի, Ելփինի, Ամուլսարի, Գետափի, Վերնաշենի, Վայքի և Արևելյան հանքակուտակումներով: ...Ամուլսարի ուրանի հանքակուտակումը գտնվում է Կեչուտ գյուղից 4 կմ հարավ-արևելք և համանուն սարից 5 կմ հյուսիս-արևմուտք: Տեղամասը կազմված է էոցենի ծիրանաքարից, առանձին հատվածներում դրանք վերածվել են կվարցիտների և հիդրոջերմային առումով փոփոխված ու կվարցի վերածված հանքատեսակների, որոնք ձևավորել են օքսիդացման գոտի՝ 50 մ, տեղ-տեղ՝ 100 մ հզորությամբ: Էոցենի շերտերը ձեղքելով դուրս են գալիս փոփոխված գաբրոների, գաբրո-դիորիտների, գրանոդիորիտների, կվարցային մոնցոնիտների և ծիրանաքարե գրանիտ-ապլիտների ապարազանգվածներով: Ստորգետնյա մշակումներով և հորատանցքերով ուրվագծված է 15 տեղամաս՝ ուրանային երկրորդային հանքայնացմամբ օտենիտի, տորբերնիտի և մետատորբերնիտի տեսքով (ընդգծումն մերն է – Ա. Գ.): Հանքայնացումը ուսումնասիրվել է 50–60 մ խորության վրա: Ենթադրվում է, որ այն հանգում է 100 մ խորության վրա: Ուրվագծված տեղամասերն աչքի են ընկնում ուրանի պարունակությամբ, չափերով, երկրորդային հանքանյութերի քանակական հարաբերակցությամբ: Երկրորդային հանքայնացումը ծիրանաքար պարունակող գրանիտ-ապլիտներում ձևավորում է տարբեր խտության երակավորումներ և ըստ ձեղքերի հարթությունների ծեփոններ: Ուրանի պարունակությունը տատանվում է լայն սահմաններում՝ հազարերորդականից մինչև 0,5%, 0,025–0,03% միջին պարունակության դեպքում՝ մակերեսով հինգ առավել նշանակալի տեղամասերի համար: Ամուլսարի հանքակուտակումների հինգ տեղամասերից յուրաքանչյուրում հաշվարկված է մոտավորապես 76 տոննա ուրան, իսկ թորիումի տեղամասերում ուրանի պարունակության հաշվառմամբ՝ դրա պաշարները կարող են գնահատվել 100 տոննա (ընդգծումն մերն է – Ա. Գ.):»:

Ես հատուկ ոչինչ չեմ խմբագրել, որպեսզի իմ հնարավոր ընդդիմախոսների կողմից չմեղադրվեն «ընդհանուր համատեքստից պոկված

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կտորներ» մեջբերելու մեջ: Մտածեք միայն, հարգելի ընթերցող. «Ամուլսարի հանքակուտակումների հինգ տեղամասերից յուրաքանչյուրում հաշվարկված է մոտավորապես 76 տոննա ուրան, իսկ թորիումի տեղամասերում ուրանի պարունակության հաշվառմամբ՝ դրա պաշարները կարող են գնահատվել 100 տոննա»: Այսպիսով, Ամուլսարի ոսկու հանքի շահագործումը, իր մեջ էկոլոգիական աղետի ռիսկեր թաքցնելով Սևանա լճի ջրերի թունավորման առումով (Lydian Armenia-ն ծրագրում է տարեկան օգտագործել մոտ 100 տոննա նատրիումի ցիանիդ: Այսինքն՝ Ամուլսարի հանքի շահագործման տասը տարվա ընթացքում Հայաստանի ջրոլորտ կարտանետվի 1000 տոննա ցիանիդ), իր մեջ թաքցնում է Հայաստանի Հանրապետության բնակչության ռադիոակտիվ վարակման շատ ավելի վտանգավոր սպառնալիք: Այսպիսով՝ մենք իրավունք ունենք պնդելու, որ սպառնալիքի տակ է հենց հայոց պետականության գոյությունը: Ավաղ, սա չափազանցություն չէ, այլ ընդամենը ազգային անվտանգության իրական սպառնալիքների և մարտահրավերների փաստում: Այս պայմաններում, եթե նայենք ճշմարտության աչքերին, ապա չափազանցություն չի լինի պնդել, որ Նիկոլ Վովակիչ Փաշինյանի հեռացումը վարչապետի պաշտոնից ոչ միայն Ադրբեջանի ագրեսիայի կանխման գլխավոր պայմանն է, այլև հայկական պետության՝ Հայաստանի Հանրապետության գոյության երաշխիքը: Այսինքն՝ խոսակցությունները ՀՀ ներդրումային գրավչության կորստի վերաբերյալ և այլն, և այլն, ընդամենը սովորական խոսելամարմաջ են, որը կոչված է շեղելու ուշադրությունը համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնի և Մերձավոր Արևելքում նրա մերձավորագույն դաշնակցի աշխարհաքաղաքական իսկական մտադրություններից:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի I, II, III, V և VI
գումարումների պատգամավոր,
«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

«ԻՐԱՎՈՒՆՔ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՊԱՐՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԼԱՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալաշյան

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահությունը սրտանց շնորհավորում է «Իրավունք» թերթի հարգանքի արժանի կոլեկտիվին 30-ամյա հոբելյանի կապակցությամբ, մաղթում է բեղմնավոր աշխատանք և նորանոր արարումներ ի փառս Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների:

Մեծ գոհունակությամբ արձանագրում ենք, որ այսօր Հայաստանի Հանրապետության լրատվական դաշտը դժվար է պատկերացնել առանց «Իրավունք» թերթի: Անցած երեք տասնամյակում «Իրավունք»-ը եղել և մնում է իր կոչմանն ու անցած փառահեղ ճանապարհին հավատարիմ, մշտաբեր լինելով Հայաստանին և Արցախին հայտարարված հիբրիդային պատերազմի մարտահրավերների դիմագրավմանն ուղղված պայքարի առաջնագծում:

Ձեր խորաթափանց հրապարակումները մշտապես միտված են եղել հայոց պետականության ամրապնդմանը, ազգի առաջ ծառացած կենսահույզ խնդիրների լուծմանը:

Հաջողություններ և նվաճումներ, թանկագին բարեկամներ:

Ջերմագին ողջույններով՝

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

«Ազգային Միաբանություն» կուսակցության
նախագահ

ГЛАВНОМУ РЕДАКТОРУ ГАЗЕТЫ «ИРАВУНК»
ГОСПОДИНУ ОВАННЕСУ ГАЛАДЖЯНУ

Уважаемый господин Галаджян

Президиум партии «Национальное Единение» от всего сердца поздравляют достойный уважения коллектив газеты «Иравунк» («Право») по случаю 30-летнего юбилея, желают плодотворной работы и новых свершений во славу Республики Армения и Республики Арцах.

С большим удовлетворением констатируем, что сегодня трудно представить информационное поле Республики Армения без газеты «Иравунк». За прошедшие три десятилетия газета «Иравунк» оставалась верной своему призванию и пройденному славному пути, постоянно находясь на передовой в борьбе по преодолению угроз гибридной войны, объявленной Армении и Арцаху.

Ваши глубоко проникновенные публикации были постоянно нацелены на упрочение армянской государственности, решение животрепещущих задач, стоящих перед нацией.

Удачи и успехов, дорогие друзья!

С горячим приветом,
АРТАШЕС ГЕГАМЯН

Председатель партии «Национальное Единение»

«Иравунк», 18. 09. 2019.

ОТСТРАНИТЬ ПАШИНЯНА ОТ ВЛАСТИ – СПАСТИ АРМЕНИЮ ОТ САМОРАЗРУШЕНИЯ

«Бесспорно одно: Пашинян – это угроза национальной безопасности Республики Армения. И все его последние действия – тому убедительное доказательство. Мне уже приходилось об этом писать в статье под заглавием «Отстранение Пашиняна – гарантия выживания Армении» (ИА REGNUM, 17 сентября 2019 г.). Теперь же с еще большей уверенностью могу добавить, что противостоять этой угрозе, отстранить Пашиняна от власти – значит спасти Армению от саморазрушения. И это не преувеличение».

Итак, 21 сентября 1991 года народ Армении на всенародном референдуме проголосовал за выход Армянской ССР из состава Советского Союза и провозглашение независимости, а 23 сентября Верховный Совет Армянской ССР провозгласил Армению независимым государством, 24 сентября ВС Армянской ССР решил переименовать Армянскую Советскую Социалистическую Республику в Республику Армения (РА). Характеризовать пройденный нашим народом путь к независимости – дело отнюдь не из легких, но о главных вехах и сегодняшних реалиях подумать мы обязаны. Ибо не будет преувеличением, если характеризовать современные реалии словами из Декларации Законодательного собрания Франции от 11 июля 1792 года, которая гласила: «Отечество в опасности» (фр. – La patrie en danger). Как известно, эта Декларация была принята в ответ на угрозы, нависшие в этот период над Французской революцией как от внешних врагов (коалиции Пруссии и Австрии), так и от внутренних (бывшие дворяне и неприсягнувшие священники). В случае с Республикой Армения нашему Отечеству угрожает опасность, обусловленная полной неадекватностью действующих властей вызовам и угрозам национальной безопасности. Это положение усугубляется тем, что после государственного переворота, совершенного в апреле–мае 2018 года в РА, наша страна фактически оказалась под внешним управлением. Да, да, уважаемый читатель, это не есть преувеличение, а данность. Достаточно поименно проанализировать деятелей из ближайшего окружения «народ-

ного премьера», будь то в исполнительной или законодательной властях, чтобы убедиться в объективности данной мною оценки. Ведь уже не является секретом, что главной движущей силой государственного переворота были уже не одно десятилетие окопавшиеся в РА выкоремыши разного рода соросовских фондов, представители тоталитарной религиозной секты «Слово жизни», ну и, как это сейчас широко пропагандируется, представители ЛГБТ-сообщества (которые во всем своем мерзопакостном обличьи 21 сентября т. г. «блеснули» на праздновании Дня независимости в Гюмри, когда мужчиноподобные особи, нарядившись в женские юбки, плясали на сцене перед ликом самого «народного премьера» Никола Воваевича, себя любимого. Закулисные кукловоды властей специально включили этот содомистский номер в программу праздничного концерта. Ведь среди приглашенных на сие мероприятие был и Его Святейшество, Верховный Патриарх и Католикос Всех Армян Гарегин Второй, убежденный защитник священных христианских традиций армянского народа от гнусных посягательств местных апологетов Стамбульской конвенции, которую Никол Воваевич и К^О подвесили как дамоклов меч над Арменией и армянским народом. Да, отщепенцы от Армянской Апостольской Святой церкви (далее – ААЦ), дорвавшиеся до власти в РА, никак не могут простить Его Святейшеству Гарегину Второму, под верховенством которого в июле т. г. было принято заявление епископов и правящих архиереев ААЦ против ратификации Стамбульской конвенции. В заявлении ААЦ, в частности, говорилось: «Ортодоксальное христианское восприятие прав и свобод человека исключает искажение или изменение богосозданной сущности. Подтекст конвенции «О свободе выбора пола» вызывает серьезное недоумение и становится поводом для трактовок требование искоренить традиции, основанные на стереотипных представлениях о роли женщин и мужчин для изменений в социальных и культурных моделях поведения женщин и мужчин». Вместе с тем в заявлении ААЦ говорилось: «В конвенции содержатся положения и понятия, вызывающие серьезную озабоченность с точки зрения национально-духовной идентичности и безопасности. Мы призываем ответственные органы власти воздержаться от ратификации конвенции».

Я специально столь подробно привел эти выдержки из заявления ААЦ, потому что Никол Воваевич эту горькую пилюлю не смог проглотить. Ведь благодаря принципиальной позиции ААЦ, ее последовательных приверженцев, а также любого здравомыслящего гражданина РА, не одурманенного зельем (читай американскими долларами из соросовских фондов), Никол Воваевич и К^О, несмотря на грубое давление на ААЦ, персонально на Верховного Патриарха и Католикоса Всех Армян, были вынуждены перенести сроки ратификации Стамбульской конвенции на

Да, уважаемый читатель, необходимость консолидации трех президентов РА – это актуальное веление времени. И это вовсе не потому, что весь армянский народ молится на них или не видит альтернативы им, а по той причине, повторяюсь, что альтернатива их консолидации – потеря государственности. Этот вывод, уважаемый читатель, основан на всестороннем анализе процессов, происходящих в регионе Ближнего Востока и Южного Кавказа. Такая консолидация достойна светлой памяти сотен тысяч наших соотечественников, погибших в годы Великой Отечественной войны, тысяч погибших в годы Арцахской национально-освободительной войны 1992–1994 гг. Такая консолидация будет данью памяти погибших 105 военнослужащих и безвинно убиенных мирных граждан Республики Арцах в Апрельской (2016 г.) войне, развязанной Азербайджаном против Республики Арцах.

Я более чем убежден, что если инициатива двух армянских государств об одновременном вступлении Азербайджана и Республики Арцах в качестве самостоятельных субъектов международного права офици-

ально будет выдвинута, то нашими союзниками, и в первую очередь Россией, будет, вне всякого сомнения, поддержана. Уверенности в этом придает и выступление русского патриота-державника, депутата Государственной Думы, руководителя Института стран СНГ, кавалера ордена «Григор Лусаворич» («Григорий Просветитель») Республики Арцах Константина Федоровича Затулина 11 октября т.г. в Степанакерте на Международном форуме друзей Арцаха, проходившем под девизом «Сотрудничество во имя справедливости и мира». Вдумаемся в слова из выступления Константина Федоровича на этом форуме: «Россия проводит самостоятельную политику. Несмотря ни на какие угрозы и санкции, мы признали самоопределение Абхазии и Южной Осетии – я вижу здесь в первом ряду своего доброго друга Дмитрия Медоева, министра иностранных дел Республики Южная Осетия, – мы поддержали возвращение Республики Крым в родную гавань, мы вовлечены в усилия по урегулированию гражданской войны на Востоке Украины, потому что мы не можем допустить дальнейшего насилия над нашими соотечественниками на земле Донбасса. Я уверен, что Российская Федерация как государство не допустит несправедливое решение карабахского конфликта. Русский народ в первую очередь ценит совесть и справедливость. А они на вашей стороне». И с этими определениями, как нельзя более глубоко характеризующими величие русского народа, невозможно не согласиться.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»

ԱՂՐԲԵՋԱՆԻ ՈՒ ԱՐՑԱԽԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՏՄ-ԻՆ ԵՎ ՀԱՊԿ-ԻՆ՝ ՆՐԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱԿՈՐՆ Է: ԱԼԸՆՏՐԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄՆ Է

Կարդալով վերջին ամսվա հրապարակումներն ադրբեջանական լրատվամիջոցներում՝ ակամա ուզում ես հիացնունքով բացականչել՝ վերջապես կատարվեց, հասանք այն օրվան, երբ Հայաստանի «ժողվարչապետ» Նիկոլ Վոլակիչ Փաշինյանի ձակատագիրը դարձել է ձևականորեն Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող առաջատար ադրբեջանական քաղաքագետների առանձնակի հոգածության առարկան: Այո, այո, հարգելի ընթերցող, ես չսխալվեցի: Այդպես է, և այսուհետ ադրբեջանական քաղաքական միտքը կանգնած է «մեր» Նիկոլ Վոլակիչի պաշտպանության դիրքերում: Որպեսզի ընթերցողներին չհոգնեցնեմ իմ դիտարկման օբյեկտիվության հաստատման սրտատրոփ սպասման մեջ, ներկայացնեմ միայն ադրբեջանական ինտերնետ պորտալների վերջին ժամանակվա հոդվածների վերնագրերը: Ահա դրանցից մի քանիսը. «Սերգեյ Մարկով. Փաշինյանը պատրաստ է փոխգիշումների, բայց վախենում է», «Ռուսաստանը դեմ չէ Դարաբաղում Ադրբեջանի պատերազմին. Սերգեյ Մարկով», «Մարկով. Դուք հիշում եք գնդակահարությունը Հայաստանի խորհրդարանում: Փաշինյանը չի ցանկանում նույն ձակատագրին արժանանալ»: Կարելի է տասնյակ հոդվածներ մեջբերել՝ նույնքան սադրիչ վերնագրերով, որոնց հեղինակները, որպես կանոն, Ադրբեջանի քաղաքացիներ կլինեն, և տեղեկատվական սնամեջ «փուչիկից» բացի այլ բան դրանք չեն պարունակի: Իսկ այստեղ իր մտքերն է արտահայտում ինքը՝ Սերգեյ Մարկովը, որին Media.az-ը ներկայացնում է ոչ այլ կերպ, քան «ռուսաստանցի հայտնի հասարակական գործիչ, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի գլխավոր տնօրեն, ՌԴ Հանրային պալատի անդամ և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի վստահված անձ»: Բերեմ միայն որոշ մեջբերումներ վերոնշյալ հոդվածներից: Այսպես, ս.թ. հոկտեմբերի 7-ին Ս.Մարկովը, գտնվելով Բաքվում, մամուլի ասուլիս է տվել: «Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցանկանում է ապաշրջափակել Հայաստանը, պատրաստ է համաձայնել խնդրի լուծման Կազանի պլանին (շրջափակման վերացում, տնտեսական հարաբերությունների հաստատում Ադրբեջանի հետ, Դարաբաղին ժամանակավոր կարգավիճակի տրամադրում

նրան հարակից յոթ շրջանները վերադարձնելու դիմաց – *խմբ.*), բայց Փաշինյանը վախենում է հայ արմատական խմբավորումներից, որոնք կարող են պայթեցնել նրան, գնդակահարել, ինչպես վարվեցին հայկական խորհրդարանի հետ 1999թ. (ավելի ստոր սադրանք՝ հիմնված կեղծիքի վրա, իրենց թույլ չէին տա անգամ ամենամոլի, զրպարտության մեջ մասնագիտացող ադրբեջանցի քարոզիչները, բայց դա առանձին վերլուծության թեմա է – *Ա.Գ.*) կամ գավթել ոստիկանության բաժանմունքը («Սասնա ծռեր» խմբավորումը – *խմբ.*):

Փաշինյանը վախենում է ազգությամբ հայ լիբանանյան և սիրիական գրոհայիններից (հավանաբար, Մարկովը նկատի ունի Սիրիայի և Լիբանանի հայկական հայրենասիրական ուժերը, որոնք մահացու վտանգավոր պայքար են մղում «Իսլամական պետության» դեմ՝ ահաբեկչական կազմակերպություն, որն արգելված է Ռուսաստանում, քանզի տարածաշրջանում այլ «հայ գրոհայիններ» չկան – *Ա.Գ.*), ուստի դարաբաղյան խնդրի լուծումը դնում է Ղարաբաղի ղեկավարության վրա: Այնտեղ եկող տարի տեղի են ունենալու նախագահի ընտրություններ, հետևաբար, հարկ է սպասել, մինչև այնտեղ հաստատվի կայուն իշխանություն, բայց Ադրբեջանը հոգնել է սպասել», – այսպես է ասել Մարկովը մամուլի ասուլիսում: Առաջին բանը, ինչին հանգեցրին Ս.Մարկովի խոսքերը, այն էր, որ պետք է շնորհավորել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին նոր արտահաստիքային (թեև, դատելով մամուլում բազմաթիվ հրապարակումներից՝ բարձր վարձատրվող) մամուլի քարտուղարի առիթով՝ հանձին Մարկովի, որը տրտնջում է, թե «Ադրբեջանը հոգնել է սպասել»: Չեմ թաքցնի, որ այդ նշանակումը բխում է Հայաստանի և Արցախի շահերից, քանի որ ոչ այնքան հեռավոր ժամանակում գոնե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների քաղաքական հանրույթը հերթական անգամ կարող է հանդգնել մի պարզ ճշմարտության մեջ. ափշերոնյան սուլթանության ողջ պաշտոնական քարոզչությունը կառուցված է կեղծիքի վրա: Ի հաստատումն իմ խոսքերի՝ մեջբերեմ հատվածներ Արցախի պանծալի հերոս, լեգենդար գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանի հարցազրույցից: Այսպես, ս.թ. հոկտեմբերի 9-ին Արցախի Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար, գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանը LIVEnews.am ինտերնետ պարբերականին տված հարցազրույցում, անդրադառնալով Նիկոլ Վոլակիչի վերջերս տեղի ունեցած հանդիպմանը «Սասնա ծռեր» կուսակցության (Ս.Մարկովի հիշատակած) ղեկավարների հետ, սույն հանդիպումը բնութագրել է որպես այլախոհների վրա ճնշում բանեցնելու փորձ: «Նիկոլ Փաշինյանը փորձում է ահաբեկել բոլորին, ինչու չէ, և ինձ, և իմ նմաններին, որ տեսեք՝ «ես ունեմ մարտական թև, կարող եմ մեկ փոքր հրաման տալ, և «Սասնա ծռերը» կամ մնացածը ձեր հարցերը ֆիզիկապես լուծեն», ուզում եմ լուր տամ բոլորին, մանավանդ Նիկոլ Փաշինյանի կողմնակիցներ «Սասնա ծռերին»՝ ընդհանրապես թող

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

չփորձեն նմանատիպ խոսակցություններ ծավալեն կամ քննարկեն, թույլ տալով պատասխան են տալու: Վախկոտները Փաշինյանն ու նրա կողմնակիցներն են... 2016-ին մենք ներեցինք այդ ահաբեկիչներին և չսպանեցինք, բայց հիմա ես հայտարարում եմ. բոլորին ֆիզիկապես կոչնչնացնենք, եթե նրանք փորձեն սադրանքներ իրականացնել և ահաբեկչական գործողություններ իմ, մեր ժողովրդի, պետության, պետականության դեմ»: Ղե ինչ, մարտական գեներալին հասկանալը և նրան աջակցելը մեր պարտքն է, չէ՞ որ Վ.Բալասանյանի համար ժողովուրդ, պետություն և պետականություն հասկացությունները զուգորդվում են Արցախի, Հայաստանի և հայկական Սփյուռքի հազարավոր հայրենասերների կյանքերի հետ, որոնք նրանք դրել են 1992–1994թթ. Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին Արցախի Հանրապետության ազատության, հայոց պետականության՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պահպանման զոհասեղանին: Ադրբեջանական ագիտարոպի դատողությունների կոմիկականությունն՝ այս դեպքում Ս.Մարկովի կերպարանքով, կարող է միայն քմծիծաղ առաջացնել, այս քարոզչական կլոունադան ավելին չարժե: Անհանգստացնում է այլ փաստ. ս.թ. հոկտեմբերի 7-ի «Ռուսաստանը դեմ չէ Ղարաբաղում Ադրբեջանի պատերազմին. Սերգեյ Մարկով» հրապարակման մեջ կարդում ենք. «Ռուսաստանը չի արգելում Ադրբեջանին կռվել Ղարաբաղում, օգտագործել ՌԴ-ից գնած զենքը: Ավելին, նախագահ Վլադիմիր Պուտինը քանիցս ասել է, որ ՀԱՊԿ-ը լիազորված է պաշտպանել Հայաստանի տարածքային ամբողջականությունը, և չի պատրաստվում մասնակցել Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտությանը»: Եվ այսպիսի բարբառանք Ղարաբաղում պատերազմի՝ Ռուսաստանի լռելյայն խրախուսման մասին արտահայտում է ադրբեջանական քաղաքագետ Ս.Մարկովը, որը, ըստ էության, չէր կարող չիմանալ, որ ՌԴ արտաքին գործերի նախարար Ս.Վ. Լավրովը «Վալդայ» միջազգային բանավիճային ակումբի ռուսական քաղաքականությանը նվիրված նիստում, Սոչիում, 2019թ. հոկտեմբերի 2-ին, պատասխանելով՝ «Որքանով է բարձր Պարսից ծոցում Իրանի հետ ռազմական հակամարտության և առհասարակ մեծ տարածաշրջանում ռազմական հակամարտությունների, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության «ապաստանեցման» ռիսկերը» հարցին, ասել է. «Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա վերջին ժամանակներս իրավիճակը շփման գծում բավական հանգիստ է, միջադեպերը քիչ են, դրանք այնքան էլ մեծ չեն: Տեղի է ունեցել զոհվածների մարմինների փոխանակում, պատրաստվում են փոխանակել կալանավորված անձանց՝ ոչ մեծ թվով, բայց գործընթացն ընթանում է: ԵԱՀԿ Մինսկի խմբի Լեռնային Ղարաբաղի գծով համանախագահները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ը, աշխատում են սերտորեն և բարեկամաբար: Այս տարի արդեն երեք անգամ հանդիպել են արտաքին գործերի նախարարների հետ, այդ թվում ապրիլին

Մոսկվայում՝ իմ մասնակցությամբ, մենք հանդիպել ենք Ադրբեջանի, Հայաստանի արտաքին գործերի նախարարների հետ՝ համանախագահների ներկայությամբ: Իսկ ինչ վերաբերում է «հողի վրա» իրադրությանը, այժմ այն շատ ավելի հանգիստ է, քան մեկ տարի առաջ: Բայց քաղաքացիական գործընթացն արգելակված է, առայժմ չի ստացվում հանել արգելակները: Կողմերը բավական լուրջ հայտարարություններ են անում, այդ թվում հնչել են խոսքեր այն մասին, որ Ղարաբաղը Հայաստան է, ճիշտ այնպես, ինչպես Տիրանայից Ալբանիայի վարչապետ Է. Ռաման ասաց, որ Կոսովոն Ալբանիա է: Ղա, իհարկե, չի օգնում ստեղծել մթնոլորտ քաղաքական գործընթացի վերսկսման համար: Բայց մենք՝ որպես համանախագահներ, ամերիկացիների և ֆրանսիացիների հետ միասին ենք աշխատում: Այստեղ այն քիչ իրավիճակներից մեկն է, որտեղ մենք միասնական տեսլական ունենք: Մենք ունենք բազային փաստաթղթեր, չենք ցանկանում ռիզիկայի ենթարկել դրանք: Մենք ցանկանում ենք բազային սկզբունքների հիման վրա, որոնք բազմիցս քննարկվել են, փնտրել հանգուցալուծումը: Բայց այն պետք է գտնել ուղղակի երկխոսության միջոցով: Շփումներ կան, բայց երկխոսությունը կարգավորման մասին առայժմ չի վերսկսվում: Չեմ տեսնում այստեղ լայնածավալ մարտական գործողությունների ակնհայտ կամ ոչ ակնհայտ վերսկսման վտանգ: Կանենք ամեն բան, որպեսզի դա տեղի չունենա»: Հարգելի ընթերցող, ես հատուկ ներկայացրի Ս.Վ. Լավրովի պատասխանի ամբողջական տեքստը, որպեսզի մինչև վերջ հասկանալի լինի, որ հանձին Ս.Մարկովի մենք ունենք մի պերսոնաժ, որը, ըստ էության, իր մամուլի ասուլիսներով ու դրանց հաջորդող լուսաբանմամբ ադրբեջանական լրատվամիջոցներում ադրբեջանցիների ուղեղներում մտցնում է միտքն այն մասին, որ «Ռուսաստանը չի արգելում Ադրբեջանին կռվել Ղարաբաղում, օգտագործել ՌԴ-ից զնված զենքը»: Այսինքն՝ կոնկրետ այս դեպքում մենք ունենք սովորական սադրիչ-սուտասան: Բայց չեմ սխալվի, եթե ասեմ, որ ՀՀ «Ժողվարչապետի» կողմնակիցները, հատկապես սորոսյան լափակերների թվից, պետք է շնորհակալություն հայտնեն Ս.Մարկովին, այո, այո, հարգելի ընթերցող, շնորհակալություն հայտնեն այն բանի համար, որ նա փաստորեն հաստատեց մինչ այդ Ն.Փաշինյանի արտահայտած բարեհիմարությունը. Ապրիլյան պատերազմը (2016թ.), սանձազերծված Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ, չէր լինի, եթե Մոսկվան չտար իր համաձայնությունը: Ավելին, հիացմունք է առաջացնում Ս.Մարկովի ձգտումը՝ ադրբեջանցի ընթերցողներին բացատրել «Ժողվարչապետի» արտահայտած բացահայտ վնասաբեր, իսկ ըստ էության՝ ադրբեջանական քարոզչության ջրաղացին ջուր լցնող արտահայտությունն այն մասին, որ «Ղարաբաղը Հայաստան է, և վերջ», որը Նիկոլ Վոլակիչն ասել է ս.թ. օգոստոսի 5-ին, Ստեփանակերտի հանրահավաքի իր ելույթում: Ո՞րն է սադրանքի էությունը, կարող է հարցնել հարգելի ընթերցողը: Այդ մասին հնարավորություն ունեցել

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Եմ մանրամասն գրել ավելի վաղ REGNUM տեղեկատվական գործակալությունում հրապարակված հոդվածներում՝ «Փաշինյանի սադրանքը Ստեփանակերտում սպառնում է պատերազմով Հայաստանի և Արցախի դեմ» (REGNUM, 17 օգոստոսի 2019թ.) և «Թույլ չտալ Փաշինյանին Հայաստանը և Արցախը ներքաշել պատերազմի մեջ» (8 սեպտեմբերի 2019թ.): Եվ միանգամայն սպասելի էր, որ փաշինյանական այս ողջ սադրանքի վտանգավորությունը մատնանշել է գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանն LIVENews.am ինտերնետ պարբերականին տված հարցազրույցում: Հանուն արդարության նշենք, որ Արցախի հերոսն այս հարցին մոտեցել է նաև միանգամայն անսպասելի կողմից՝ հիշատակելով այն մասին, որ պատերազմի դեպքում նիկոլվոլակիչյան թիմը կարող է ստամոքսի խանգարում ունենալ՝ հայտնի գարշահոտ հետևանքներով, սանիտարահամաճարակաբանական առումով: Այս ամբողջ պատմության մեջ զմայլելին այլ բան է, այն, որ հանձին Սերգեյ Մարկովի՝ Ադրբեջանի նախագահը և Հայաստանի վարչապետը ձեռք են բերել «քաջարի», տիեզերական մասշտաբի մտածողության հավակնող փաստաբանի:

Եվ միանգամայն կանխատեսելի էր, որ Ս.Մարկովի խորհուրդներից, հեծծումներից ու հիացմունքից, թե՛ «Ադրբեջանն արդեն հոգնել է: Ընտրություններ, հեղափոխություն, հայկական կառավարության ձևավորում և այլն: Ինչքա՞ն կարելի է սպասել: Այս հողի վրա ռուսական դիվանագիտությունը ռազմավարական համբերություն ցուցաբերող Ադրբեջանին վերաբերվում է մեծ հարգանքով (իր վրա վերցնելով հարգելի Մարիա Զախարովայի դերը՝ այսպես է մարգարեացել Ս.Մարկովը – Ա.Գ.)», կօգտվի սուլթանության ագիտարոպը: Իսկ արդեն ս.թ. հոկտեմբերի 12-ին Minval.az ինտերնետ պարբերականում հրապարակվեց հոդված՝ «Ադրբեջանը Ղարաբաղում պետք է օգտագործի Թուրքիայի ստեղծած «հակաահաբեկչական գտման» նախադեպը» վերնագով, որում հեղինակ Նուրանին, որն ավելի հայտնի է որպես Թոֆիգախանում, գրում է. «Թուրքիան, ըստ էության, ստեղծեց, ավելի ճիշտ՝ հաստատեց անդրսահմանային ռազմական հակաահաբեկչական գործողություն (նկատի ունի Սիրիայում Թուրքիայի զինված ուժերի «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունը – Ա.Գ.): Եվ դրա անցկացման համար ձեռք բերեց և՛ Վաշինգտոնի, և՛ Մոսկվայի համաձայնությունը միաժամանակ: Եվ եթե PKK գրոհայինները Սիրիայից իսկապես իրանական միջանցքով փախչեն Հայաստան ու օկուպացված Ղարաբաղ, ապա արդյո՞ք հաջորդ «մաքրումը» արդեն այստեղ տեղի չի ունենա: Մանավանդ որ Անկարան լիովին կարող է ևս մեկ անգամ ձեռք բերել և՛ Վաշինգտոնի, և՛ Մոսկվայի աջակցությունը միաժամանակ: Բայց եթե անգամ դա տեղի չունենա, մեծ է հավանականությունը, որ Ադրբեջանում պարզապես կօգտվեն Անկարայի ստեղծած նախադեպից: Թուրքիան, հիշեցնենք, տվել է հակաահաբեկչական գործողության մեկնարկը ՄԱԿ Կանոնադրության

Հոդված 51-ի (որում ասվում է անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության անքակտելի իրավունքի մասին – Ա.Գ.) և ՄԱԿ Անվտանգության խորհրդի հակաահաբեկչական բանաձևերի հիման վրա: Իսկ Ղարաբաղի օկուպացիայի դեպքում առկա են նաև ՄԱԿ Ան չորս բանաձևերը, որոնք ընդունվել են դեռևս իննսունականների առաջին կեսին, բայց այդպես էլ մնացել են թղթի վրա, և առավել ևս՝ ինքնապաշտպանության իրավունքը: Հենց ՄԱԿ Ան «ղարաբաղյան» բանաձևերին է Վալդայի համաժողովի իր ծրագրային ելույթում հղում կատարել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը: Իսկ Վալդայի համաժողովը «ռուսական» հարթակ է, որն արդեն լրիվ սարսափելի է Երևանի համար: Վերջապես, կան լուրջ տվյալներ այստեղ ահաբեկչական ենթակառուցվածքի գոյության մասին: Դրանց կարելի է հավատալ կամ չհավատալ, բայց ահա սպառնալիքները՝ գործի դնել «դիվերսիոն-գրոհային ստորաբաժանումները» և «Ադրբեջանի թիկունքում քառս» ապահովել՝ հարվածներ հասցնելով նավթատարներին ու երկաթուղիներին, ճակատի գծի մյուս կողմում հնչել են միանգամայն պաշտոնապես: Եվ այս ամենը տեղավորվում է միասնական պատկերում. «Ադրբեջանն ունի բոլոր հիմքերը՝ Ղարաբաղում իրականացնելու իր «մաքրումը»: Թող ների ինձ հարգելի ընթերցողն այսքան ընդարձակ մեջբերման համար Թոֆիգախանումի հոդվածից: Սա հարկադրյալ միջոց է, քանի որ նրա ասածն անմիջականորեն մատնանշում է այն, որ Ադրբեջանը պատրաստում է տեղեկատվական հենք Արցախի Հանրապետության դեմ նոր պատերազմի սանձազերծման համար: Ըստ էության, ափշերոնյան սուլթանության ագիտարողը առանձնապես չի էլ թաքցնում իր նմանատիպ ռազմաշունչ մտադրությունները: Ի հաստատումն այս եզրահանգման՝ մեջբերենք Թոֆիգախանումի նույն հոդվածի վերջաբանը. «Այստեղ, իհարկե, ենթադրություններն ու վարկածները (<<-ում ահաբեկչական ենթակառուցվածքի առկայության մասին – Ա.Գ.) դեռևս գերակշռում են փաստերի հանդեպ (ի՛նչ խնդիր Մարկովի ու Թոֆիգախանումի համար. չկա՝ կհորինեն, միայն թե լավ վճարվող պատվեր լինի – Ա.Գ.): Արդյո՞ք Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ելույթը Վալդայի համաժողովում արդեն ադրբեջանական հակաահաբեկչական ռեյդի ազդարարումն էր: Քննարկվե՞լ է արդյոք այդ հարցը Իլհամ Ալիևի և Վլադիմիր Պուտինի բանակցություններում (այստեղ կասկածից վեր է, որ այս տողերը նախատեսված են ոչ այնքան ափշերոնյան սուլթանության ներքին լսարանի, որքան Նիկոլ Վոլակիչի սխրակիցների համար սորոսյան ֆոնդերի ու տարատեսակ անդրօվկիանոսյան ազգային դեմոկրատական ինստիտուտների լափակերների թվից, որոնք հատկապես շռայլ ֆինանսավորվում են իրենց շուրջօրյա հակառուսական և բացահայտ ռուսատյաց հսկումների համար, ու ահա այսպիսի նվեր – Ա.Գ.): Եվ եթե այո, ապա հաջողվե՞լ է արդյոք Ադրբեջանին ստանալ Կրեմլի համաձայնությունը: Կլինի՞ արդյոք այդ գործողությունն ադրբեջանական,

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Թե՞ Թուրքիայի հետ համատեղ: Մանավանդ որ վերջին ժամանակներս երկու երկրների զինված ուժերը կանոնավորապես համատեղ զորավար-
ժություններ են անցկացնում: Այս ամենի մասին մնում է միայն կռահել: Բայց
կասկած չկա, որ Հայաստանի անպատասխանատու վարքագծի ֆոնին
տարածաշրջանն ունի սեփական «խաղաղության ակունքի» անհրաժեշ-
տություն»: Ահա այսպիսի բաներ: Պատկերի ամբողջականության համար
նշենք, որ այդ հոդվածում բաժին է հասել նաև Իրանի Իսլամական Հան-
րապետությանը. «Հայաստանը Սիրիայի հետ ընդհանուր սահման, իհարկե,
չունի, «սողոսկել» թուրքական տարածքով հագիվ թե ստացվի, բայց «մի-
ջանցք» կարող է տրամադրել Իրանը: Այն նույն Իրանը, որի իշխանություն-
ներն անհանգստացած են Թուրքիայի գործողություններով Սիրիայում և դեռ
սիրիական սահմանին իրենց զորավարություններն են կազմակերպել:
Վերջապես, իրանական տարածքով ահաբեկիչները կարող են անցնել և՛
Հայաստան, և՛ օկուպացված Ղարաբաղ»: Եթե Թոֆիգախանումը նկատի
ունի ԻԼԻՊ անդամներին, որոնք մինչև վերջերս քրդական զինված կազմա-
վորումների պահպանության ներքո էին գտնվում, ապա դա իսկապես
մտահոգում է: Զե՞ որ դեռ վերջերս իրենք՝ ադրբեջանական ինտերնետ
պարբերականներն էին գրում այդ մասին: Որպեսզի ասածներս մերկա-
պարանոց չինչեն, հղում կատարեմ «Ադրբեջանցիները՝ հայտնի գործարար-
ների որդիները, գնացել են ԻԼԻՊ: Փորձագետ ՌԴ-ից» հոդվածին, որը
հրապարակվել է ադրբեջանական ինտերնետ պորտալում 2018թ. նոյեմ-
բերի 28-ին: Այսպես, Oxu.az-ի թղթակցի հետ զրույցում Քաղաքագետների
ռուսական ընկերության (ՔՐՈ) փորձագետը՝ ժամանակակից Աֆղանստա-
նի ուսումնասիրման կենտրոնի (ԺԱՈՒԿ) առաջատար մասնագետ Անդրեյ
Սերենկոն, ասել է հետևյալը. «Համաձայն ուժայինների պաշտոնական գնա-
հատականների՝ ԻԼԻՊ նախագծի ակտիվ փուլի ժամանակ Իրանի և
Սիրիայի տարածքում զոհվել է 100 ադրբեջանցի գրոհային: Կարծում եմ, որ
իրական թիվն էականորեն ավելի բարձր է: Ինձ հայտնի գնահատական-
ներով՝ ԻԼԻՊ-ում 2013–2016թթ. մինչև հազար ադրբեջանցի կար: Ընդ ո-
րում՝ խոսքը ինչպես Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիների, որ-
ոնք Սիրիա էին հասել ուղղակի հարևան Թուրքիայով, այնպես էլ Ռուսաս-
տանում ապրող և արդեն ՌԴ-ում արմատական դարձած ադրբեջանցիների
մասին է»: Oxu.az-ի զրուցակիցն ընդգծել է, որ իրեն հայտնի են դեպքեր, երբ
ռուսական մի շարք շրջաններում երիտասարդ ադրբեջանցիները՝ ռուսա-
կան բուհերի ուսանողները, բավական հաջողակ բիզնեսմենների որդիները,
մեկնել են Սիրիա, որպեսզի միանան ԻԼԻՊ-ին: «Կրկնում եմ, նրանք բնավ
աղքատ չէին և բավական ուսյալ մարդիկ էին, որոնք, այնուամենայնիվ,
ընդունել էին արմատական սալաֆիական քարոզչությունը և թողել էին
իրենց հարազատներին հանուն «ջիհադի», – նշել է Ա.Սերենկոն: ԻԼԻՊ-ում
ադրբեջանցիների առկայության մասին իր եզրահանգման մեջ Ա.Սերենկոն

բնավ միայնակ չէ: Այսպես, «Ադրբեջանի քանի՞ քաղաքացի է մարտնչում ԻՊ կողմից» հոդվածում, որը հրապարակվել է 2016թ. սեպտեմբերի 20-ին, կարդում ենք. «ԱՊՀ երկրների մեջ Ադրբեջանը գրավում է երրորդ տեղը քաղաքացիների թվով, որոնք մասնակցում են Իսլամական պետության (ԻՊ) ահաբեկչական խմբավորմանը: Այդ մասին Echo.az-ին ասել է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Ալիևը: «Ընթացիկ տարեսկզբին Իսլամական պետություն խմբավորումում կար Ադրբեջանի մոտ 1000 քաղաքացի: Ներկայում Ադրբեջանի մոտ 300 – 400 քաղաքացի մարտնչում է ԻՊ կողմից»: Հավանաբար, խոսելով «ահաբեկության ենթակառուցվածքի» մասին՝ Թոֆիգախանումը նկատի ուներ հենց այդ իլիպականներին՝ Ադրբեջանի քաղաքացիներին, որոնք խրամատավորվել էին մինչև վերջերս Սիրիայի հյուսիս-արևելքում քրդական զինված կազմավորումների կողմից վերահսկվող ճամբարներում, որոնց էլ շտապել է փրկել թուրքական ազրեսիվ զինվորականությունը:

Չէի ցանկանա անարձագանք թողնել նաև Ի.Ալիևի ելույթի հատվածը Ազգաբաղում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստում (2019թ. հոկտեմբերի 10–11): Ինչպես տեղեկացնում է ՌԻԱ «Նովոստի»-ն, Ի.Ալիևը նշել է, որ ԱՊՀ ղեկավարները քանիցս դեմ են հանդես եկել ֆաշիստների հերոսացմանը: «Ցավոք, նման բան տեղի է ունենում ԱՊՀ տարածքում, մասնավորապես՝ Հայաստանում, որտեղ նախկին իշխանությունը Երևանի կենտրոնում կանգնեցրել է ֆաշիստական դահիճ և դավաճան Գարեգին Նժդեհի կեղծամունդով Գարեգին Տեր-Հարությունյանի արձանը, որը ծառայել է գերմանական ֆաշիստներին... Ցավոք, Հայաստանի նոր իշխանությունը չի ապամոնտաժել այդ արձանը: Կարծում եմ, որ ֆաշիզմի հերոսացումը տեղ չպետք է ունենա ԱՊՀ տարածքում», – ցատումնալից ասել է ափշերոնյան սուլթանը: Ավաղ, Ի.Ալիևի հերթական, մեղմ ասած՝ անկոռեկտ հարձակմանը կարելի էր չարձագանքել: Տողերիս հեղինակն արդեն դիմել է այս թեմային: Կատարեմ միայն ոչ մեծ մեջբերում իմ «Արտաշես Գեղամյան. Մի՛ ունձգեք Հայաստանի ազգային հերոսների դեմ» հոդվածից՝ հրապարակված 2018թ. փետրվարի 7-ին «Արմենայրես» պետական տեղեկատվական գործակալության կողմից: Դրանում, մասնավորապես, նշված է. «Ադրբեջանի կողմից վարձված քաղաքական գործիչներն այսուհետև ևս ջանալու են սեպ խրել հայ-ռուսական հարաբերություններում: Հայ նշանավոր զորավար, պետական գործիչ և մտածող Գարեգին Նժդեհին թուրքերը ժամանակին տվել էին Նժդեհ-Աժդա փաշա անունը, որը նշանակում է ահուսարսափ տարածող փաշա: Նա իսկապես ահուսարսափ էր տարածում հայերին սպանողների և հայերի թշնամիների վրա՝ ստիպելով ենիջերիներին դողալ վախից: Բայց իր մահվանից 63 տարի անց էլ Հայաստանի Ազգային հերոսը շարունակում է սարսափեցնել Հայաստանի թշնամիներին, որոնք դեռ փորձում են խեղաթյուրել պատմությունը, մրոտել այն մարդու

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

անունը, ով եղել է անվերապահ հայրենասեր և խորապես երկրպագվող հերոս իր երկրում... Կասկածից վեր է, որ այդ իրադարձություններին անդրադառնալը պահանջում է ավելի խոր պրոֆեսիոնալ ուսումնասիրում և հավուր պատշաճի իրազեկություն: Սույն պարագայում, կարծում եմ, կարելի էր ծանոթանալ Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական գնահատականին, որը տրվել է Երևանում Գարեգին Նժդեհի հուշարձանի տեղադրման առիթով և հնչեցվել է պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի կողմից 2016թ. մայիսի 4-ին. Զախարովան ուղեկցում էր ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովին, որը Երևան էր եկել՝ մասնակցելու ՀԱՊԿ արտգործնախարարների խորհրդի նիստին: Այսպես, պատասխանելով «Ազատություն» ռադիոյի («Ազատություն» ռադիոյի հայկական ծառայություն) հարցին, թե արդյոք Մարիա Զախարովան նախկինի պես շարունակում է կարծել, որ Երևանում Գարեգին Նժդեհի հուշարձանի տեղադրումը «նացիզմը հերոսացնելու փորձ է», ասել է տառացիորեն հետևյալը. «Ինչ վերաբերում է հուշարձանին, դա, անշուշտ, Հայաստանի և Երևանի ներքին գործն է: Ես չատ եմ խնդրում ձեզ գտնել իմ մեկնաբանությունը և «Ազատություն» ռադիոյով տառացիորեն մեջբերել այն և այլևս այն չխեղաթյուրել: Որովհետև իմ խոսքերը խեղաթյուրելով դուք ավելի վատ եք վարվում և, բնականաբար, այդ ամենն աշխատում է այն մարդկանց օգտին, որոնք Հայաստանի բարեկամներ չեն հանդիսանում»: Կարծում եմ, ավելի համոզիչ չես ասի: Դե ինչ, հարգելի ընթերցող, սրանով կարելի էր վերջակետ դնել կամ, գոնե, ավիշերոնյան սուլթանի ճաշակով, բացականչական նշան: Բայց չէ, վերջակետ չդրվեց: Այդ նույն նիստում Նիկոլ Վոլանկիչ՝ Իլիամ Ալիևի խոսքերին, այսպես ասենք, հուզական-սիրողական պատասխանից հետո վերջինը ոգեշնչվեց: Ն.Փաշինյանից հետո ԱՊՀ պետությունների ղեկավարների Խորհրդի նիստում պետք է ելույթ ունենար Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, բայց Ի.Ալիևը, ըստ երևույթին, նրա հին բարեկամի իրավունքով, դիմեց նրան՝ խնդրելով թույլ տալ իրեն պատասխանել Հայաստանի վարչապետի ելույթին: Ադրբեջանական ոճով «Նյուրնբերգյան դատավարության» ցայժմ անհայտ-նորահայտ դատախազի պոռթկմամբ ավիշերոնյան սուլթանը հայտարարեց. «Ռազմական հակահետախուզության գործունեությունը պատերազմի եզրափակիչ փուլում» հողվածում, որը իրապարակվել է «Գաղտնի պատերազմ, հետախուզությունը և հակահետախուզությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» հրատարակության 6-րդ հատորում, ասվում է. «114 («Դրոմեդար») օբերխսբի գործակալների գործի շրջանակում (հատկանշական է, որ Ի.Ալիևը նոր անվանում է հորինել աբվերխսբի համար՝ այն անվանելով օբերխումբ – Ա.Գ.) հակահետախույզները պարզել և ձերբակալել են դաշնակցական բանակի նախկին գեներալ, տարագիր Տեր-Հարությունյանին, որը ծառայել է գերմանացիների մոտ՝ Նժդեհ կեղծանունով: Հայրենական մեծ պատերազմի շրջանում նա

Բուլղարիայի տարածքում հավաքագրել է ավելի քան 30 գործակալ, ազգությամբ հայեր, մասնակցել է նրանց դիվերսիոն պատրաստմանն ու Կարմիր բանակի թիկունք ուղարկելուն՝ խափանարար գործունեության համար: ՍՄԵՐՇ-ի աշխատակիցները կալանավորեցին 17 դիվերսանտի՝ թույլ չտալով կատարել դիվերսիոն ակտեր, իսկ մյուսների նկատմամբ հետախուզում հայտարարեցին: Նժդեհը մասնակցել է նաև Եվրոպայի հրեա բնակչության Հոլոքոստին: 1942թ. նա կազմակերպել է հայկական լեգեոնը, որը պայքարել է Խորհրդային Միության դեմ...»: Կարելի է էլի շարունակել ափշերոնյան սուլթանի սևացումները, բայց այստեղ կարևորն այլ բան է, կրկնեմ, այն է. «114 («Դրոմեդար») գործակալների գործի շրջանակում հակահետախույզները պարզել և ձերբակալել են դաշնակցական բանակի նախկին զեներալ, տարագիր Տեր-Հարությունյանին, որը ծառայել է գերմանացիների մոտ՝ Նժդեհի կեղծանունով: Հայրենական մեծ պատերազմի շրջանում նա Բուլղարիայի տարածքում հավաքագրել է ավելի քան 30 գործակալ, ազգությամբ հայեր, մասնակցել է նրանց դիվերսիոն պատրաստմանն ու Կարմիր բանակի թիկունք ուղարկելուն՝ խափանարար գործունեության համար: ՍՄԵՐՇ-ի աշխատակիցները կալանավորեցին 17 դիվերսանտի՝ թույլ չտալով կատարել դիվերսիոն ակտեր, իսկ մյուսների նկատմամբ հետախուզում հայտարարեցին»: Հենց դրա համար Գարեգին Նժդեհը ձերբակալվեց և դատվեց: Եթե նա կատարեր այն, ինչ սրանից զատ նրան վերագրում է Ի.Ալիևն իր «բոցաշունչ» ելույթում, չարժե կասկածել, որ Գարեգին Նժդեհը Խորհրդային Միության ռազմական տրիբունալով կդատապարտվեր գնդակահարության: Խոսքերիս հավաստիության մեջ կասկածողները կարող են համոզվել Իլիամ Ալիևի «լրացումների» մեջ՝ կարդալով «Ռազմական հակահետախուզության գործունեությունը պատերազմի եզրափակիչ փուլում» հոդվածը կայքում:

Հարգելի ընթերցող, բնավ չեմ ցանկանում չարաշահել ձեր համբերությունը, բայց որպեսզի տեղեկատվությունն ամբողջական լինի, թե ում հետ գործ ունենք, կոնկրետ պատմական փաստեր ներկայացնեմ, որոնք, ի թիվս այլոց, գուցե, որոշակի պարզություն կմտցնեն այն հարցում, թե ինչու Իլիամ Ալիևը Աշգաբադում ԱՊՀ պետությունների ղեկավարների Խորհրդի նիստում գնաց բոլորին լավ հայտնի պատմական փաստերի միտումնավոր խեղաթյուրման: Եվ այսպես, 2018թ. հունիսի 24-ին հրապարակվեց հոդված՝ «Ադրբեջանական լեգեոնը ԽՍՀՄ-ի դեմ Երկրորդ համաշխարհայինի ժամանակ» վերնագրով: Հոդվածում, մասնավորապես, գրված է. «Ադրբեջանական լեգեոնը ռազմական կազմավորում է, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մասնակցել է գերմանական վերմախտի կողմից: Լեգեոնի ստեղծման սկիզբը դրվեց 1941թ., բայց այն ժամանակ կազմավորումը կոչվում էր «կովկասյան-մուսուլմանական լեգեոն», որի մեջ մտնում էին ոչ միայն ադրբեջանցիներ, այլև Դաղստանի և կովկասյան որոշ այլ

հանրապետությունների իսլամ դավանող ներկայացուցիչներ: Բայց ադրբեջանցիների թիվն աստիճանաբար սկսեց քանիցս գերազանցել կովկասյան մյուս ժողովուրդների ներկայացուցիչներին, և 1942թ. հուլիսին ընդունվեց որոշում առանձին ադրբեջանական լեզուն ստեղծելու մասին, որը բաղկացած էր բացառապես ադրբեջանցիներից, իսկ մյուս ազգությունները տեղափոխվեցին այլ գործնասեր... Ադրբեջանական լեզունի մարտիկների թիվը հասավ մոտավորապես 40 հազար մարդու: Բայց 40 հազարանոց լեզունից բացի, գերմանական վերմախտում կային նաև այլ գորակազմավորումներ՝ բաղկացած ադրբեջանցիներից՝ պահապանների տարբեր դասակներ և ՍՍ-ական ստորաբաժանումներ, որոնց թվաքանակը դժվար է պարզել, տվյալները տարբեր են: Ադրբեջանական լեզունի գործնասերը մասնակցում էին մարտերին ինչպես արևելյան ճակատում, Կարմիր բանակի դեմ, այնպես էլ արևմտյանում՝ դաշնակիցների գործերի դեմ (ամերիկացիների, կանադացիների, բրիտանացիների, ավստրալացիների, նորգելանդացիների): Մինչև 1943թ. լեզունը մարտնչում էր արևելյան ճակատում: Ադրբեջանցիներն աչքի են ընկել Ուկրաինայի, Կովկասյան շրջանի (Նալչիկ և Մոզդոկ), Կրասնոդարի երկրամասի (Տուապսե, Անապա, Նովոռոսիյսկ), Աբխազիայի (Սուխում) մարտերում, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել են պարտիզանների դեմ պայքարում Ուկրաինայում, Լեհաստանում ու Բելոռուսիայում: 1943–44թթ. ադրբեջանական լեզունի գործնասերն ուղղվեցին դեպի արևմտյան ճակատ՝ Դանիա, Իտալիա, Սլովակիա և Ֆրանսիա: Այնտեղ նրանք նույնպես օգտագործվեցին տեղի պարտիզանների դեմ պայքարում, իսկ Ֆրանսիայում դաշնակիցների ափհանումից հետո կռվեցին նրանց դեմ: Երկրորդ համաշխարհայինի ամենահայտնի պատմական իրադարձություններից մեկը, որին մասնակցել է ադրբեջանական լեզունը, 1944թ. հանրահայտ Վարշավյան ապստամբությունն է: Լեհաստանի մայրաքաղաքում նախաձեռնվեց օկուպացիոն ռեժիմի տապալման փորձ, բայց այն (նկատի է առնվում ապստամբությունը – Ա.Գ.) դաժանաբար ճնշվեց, մասնավորապես, ադրբեջանական լեզունի ներկայացուցիչների կողմից (հավանաբար, Ի.Ալիևը Հոլոքոստին Գարեգին Նժդեհի մասնակցության մասին ճամարտակելով՝ շփոթել է նրան ադրբեջանական լեզունի դահիճների հետ, որոնք զանգվածաբար ոչնչացնում էին Վարշավյան գետոյի կալանավորներին – Ա.Գ.), որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել ապստամբության ճնշման գործում: Գերմանական հրամանատարությունը քանիցս դրական է արտահայտվել ադրբեջանական լեզունի մասին, իսկ նրա շատ սպաներ և զինվորներ երկաթե խաչեր են ստացել... Որոշ ադրբեջանցի լեզունականներ կռվել են վերմախտում ընդհուպ մինչև պատերազմի ավարտը: Օրինակ, Բեռլինի պաշտպանությունում 1945թ. խորհրդային զորքերի դեմ մասնակցել է մոտ 700 ադրբեջանցի: Գերմանիայի կապիտուլյացիայից հետո ադրբեջանական լեզունի մասնակիցները ձգտել են գերի

հանձնվել միայն ամերիկացիներին ու անգլիացիներին և հույս ունեին, որ իրենց չեն հանձնի Խորհրդային Միությանը»: Ինչպես կասեր Ի.Ալիևը, մեկնաբանություններն այստեղ ավելորդ են: Այնպես որ, Հիտլերին տորթ մատուցելու ասեկոսներին, որի վրա գերմաներեն գրված էր «Կասալից ծով», և իր ելույթում «այդ խորությունում» սև շոկոլադի պարունակության մասին զմայլելի մանրամասների նկարագրության փոխարեն վատ չէր լինի, եթե Իլիամ Հեյդարովիչը մի քանի նախադասությամբ ծանոթացներ ԱՊՀ պետությունների ղեկավարների Խորհրդի նիստի մասնակիցներին, օրինակ, այն վայրագությունների մասին, որոնք կատարել է «Ադրբեջանական լեգեոնի» ստեղծողներից մեկը՝ Աբդուռահման Ֆաթալիբեյլին: Ահա թե ինչ է Վարչապետի գետոյի հրեաների այդ դահճի մասին գրված 2016թ. նոյեմբերի 20-ին այդ նույն ոչ անհայտ Minval.az ինտերնետ պարբերականում՝ «Աբդուռահման Ֆաթալիբեյլի Դուդենգցի» վերնագրով հոդվածում. «Ա.Ֆաթալիբեյլիի հերոսության, խիզախության մասին լեգեոնական Շամիլ Աթաբեկը գրել է. «Սկսած 1942 թվականից՝ Ա.Ֆաթալիբեյլին լեգեոնականների հետ միասին գտնվել է ճակատում: Շուտով նրա հրամանատարության տակ գտնվող լեգեոնականների հերոսությունը սկսել է հիացնել գերմանացիներին: NN 805, 806, 807, 816, 818, 819, 1/111, 2/111 և 370 գումարտակները գործում էին Կովկասում, Ուկրաինայում, Ղրիմում, Բելոռուսիայում և Լեհաստանում»: Կարելի է տասնյակ հայտնի ադրբեջանական ինտերնետ պորտալներ վկայակոչել, որոնք խորամանկորեն արծարծում են լեգեոնական Շամիլ Աթաբեկի բաժակաճառերը Ա.Ֆաթալիբեյլիի հասցեին, ընդ որում՝ խոսքը ինտերնետ պարբերականների մասին է, որոնք Ադրբեջանում ունեն ավիշերոնյան սուլթանության նախագահական աշխատակազմի խոսափողները լինելու իմիջ: Բավարարվենք միայն նրա կյանքի ավարտի մասին տեղեկությամբ. «Պատերազմի ավարտից հետո Ֆաթալիբեյլին գերի է ընկել բրիտանական զորքերի մոտ: Ազատվելուց հետո եղել է Իտալիայում, երկու տարի ապրել է Եգիպտոսում, իսկ հետո ուղևորվել Արևմտյան Գերմանիա: Երկու ամիս անցկացրել է Թուրքիայում և նորից վերադարձել Մյունխեն: Գտնվելով Իտալիայում՝ Ֆաթալիբեյլին նամակ է գրել Մեծ Բրիտանիայի վարչապետ Քլեմենտ Էթլին, որում ներկայացրել է իր մտքերը Սառը պատերազմի սկսվելու և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմը շարունակելու անհրաժեշտության մասին, բայց նրա նամակն անպատասխան է մնացել... 1954թ. նոյեմբերին նա անհետ կորել է, իսկ մի քանի օր անց, մյունխենյան բնակարաններից մեկում հայտնաբերվել է ոմն Միկաիլ Իսմայիլովի դին: Քննության ընթացքում պարզվել է, որ դա հենց Ֆաթալիբեյլիի դին է, իսկ Իսմայիլովը ԿԳԲ զործակալ էր, որն ուղարկվել էր Արևմտյան Գերմանիա Ֆաթալիբեյլին վերացնելու համար: Որոշ ժամանակ անց Միկաիլ Իսմայիլովը կախված է գտնվել իր տանը Բաքվում»: Որպես տեղեկություն նշենք, որ «1952թ. մարտին Գարեգին Նժդեհին բերել են Երևան: 1953թ. ամռանը, Վլադիմիրի

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

բանտ տեղափոխելուց առաջ, Հայկական ԽՍՀ պետանվտանգության նախարարի կարգադրությամբ Գարեգին Նժդեհին մեքենայով տարել են ցուցադրելու Երևանը, վեր հառնող կառույցները, տարբեր տեսարժան վայրեր... 1955թ. սեպտեմբերին նրան նորից ուղարկել են Վլադիմիրի բանտ, որտեղ նա մահացել է նույն թվականի դեկտեմբերի 21-ին»: Այս իրադարձություններից, չեմ թաքցնի, շատ ու շատ ծանր, մինչև օրս արնահոսող մեր ընդհանուր պատմության, ԽՍՀՄ պատմության վերքերի շուրջ իմ խորհրդածություններից հետո մի բան չեմ հասկանում. ինչո՞ւ Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևին, որն ապրում է ապակե պալատում, պետք եկավ քար նետել հարևանների վրա: Ինչո՞ւ է Ադրբեջանի նախագահը, որին գնահատականների մեջ խստապահանջ մեր «Ժողվարչապետ» Նիկոլ Վովակիչը, նրա հետ Դուշանբեում, վերելակում երեսուն վայրկյան շփվելուց հետո (ուզում եմ հավատալ, որ վերելակը անսարքության պատճառով կանգ չի առել հարկերի միջև), անվանել էր կիրթ մարդ, այսքան բացահայտ սուտ է հնչեցնում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստում: Ավելին, կրկնում եմ, Նիկոլ Վովակիչի խոսքերից ելնելով՝ կիրթ մարդ լինելով՝ մի՞թե Ի.Ալիևն Աստվածաշնչից չի իշխեց որքան պարզ, նույնքան էլ իմաստուն ճշմարտությունը. «Եվ ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես, և քո աչքի միջի գերանը չես նշմարում: Կամ ինչպե՞ս կասես քո եղբորը. «Թող շյուղը աչքիցդ հանեմ, և ահա քո աչքի մեջ գերան կա: Կեղծավո՞ր, առաջ քո աչքից գերանը հանիր, և հետո մտիկ կտաս քո եղբոր աչքից շյուղը հանելու» (Մատթեոսի Ավետարան, գլուխ 7, էջ 3, 4, 5):

Խոստովանում եմ, հարգելի ընթերցող, որ հողվածի ամփոփիչ մասը գրելն ինձ համար առանձնապես դժվար է: Եվ բնավ ոչ այն պատճառով, որ մտքեր չկան, ճիշտ հակառակը: Պատճառն այլ է. չափից ավելի մեծ է ցանկությունը վերջապես գրելու հայկական երկու պետությունների խաղաղ արարման հեռանկարների, հարևանների՝ ադրբեջանցիների, թալիշների, լեզգիների, Ադրբեջանի Հանրապետությունում ապրող ազգային մյուս փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ զուտ մարդկային շփման վերականգնման մասին: Եվ որպեսզի դա տեղի ունենա հնարավորինս մոտ հեռանկարում, որպեսզի հերթական անգամ ստիպված չլինեմ գրել և ապացուցել Միջազգային իրավունքի նորմերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձեռքբերման գործընթացի լիակատար համապատասխանությունը: Նորից ու նորից հիշատակել այն մասին, որ 1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց Հռչակագիր «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին»: Որ Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, հենվելով Անկախության մասին հռչակագրի վրա, որն ընդունվել էր Ադրբեջանի Ազգային խորհրդի կողմից 1918թ. մայիսի 28-ին, և առաջնորդվելով Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991թ. օգոս-

տոսի 30-ի «Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրով՝ ընդունել է «Ադրբեջանի Հանրապետության սահմանադրական ակտը Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության մասին», որում հաստատել է Ադրբեջանի Հանրապետության պետական, քաղաքական և տնտեսական կարգի հիմքերը, որի Հոդված 1-ում գրված է. «Հոդված 1. 1920թ. ապրիլի 27–28-ին ՌԽՖՍՀ 11-րդ բանակի ներխուժումը Ադրբեջան, հանրապետության տարածքի անեքսիան, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության տապալումը, որը միջազգային իրավունքի սուբյեկտ է հանդիսանում, համարել անկախ Ադրբեջանի օկուպացիա Ռուսաստանի կողմից»: Իսկ Հոդված 2-ում կարդում ենք. «Հոդված 2. Ադրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է 1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդը»: Հիշատակենք նաև Հոդված 3-ը. «Հոդված 3. 1922թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը անվավեր է համարվում ստորագրման պահից՝ Ադրբեջանին վերաբերող մասով»: Եվ ահա, հարգելի ընթերցող, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը երբեք չի մտել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կազմի մեջ: Չկա նման բան պատմության մեջ, ուստի խոսել ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության մասին, նրա կազմում ենթադրելով Արցախի Հանրապետությունը, առնվազն Միջազգային իրավունքի տեսակետից լիակատար իրավաբանական անգրագիտություն է: Միևնույն ժամանակ, մեկ անգամ ևս հիշեցնենք հարգելի ընթերցողին, որ 1991թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի է ունեցել հանրաքվե, իսկ քվեաթերթիկում եղել է հետևյալ հարցը. «Համաձայն եք արդյոք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, որն ինքնուրույն է որոշում այլ պետությունների և ընկերակցությունների հետ համագործակցության ձևերը»: 132 328 ձայնի իրավունք ունեցողներից քվեարկությանը մասնակցել է 108 736 մարդ (82,6%), «կողմ» քվեարկել է 108 615 մարդ (քվեարկողների թվի 99,89%): Այսպիսին է իրողությունը, որը համառորեն չեն ցանկանում տեսնել ափշերոնյան կառավարողները, ավելին, հարյուր միլիոնավոր նավթադուարներ են ծախսում համաշխարհային հանրությանը մոլորության մեջ գցելու համար: Կա՞ արդյոք ելք ստեղծված իրավիճակից՝ միանգամայն իրավացիորեն կարող է հարցնել հարգելի ընթերցողը, և նա, իհարկե, իրավունք ունի անելու դա: Այո, ելք կա՛: Եթե Ադրբեջանի Հանրապետության կառավարողներն անկեղծ են Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության մասին իրենց հայտարարություններում, թող Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության իշխանությունների հետ հանդես գան համատեղ հայտարարությամբ Ադրբեջանի Հանրապետության և Արցախի Հանրապետության՝ որպես

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտների, Եվրասիական տնտեսական միություն (ԵՏՄ) և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ) մտնելու գործընթաց սկսելու պատրաստակամության մասին: Միայն այդ հեղինակավոր միջազգային կազմակերպություններին Ադրբեջանի և Արցախի միաժամանակյա անդամակցության դեպքում կբացվեն Հարավային Կովկասի անկախ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման իրական հեռանկարներ: Այլապես տարածաշրջանը կարող է հայտնվել այս բավական կարևոր աշխարհաքաղաքական տարածքում գերիշխանության համար մղվող պայքարի էպիկենտրոնում: Ավելի պարզ ասած՝ կվերածվի համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոնների մշտական ռազմական դիմակայության օջախի՝ արյունահեղ պատերազմի վերաճելու հեռանկարով: Ավաղ, այսպիսին է Անդրկովկասում և նրա շուրջ ժամանակակից գործընթացների տրամաբանությունը: ԵՏՄ-ին և ՀԱՊԿ-ին Ադրբեջանի ու Արցախի Հանրապետության՝ որպես Միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտների, համատեղ անդամակցության այլընտրանքը պատերազմն է, այն դեպքում, երբ Ադրբեջանի Հանրապետության և հայկական երկու պետությունների անդամակցությունն այդ միջազգային կազմակերպություններին խաղաղության ու անվտանգության երաշխիքն է: Հաշվի չնստել սրա հետ, ինչպես պատկերավոր արտահայտվել է Էնգիենի հերցոգի մահապատժի ժամանակ (Նապոլեոն I-ի հրամանով) Օրենսդիր հանձնաժողովի նախագահ, Նապոլեոնի հանրահայտ Քաղաքացիական օրենսգրքի հեղինակ Անտուան Բուլե դը լա Մյորթը, դա ավելին է, քան հանցագործությունը. դա սխալ է:

Մի խոսքով՝ եկել է հավակնություններից հրաժարվելու և առկա ֆինանսական, կազմակերպչական, մտավոր ռեսուրսները ոչ թե կոնյունկտուրային խնդիրների լուծմանն ուղղելու, այլ ազնիվ նպատակին հասնելու ուղղությամբ աշխատելու ժամանակը, այն է՝ հասնելու Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության, եթե կուզեք՝ պետականության կորստից փրկության ապահովմանը: Քանզի չի լինի ցանկացած այլ գործողությունների ոչ մի արդարացում և ներում, որքան էլ որ բարի մտադրություններով քողարկվեն դրանք, որոնք, կարելի է վստահաբար ասել, վերջնարդյունքում կհանգեցնեն հայ հասարակության պառակտմանը, ազգային միասնության հնարավորությունների խափանմանը: Եվ գլխավոր շարժիչ ուժը համազգային հաշտեցման այս պահանջված գործընթացում պետք է դառնա Հայաստանի Հանրապետության երեք նախագահների՝ Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի և Սերժ Ազատի Սարգսյանի համախմբող դերը: Իսկ մինչ այդ Նիկոլ Կոլակիչը, գերմանացի հռչակավոր պոետ Յոհան Ֆրիդրիխ Շիլլերի «Ֆիեսկոյի դավադրությունը Ջենովայում» պիեսի կերպարի՝ մավրի նման (այն բանից հետո, երբ օգնեց կոմս Ֆիեսկոյին ապստամբություն կազմակերպել

դոժ Դորիայի՝ Ջենովայի բռնակալի դեմ և շուտով պարզեց, որ այլևս պետք չէ դավադիրներին, որոնք նրա մեջ տեսնում էին իրենց նպատակներին հասնելու գործիքի), պետք է հեռանա: Իհարկե, Նիկոլ Վովակիչը չարդարացրեց «դավադիրների» հույսերը, չկարողացավ ներսից քանդել արցախցիների միասնականությունը, չհամարձակվեց ստորագրել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հակահայկական նախագծերի տակ, որոնք կազմվել էին Ջոն Բոլթոնի «գծաքանոններով»: Ընթերցողը կարող է տարակուսած հետաքրքրվել, իսկ ինչո՞ւ եմ այս ամենի մասին խոսում որպես կատարված փաստի: Պատասխանը պարզ է. Նիկոլ Վովակիչի համար նախանշված նման առաքելությունն անիրականանալի է, անգամ եթե նրան ապահովված էր կատարել պետական հեղաշրջում, անպատիժ, ուժի և սպառնալիքի կոպիտ կիրառմամբ հասնել ՀՀ VI գումարման Ազգային ժողովի ցրմանը՝ ՀՀ VII գումարման ԱԺ-ում որակյալ մեծամասնության ձևավորմամբ:

Այո, հարգելի ընթերցող, ՀՀ երեք նախագահների համախմբման անհրաժեշտությունը ժամանակի հրատապ հրամայականն է: Եվ բնավ ոչ այն պատճառով, որ ողջ հայ ժողովուրդը աղոթում է նրանց համար կամ նրանց այլընտրանք չի տեսնում, այլ այն պատճառով, կրկնում եմ, որ նրանց համախմբման այլընտրանքը պետականության կորուստն է: Այս եզրահանգումը, հարգելի ընթերցող, հիմնված է Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների համակողմանի վերլուծության վրա: Նման համախմբումն արժանի է Հայրենական մեծ պատերազմի տարիներին զոհված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների, Արցախի 1992–94թթ. ազգային-ազատագրական պատերազմի տարիներին զոհված հազարավոր զոհվածների լուսավոր հիշատակին: Նման համախմբումը կլինի հիշատակի տուրք Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված Ապրիլյան (2016թ.) պատերազմում զոհված 105 զինվորականներին և Արցախի Հանրապետության անմեղ նահատակված խաղաղ քաղաքացիներին:

Ես ավելի քան համոզված եմ, որ հայկական երկու պետությունների նախաձեռնությունը՝ Ադրբեջանի և Արցախի Հանրապետության՝ որպես Միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտների, միաժամանակյա անդամակցության մասին եթե պաշտոնապես առաջադրվի, ապա մեր դաշնակիցների, և առաջին հերթին՝ Ռուսաստանի կողմից, առանց որևէ կասկածի, կաջակցվի: Այս համոզվածությունը տալիս է նաև ռուս հայրենասեր-դերժավնիկ, Պետական դումայի պատգամավոր, ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն, Արցախի Հանրապետության «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի ասպետ Կոնստանտին Ֆյոդորովիչ Ջատուլինի ելույթը ս.թ. հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտում, Արցախի բարեկամների միջազգային համաժողովում, որը տեղի էր ունենում «Համագործակցություն հանուն

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

արդարության և խաղաղության» կարգախոսի ներքո: Խորհենք համաժողովում Կոնստանտին Ֆյոդորովիչի ելույթի հետևյալ տողերի շուրջ. «Ռուսաստանը վարում է ինքնուրույն քաղաքականություն: Չնայելով ոչ մի սպառնալիքի և պատժամիջոցի՝ մենք ճանաչել ենք Աբխազիայի և Հարավային Օսիայի ինքնորոշումը (ես այստեղ առաջին շարքում տեսնում եմ իմ լավ բարեկամ Դմիտրի Մեդուսին՝ Հարավային Օսիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարին), մենք աջակցել ենք Դրիմի Հանրապետությանը վերադառնալու հայրենի հանգրվան, մենք մասնակցում ենք Ուկրաինայի արևելքում քաղաքացիական պատերազմի կարգավորման ջանքերին, որովհետև մենք չենք կարող թույլ տալ հետագա բռնություններ հայրենակիցների հանդեպ Դոնբասի հողում: Ես վստահ եմ, որ Ռուսաստանի Դաշնությունը՝ ոպես պետություն, թույլ չի տա դարաբաղյան հակամարտության անարդար լուծում: Ռուս ժողովուրդն առաջին հերթին գնահատում է խիղճն ու արդարությունը: Իսկ նրանք ձեր կողմում են»: Եվ այս բնորոշումների հետ, որոնք ավելի քան խորն են բնութագրում ռուս ժողովրդի մեծությունը, անհնար է չհամաձայնել:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի I, II, III, V և VI

գումարումների պատգամավոր,

«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

АРМЕНИЯ: В ОТСТРАНЕНИИ ПАШИНЯНА ОТ ВЛАСТИ ВРЕМЯ НЕ ЖДЁТ

Аннотация

Мы имеем дело с изощренной системной работой по изменению генетического кода армянского народа. Итогом проведения подобной антинациональной диверсии, совершаемой «образованными» отбросами армянского общества, явится разрыв стратегического союза с Россией и как следствие – потеря Арменией государственности.

Анализируя публикации последних двух месяцев (после летних отпусков и каникул), все более убеждаешься в том, что на примере Республики Армения происходит некая модернизация технологий цветных революций, апробирование совершенно новых форм разрушения государства. Я не стану нагромождать статью фактами, которые со всей убедительностью свидетельствуют о том, что к апрелю–маю 2018 года, когда в Республике Армения был совершен государственный переворот, в стране за последние два десятилетия были созданы условия для реализации рекомендаций Джина Шарпа, изложенных в труде, раскрывающем технологии цветных революций и государственных переворотов. Речь о его книге «От диктатуры к демократии. Концептуальные основы освобождения», ставшей впоследствии политическим бестселлером, особенно приложение к ней, вышедшее под заглавием «198 методов ненасильственных действий». В арсенале гегемонов государственного переворота в Армении, почему-то именуемого «бархатной революцией», нашли место также и рекомендации от Стивена Манна, которые были опубликованы еще в 1992 году в статье «Теория хаоса и стратегическая мысль». Уже не приходится упоминать о последовательном применении другой небезызвестной технологии уничтожения устоев государственности, известной как «Окно Овертона». Причем технология «Окно Овертона», или, как ее часто называют, легализация греха в наши дни особенно востребована со стороны «народного премьера» Никола Пашиняна и К^О, а было бы справедливо заметить, что не столько с его стороны лично, сколько со стороны его заокеанских кукловодов.

Думается, читателю будет интересно узнать о том, что имелось в виду, когда говорилось о создании благоприятных условий, сделавших возможным государственный переворот апреля–мая 2018 года. Так, в 1997 году был создан Армянский филиал фонда «Открытое общество» Джорджа Сороса (Open Society Foundation, OSF). Следует отметить, что уже в 2003 году около 60 организаций, зарегистрированных в РА и финансируемых Фондом Сороса, объединились в инициативу под названием «Партнерство ради открытого общества». В дальнейшем уже на регулярной основе наиболее рьяные поборники распространения западных ценностей, то бишь местные наймиты, в обязанности которых входило разрыхление основ армянской государственности под самыми благовидными предложениями, были щедро вознаграждены. На их головы, как из рога изобилия, посыпались вожаемые ими доллары США, более того, между этими холуями завязалась острая конкуренция за гонорары от дедушки Дьёрдя Шороша-Шварца, нынче известного как Джордж Сорос. Чтобы не быть голословным, сошлюсь на конкретные примеры. Так, 24 января 2018 г. общественная организация «Союз информированных граждан» получила грант на сумму 39 млн 21 600 драмов, или около \$81 000. Причем цели проекта, осуществляемого данной организацией, таковы: «Подготовка 50 журналистов для освещения деятельности по мониторингу и защите интересов организаций гражданского общества в области прав человек, уголовного правосудия и социальной справедливости». В рамках этого проекта также предполагалось «обучение 75 молодежных активистов, которые должны были быть вооружены знаниями и навыками для участия в мониторинге и пропаганде организаций гражданского общества». Следует признать, что замысел авторов данного проекта полностью удался. Спустя два-три месяца мы стали очевидцами практической реализации указанными молодежными активистами полученных навыков, при самом активном участии которых срывались учебные занятия в школах, практиковалось подстрекательство старшеклассников к неповиновению руководству школ, происходило перекрытие дорог в Ереване, захват здания Общественного радио Армении. Их усилия не остались незамеченными. Так, 1 июля 2018 г. «Союз информированных граждан» получает второй грант на сумму \$91 000, нацеленной на: «а) мониторинг и анализ пропаганды и популизма в социальных и традиционных СМИ, проведение дискуссий с представителями СМИ и гражданского общества о дезинформационных кампаниях; б) проведение исследований о коллективной памяти с 1991 года по настоящее время; в) проведение пропагандистских поездок для поддержки процессов демократизации в Армении». Что ж, следует признать, что и этот проект вполне успешно реализовался. Большинство масс-медиа, обслуживающих интересы

западных архитекторов цветных революций, хорошо усвоили основы пропаганды и популизма. Справедливости ради отметим, что в этом действе сильно преуспел «народный премьер» Никол Воваевич. Этот непревзойдённый популист, которого, увы, вовремя не остановили (хотя бы после захвата здания Общественного радио Армении), своей ложью загнал обезволенных нуждой граждан Армении в массовый психоз. Первая попытка Никола Воваевича на этом поприще, прямо скажем, удалась, а чтобы убедиться в этом, достаточно внимательно всмотреться в видеокдры, где запечатлены выражения лиц участников многотысячных митингов, имевших место в апреле–мае 2018 года в Ереване. Увы, сия опасная для государства болезнь массового психоза граждан уж слишком медленно отступает. Надо также признать, что приспешники Никола Воваевича преуспели также и в проведении дезинформационных кампаний. Так, эфирное время большинства телеканалов, передачи интернет-порталов и публикации в масс-медиа перенасыщены разного рода дискуссиями, ничего общего не имеющими со злободневными задачами, стоящими перед Республикой Армения (РА). При этом нашим гражданам навязывается тематика, которая нацелена на разобщение армянского народа, особенно на возведение стены отчуждения между жителями Армении и Арцаха. Результатом же «исследований о коллективной памяти с 1991 года по настоящее время», указанных в целях этой программы, стала навязанная обществу гнусная дискуссия якобы по выявлению заказчиков трагедии 27 октября 1999 года, когда в результате террористического акта в Национальном Собрании РА были убиты выдающиеся сыны нашего народа – спикер НС РА Карен Демирчян, премьер-министр Вазген Саркисян, вице-спикеры НС РА Юрий Бахшян и Рубен Мироян, министр по оперативным вопросам Леонард Петросян, депутат НС РА Армен Арменалян, академик Национальной академии наук РА, депутат НС РА Микаел Котанян, а также находившийся во время теракта в зале здания парламента председатель редакционного совета газеты «Айастан» («Армения»), депутат Национального Собрания РА Генрик Абраамян, который умер от сердечного приступа. В преддверии 20-й годовщины со дня их гибели хотелось вновь сказать – вечная память и вечная слава безвинно убиенным славным сынам армянского народа. Писать о цинизме публикаций, которыми в наши дни насыщено медиа-пространство РА, поверьте, уважаемый читатель, мне очень и очень трудно. Дело не в эмоциях, которые захлестывают все мое сознание, а в осознании того, насколько стали нелюдями те, кто эту общенациональную трагедию стремятся подчинить достижению губительной для армянского народа цели – подрыву веры в святую память об убиенных, что в конечном счете является прямой дорогой разрушения армянской государственности. Да, да,

Вместо послесловия. По сложившейся традиции не хотелось завершать статью на тревожной ноте. Благо в Армении еще не перевелись люди, которые черпают в себе силы, осмысливая жизненный подвиг выдающихся сынов армянского народа, которые в суровые годы Великой Отечественной войны 1941–1945 гг. ковали победу, затем своим самоотверженным трудом создавали будущее могучей страны – Союза Советских Социалистических Республик. Уважаемый читатель, это не ностальгия по годам моей молодости, а внутреннее убеждение в том, что осмысление ратного и трудового подвига советского народа поможет нам понять все происходящее сейчас. На днях состоится презентация второго издания книги воспоминаний выдающегося государственного деятеля Советской

Армении, ветерана Великой Отечественной войны, с честью прошедшего боевой путь со скамьи курсанта военного училища из подмосковного Нахабино до Будапешта, Алексана Матевосовича Киракосяна под заглавием «Воспоминания и раздумья на пороге заката». Я имел счастье со школьных лет быть знакомым с Алексеем Матвеевичем (так его величали родные и близкие ему люди), так как после окончания войны он работал и дружил с моим отцом, Мамиконом Арташесовичем Гегамяном, известным партийным и государственным деятелем Советской Армении. Алексей Матвеевич, этот незаурядный армянин, занимая высокие государственные должности (министра, заведующего отделом организационно-партийной работы ЦК КП Армении, первого заместителя председателя Совета Министров Армянской ССР), воспринимался в народе как ревностный защитник наших семейных, христианских традиций, как ангел-хранитель талантливых армянских деятелей культуры – писателей, поэтов, художников, артистов, а также начинающих политиков. Запомнился связанный с ним примечательный случай. Как-то захворал талантливый народный поэт Армении Амо Сагиян. Мастера пера поместили в небольшой палате бывшей в советские времена престижной больницы. Алексей Матвеевич позвонил мне, к этому времени отставному мэру г. Еревана (дело было летом 1991 года), и попросил заехать за ним, чтобы мы вместе навестили в больнице Амо Сагияна. Будучи не ахти каким водителем, зато за рулем собственных «Жигулей» 07-й марки, мы с Матвеевичем поехали навестить незаурядного воспевателя земли армянской. По дороге в больницу от Алексея Матвеевича я узнал, что Амо Саакович сильно хандрит и находится в полной апатии, и передо мной была поставлена задача суметь каким угодно способом убедить его выйти на свежий воздух, благо рядом с больницей было живописное ущелье реки Раздан. При встрече с мастером я прибегнул к хитрости, за что все еще каюсь, хотя мое лукавство пошло во благо, и сказал мастеру, что нуждаюсь в совете старших, а больница – не лучшее место для откровенных бесед. Видимо, Амо Сааковичу показалось, что я тяжело переживаю свою отставку, когда, будучи полон энергии и планов по развитию города Еревана, я подал заявление об увольнении с должности мэра г. Еревана. Однако разговор сейчас не об этом. Амо Сагиян поверил мне и буквально преобразился на глазах, сказав: – Матвеевич, Арташесу надо помочь, поедem куда-нибудь посидим и обсудим, что будем делать. Мы провели более трех часов вместе и при этом обсуждали животрепещущие проблемы – нет, нет, уважаемый читатель, не касательно меня, а Республики Армения в целом. Ведь время было тревожное. К власти в Армении пришли аодовцы во главе с Левоном Тер-Петросяном. Не скрою, что из общения с этими великими армянами я извлек большой жизненный урок. За плечами Алексея Мат-

веевича к тому времени были сотни созданных предприятий легкой, пищевой и местной промышленности, десятки, если не сотни, построенных сельских школ, детских садов, домов культуры, десятки тысяч гектаров освоенных земель. А самое главное – большая плеяда воспитанных им партийных, советских и хозяйственных руководителей. Про подлинно национальную, идущую из глубины веков мудрую поэзию Амо Сагияна написана не одна диссертация. Я всего лишь могу сказать, что напиши он свое одно стихотворение «При слове Армения» («Հիշիւնքի փութի»), то уже этим обессмертил бы себя, ну прямо как Маргарет Митчелл, которая обессмертила себя своим единственным романом «Унесенные ветром».

И сейчас, раздумывая об этой незабываемой встрече, хочу передать свои ощущения, сравнить их с чем-то понятным и родным для советского, русского человека, россиянина. И на память приходит глубоко философский советский художественный фильм «Всё остается людям». Так вот до последней минуты своей жизни эти выдающиеся сыны армянского народа, Алексан Киракосян и Амо Сагиян, как и герой фильма академик Дронов, роль которого блестяще исполнил Николай Черкасов, боялись не успеть довести дело всей своей жизни до конца – увидеть сильную духом, сплоченную воедино армянскую нацию, безопасно создающую в двух армянских государствах – Республике Армения и Нагорно-Карабахской Республике. В случае с Алексеем Матвеевичем имеем то, что его жизненный подвиг описан в книге «Воспоминания и раздумья на пороге заката», причем в этой книге непредвзято описаны документальные факты из его военных и трудовых будней. Убежден, что прочитав ее второе издание, приуроченное к 100-летию со дня рождения А. М. Киракосяна, у читателей взойдет на душе солнце. Читая же стихи Амо Сагияна, невольно будешь испытывать чувство гордости за то, что ты армянин, за тернистую, но всепобеждающую историю, историю армянского народа, который на протяжении веков черпал силу в армянском языке, в своей незыблемой вере в Бога, в Армянскую Апостольскую Святую церковь, не будь которой, наш народ не смог бы столь достойно пройти сквозь тернии истории и создать свою независимую государственность – Республику Армения и Республику Арцах. И в конце хотелось бы сказать: «Со 100-летним юбилеем, Алексей Матвеевич!».

P.S. Когда писались эти строки, мне позвонил известный публицист Артем Хачатурян и пригласил на концерт Камерного оркестра Армении с участием своего одиннадцатилетнего сына, талантливого и виртуозного скрипача Александра Хачатуряна, который состоится 23 ноября т. г. Поинтересовавшись о творческих планах Алика, я еле сдержал свои эмоции. В настоящее время это юное дарование денно и ночью готовится к

концерту с Берлинским филармоническим оркестром, на котором мечтает исполнить Концерт для скрипки с оркестром № 1 Дмитрия Шостаковича, который должен состояться в Берлине в день 75-летия Великой Победы советского народа в Великой Отечественной войне. Пожелаем же удачи Алику Хачатуряну – этому юному таланту из Армении.

АРТАШЕС ГЕГАМЯН

Депутат Национального Собрания РА I, II, III, V и VI созывов,
председатель партии «Национальное Единение»



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱՌՈՂՋ ՌԺԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Հայաստանում վերջին շաբաթներին ծավալվող իրադարձությունները կարող էին դառնալ հոլիվուդյան հետաքրքրաշարժ թրիլերի փայլուն սցենար: Եվ կասկածից վեր է, որ մերօրյա Հայաստանի կյանքի վրա հիմնված սցենարի էկրանավորումը եթե հանձն առներ, օրինակ, արդիականության մեծագույն ռեժիսոր, մետր Մարտին Չարլզ Սկորսեզեն, ապա, անշուշտ, այդ ֆիլմը հերթական «Օսկարը» կբերեր կինոյի այդ նշանավոր վարպետին: Մ.Սկորսեզեի «Ուրացողները» ֆիլմի նմանողությամբ Հայաստանի մասին ֆիլմը կարելի էր կինովարձույթ մտցնել «Ուրացողը Իջևանից» վերնագրով: Այո, հարգելի ընթերցող, արդեն հավանաբար կռահեցիք, որ այդ ֆիլմի գլխավոր հերոսն իրավամբ պետք է դառնա Հայաստանի «ժողվարչապետ»՝ իր իսկ սիրեցյալ Նիկոլ Վովակիչ Փաշինյանը: Իսկ այդ ի՞նչ հերոսական բան է արել Փաշինյանը, որպեսզի նրա արարքներն անմահացնեն, ինչպես «Հերակլեսի սխրանքները» ֆիլմում, և դրանով իսկ հարստացնեն համաշխարհային կինեմատոգրաֆի գանձարանը: Ավաղ, այս հակահերոսը 2018թ. ապրիլ-մայիսի պետական հեղաշրջումից և Հայաստանում իշխանությունը զավթելուց հետո անցած մեկուկես տարում շատ բան է հասցրել անել: Նա ծանր վերքեր է հասցրել և շարունակում է հասցնել հայ ժողովրդի ինքնագիտակցությանը, մեր ազգային ինքնությանը, հայ ազգի՝ հազարամյակների ընթացքում ձևավորված գեներտիկ կոդին: Չեն հոգնեցնի ընթերցողներին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, Նորին Սուրբ Օծություն, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ի հասցեին նրա կողմնակիցների անկիրթ հարձակումների մանրամասների, նիկոլվովակիչյան երկրպագուների ցինիկ ու սրբապիղծ գործողությունների մասին հիշատակումով, որոնք ահա արդեն մեկուկես տարի իշխանությունների թողտվությամբ (իմա՝ խրախուսմամբ) կատարվում են մեր հարյուր հազարավոր քաղաքացիների աչքերի առջև: Հայաստանի քաղաքացիների, որոնք մի ինչ-որ ընդարմացման, տրանսի մեջ են հակազգային ջահելների սատանայական գործողություններից, որ քաջալերվում են իրենց կուռքի՝ Նիկոլ Վովակիչի կողմից:

Ավաղ, նայելով ոչ վաղ անցյալին՝ գալիս ես այն եզրակացության, որ գործվող չարիքը լոկ առաջին դրսևորումներն են հայ ժողովրդի գորովանքով պահպանվող ավանդույթների պլանաչափ խափանման, մեր հասարա-

կության անսասան բարոյական հիմքերի խարխլման, որ հենվում են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՀԱԵ) հանդեպ մեր հավատի վրա: Այժմ արդեն օրակարգում գլխավոր տեղ է զբաղեցրել նիկոլվովակիչյան կառավարության նոր հակազգային գաղափարը: Այսպես, մի քանի օր առաջ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՍՆ) մշակեց օրենք «Բարձրագույն կրթության և գիտության մասին», ըստ որի՝ «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» և «Հայ գրականություն» առարկաները ոչ հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար այլևս պարտադիր չեն լինի: Դրան հավելենք, որ անցած շաբաթ ԿԳՄՍ փոխնախարար Ա.Անափիոսյանը հարցազրույցում ասաց, որ պետք է միացնել «Հայ եկեղեցու պատմություն» առարկան «Հայոց պատմությանը»: Այս ամենը սպասելի էր, համենայն դեպս՝ տողերիս հեղինակի համար, որը «Ժողովարչապետի» և ԿՕ-ի բոլոր գործողությունները բացատրում է «ոնց որ տերն է, նույնն էլ խերն է» ասացվածքով:

Կարծում եմ, շատ կարևոր է նշել, թե ինչպես արձագանքեց այս բարեհիմարություններին մեր Նիկոլ Վովակիչը: «Մենք պետք է ունենանք ընդհանուր պատմություն, որպեսզի ինքներս մեզ ավելի լավ ուսումնասիրենք մեր բոլոր հաջողություններով և անհաջողություններով: Գերագույն հոգևոր խորհրդի նիստում (որը տեղի էր ունեցել մի քանի օր առաջ Նորին Սուրբ Օծություն, Ծայրագույն պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ի նախագահությամբ – Ա. Գ.) ես ասացի, որ հայ եկեղեցու պատմությունը պետք է պատշաճ ձևով ներկայացված լինի Հայաստանի ընդհանուր պատմության մեջ», – Facebook-ի ուղիղ եթերում ս.թ. նոյեմբերի 4-ին ասաց Ն.Փաշինյանը: «Այսօր առավոտվանից ցանկանում եմ թարգմանել open minded անգլերեն արտահայտությունը (բան չես կարող ասել, զբաղված մարդ է մեր Նիկոլ Վովակիչը, ընդ որում՝ լայն մտահորիզոնով, ուստի ստիպված է դիմել անգլերեն արտահայտությունների: Դե, ինչ անենք, որ թերի բարձրագույն կրթություն ունի, փոխարենը մտքի թռիչքը տեսնեք: Մի խոսքով՝ իմացիր մերոնց – Ա. Գ.): Մենք պետք է գտնենք պատասխանները քննարկումներում, կշռադատենք փաստարկները, օգտագործենք հաջող միջազգային փորձը»:

Նա նաև կոչ արեց պերֆորմանսները «սատանայականություն» չանվանել (խելացի է, ախր ամեն ինչից տեղյակ է) և հանդուրժողաբար վերաբերվել հեթանոսներին (նկատի ունեք ցածրահարգ ներկայացումը, որի բեմականացման համար վճարվել է պետության կողմից, որն առաջ է բերել քաղաքացիների արդարացի ցասումը): «Այսպես մենք աստիճանաբար կգլորվենք մինչև ինկվիզիցիա, կսկսենք այրել մարդկանց», – գնահատականների իր ջրվեժն այսպես սանձեց այս հաշվով՝ միանգամայն անտեղի որպես օրինակ վկայակոչելով հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցին, որի առանձին ստեղծագործություններ խորհրդային ժամանակներում համարվել են ցենզուրայից դուրս: Ինչ վերաբերում է «Հայոց լեզու», «Հայոց պատ-

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

մություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդմանը, ապա Նիկոլ Վովակիչը նշեց. «Ի՞նչ խնդիր ենք մենք դնում մեր բուհական համակարգի առաջ: Խնդիր ենք դնում, որպեսզի մեր բուհական համակարգը մրցունակ լինի: Երկարաժամկետ հեռանկարում պետք է լինի մրցունակ առաջատար բուհերի հետ («Հայոց լեզվի», «Հայոց պատմության» և «Հայ գրականության» ուսուցումը, «Ժողովարչապետի» կարծիքով, հավանաբար խստիվ արգելակում է այդ նպատակին հասնելը – Ա. Գ.): Հիմա դիտարկենք «Հայոց լեզվի», «Հայոց պատմության» և «Հայ գրականության» պարտադիր դասավանդումը մեր բուհերում: Հարց. համարվո՞ւմ են արդյոք անգլերենը և ԱՄՆ պատմությունը պարտադիր առարկաներ Հարվարդի համալսարանում (իզուր չէ, որ Նիկոլ Վովակիչի երկրպագուները իրավամբ նրան համարում են տիեզերական մասշտաբի քաղաքական գործիչ, դե, իսկապես, ոնց որ «Զգուշացիր ավտոմեքենայից» ֆիլմից լինի, երբ ինքնագործ թատրոնի ռեժիսորը՝ Եվգենի Եվստիգնևի փայլուն կատարմամբ, բազմանշանակ հայտարարում է. «Ժամանակը չէ՞, արդյոք, բարեկամներս, ձեռնամուխ լինենք Վիլյամին, մեր Շեքսպիրին»: Մի խոսքով՝ Փաշինյանը կոչ է անում հավասարվել Հարվարդին, ոչ՝ ավելի ցածր – Ա. Գ.), և բոլոր ուսանողները պարտադիր պետք է ուսումնասիրեն դրանք՝ անկախ ընդունած մասնագիտությունից»:

Կարդալով այս նորահայտ ուսյալ Տարասի դատարկաբանությունը՝ ուզում ես նրա համար բացել այբբենական ճշմարտություններ այն մասին, որ այսօր, ինչպես երբևէ, կարևոր է մեր ուսանողների մեջ սերմանել հայ ժողովրդի հազարամյակների էվոյուցիայի իմաստավորման կարողությունները, մանավանդ գլոբալացման և բուռն ընթացող քաղաքակրթական գործընթացների մեր օրերում: Չափազանց կարևոր է ձևավորել նրանց մեջ հայ ինքնությանը սպառնացող մարտահրավերներին դիմակայելու հմտություններ մշակելու կարողությունը: Բայց որտեղի՞ց իմանա Facebook-յան օյիններով գերգբադված Նիկոլ Վովակիչը, որ այդ հարցերն այսօր ձեռք են բերում բացառիկ հրատապություն հայ ժողովրդի պատմության կոպտագույն կեղծումների պայմաններում, որը համակարգային պետական հիմքի վրա իրականացվում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Չէ՞ որ հենց մեր տազնապալի ժամանակ են հատուկ նշանակություն ստանում հայ քաղաքական մտքի ձևավորման նախապատմության խոր գիտելիքները, այն մտքի, որը XVII–XIX դարերում հայ ժողովրդին օբյեկտիվորեն բերեց բախտորոշ քաղաքական կողմնորոշման, այն է՝ եղբայրական դաշինքի Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի հետ: Անշուշտ, ազգային անվտանգության այս գործիքանու լիակատար տիրապետումն առանց այս գործընթացներում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և հայոց լեզվի դերի իմաստավորման՝ անհնար է: Այդ գործընթացում դժվար է գերազնահատել Հայկական հարցի առաջացման ակունքների, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին միջազգային դիվանագիտության պատմության մեջ դրա տեղի իմա-

ցության անհրաժեշտությունը: Այս առնչությամբ անպայման պետք է խոսել պատշաճ գիտելիքների տիրապետելու անհրաժեշտության մասին՝ պատմական գործընթացների, որոնք նախորդել են 1915–1923թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությանը, հատկապես Ռուսաստանում Փետրվարյան (1917թ.) և Հոկտեմբերյան (1917թ.) հեղափոխությունների լույսով, Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորման ու անկման և ՌՍԴ(Բ)Կ Կապբյուրոյի կողմից 1920–21թթ. Հայաստանին պարտադրված տարածքային անեքսիաներն անկանխակալ վերլուծելու համար: Եվ վերջապես, շատ կարևոր է, որ երիտասարդ սերունդն իմանա Հայկական ԽՍՀ պատմական նշանակության մասին՝ հայ ժողովրդի ստեղծարար պոտենցիալի համակողմանի զարգացման համար, որը բերեց նրա գիտության ու մշակույթի բարգավաճման, ապահովեց համընդհանուր գրագիտություն և դրեց երրորդ հայկական հանրապետության՝ Հայաստանի Հանրապետության, անկախ ինքնիշխան պետության անարյուն կայացման հիմքերը, շատ բանով օժանդակելով համաժողովրդական ազգային-ազատագրական շարժմանը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչությանը ցեղասպանությունից փրկելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման համար:

Գիտակցելով իրենց զբաղեցրած աթոռները կորցնելու վտանգը՝ ԿԳՄՍՆ օրինագծի հեղինակները 2019թ. նոյեմբերի 6-ին ստիպված էին հանդես գալ պաշտոնական հայտարարությամբ, որում ասվում է. «Նախագծի ընդունումից հետո (խոսքը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրինագծի մասին է – Ա. Գ.) ցանկացած համալսարանի գիտական խորհուրդ իրավունք կունենա որոշել, որ այդ առարկաները պարտադիր կարգով պետք է դասավանդվեն բոլոր ֆակուլտետներում»:

Ընթերցողը միանգամայն տեղին կարող է հարց տալ. մի՞թե այսքան բարդ միջազգային իրադրությունում, որն ստեղծվել է Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում, Ադրբեջանում անգուսպ սպառազինությունների մրցավաքի (նշենք, որ Ադրբեջանի պաշտպանության և ազգային անվտանգության ամրապնդման բյուջետային ծախսերը 2020թ. ծրագրված է հասցնել \$2 մլրդ 266,8 մլն-ի, ինչը 20,9%-ով ավելի է 2019թ. ցուցանիշից) և Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու ուղղակի սպառնալիքների պայմաններում հայ ժողովրդի և կրոնի պատմության, հայոց լեզվի ու հայ գրականության դասավանդման հարցերն առավել հրատապ են: Բնավ չնսեմացնելով դրանց բացառիկ կարևորությունը՝ կարծում եմ, որ դժվար է չհամաձայնել այն բանի հետ, որ իշխանությունների պարտադրած խնդրի առավել բանիմաց լուծման համար անհրաժեշտ պայման է հայկական երկու պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության գոյության անվտանգության ապահովումը: Ցանկացած այլ պարագայում հանրային կրթերի բորբոքումը վերոնշյալ հարցերի շուրջ, կրկնում եմ, պարտադրված

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

իշխանությունների կողմից հայ ժողովրդին, հղի է հայ հասարակության ներսում հետագա պառակտման խորացմամբ, ինչը կդառնա հերթական բաղձալի նվերը ավիշերոնյան սուլթանությանը:

Եվ ահա այս ֆոնին Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանությունը տարածել է հայտարարություն, որի համաձայն. «Այս տարի օգնությունը (նկատի ունեն Հայաստանին ԱՄՆ-ի կողմից – Ա. Գ.) կազմել է \$60 մլն, ինչը 40%-ով ավելին է անցած տարվա համեմատ: Այդ ֆինանսավորումը, ԱՄՆ Պետական դեպարտամենտի և Միջազգային զարգացման գործակալության տրամադրած միջոցների հետ միասին, ներառում է նաև ԱՄՆ էներգետիկայի նախարարության, ԱՄՆ անտառային ծառայության և ԱՄՆ պաշտպանության նախարարության ծրագրերը: ԱՄՆ կառավարությունն այս միջոցներով աջակցություն է ցուցաբերել դեմոկրատիայի զարգացմանը բազմաթիվ ուղղություններով, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարին, ավտանգությանը, էներգետիկային, կրթությանը, լեզվի ուսուցմանը, անտառային ծառայություններին, մարդու իրավունքներին, քաղաքացիական հասարակությանը, հաշվետվողական և թափանցիկ պետկառավարմանը, ներառյալ իրավապահ մարմինները, արդարադատությանը և դատական համակարգին»:

Հետո ավելի հետաքրքիր է: «ԱՄՆ-ը վերջին 27 տարիներին Հայաստանին աջակցել է դեմոկրատական գործընթացների զարգացման և դեմոկրատական ինստիտուտների զարգացման գործում, և մենք մտադիր չենք փոխել դա հատկապես հիմա, երբ դեմոկրատիան, ինչպես երբեք, ամուր է Հայաստանում: Հենց դրա համար հպարտությամբ տեղեկացնում ենք, որ այս տարի աջակցությունը կազմում է ավելի քան \$60 մլն», – դիվանագիտական ներկայացուցչությունում մեջբերել են Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի խոսքը:

Ամերիկյան դեսպանի բավական հետաքրքիր մեկնաբանությունը և պատկերացումը «Հայաստանում ինչպես երբեք դեմոկրատիայի ամրության մասին» հավանաբար զուգորդվում է 2018թ. հունիսի 6-ի բռի հարձակումների հետ Ամենայն Հայոց կաթողիկոս, Ծայրագույն պատրիարք Գարեգին II և Սբ Էջմիածնի վրա «ժողվարչապետի» կողմնակից սանձարձակ ջախելների կողմից, որոնք հանդես էին գալիս «Նոր Հայաստան, նոր հովվապետ» կարգախոսներով, կամ էլ 2018թ. օգոստոսի 14-ին ԼԳԲՏ հանրույթի ներկայացուցիչների կողմից Երևանի ոստիկանական բաժանմունքի վրա աննախադեպ հարձակմամբ, երբ մարմնական վնասվածքներ հասցվեցին ոստիկանության երկու աշխատակիցների: Ինչո՞վ, ուրեմն, եթե ոչ ամերիկյան ձևով «ամուր դեմոկրատիայի» դրսևորմամբ պետք է բնութագրել Նիկոլ Վոլակիչի կողմնակիցների գործողությունները, որոնք ապօրինաբար թափանցեցին ՀՀ Ազգային ժողովի շենքի տարածք 2018թ. հոկտեմբերի 2-ին և շրջափակեցին ՀՀ խորհրդարանի ելքերը: Իսկ ամերիկյան ձևով դեմոկրատիայի դրսևորման գագաթնակետը, անշուշտ, պետք է համարել Փա-

շինյանի 2019թ. մայիսի 20-ի կոչը՝ շրջափակել Երևան քաղաքի դատարանների շենքերը: Այս ֆոնին չես կարող չխոսել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի (ՀՀ ՍԴ) նախագահ Հրայր Թովմասյանի հանդեպ աննախադեպ ճնշման մասին, որը չտրվեց իշխանությունների շանտաժին, որոնք իրենց կործանարար նպատակներին հասնելու համար հասան այնտեղ, որ ճիզվիտական հետապնդումների ենթարկեցին ՀՀ ՍԴ նախագահի ընտանիքի անդամներին միայն այն բանի համար, որ Հրայր Թովմասյանը բարձր քաղաքացիականություն, քաղաքական կամք և ազնվություն դրսևորեց երկրի Հիմնական օրենքի դեմ ըստ էության տարատեսակ հակազգային ոտնձգություններից ՀՀ Սահմանադրության պաշտպանության իր ծառայողական պարտքը կատարելիս: Կարելի է այլ «գոհարներ» էլ բերել Հայաստանում ամերիկյան ձևով «ամուր» դեմոկրատիայի դրսևորման մասին, դիցուք. 2019թ. մայիսի 18-ին Ն.Փաշինյանի կողմնակիցների կողմից ՀՅԴ ղեկավարներից մեկի՝ Հայաստանի և Արցախի հայրենասեր Հրանտ Մարգարյանի դեմ հարձակումը, որն այդ օրը զբոսնում էր թոռնիկի հետ Օպերայի և բալետի շենքին հարակից հրապարակում կամ էլ այդ նույն օրը հնչած հայտարարությունը նույն տեղում, հանրահավաքում, դրա կազմակերպիչներից և Փաշինյանի ազդեցիկ գինակիցներից մեկի կողմից, որը պահանջում էր ցմահ բանտարկել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Ընդ որում՝ սույն քաջարի փաշինյանական լակոտն ասաց, որ «քարով կցխի Արցախի նախագահ Բակո Սահակյանի գլուխը»: Այս ֆոնին նիկոլվոլակիչյան խառնամբոխի հարձակումը «Հայելի» մամուլի ակումբի վրա դեմոկրատիայի «ամրության» դրսևորման ծիլ կթվա փաշինյանական «զոնդերկոմանդի» ներկայացուցիչների կողմից: Ընթերցողներին բացատրենք, թե ինչի մասին է խոսքը: Այսպես, 2019թ. հոկտեմբերի 5-ին չորս հոգուց բաղկացած խումբը հարձակվեց «Հայելի» մամուլի ակումբի վրա, որը ղեկավարում է Անժելա Թովմասյանը, որը հրաշքով փրկված ընդդիմադիր լրագրող է և հանրահայտ «Հայելու առաջ» հեռուստահաղորդման հեղինակն ու հաղորդավարն է: Հարձակվող ջահելներին պայմանականորեն անվանենք արական սեռի առանձնյակներ, որոնք ծվեր են նետել մամուլի ակումբի դռներին և դրանց վրա պաստառներ փակցրել: Սույն առանձնյակների նսեմությունը զգվանք է առաջացնում, չէ՞ որ հարձակվել են կնոջ ղեկավարած գրասենյակի վրա: Ինքը՝ Անժելա Թովմասյանը, պատահածը բնորոշել է բավական հակիրճ. «Այս ոտնձգությունը կայքի, մամուլի ակումբի և անձամբ իմ դեմ կապված է իմ ընդդիմադիր դիրքորոշման հետ: Ինձ զգուշացրել էին, որ մեր ընտանիքին կարող են սկսել ճնշել (Անժելա Թովմասյանը ՀՀ ՍԴ նախագահ Հրայր Թովմասյանի հարազատ քույրն է – Ա.Գ.), հաշվի առնելով եղբորս շուրջ ստեղծված իրավիճակը: Դա լիովին մեր իշխանությունների ոճով է: Այսօրվա խուլիգանությունն ապացուցեց դա: Բոլոր մասնակիցները պետք է պատժվեն»: Կարծում եմ, որ «Հայաստանում, ինչպես երբևէ, դեմոկրատիայի ամրության» դրսևորման մասին ՀՀ-ում

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

ԱՄՆ դեսպանության եզրակացության անվիճելիության հետագա վկայությունների ներկայացման կարիք չկա: Ինչպես ասում են, ապացույցներն ակնհայտ են:

Ամերիկյան օգնության թեման շարունակելով՝ նշենք և այն, որ 2019թ. սեպտեմբերի 30-ին վերոնշյալ \$60 մլն-ից առանձին, որ ստացվել է ԱՄՆ կառավարությունից, ավելի քան \$2 մլն հավելյալ ֆինանսավորում ստացել են Սորոսի հիմնադրամից 34 տարբեր տեսակի հասարակական կազմակերպություններ՝ «Հայաստանում դեմոկրատիայի աջակցության, քաղաքացիական հասարակության կայացման, կոռուպցիայի դեմ պայքարի և այլն» այդ նույն նպատակների իրագործման համար: Կասկածից վեր է Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի գնահատականների անկեղծությունը, քանի որ Հայաստանում դեմոկրատիայի ամրությունը, բարեբախտաբար, առայժմ ողբերգության չի վերածվում, ինչպես դա տեղի է ունենում Միացյալ Նահանգներում: Չեմ կասկածում, որ Ամերիկայի դեսպանությունում հիանալի տեղեկացված են այն մասին, որ ԱՄՆ ոստիկանությունը սպանում է ավելի շատ ամերիկացիների, քան նրանք գոհվում են Իրաքում, այսպես է վերնագրված նաև համապատասխան հոդվածը, որում, մասնավորապես, գրված է. «Սկսած 2015 թվականից՝ ոստիկանները Նահանգներում օրական սպանում են միջինը երեք քաղաքացի: 2018թ. ԱՄՆ ոստիկանությունը սպանել է 992 մարդու: Սպանվածների մեջ են 452 սպիտակամորթ և 229 սևամորթ, ինչպես նաև 164 լատինամերիկացի և 40 այլ ռասաների ներկայացուցիչ (107 դեպքում ռասայական պատկանելությունը որոշել չի հաջողվել): Հաշվի առնելով այն, որ ԱՄՆ բնակչության մեջ սևամորթներն ընդամենը 12,3% են կազմում, իսկ իսպանախոսները՝ 16,3%, ստացվում է, որ ոստիկանությունը 2018-ին աֆրոամերիկացիներին կրակել է երեք անգամ ավելի հաճախ, իսկ լատինամերիկացիներին՝ մեկուկես անգամ ավելի հաճախ, քան սպիտակ բնակիչներին: Այս թիվը՝ մեկ տարում ոստիկանության կողմից սպանված մոտ հազար ամերիկացի, շարունակել է մնալ կայուն վերջին ահա արդեն հինգ տարիներին: Բայց ընթացիկ տարվա անցած վեցուկես ամսում ԱՄՆ-ում ոստիկանության կողմից սպանվել է արդեն 566 մարդ»:

Կասկածելու հարկ չկա, որ բոլոր առաջարկված երաշխավորությունների կատարումը, որոնք շռայլորեն ֆինանսավորվում են ԱՄՆ կառավարության և սորոսյան տարատեսակ ու համանման «բարեգործական» հիմնադրամների կողմից, մեզ կմոտեցնեն «բաղձալի» իդեալին՝ դեմոկրատիայի և քաղաքացիական հասարակության հաղթանակի վառ մարմնավորմանը, անկախ դատական համակարգի կայացմանը, մի խոսքով՝ Հայաստանն ավելի մոտ, ավելի հարազատ կդարձնեն Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Գրում եմ այս տողերը, և սիրտս լցվում է հպարտությամբ այն բանի համար, որ Հայաստանի երախտապարտ ժողովուրդն իր համեստ ուժերի ներածին չափով ջանում է մեղմել ամերիկյան իշխանությունների բեռը: Այո, այո, հարգելի ընթերցող, ես չսխալվեցի: Այսպես, 2019թ. հունվար-

հուլիսին բանկային գծով ԱՄՆ-ից ՀՀ դրամական մուտքերը կազմել են \$151 մլն 67 հազ., իսկ Հայաստանից ԱՄՆ դրամական միջոցների արտահոսքը այդ նույն ժամանակաշրջանում կազմել է \$163 մլն 188 հազ., այսինքն՝ ՀՀ-ում ԱՄՆ-ից ֆինանսական միջոցների զուտ ներհոսքը կազմել է մինուս \$12 121: Համեմատության համար նշենք, որ 2019թ. հունվար-հուլիսին բանկային գծով Ռուսաստանից Հայաստանի ֆիզիկական անձանց դրամական մուտքերը կազմել են \$556 մլն 135 հազ., իսկ ֆինանսների արտահոսքը Ռուսաստան կազմել է \$232 մլն 880 հազ., այսպիսով, զուտ ներհոսքը կազմել է \$323 մլն 255 հազ. (ՀՀ ԿԲ Տեղեկագիր, 2019թ. հուլիսի, էջ 24): Ահա այսպիսի վիճակագրություն, հարգելի ընթերցող:

Ընդ որում, բնականաբար, հարց է ծագում. իսկ ըստ էության ինչո՞վ է պայմանավորված մեր ամերիկացի գործընկերների այսքան հոգատար վերաբերմունքը Նիկոլ Վովակիչի՝ իր իսկ սիրելիի հանդեպ: Փորձենք պարզել:

Եվ այսպես, 2018թ. հունվարի 18-ին Կրակովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ստեֆան Վիսկոնտին (Ֆրանսիա) և Էնդրյու Շոֆերը (ԱՄՆ) ԵԱՀԿ գործող նախագահի ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկի հետ միասին, Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ հանդիպումից հետո տարածեցին առաջարկություններ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ: Դրանցում, մասնավորապես, նշվում էր.

– Ադրբեջանին վերադարձնել յոթ շրջանները՝ Աղդամը, Ֆիզուլին, Ջեբրաիլը, Ջանգելանը, Կուբաթլին, Քելբաջարը և Լաչինը, պայմանով, որ պահպանվի միջանցք, որը Լեռնային Ղարաբաղը կկապի Հայաստանի հետ:

– Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավավիճակի որոշում համընդհանուր քվեարկության անցկացման միջոցով, որը կլինի Լեռնային Ղարաբաղի ողջ բանկչության կամարտահայտությունը ՄԱԿ և ԵԱՀԿ հովանու ներքո՝ կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում, որոնք կլինեն պարտադիր իրավական առումով և կհամապատասխանեն Միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին՝ հաշվի առնելով, որ քվեարկության դրված հարցը կամ հարցերը չպետք է սահմանափակվեն և կարող են ներառել կարգավիճակին վերաբերող բոլոր տարբերակները:

– Տարածաշրջանում քաղաքական, առևտրային, տնտեսական և հումանիտար կապերի լիակատար կարգավորում:

– Բարիդրացիական հարաբերությունների կարգավորում:

– Հարավային Կովկասի տարածաշրջանի լիակատար կայունության ապահովում:

Առաջարկություններում նաև նշվում է, որ «Վերաբնակները (նկատի ունեն Հայաստանից վերաբնակները – Ա. Գ.) միջազգային հանրության աջակցությամբ կհեռանան հինգ շրջանների (Աղդամ, Ֆիզուլի, Ջեբրաիլ, Ջանգելան, Կուբաթլի) տարածքից: Ադրբեջանի քաղաքացիական իշխանությունները կմտնեն նշված տարածքներ այն բանից հետո, երբ կտեղա-

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

կայվեն միջազգային խաղաղարար ուժեր և դուրս կբերվեն այժմ այդ շրջաններում գտնվող զինված ուժերը: Միջազգային խաղաղարար ուժերը կտեղակայվեն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) վարչական սահմանների երկայնքով, բացի այն մասերից, որոնք մտնում են Քելբաջարի և Լաչինի շրջանների կազմի մեջ: Քելբաջարի շրջանը կմնա ԵԱՀԿ անցումային մոնիթորինգի ներքո»:

Այնուհետև նշվում էր, որ. «Միևնույն ժամանակ, վերոնշյալ միջոցների ընդունմանը զուգահեռ, մինչև վերջնական կարգավիճակի սահմանումը, Լեռնային Ղարաբաղը պետք է ճշտված լինի ժամանակավոր կարգավիճակով, որը երաշխավորելու է նրա ամենօրյա կենսագործունեության կազմակերպումը»:

Ընթերցողներին հիշեցնենք, որ մինչև ԵԱՀԿ Մինսկի խմբի վերոնշյալ առաջարկությունների տարածումը, 8 ամիս առաջ Հայաստանում տեղի էին ունեցել ՀՀ VI գումարման Ազգային ժողովի ընտրությունները, որոնց արդյունքներով խորհրդարան անցան Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, որն ստացավ 49,12% (771 247 ձայն), «Դաշնակցությունը»՝ 6,57% (103 173), «Ծառուկյան» դաշինքը՝ 27,32% (428 965) և «Ելք» դաշինքը՝ 7,77% (122 049): Եվ ահա, այս կուսակցություններից և դաշինքներից որևէ մեկի նախընտրական ծրագրում դարաբաղյան կարգավորման մասով դժվար է գտնել դրույթներ, որոնք բովանդակությամբ նման լինեն ԵԱՀԿ ՄԽ առաջարկներին: ԵԱՀԿ ՄԽ առաջարկությունների հետ ընդհանուր առանձին ձևակերպումներ, հակամարտության կարգավորման մոտեցումներ ունեցել է միայն Հայ ազգային կոնգրես – Հայաստանի ժողովրդական կուսակցություն (ՀԱԿ-ՀԺԿ) ընդդիմադիր դաշինքը: Նշենք, որ ՀՀ VI գումարման ԱԺ ընտրությունների արդյունքներով ՀԱԿ-ՀԺԿ դաշինքը ստացավ 1,65% կամ 25 975 ձայն: Բնավ պատահական չէ, որ ներկայացնում են այս տվյալները: Դրանք համոզիչ կերպով վկայում են ԵԱՀԿ ՄԽ առաջարկությունների չափից ավելի չընդունվածությունը Հայաստանի ընտրողների շրջանում: Միևնույն ժամանակ, հատկապես նշենք, որ տարածված փաստաթղթում պարունակվող՝ «Միջազգային խաղաղարար ուժերը կտեղակայվեն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) վարչական սահմանների երկայնքով, բացի այն մասերից, որոնք մտնում են Քելբաջարի և Լաչինի շրջանների կազմի մեջ» դրույթը, ըստ էության, ենթադրում է խաղաղարար ուժերի տեղակայում Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանի 105 կիլոմետրանոց սահմանի երկայնքով, որը վերահսկում են Արցախի Հանրապետության զինված ուժերը: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսին կլինի բարեկամական Իրանի արձագանքը, եթե հայկական կողմը համաձայնի ԵԱՀԿ ՄԽ այս առաջարկություններին, որոնց իրականացման դեպքում Իրանն իր սահմաններին կտեսներ խաղաղարարներ ԱՄՆ-ից, երկիր, որը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահն է: Դժվար չէր լինի կռահել նաև մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի արձա-

զանքը, եթե ամերիկյան խաղաղարարները հայտնվեին այս տարածաշրջանում: Բայց մենք իրավունք ունենք ենթադրելու, որ Հայաստանի իշխանությունները սրան չէին գնա: Եթե հակամարտության գոտում հայտնվեին միայն ռուսաստանցի խաղաղարարները, ինչը, իմ խորին համոզմամբ, ստեղծված իրավիճակում միակ բանական ելքն է, չարժեր կասկածել, որ իրադարձությունների զարգացման նման ընթացքը առաջ կբերեր ամերիկյան կողմի սուր բացասական արձագանքը: Նման պնդումը, անկասկած, հիմք ունի: Ի հաստատումն ասվածի՝ մեջբերումներ կատարեմ Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հարցազրույցից, որն անուղղակիորեն հաստատում է ասվածը: Այսպես, 2018թ. դեկտեմբերի 14-ին Բելառուսի նախագահը ռուսաստանցի լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը Ռուսաստանի և Բելառուսի մասնակցության վերաբերյալ առաջարկությունների մասին: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին դիմելով՝ նա նշել է. «Անկեղծ ասացի. լսիր, ինչպես նրանք են ասում (նկատի ունի ադրբեջանական կողմին – Ա. Գ.), զավթել եք 7 շրջան: Եվ մենք Վ.Պուտինի հետ համերաշխ դիրքորոշում ենք որդեգրել (դա 2016թ. հոկտեմբերի 14-ին էր, Երևանում, ՀԱՊԿ նստաշրջանում, մասնակից պետությունների ղեկավարների մասնակցությամբ – Ա. Գ.) Սերժ, տուր այդ 5 շրջանները: Ի՞նչ պատճառ կա դրանք չհանձնելու, դրանք ախր դատարկ են: Նա ասում է. եթե ես վերադարձնեմ, նրանք այնտեղ ձանապարհը կփակեն, կզավթեն Ղարաբաղը և այլն: Եվ մենք Վ.Պուտինի հետ հստակ խոստացանք, որ կմտցնենք մեր զորքերը, և դա թույլ չենք տա (ադրբեջանցիների ներկայությամբ ենք դա ասել): Նա ասաց. չէ, մենք դրան չենք գնա: Մենք դա չենք ուզում»:

Դե ինչ, հարգելի ընթերցող, ինչ-որ եզրակացություններ անել միայն մեզ հասանելի ինֆորմացիայի հիման վրա այսքան բարդ հարցում, կարծում եմ, արդյունավետ չի լինի: Ես միայն համոզված եմ մի բանում, որ ոչ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը, ոչ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Ազատի Սարգսյանը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ոչ մի պարագայում չէին գնա որևէ փոխզիջման, որը չէր երաշխավորի Արցախի Հանրապետության անվտանգությունը: Չէ՞ որ Լեռնային Ղարաբաղի անկախության ծեռքերման հետ են կապված ոչ միայն նրանց կենսագրության, այլև հայ ժողովրդի նորագույն պատմության ամենալուսավոր էջերը: Բայց այնպես, ինչպես ասել է իր ելույթում 1848թ. մարտի 1-ին Համայնքների պալատում լորդ Փալմերսթոնը, «Ուստի, ես պնդում եմ, որ հեռատեսական չէ համարել այս կամ այն երկիրն Անգլիայի համար անփոփոխ դաշնակից կամ հավերժական թշնամի: Մենք չունենք հավերժական դաշնակիցներ, մենք չունենք հավերժական թշնամիներ: Միայն մեր շահերն են անփոփոխ և հավերժ, և մեր պարտքն է՝ հետևել դրանց»:

Եվ ահա, ԱՄՆ, ինչու ոչ՝ նաև Իսրայելի «հավերժական շահերը» նրանց թելադրում են հետևել այն ուղեգծին, որն ապահովում է ամերիկյան

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

խաղաղարարների տեղակայում Արցախի Հանրապետության զինված ուժերի շփման գծի 105 կիլոմետրանոց սահմանին, անվտանգության գոտում, Իրանի սահմանի մոտ: Եվ հենց այս լույսով պետք է դիտարկել Հայաստանում 2018թ. ապրիլ–մայիսին տեղի ունեցած պետական հեղաշրջման գլխավոր դրոպապատճառներից մեկը, որը պաշտպանում է Արևմուտքը: Պետք է կարծել, որ անդրօվկիանոսյան ստրատեգներն առաջադրել են խնդիր՝ ցանկացած գնով իշխանության բերել իրենց, պատկերավոր ասած՝ «շան որդուն», որն առանց հետ նայելու ձեռքը կթափահարի և կստորագրի փաստաթղթի տակ, որը ճանապարհ կբացի հակամարտության գոտում խաղաղարարների տեղակայման առջև: Իսկ նման «լիդեր» փնտրելու կարիք էլ չկար, քանի որ նրան նախապես էին պատրաստել, «կերտել» էին նրա հեղափոխությունն ու կենսագրությունը վերջին տասը տարում: Նշենք, որ գործող քաղաքական գործիչներից սույն գործողություն անելուն պատրաստ էին միայն ՀՀ առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի զինակիցները: Եվ ինչպես այստեղ չհիշեի Նիկոլ Վոլակիչին, որը 2001թ. մայիսի 22-ին «Հայկական ժամանակ» թերթի իր «Հողը սիրելով են պահում, իմացե՛ք» հոդվածում գրել է. «Ինձ զարմացնում է, որ մեր երկրում դեռ կան մարդիկ, ովքեր իլյուզիաներ ունեն գրավյալ, եթե կուզեք՝ ազատագրված, եթե կուզեք՝ օկուպացված տարածքների վերաբերյալ: Ես չեմ ընդունում այն տեսակետը, թե լավ դիվանագիտությունը կարող է այնպես անել, որ տարածքները չվերադարձնենք Ադրբեյջանին: Մերը թողած՝ ուզում ենք տեր լինել ուրիշին»:

Նկատենք, որ իր այս նենգ մտքերից Նիկոլ Վոլակիչը հետագայում ևս հրապարակավ այդպես էլ չհրաժարվեց, ի տարբերություն ԵՏՄ-ին և ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության «մերկացուցիչ» բնորոշումների: Մի խոսքով՝ Նիկոլ Վոլակիչին սորոսյան բազմաթիվ լափակերների, ԼԳԲՏ հանրության ակտիվիստների, «Կյանքի խոսքը» տոտալիտար կրոնական աղանդի և փոփոխություններ տենչացող հազարավոր հայաստանցի քաղաքացիների գործուն մասնակցությամբ բնավ ոչ պատահականորեն բերեցին իշխանության: Վարչապետի պաշտոնում, երբ հարցը վերաբերում էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, նա արդեն պտույտ էր տալիս ասես իժը տապակի մեջ: Սկզբում հիմարություն դուրս տվեց՝ ասելով, թե Արցախի Հանրապետության քաղաքացիները նրա համար չեն քվեարկել, ուրեմն և նրան չեն օժտել իրենց անունից բանակցություններ վարել Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ: Շուտով, հասկանալով, որ այդ համարը չի անցնելու, արդեն 2019թ. օգոստոսին Ստեփանակերտում հայտարարեց, որ «Ղարաբաղը Հայաստան է, և վերջ»՝ դրանով իսկ սահմանելով ԵԱՀԿ ՄԽ անախտանությունը, այսինքն՝ ջախջախիչ հարված հասցնելով բանակցային գործընթացին: Նշենք, հարգելի ընթերցող, որ մեկ շաբաթ առաջ՝ ս.թ. նոյեմբերի 3-ին, Facebook-ի իր էջի ուղիղ եթերում «ժողվարչապետը» գերազանցեց ինքն իրեն տարբեր խճճված նախադասություններով,

որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն իրականության հետ: Այսպես, նրան թվացել է, թե կաշխատի փորձված հնարքը, այն է. եթերում հնչեցնել իրականությունից հեռու դրույթներ՝ այն հույսով, թե դրանց հնչեցումն իսկ հանդիսատեսի ենթագիտակցության վրա կունենա իրեն՝ իր իսկ սիրելի Նիկոլ Վովակիչին հարկավոր ազդեցություն: Նրան թվացել է, թե՝ «Հիմա շրջանառության մեջ են մտցնում թեզիսն այն մասին, որ, քանի որ կառավարությունը կամ վարչապետը, ես անծամբ, չեմ համաձայնում զիջումների գնալ, կամ, ներողություն, եթե կոպիտ ասեմ՝ չեմ համաձայնում հողերը հանձնել, դա նշանակում է, որ բանակցությունները փակուղի են մտել, և ահա սկսել են մարդկանց վախեցնել պատերազմով, և կոնկրետ այդ թեմաներով առանձնացվում են բյուջեներ, քարոզչություն է վարվում և այլն» թեման ազդեցություն կունենա:

Փաշինյանի հաշվարկը պարզ է. չէ՞ որ նրան հաջողվեց մի անգամ իր պոպուլիստական հայտարարություններով հիմարացնել հարյուր հազարավոր քաղաքացիների, ավելին՝ մեկուկես տարի արդուկել նրանց ուղեղները տարբեր տեսակի «սենսացիոն» մերկացումներով ու հայտարարություններով իր՝ «ժողվարչապետի» դեմ դավադրության մասին մեկ Արցախում, մեկ Հայաստանում, ինչ-որ ռևանշիստների կողմից: Նման մտքերով համակված՝ մեր հերոսը հավանաբար մտածել է. իսկ ինչո՞ւ չփորձի դա մեկ անգամ էլ անել, հիմա արդեն շահարկելով դարաբաղյան հակամարտությունը: Այդ նույն ուղիղ եթերում նա ասաց. «... բանակցությունները վարվում են այն տրամաբանությամբ, որ հարցի ցանկացած լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի ժողովուրդների համար, իսկ իր խնդիրն է՝ հասնել ընդունելի լուծման հայ ժողովրդի համար»: Ուշադրություն դարձրեք, հարգելի ընթերցող, որ նրա վերջին պնդումը իսպառ ջնջում է այդ նույն նախադասությունում ավելի վաղ արտահայտած միտքը: Բայց նրա համար կարևոր է այլ բան. հեռանալ որևէ պատասխանատվությունից այս հարցում:

«Որոշումները պետք է ընդունվեն համազգային ձևաչափով, ընդհուպ մինչև հանրաքվեի անցկացումը, բայց այդ քննարկումներն այնքան էլ տեղին չեն, քանի որ մենք խոսում ենք ռազմավարության մասին (համաձայնեք, հարգելի ընթերցող, որ, անշուշտ, սա տիեզերական մասշտաբի ստրատեգի խոսք է – Ա. Գ.), այսինքն՝ մեր խնդիրն է բանակցային գործընթացում հասնել այնպիսի լուծման, որն ընդունելի կլինի մեր ժողովրդի համար», – ընդգծել է Նիկոլ Վովակիչը:

Խոստովանենք, հարգելի ընթերցող, որ դա «նոր խոսք» է Ղարաբաղյան կարգավորման մեջ: Նրա տրամաբանությամբ Հայաստանի երկրորդ ու երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը, որ անցել են դարաբաղյան ազգային-ազատագրական պատերազմի բովով և անգնահատելի ավանդ ներդրել հաղթանակի կերտման գործում, ՀՀ ղեկավարման 20 տարիների ընթացքում ջուր են ծեծել և անգամ պատկերացնել,

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

գլխի ընկնել չեն կարողացել, որ լուծումը պետք է ընդունելի լինի հայ ժողովրդի՝ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, ավելին՝ այն պետք է չհուսահատեցնի հայ Սփյուռքին, որը 1992–94թթ., մեկտեղվելով, էական օգնություն է ցուցաբերել հաղթանակը նվաճելու գործին:

Նկատենք, հարգելի ընթերցող, որ Նիկոլ Վոլակիչի պարզունակ մտավարժանքները, որոնք հետապնդում են բոլոր միջոցներով կոնկրետ քայլերից խույս տալու նպատակ, որոնք անդրօվկիանոսյան տիկնիկավարները նրանից սպասում են դարաբաղյան կարգավորման հարցում, սկբից ևեթ դատապարտված են ձախողման: Այսպես, 2019թ. մարտի 1-ին ԵԱՀԿ ՄԽ համանախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում, ինչպես և 2019թ. հունվարի 18-ի հայտարարությունում, ասվում է. «Վկայակոչելով վերջերս որոշ հրապարակային հակասական հայտարարությունները Մինսկի խմբի գործընթացի էության մասին (հավանաբար, ոչ առանց Նիկոլ Վոլակիչի մասնակցության – Ա.Գ.), համանախագահները հաստատում են, որ արդար և ամուր կարգավորումը պետք է հիմնվի Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնական սկզբունքների վրա, ներառյալ, մասնավորապես, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը և հավասար իրավունքները և ժողովուրդների ինքնորոշումը: Դրանում պետք է ներառվեն լրացուցիչ տարրեր, որոնք առաջարկվել են համանախագահող երկրների նախագահների կողմից 2009–2012թթ., այդ թվում. Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձը Ադրբեջանի վերահսկողությանը, Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակը, որը անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ կապահովի, Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցքը, Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ապագա սահմանումն իրավակա-նորեն պարտադիր կամարտահայտման միջոցով, բոլոր ներքին տեղահանվածների և փախստականների վերադարձի իրավունքն իրենց նախկին բնակության վայրեր, անվտանգության միջազգային երաշխիքները, որոնք կներառեն խաղաղարար գործողությունը»:

Ընդ որում՝ համանախագահներն ընդգծում են, որ այս սկզբունքները և տարրերը պետք է լինեն հակամարտության ցանկացած արդար և ամուր կարգավորման հիմքը և պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն: Հատկապես ընդգծվում է, որ մեկ սկզբունքը կամ տարրը մյուսից վեր դնելու ցանկացած փորձ անհնար է դարձնում հավասարակշռված լուծման հասնելը: Այն, որ այս հայտարարությունը տարածվել է դեռևս 2019թ. մարտին, բնավ պատահական չէ: Ամիսներ առաջ՝ 2018թ. դեկտեմբերի 9-ին, տեղի ունեցան ՀՀ VII գումարման Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները, որոնց արդյունքներով «Իմ քայլը» դաշինքը, որը ղեկավարում է Նիկոլ Փաշինյանը, ստացավ 88 մանդատ կամ պատգամավորների ընդհանուր թվի 66,67%-ը և, բնականաբար, այն ուժերը, որոնք էլ նրան իշխանության

բերեցին, ակնկալում էին երկար սպասված լուծումը, որի մասին դեռևս 2018-ի հոկտեմբերի 24-ին մամուլի ասուլիսում, Ադրբեջան կատարած այցի արդյունքներով հայտարարեց ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով այն ժամանակվա խորհրդական Ջոն Բոլթոնը. «Ես եկել եմ այստեղ, որպեսզի ավելի մանրամասն ծանոթանամ հարցին: ԱՄՆ-ը հասկանում է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումը ռազմավարական կարևորություն ունի... Իմ այցը չի նշանակում ԱՄՆ դիրքորոշման փոփոխություն կամ որ ես նոր առաջարկություններ եմ բերել ... Եթե Փաշինյանը և նրա քաղաքական կուսակցությունը ընտրությունների արդյունքներով ուժեղ մանդատ են ստանում, դա լավ հնարավորություն է վճռական քայլերի համար կարգավորման հարցում»:

Կարծում եմ, որ հետագա մեկնաբանություններն ավելորդ են, և հենց այս դիրքերից պետք է դիտարկել ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի վերջին հայտարարությունը, որը հիացմունքով է արտահայտվել «Հայաստանում դեմոկրատիայի, ինչպես երբևէ, ամրության մասին»՝ հատկապես նշելով Հայաստանին 2019 թվականին Միացյալ Նահանգների ֆինանսական օգնության 40 տոկոսանոց աճի մասին: Տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ծերբակալման երկարացումը միանգամայն սպասելի էր, ինչպես և ԱՄՆ դեսպանի այցելությունը Հայաստանի Հանրապետական կուսակցություն, որի առաջնորդների կողմից պոպուլիստ Նիկոլ Վոլակիչի քննադատությունը, ըստ երևույթին, անթույլատրելի է, քանի որ թուլացնում է նրա կամքը «վճռական քայլերի համար կարգավորման հարցում»:

Միևնույն ժամանակ, հարգելի ընթերցող, ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն բանին, որ ես պատրաստ չեմ պնդել, որ լիակատար կոնսենսուս չկա ՀՀ երկրորդ և երրորդ նախագահների՝ մի կողմից, և մյուս կողմից՝ «Ժողվարչապետի» միջև անխտիր բոլոր հարցերում: Նման կոնսենսուս կա: Այո, այո, հարգելի ընթերցող, ես չսխալվեցի: Նիկոլ Վոլակիչի քաղաքականությունն ինչ-որ իմաստով զուգակցվում է Ռոբերտ Սեդրակովիչի և Սերժ Ազատովիչի քաղաքականության հետ մի բանում, իհարկե՝ տարբեր դրդապատճառներով, դիցուք. Հայաստանի քաղաքական դաշտի լիակատար համահարթեցմամբ, իրադրության ստեղծմամբ, որը գոնե մտածող հասարակության մեջ ձևավորում է սխալ կարծիք, թե Հայաստանի ապագան պայմանավորված է բացառապես նրանով, թե երեքից ում կընտրի մեր հասարակությունը: Հենց այդ նպատակին է վերջնարդյունքում ծառայում նորանոր կուսակցությունների ստեղծումը, ընդ որում՝ հիմնականում բավական կրթված հիմնադիրների կողմից, որոնք, սակայն, օբյեկտիվ պատճառներով չեն կարողանա կարճ ժամկետներում ձեռք բերել հայ հասարակության էական մասի աջակցությունը: Նման իրավիճակը, անշուշտ, ձեռնադրում է Փաշինյանին, որն արդեն երևակայում է, թե ազգի միակ անայլընտրանք առաջնորդն է: Ել չեմ խոսում այն մասին, որ քաղաքական

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

գործընթացների դինամիկան, որ ստեղծվել են Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում, թույլ է տալիս տիեզերական մասշտաբի մեր ստրատեգին արդարանալ անդրօվկիանոսյան տիկնիկավարների առջև Ղարաբաղյան հակամարտության «կարգավորման հարցում վճռական քայլերը ձգձգելու համար»: Իհարկե, կարելի էր ավելի հանգամանալից կանգ առնել այս հարցերի վրա, բայց դա առանձին վերլուծության թեմա է: Իսկ այս պարագայում Նիկոլ Վոլակիչը մեկ ժամվա խալիֆի նմանությամբ շարունակում է վայելել Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը:

Իսկ ո՞րն է ելքը: Բնականաբար, բավական բարդ պայմաններում, որոնցում հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը, միակ ընդունելի ելքը ստեղծված վիճակից Հայաստանի և Արցախի բոլոր առողջ ուժերի համախմբումն է հայկական երկու պետությունների ներառական տնտեսական զարգացման համատեղ մշակված ծրագրերի հիման վրա՝ դրանցում SMART-տեխնոլոգիաների լայն օգտագործմամբ, հստակ սահմանմամբ.

1) հայկական երկու պետությունների առջև դրված սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ նպատակներով,

2) բնակչության լայն շերտերի համար դրանց հասանելիության հնարավորության բացատրմամբ,

3) առաջադրված նպատակների առաջնահերթության և կարևորության հիմնավորումներով,

4) առաջադրված նպատակներին հասնելու փուլերի և ժամկետների նշմամբ,

5) կոնկրետ արդյունքների հրապարակմամբ, որոնց վրա կարող է հույս ունենալ մեր հասարակությունն առաջադրված նպատակներին հասնելու դեպքում:

Չէի ցանկանա կասկածել, որ նման մոտեցումը նաև ՀՀ-ում ԱՄՆ դեսպան, հարգելի տիկին Լին Թրեյսիի սրտով կլինի, քանի որ օրախնդիր հարցերի լուծմանը նման մոտեցման իրագործման դեպքում մենք կդառնանք վկան Հայաստանում դեմոկրատիայի ամրապնդման ոչ թե խոսքով, այլ գործով, քաղաքացիական հասարակության հետագա զարգացման, կոռուպցիայի դեմ պայքարին համակարգային բնույթ հաղորդելուն: \$60 մլն դոլար ամերիկյան օգնության օգտագործումը նման ծրագրի իրականացման և մարմնավորման համար, վստահ եմ, կհամոզի անգամ ներկայում տատանվող մեր քաղաքացիներին, որոնք կասկածում են այդ օգնության անաչառության մեջ, բոլոր կասկածողներին ցույց կտա, որ ԱՄՆ-ը իրականում պատրաստ է աջակցել իր իսկ հռչակած ազնիվ նպատակներին հասնելուն, չեմ կրկնի, թե հատկապես որոնց: Մնացած ամեն ինչ, որ համահունչ չէ ասվածին, Հայաստանի գիտակից քաղաքացիների կողմից կընկալվի ոչ այլ կերպ, քան այնպիսի հարգված երկրի կողմից, ինչպիսին Միացյալ Նահանգներն է, նիկոլվոլակիչյան պոպուլիզմի փոխառում: Ավաղ, ասվածը չափազանցություն չէ:

Համոզված եմ, որ ընթերցողը կարող է միանգամայն իրավացիորեն հարց տալ. իսկ ինչպե՞ս պիտի լինի հայկական երկու պետությունների անվտանգության ապահովման հարցը: Եվ նա, իհարկե, իրավացի կլինի: Դե ինչ, Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի այցը Հայաստան և ս.թ. հոկտեմբերի 29-ին ձեռք բերված պայմանավորվածությունները ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հետ Հայաստանում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանի հզորության և մարտական պոտենցիալի ավելի քան կրկնակի մեծացման վերաբերյալ խոսում են իրենք իրենց մասին: Ավելին, Փաշինյանի կողմից Ղարաբաղյան հակամարտության «կարգավորման հարցում վճռական քայլերի» ընդունման դեպքում՝ բոլթոնյան գծանշումներով, իմաստ չունի կասկածել, որ 102-րդ ռուսական ռազմակայանի դերը սպառնիչ խաղաղարար առաքելության իրագործման համար, որը բացառում է հակամարտության գոտում ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների զինված ուժերի հայտնվելը, որոնք միաժամանակ նաև ՆԱՏՕ անդամներ են, դժվար կլինի գերազնահատել: Իսկ ինչ վերաբերում է Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման հարցերին, ապա ես համոզված եմ, որ Ադրբեյջանի և Արցախի Հանրապետության միաժամանակյա անդամակցությունը որպես Միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ ՀԱՊԿ-ում և ԵՏՄ-ում կդառնա անվտանգության երաշխիք ու պատերազմի այլընտրանք: Այս հարցի վերաբերյալ իմ մոտեցումներին ավելի մանրամասն ընթերցողը կարող է ծանոթանալ 2019թ. հոկտեմբերի 14-ին REGNUM տեղեկատվական գործակալությունում հրապարակված իմ «Ադրբեյջանը և Արցախը ԵՏՄ-ում և ՀԱՊԿ-ում՝ անվտանգության երաշխիք: Այլընտրանք պատերազմին» հոդվածում:

Հետգրության փոխարեն: Ավանդույթի համաձայն՝ չէի ցանկանա հոդվածս ավարտել տազնապալի նոտայով: Լավ է, որ Հայաստանում դեռ կան մարդիկ, ովքեր իրենց մեջ ուժ են գտնում իմաստավորելու հայ ժողովրդի ականավոր զավակների կենսական սխրանքը, ովքեր Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ 1941–45թթ., կռեցին հաղթանակը, այնուհետև իրենց անձնուրաց աշխատանքով կերտեցին հզոր երկրի՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ապագան: Հարգելի ընթերցող, սա իմ երիտասարդ տարիների հանդեպ նոստալգիա չէ, այլ ներքին համոզմունք, որ Խորհրդային ժողովրդի տքնաջան ու աշխատանքային սխրանքի իմաստավորումը կօգնի մեզ հասկանալ այժմ տեղի ունեցողը: Եվ ահա, օրերս տեղի կունենա Խորհրդային Հայաստանի նշանավոր պետական գործիչ, Հայրենական մեծ պատերազմի վետերան (որը պատվով անցել է մարտական ուղին մերձմոսկովյան Նախաբինոյի ռազմական ուսումնարանի կուրսանտի նստարանից մինչև Բուդապեշտ) Ալեքսան Մաթևոսի Կիրակոսյանի գրքի երկրորդ հրատարակության շնորհանդեսը՝ «Հուշեր և մտորումներ մայրամուտի շեմին» վերնագրով: Ես բախտ եմ ունեցել դարո-

ցական տարիներից ծանոթ լինել Ալեքսեյ Մատվեևիչի հետ (այդպես էին դիմում նրան հարազատներն ու մտերիմ մարդիկ), քանի որ պատերազմի ավարտից հետո նա աշխատել և ընկերություն է արել հորս՝ Մամիկոն Արտաշեսի Գեղամյանի հետ, որը խորհրդային Հայաստանի հայտնի կուսակցական և պետական գործիչ էր։ Այդ անգուգական հայր՝ Ալեքսեյ Մատվեևիչը, պետական բարձր պաշտոններ զբաղեցնելով (նախարար, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի կազմակերպչական-կուսակցական բաժնի վարիչ, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի առաջին փոխնախագահ), ժողովրդի մեջ ընկալվում էր որպես հայկական ընտանեկան, քրիստոնեական ավանդույթների նախանձախնդիր պաշտպան, որպես պահապան հրեշտակ մշակույթի տաղանդավոր հայ գործիչների համար՝ գրողների, բանաստեղծների, նկարիչների, դերասանների, ինչպես նաև սկսնակ քաղաքական գործիչների համար։ Մտաբերեցի նրա հետ կապված մի հատկանշական դեպք։ Մի անգամ հիվանդացել էր Հայաստանի ժողովրդական բանաստեղծ Համո Սահյանը։ Գրչի վարպետին տեղավորել էին խորհրդային ժամանակներում հեղինակավոր հիվանդանոցի ոչ մեծ հիվանդասենյակում։ Ալեքսեյ Մատվեևիչը զանգահարեց ինձ՝ այդ ժամանակ Երևանի պաշտոնաթող քաղաքապետիս (1991թ. ամռանն էր) և խնդրեց, որ մենք միասին այցելենք հիվանդանոց՝ Համո Սահյանին։ Մի կարգին վարորդ չլինելով, փոխարենը սեփական «Ժիգուլի» 07-ի դեկին նստած՝ մենք Մատվեևիչի հետ գնացինք այցելելու հայոց հողի անգուգական երգչին։ Հիվանդանոցի ճանապարհին Ալեքսեյ Մատվեևիչից իմացա, որ Համո Սահյանը խիստ մեղմադծության և լիակատար ապատիայի մեջ է, և իմ առջև խնդիր դրվեց ինչ միջոցով ուզում է լինի՝ համոզել նրան դուրս գալ մաքուր օդի, դռն լավ է, որ հիվանդանոցի կողքին Հրազդանի գեղատեսիլ կիրճն էր։ Վարպետի հետ հանդիպման ժամանակ ես խորամանկեցի, ինչի համար մինչ օրս զղջում եմ. թեև խորամանկությունս բարիք ծառայեց, և վարպետին ասացի, որ ավագների խորհրդի կարիքն ունեմ, իսկ հիվանդանոցը անկեղծ զրույցների ամենալավ տեղը չէ։ Հավանաբար, Համո Սահակովիչին թվաց, թե ես խիստ ցավում եմ հրաժարականի համար, երբ էներգիայով ու Երևան քաղաքի զարգացման ծրագրերով լի՝ Երևանի քաղաքապետի պաշտոնից հրաժարականի դիմում տվեցի։ Բայց խոսակցությունն այժմ այդ մասին չէ։ Համո Սահյանը հավատաց ինձ և տառացիորեն վերափոխվեց աչքներիս առջև՝ ասելով. Մատվեևիչ, Արտաշեսին պետք է օգնել, գնանք մի տեղ նստենք ու քննարկենք, թե ինչ ենք անելու։ Մենք ավելի քան երեք ժամ միասին անցկացրինք և քննարկեցինք կենսական խնդիրներ, չէ, չէ, հարգելի ընթերցող, ոչ իմ մասին, այլ ընդհանրապես Հայաստանի Հանրապետության։ Չէ՞ որ ժամանակը տազնապալի էր։ Հայաստանում իշխանության էին եկել ՀՀԸ-ականները՝ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ։ Չեմ թաքցնի, որ այս մեծ հայերի հետ հաղորդակցվելուց բազում կենսական դասեր քաղեցի։ Ալեքսեյ Մատվեևիչի թիկունքում այդ ընթացքում արդեն

հարյուրավոր ստեղծված ձեռնարկություններն էին թեթև, սննդի և տեղական արդյունաբերության ոլորտներում, տասնյակ, եթե ոչ հարյուրավոր կառուցված գյուղական դպրոցները, մանկապարտեզները, մշակույթի տները, տասնյակ հազարավոր հեկտար բերի դարձած նախկինում անմշակ հողերը: Եվ որ գլխավորն է՝ նրա դաստիարակած կուսակցական, խորհրդային և տնտեսական ղեկավարների մեծ համաստեղությունը: Համո Սահյանի հի-րավի ազգային, դարերի խորքը գնացող իմաստուն պոեզիայի մասին մի ատենախոսություն չէ, որ գրվել է: Ընդամենը կարող եմ ասել, որ միայն մի բանաստեղծություն եթե գրեր՝ «Հայաստան ասելիս»-ը, արդեն կանմահաց-ներ իրեն, դե ինչպես Մարգարեթ Միտչելը, որն անմահացավ իր միակ վե-պով՝ «Քամուց քշվածներով»:

լացման հմուտ ձևերի: Առաջին տարին չէ, որ Հայաստանի Հանրապետության պետականության հիմքերի քայքայման համար կիրառվում են Ջին Շարփի («Բռնապետությունից դեպի դեմոկրատիա: Ազատագրման հայեցակարգային հիմքեր»), Սթիվեն Մանի («Քառսի տեսությունը և ռազմավարական մտածողությունը»), Ոչնչացման տեխնոլոգիա կամ «Օվերտոնի պատուհանը» անվանում ստացած ի պատիվ դրա հեղինակ Ջոզեֆ Օվերտոնի՝ գրեթե գործողությունների ուղեցույց դարձած բեսթսելերները և այլ աշխատություններ, որոնք կարելի է տասնյակներով նշել, և որոնք նաև գործնական ձեռնարկներ և ուղեցույց են «գունավոր հեղափոխությունների», պետական հեղաշրջումների կազմակերպման համար, որոնք նպատակ են դնում կոնկրետ պետության քայքայումը: Նրանց համար ընդհանուրը մեկն է՝ ՋԼՄ-ների և տեղեկատվական տեխնոլոգիաների անվիճելի դերը, որոնք, իրենց հերթին, դրված են այնպիսի հասկացությունների հիմքում, ինչպիսին են «սոցիալական տեխնոլոգիաները», «հումանիտար տեխնոլոգիաները»: «Սոցիալական տեխնոլոգիաների» կիրառման դեպքում խոսքը սոցիալական ընդհանրության վրա ներգործության մասին է, մեր դեպքում՝ առանձին վերցրած Հայաստանի Հանրապետության հիմնական սոցիալական խմբերի մասշտաբով, որտեղ քսան ամիս առաջ «սոցիալական և հումանիտար տեխնոլոգիաների» լայն կիրառման ճանապարհով, որոնք ազդեցին Հայաստանի սոցիալական ընդհանրության և առանձին վերցրած քաղաքացիների, անհատի (կամ անհատների) վրա, կատարվեց պետական հեղաշրջում: Կրկնում եմ, Հայաստանում մենք դարձանք ինչպես «սոցիալական տեխնոլոգիաների», այնպես էլ «հումանիտար տեխնոլոգիաների» միաժամանակյա կիրառման ականատեսները: Իսկ այդ տեխնոլոգիաների, որոնք կոչվում են նաև «փափուկ ուժ», կիրառման հիմնական գործիքը, ինչը հմտորեն իրագործվեց Հայաստանում անդրօվկիանոսյան ստրատեգների կողմից, դարձավ ինչպես ընդհանրապես հասարակության, այնպես էլ առանձին վերցրած քաղաքացու վրա արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության հնարավորությունների լայն օգտագործումը՝ անդրօվկիանոսյան տիկնիկավարներին «հարկավոր» հսկայական զանգվածի արագությամբ և լայն տարածման մեծ հնարավորություններով, տիկնիկավարներ, որոնք իրենց առջև նպատակ էին դրել՝ ազդել հայ հասարակության ամենատարբեր շերտերի, ինչպես նաև առանձին վերցրած մարդու վարքի վրա: Միևնույն ժամանակ, նման տեխնոլոգիաների ազդեցությունն այնքան մեծ էր, որ դրանք ստիպում էին Հայաստանի սովորական քաղաքացուն անել այն, ինչն այլ պարագայում նա երբեք չէր անի: Քաղաքացիների վրա մանիպուլյատիվ ներգործության այդքան բարձր արդյունավետությունն այնքան դուր եկավ պետական հեղաշրջման (2018թ. ապրիլ-մայիսի) կատարողներին, որ արդեն մոտ 20 ամիս գտնվելով իշխանությունում՝ նրանք իրենց գործնական աշխատանքում շարունակում են ակտիվորեն կիրառել սոցիալական և հումանիտար տեխնոլոգիաների գործիքանին: Միևնույն

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Ժամանակ, «Ժողովարչապետը» և նրա սխրակիցները, ըստ երևույթին, գիտակցեցին, որ նշված տեխնոլոգիաները ոչ միայն ազդեցության տեխնոլոգիաներ են, այլև հասարակության ժամանակակից կառավարման տեխնոլոգիաներ: Կարելի է բազմաթիվ կոնկրետ օրինակներ բերել՝ ի հաստատումն ասվածի, բայց դա այլ վերլուծության թեմա է: Իսկ այստեղ, հարգելի ընթերցող, կարևոր է պարզել, թե կոնկրետ ինչ նպատակների է ենթարկված այդ տեխնոլոգիաների այդքան լայն կիրառությունը: Մակերեսին գտնվող պատասխանը հետևյալն է. դիցուք՝ նպատակը իշխանության պահպանումն է, ինչը, անշուշտ, իրականություն է: Միևնույն ժամանակ, չէ՞ որ ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ոչ միայն հանուն դրա են ծախսվել տասնյակ ու տասնյակ (եթե ոչ հարյուրավոր) միլիոն դոլարներ, երբ ֆինանսավորվում էին տարատեսակ հասարակական կազմակերպությունները Սորոսի հիմնադրամների, ԱՄՆ առաջատար կուսակցությունների դեմոկրատական ինստիտուտների կողմից, ինչպես նաև ամերիկյան հարկատուների փողերը (նկատի ունենք հայկական վայ-հեղափոխականների խոսափող դարձած «Ազատություն» ռադիոյի հայկական բաժնի ֆինանսավորումը):

Հարավային Կովկասի տարածաշրջանում արևմտյան ստրատեգները հետապնդում են շատ ավելի գլոբալ խնդիրներ, որոնց լուծումը, դատելով նրանց գործողություններից, հնարավոր է միայն սոցիալական և հումանիտար տեխնոլոգիաների հետևողական կիրառման հիման վրա, որոնք արհամարհում են տեխնոլոգիական ներգործության օբյեկտի մշակութային առանձնահատկությունները (որքան էլ ցավալի է գիտակցել, բայց որպես նման օբյեկտ հանդես է գալիս հայ ժողովուրդը), ձգտում են ստրկացնել նրա կամքը, խեղաթուրել հայերի՝ դարերի ընթացքում ստեղծված քրիստոնեական քաղաքակրթական և ավանդական ընտանեկան արժեքների ընկալման համակարգը: Ավելին, փոխել այդ արժեքների ընկալման վրա հիմնված նրանց արարքների ու գործողությունների մոտիվացիան: Վերցնենք թեկուզ երկար անվանում ունեցող նախարարության՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակութի և սպորտի նախարարության օրինագիծը բուհերում «Հայոց լեզու», «Հայաստանի պատմություն» և «Հայ գրականություն» առարկաների պարտադիր ուսուցումը չեղարկելու մասին: Այս հաշվով բավական հստակ ու տարողունակ արտահայտվել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Գաբեգինի Մինասյանը. «Դա առաջին հերթին մեծ հարված է մեր ազգային արժեքների համակարգին: Եթե ցանկանում եք ազգային կողմնորոշման կրթություն տալ մեր ուսանողներին, ապա այդ առարկաները խիստ անհրաժեշտ են... Սոռանում են, որ կա տարիքային զարգացման որոշակի շրջան, երբ երիտասարդների մոտ ձևավորվում է աշխարհայացք և, բացի Հայրենիքի հանդեպ սիրուց, ուսանողական տարիներին ձևավորվում է արժեքների ընդհանուր համակարգը»: Նիկոլ Վովակիչի մերձավոր զինակիցը, նկատի ունեմ Արայիկ Հարություն-

յանին, որը գլխավորում է երկար անվանում ունեցող այդ նախարարությունը, գուցե, չի հասկանում հարգելի պրոֆեսոր Էդիկ Մինասյանի այսքան պարզ նախազգուշացումը: Եթե այդպես է, ապա դա դժբախտության կեսն է, այդ ժամանակ կարելի է նախարարին կշտամբել միայն անգիտության համար, ինչը ներհատուկ է Նիկոլ Վոլակիչի կառավարության անդամների մեծ մասին: Շատ ավելի վատ է, եթե նա գիտակցում է իր իսկ բացահայտ դավաճանական նախաձեռնությունների ողջ կործանարարությունը, բայց ինքնական, իսկ գուցե և հարկադրաբար, գրվել է որպես անդրօվկիանոսյան ստրատեգների նշված հակազգային նախագծերի իրականացման բուրժուազործիք: Եվ ահա, նրանց մտահղացումը միանգամայն ակնհայտ է՝ իմաստագրկել հայկական քրիստոնեական ազգային ինքնության էությունը կազմող հիմքերը, ստեղծել «նոր տիպի» մարդ՝ զոմբի-ռոբոտ, որը չունի սեփական դատողություն՝ շեղված հոգեբանությամբ: Իսկ դա իր հերթին կհանգեցնի յուրաքանչյուր մարդու, հատկապես երիտասարդների բնական իրավունքի հրաժարման՝ տնօրինելու սեփական ոգին ու գիտակցությունը: Եվ, ինչպես պատկերավոր արտահայտվել է քաղաքական վերլուծաբաններից մեկը, որը բնութագրել է սոցիալական և հումանիտար տեխնոլոգիաները որպես ինքնատիպ «բարի ռումբ», որը չի գրկում հասարակությանը կամ մարդուն կյանքից, բայց ճնշում է ինչպես հավաքական, այնպես էլ առանձին վերցրած մարդու կամքը, աղավաղում է մարդու գոյության գլխավոր իմաստը՝ փոխարինելով օտար կամքով ու իմաստով: Եվ հայոց պետականության քայքայման արդի տեխնոլոգիաների այդ ամբողջ զինանոցը խնդիր է դնում անկայունության գոտու ստեղծումը Ռուսաստանի հարավային մատույցներում և ոչ վերջին հերթին՝ Արցախի Հանրապետության անվտանգության գոտում, որը 105 կիլոմետրանոց սահման ունի Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Հիշեցնենք ընթերցողներին, որ ներկայում Արցախի զինված ուժերը վերահսկում են բարեկամական Իրանի հետ Արցախի Հանրապետության անվտանգության գոտու սահմանի այդ տեղամասը: Վերլուծելով Հայաստանի Հանրապետության գործող իշխանությունների աշխատանքը՝ ավելի ու ավելի հստակ են երևում դրանց ուղեվարների մտադրությունները. գրկելով հայ ժողովրդին իր ինքնության հիմքերից՝ հասնել ընտանեկան և քաղաքակրթական ավանդույթների, կրոնական նորմերի, այսինքն՝ հայ ժողովրդի գենետիկ կոդի փոփոխության: Զրկվելով իր ինքնության աղբյուրներից, բազային հիմքից՝ Հայաստանը կդադարի գոյություն ունենալ քաղաքակրթական իմաստով և կդառնա ամորֆ, հլու-հնազանդ սուբյեկտ մանիպուլյացիաների համար: Հատկապես նշենք, որ արևմտյան ստրատեգների այս նենգ մտահղացումների իրականացման ճանապարհին գլխավոր խոչընդոտներից մեկը, եթե ոչ ամենագլխավոր խոչընդոտը, Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական դաշինքն է, ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությունը: Դա հիմնալի հասկանում են Նիկոլ Վոլակիչի՝ իր իսկ սիրելի տիկնիկավարները, ուստի

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

և ՀՀ կառավարության ուղեվարների գլխավոր նպատակը դառնում է Ռուսաստանի դեմոնացումը՝ ինֆորմացիոն (տեղեկատվական) պատերազմի ամենաճարտար արդիական տեխնոլոգիաների օգտագործմամբ, իսկ վերջնանպատակը Հայաստանից և Հարավային Կովկասի տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելն է: Այս մասին ավելի վաղ գրել են «Վերջնանպատակը Հայաստանից և Հարավային Կովկասի տարածաշրջանից Ռուսաստանը դուրս մղելն է» հոդվածում, որը հրապարակվել է 2019թ. դեկտեմբերի 6-ին REGNUM տեղեկատվական գործակալությունում:

Հարգելի ընթերցող, ես հատուկ այսքան մանրամասն ներկայացրի ահա արդեն քանի տարի Հայաստանին հայտարարված և համաշխարհային քաղաքականության ուժի հայտնի կենտրոնների (որոնք հենվում են տեղական արտադրության սորոսյան լափակերների, LQPS հանրույթի ակտիվիստների, «Կյանքի խոսքը» տոտալիտար կրոնական աղանդի և հակազգային այլ ուժերի մեծաթիվ քանակության վրա) կողմից իրականացվող տեղեկատվական պատերազմի վտանգավոր հետևանքների իմ տեսլականը: Նշենք, որ նրանց ողջ գործունեությունը վերջնարդյունքում հանգեցվում է անշրջելի պայմանների ստեղծմանը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին կառավարման համար՝ այստեղից հենց հայոց պետության գոյության համար բխող բոլոր սպառնալիքներով: Այս խափանարար աշխատանքում, որը հմտորեն ուղղորդվում է արտասահմանից, դժվար է գերազնահատել զանգվածային լրատվամիջոցների դերը: Մանավանդ արդի Հայաստանի պայմաններում, երբ ՁԼՄ-ների մեծ մասը, տարատեսակ ինտերնետ պորտալները և ինտերնետ - TV-ները վարպետորեն ուղղորդվում և շռայլորեն ֆինանսավորվում են Սորոսի հիմնադրամի և այլ՝ հիմնականում անդրօվկիանոսյան հովանավորների կողմից: Ուստի, բավական ակտուալ է թվում «Լազարյան ակումբի» երրորդ նիստի թեման՝ «Ռուսաստանի և Հայաստանի ՁԼՄ-ները. անկեղծ խոսակցություն»: Կարծում եմ, որ քննարկումների ընթացքում կարելի կլինի մշակել պլատֆորմ այդ սպառնալիքների վերացման և երաշխավորություններ ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման ուղղությամբ, ինչը կկանխի վերահաս աղետը: Ընդ որում՝ կարծում եմ, որ ավելորդ չէ հիշեցնել նիստի մասնակիցներին, որ Հայաստանի դեմ ահա արդեն տասնամյակներ վարվող տեղեկատվական պատերազմը հիմնվում է մանրակրկիտ մշակված համակարգի վրա: Դրա համար բավական է ուշադիր ընթերցել նախագծերի նպատակները, որոնք իրականացվում են ՀՀ բազմաթիվ հասարակական կազմակերպությունների և ֆինանսավորվում օվկիանոսի այն կողմից: Կարևոր եմ համարում հատկապես նշել, որ ամբողջության մեջ այդ նպատակային նախագծերի ուշադիր ուսումնասիրման դեպքում գալիս ես այն եզրահանգման, որ իրենց միասնության մեջ դրանք կազմում են Հայաստանի Հանրապետության քայքայման ամբողջական ծրագիրը: Դրա համար կիրառվող տեխնոլոգիաները և քայքայման մեթոդաբանությունը կարող են դառնալ ելակետային նյութ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մահացու վտանգավոր մարտահրավերների և սպառնալիքների դիմակայության ու չեզոքացման նույնքան ամբողջական ծրագրի մշակման համար: Կցանկանալի հուսալ, որ «Լազարյան ակումբի» առաջիկա երրորդ նիստում բանավեճն այս հարցերի շուրջ կծավալվի այս դաշտում՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական իրողությունները, որոնք ստեղծվել են Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում: Հակառակ դեպքում մենք ստիպված կլինենք խոստովանել, որ հայ վայ-հեղափոխականների ու նրանց թիկունքին կանգնած տիկնիկավարների հակազգային գործողությունների մերկացմանն ուղղված մեր բոլոր ջանքերը դատապարտված են անհաջողության: Հայոց պետության հիմքերի համակարգային խարխլման՝ անդրովկիանոսյան ստրատեգիաների քաղաքականությանը հարկ է հակադրել դրա անվերապահ չեզոքացման ավելի կատարյալ, արդյունավետ համակարգ: Դրա այլընտրանքը Հայաստանի Հանրապետության պետության հիմքերի վերջնական խափանումն է:

Հետգրություն: Հոդվածում ես չհիշատակեցի այն վճռորոշ ժամանակի մասին, որի մեջ գտնվում է Արցախի Հանրապետությունը: Հիշեցնեմ հարգելի ընթերցողներին, որ 2020թ. մարտին այնտեղ տեղի են ունենալու նախագահական ընտրություններ: Այդ առնչությամբ կցանկանալի ընդգծել, որ հայկական երկու պետություններն այնքան խոր ու ներդաշնակ են փոխկապակցված և փոխկախված, որ անհնար է պատկերացնել Հայաստանի Հանրապետության անվտանգ գոյությունն առանց Արցախի Հանրապետության անվտանգ գոյության, և հակառակը: Հոդվածը կցանկանալի ավարտել Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի՝ ս.թ. նոյեմբերի 20-ին Ջազրեբում, Եվրոպական ժողովրդական կուսակցության համագումարում ունեցած ելույթից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին նախագահ, Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ ս.թ. դեկտեմբերի 11-ին «Հրապարակ» թերթին տված հարցազրույցից մեջբերում կատարելով:

Հիշենք խոսքերը, որոնք ասաց Սերժ Սարգսյանը Ջազրեբում, Եվրոպական ժողովրդական կուսակցության համագումարում. «Ուզում եմ, որ Բաքվում կրկին լսեն իմ այս ուղերձը. Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում, և այս խնդիրը չունի ռազմական լուծում»:

Իսկ հիմա կատարենք մյուս մեջբերումը: Այսպես, «Իրեն Հիսուս Քրիստոս երևակայող անձնիշխան վարչապետը կորցնում է աղեկվատությունը» վերնագրված հարցազրույցում, «Առաջիկայում Արցախում ընտրություններ են, բանակցային պրոցեսը մտել է փակուղի: Ի՞նչ պետք է անի Արցախի ղեկավարությունը, և ո՞ւմ եք տեսնում Արցախի նախագահի պաշտոնին՝ որպես այս փուլում արժանի իրավահաջորդի» հարցին ի պատասխան Ռոբերտ Քոչարյանն ասաց. «Փաշինյանի այն լուզումը, թե լուծումը պետք է

բավարարի հակամարտության բոլոր կողմերին, դատարկ, ոչինչ չասող խոսք է, միջնորդի պարզամիտ բանաձև: Ղա ուղիղ ապացույցն է այն բանի, որ Հայաստանը չունի գործողությունների պլան... Ընտրություններին արտաքին ուժերի կողմից ֆինանսավորվող ոչ կառավարական կազմակերպությունների (որոնք այսօր էլ սասանում են Հայաստանի Հանրապետության հիմքերը – Ա.Գ.) ներգրավումը հարցեր է առաջացնում: Այդպիսի կազմակերպություններ և պացիֆիստական կրոնական աղանդներ Արցախում չպետք է լինեն ընդհանրապես: Տեղի ունեցողն ավելի վտանգավոր է, քան շփման գծում գրանցվող ռազմական միջադեպերը, քանի որ դրանով ոչնչացվում են հենց այն արժեքները, որոնց շնորհիվ մենք հաղթել ենք... Անընդունելի է Ղարաբաղում ունենալ քծնող նախագահ, ով հնազանդորեն տուրք է տալիս որևէ մեկի (կարծում եմ, որ ոչ միայն Ղարաբաղում – Ա.Գ.), ներառյալ Հայաստանի վարչապետի, քմահաճույքներին: Այդ որակները հատուկ են տկար և թույլ անձերին, իսկ այդպիսի «առաջնորդությունը» կարող է աղետալի հետևանքներ ունենալ Արցախի համար: Այնտեղ պետք են պատերազմով կոփված խիզախ առաջնորդներ: Հուսամ՝ Ղարաբաղցիների ընտրությունը հենց այդպիսին կլինի»: Համոզված եմ, որ Արցախի հերոսներ՝ Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահներ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի ու Սերժ Ազատի Սարգսյանի այս մտքերը պետք է դիտարկել միասնության մեջ, և որ գլխավորն է՝ մի կողմ նետելով այս պարագայում միանգամայն անընդունելի մոդայիկ պոլիտոլոգիկություն բնորոշումը, ի լուր աշխարհի հայտարարել, թե որն է համայն հայության ամենագլխավոր խնդիրը մեր տագնապահույզ օրերում: Այո, այո, հարգելի ընթերցող, ես չսխալվեցի, հենց համայն հայության՝ Արցախի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի քաղաքացիների: Համոզված եմ, այսքան պահանջված հարց առաջադրելով՝ իր միասնական Հայրենիքի ամեն մի հայրենասեր, ամեն մի սթափ դատող հայ անպայման ազնիվ ու անկեղծ կխոստովանի, որ Արցախի Հանրապետության նախագահի բոլոր թեկնածուները Լեռնային Ղարաբաղի արժանավոր քաղաքացիներ են, բայց մեր վտանգավոր ժամանակներում պահանջված է առաջնորդ, որն իր անցած մարտական ճանապարհով, կենսափորձով նորից ու նորից կդառնա կենդանի մարմնացում, հիշեցում միջազգային հանրությանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների ղեկավարներին այն անվերապահ ճշմարտության մասին, որ Արցախի Հանրապետության անկախությունն ու անվտանգությունը սուրբ են ցանկացած ազնիվ հայի համար, որը չի գայթակղվել սորոսյան ու նրա նմանների «հմայություններով»՝ անկախ անձնական, գուցե օբյեկտիվ հավակնություններից: Ուստի, ոչ միայն Արցախի ընտրողները, այլև Հայաստանի ու Սփյուռքի քաղաքացիները պետք է աջակցեն Արցախի հերոս, գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանին: Արցախի Հանրապետությունում նրա նախագահ ընտրվելը ազատ և դեմոկրատական ընտրություններում հերթական անգամ ցույց կտա համաշխար-

հային քաղաքականության ուժի կենտրոններին, որ եթե Ադրբեջանի համար Արցախը «ադրբեջանական» տարածք է, ապա համայն հայության համար Հայրենիք է: Ես ինձ իրավունք եմ վերապահում խոսել այս մասին, քանի որ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի ամենամյա նստաշրջաններում Ստամբուլում (2013թ. հունիս-հուլիս) և Բաքվում (2014թ. հուլիս), ելույթ ունենալով (ընդ որում՝ 7-ական անգամ նստաշրջանների ընթացքում) որպես ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, 57 երկրների ավելի քան 300 պատգամավորների ներկայությամբ քանիցս բացահայտ պաշտպանել եմ Արցախի Հանրապետության շահերը, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդար գործը, որն ինքնորոշվել է ԵԱՀԿ Հելսինկյան Եզրափակիչ ակտին (1975թ.) լիովին համապատասխան: Այսօր, երբ գրում եմ այս տողերը, չեմ կարող երախտագիտության խոսքեր չասել ռուս գործընկերներին՝ ԵԱՀԿ ԽՎ-ում Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի պատվիրակության անդամներին և, առաջին հերթին, պատվիրակության ղեկավար՝ բանակի գեներալ, լուսահոգի Նիկոլայ Դմիտրիևիչ Կովալյովի ու նրա գործընկերների հասցեին, ովքեր տառաջիորեն պահպանում էին ինձ բավական «բարեկամական» տրամադրված թուրք ու ադրբեջանցի խորհրդարանականներից, երբ իրենց իսկ հայրենի օջախներում ստիպված էին, ընդ որում՝ ոչ մեկ անգամ, լսել իմ քանիցս հնչեցրած միտքը՝ Արցախը Հայաստանի ու համայն հայության համար, ի տարբերություն Ադրբեջանի ընկալման, տարածք չէ, այլ Հայրենիք, որը ոչ մի հայ քաղաքական գործիչ, անգամ տիեզերական մասշտաբի, թեկուզև տասնապատիկ հայտարարված «ժողվարչապետ», չի կարող սակարկության դնել, չի կարող վաճառել մեր միավորված Հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը: Հայերն իրենց Հայրենիքը չեն վաճառում:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի I, II, III, V և VI գումարումների պատգամավոր,
«Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ

ТЕКСТ ВЫСТУПЛЕНИЯ АРТАШЕСА ГЕГАМЯНА НА ТРЕТЬЕМ ЗАСЕДАНИИ РОССИЙСКО – АРМЯНСКОГО «ЛАЗАРЕВСКОГО КЛУБА»

(ЕРЕВАН, 13. 12. 2019 Г.)

Тема сегодняшнего обсуждения – «СМИ России и Армении: откровенный разговор». Уважаемые коллеги, чтобы вести откровенный разговор, думаю, надо прежде всего определить круг проблем и задач, вокруг которых и следует вести такой разговор. Так вот этот круг вопросов средствами массовой информации, щедро финансируемыми соросовскими фондами, навязан и России, и Армении. Что я имею в виду. Ни для кого не является секретом, что уже на протяжении, как минимум, одного десятилетия ведется активная информационная война против Республики Армения, зачинщики которой, в числе других побочных целей, поставили перед собой решение конкретной задачи, а именно: выдавливание России из Армении и региона Южного Кавказа. Достижению именно этой цели подчинена изошренная информационная война против Армении, которая осуществляется как с широким использованием средств массовой информации, так и посредством применения разного рода интернет-порталов и интернет-телевидения. Выступивший здесь один из наших сограждан сказал о том, что большинство средств массовой информации в Армении обслуживает оппозиционное поле. Да, если не считать десятки информационных интернет-порталов и интернет-телевидение, которые финансируются Фондом Сороса и служат решению вполне определенных задач, главенствующее место среди которых занимает демонизация России, всемерное расшатывание основ армяно-российского стратегического союза, а дальше, повторюсь, создание соответствующих предпосылок для выдавливания России из Армении и региона Южного Кавказа. Следующий фактор, который никоим образом не следует сбрасывать со счетов при определении задач патриотических СМИ, – обязательный учет факта неурегулированности Нагорно-карабахского конфликта, который крайне недобросовестно используется ангажированными из-за бугра СМИ с целью нагнетания страстей и дестабилизации

ситуации в южном подбрюшье России, будь то в Армении или в Республике Арцах. Выполнение этой задачи, безусловно, послужит дальнейшему нагнетанию напряженности вдоль линии соприкосновения вооруженных сил Республики Арцах, расквартированных в зоне безопасности, с азербайджанскими вооруженными силами. Весь вопрос упирается в реализацию стремления известных сил взять под контроль 105-километровую границу с Исламской Республикой Иран, в настоящее время контролируемую вооруженными силами Арцаха. Так вот наши заокеанские партнеры хотят, кровь из носу, обязательно дестабилизировать на этом участке границы обстановку, а потом, воспользовавшись мандатом государства-сопредседателя Минской группы ОБСЕ, ввести туда миротворческий контингент, как вы сами понимаете, НАТО. Это второй фактор, который следует учесть СМИ России и Армении.


Третий фактор, который не может не настораживать нас, заключается в том, что идет беспрецедентное наращивание вооружения частей третьей пехотной армии Турции, расквартированных в Нахиджеване. Наш многоопытный и многоуважаемый коллега Зорий Гайкович Балаян провел специальное изучение этого вопроса, и оно обобщено в соответствующем видеоматериале (на DVD), который представлен участникам нашего заседания.

Уважаемые коллеги, пока мы четко не обозначим вызовы и угрозы национальной безопасности, которые стоят перед Россией и Арменией, говорить откровенно через средства массовой информации... вы извините, это будет пустой тратой времени. А вызовы и угрозы, стоящие перед нашими государствами, вполне выпукло обозначены. Взять хотя бы факт, например, имевший место позавчера, 11 декабря, в Сенате Соединенных Штатов Америки, когда по представлению сенатора Кори Гарднера была принята резолюция, адресованная секретарю Государственного департамента США Майку Помпео, в соответствии с которой он в течение 90 дней должен дать сенаторам США ответ на вопрос – является ли Россия спонсором терроризма. Вы думаете, что эта резолюция принята случайно? Конечно нет. И в настоящее время под эту написанную сенатором-республиканцем и принятую Сенатом США резолюцию будут готовить соответствующую фактуру, якобы подтверждающую эту клевету, уж в этом не приходится сомневаться. Более того, в обязательном порядке последуют провокации со стороны вооруженных сил Турции и Азербайджана на турецко-армянской и азербайджано-армянской границах, в том числе из Нахиджевана. Здесь не приходится говорить о попытках дестабилизации обстановки в зоне безопасности Республики Арцах, которые будут происходить на постоянной основе.

Мне кажется, что все это тот примерный перечень вопросов, которые нам надлежало бы обсудить. К счастью, в Армении все еще есть патристически настроенные СМИ, интернет-порталы, которые возьмутся за это дело, кстати, руководитель одного из таких интернет-порталов – shame.am – присутствует на нашем заседании. Именно этот интернет-портал накануне заседания «Лазаревского клуба» согласился опубликовать мои тревоги. Копию этой публикации я представил Вам, Константин Федорович, и надеюсь, что в ближайшее время эта статья будет опубликована также и другим патристическим изданием «Иравунк», а именно – в «Комсомольской правде в Армении». В то же время моих уважаемых коллег призываю прочитать статью «Конечная цель – выдавить Россию из Армении и региона Южного Кавказа», опубликованную в сегодняшнем номере «Комсомолки» в Армении.

Уважаемые коллеги, здесь говорилось о каких-то мозговых штурмах и прочее, прочее. Я не знаю, насколько эти мозговые штурмы могут подействовать на людей, у которых мозгов нет. А сегодня нам следует обозначить проблемы и вокруг этих проблем вести деловой, конкретный конструктивный разговор.

Спасибо за внимание.



ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻ ՏԵՔՍՏԸ ՈՌԻՍ – ՀԱՅԿԱԿԱՆ «ԼԱԶԱՐՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ» ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏՈՒՄ

(ԵՐԵՎԱՆ, 13. 12. 2019 Թ.)

Այսօրվա քննարկման թեման է՝ «Ռուսաստանի և Հայաստանի ԶԼՄ-ները. բաց խոսակցություն»։ Հարգելի գործընկերներ, բաց խոսակցության համար, կարծում եմ, պետք է նախևառաջ որոշել խնդիրների ու անելիքների շրջանակը, որոնց շուրջ էլ հարկ է վարել նման խոսակցությունը։ Եվ ահա, հարցերի այդ շրջանակը սորոսյան հիմնադրամների միջոցով շրայլորեն ֆինանսավորվող զանգվածային լրատվամիջոցների կողմից պարտադրված է և՛ Ռուսաստանին, և՛ Հայաստանին։ Ինչ նկատի ունեն։ Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ արդեն առնվազն մեկ տասնամյակ ակտիվ տեղեկատվական պատերազմ է վարվում Հայաստանի Հանրապետության դեմ, որի հրահրողները, կողմնակի այլ նպատակների կողքին, իրենց առջև կոնկրետ խնդրի լուծում են դրել, դիցուք՝ Հայաստանից և Հարավկովկասյան տարածաշրջանից Ռուսաստանի դուրսմղումը։ Հենց այս նպատակին է ծառայում Հայաստանի դեմ նենգ տեղեկատվական պատերազմը, որն իրականացվում է ինչպես զանգվածային լրատվամիջոցների լայն օգտագործմամբ, այնպես էլ տարատեսակ ինտերնետ պորտալների և ինտերնետ հեռուստատեսության կիրառման միջոցով։ Այստեղ ելույթ ունեցած մեր համաքաղաքացիներից մեկը խոսեց այն մասին, որ Հայաստանում զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը սպասարկում է ընդդիմադիր դաշտին։ Այո, եթե չհաշվենք տասնյակ տեղեկատվական ինտերնետ պորտալներն ու ինտերնետ հեռուստատեսությունը, որոնք ֆինանսավորվում են Սորոսի հիմնադրամից և ծառայում են միանգամայն որոշակի խնդիրների լուծմանը, որոնց մեջ գլխավոր տեղը զբաղեցնում են Ռուսաստանի դեմոնացումը, հայաբնակալ ռազմավարական դաշինքի համակողմանի խարխուլումը, իսկ հետո, կրկնում եմ, համապատասխան նախադրյալների ստեղծումը Հայաստանից և Հարավկովկասյան տարածաշրջանից Ռուսաստանի դուրսմղման համար։ Հաջորդ գործոնը, որը ոչ մի կերպ չի կարելի անտեսել հայրենասիրական ԶԼՄ-ների անելիքները որոշելիս, Ռարաբաղյան հակամարտության չկարգավորվածության փաստի պարտադիր հաշվառումն է, որը չափազանց անբարեխիղճ կերպով է օգտագործվում արտասահմանից ֆինանսավորվող կանխակալ ԶԼՄ-ների կողմից՝ Ռուսաստանի հարավային

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

մատույցներում կրքերի բորբոքման և իրավիճակի ապակայունացման նպատակով, լինի Հայաստանում, թե Արցախի Հանրապետությունում: Այս խնդրի կատարումը, անշուշտ, կծառայի լարվածության հետագա թեժացմանը աղրբեջանական զինված ուժերի հետ Արցախի Հանրապետության զինված ուժերի շփման գծի երկայնքով, որ տեղակայված են անվտանգության գոտում: Ամբողջ հարցը հայտնի ուժերի ձգտումն է՝ վերահսկողության տակ վերցնել Իրանի Իսլամական Հանրապետության հետ 105 կիլոմետրանոց սահմանը, որը ներկայում վերահսկվում է Արցախի զինված ուժերի կողմից: Եվ ահա, մեր անդրովկիանոսյան գործընկերները ցանկանում են, որ անապայման ապակայունացնեն իրավիճակը սահմանի այդ հատվածում, իսկ հետո, օգտվելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագահող երկրի մանդատից, այնտեղ մտցնեն խաղաղարար զորակազմ, ինչպես ինքներդ եք հասկանում՝ ՆԱՏՕ-ի: Այս է երկրորդ գործոնը, որը պետք է հաշվի առնեն Ռուսաստանի և Հայաստանի ՋԼՄ-ները:

Երրորդ գործոնը, որը չի կարող չմտախոգել մեզ, այն է, որ ընթանում է Նախիջևանում տեղակայված Թուրքիայի երրորդ հետևակային բանակի ստորաբաժանումների սպառնազինության աննախադեպ ավելացում: Մեր բազմափորձ ու մեծարգո գործընկեր Ջորի Հայկի Բալայանը հատուկ ուսումնասիրել է հարցը, և այն ընդհանրացվել է համապատասխան տեսանյութում (DVD-ով), որը ներկայացված է մեր նիստի մասնակիցներին:

Հարգելի գործընկերներ, քանի դեռ մենք հստակ չենք նշել ազգային անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները, որոնք կանգնած են Ռուսաստանի և Հայաստանի առջև, բաց խոսակցության մասին խոսելը զանգվածային լրատվամիջոցներով, կներեք, ժամանակի իզուր վատնում կլինի: Իսկ մեր պետությունների առջև կանգնած մարտահրավերներն ու սպառնալիքները շատ ցայտուն նշված են: Վերցնենք թեկուզ այն փաստը, որը, օրինակ, տեղի ունեցավ երեկ չէ առաջին օրը՝ դեկտեմբերի 11-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատում, երբ սենատոր Քորի Գարդների ներկայացմամբ ընդունվեց բանաձև՝ հասցեագրված ԱՄՆ Պետական դեպարտամենտի քարտուղար Մայք Պոմպեոյին, որի համաձայն՝ նա 90 օրվա ընթացքում պետք է ԱՄՆ սենատորներին պատասխանի՝ արդյո՞ք Ռուսաստանը ահաբեկչության հովանավոր է: Դուք կարծում եք՝ այդ բանաձևը պատահական է, իհարկե, ոչ: Եվ ներկայում հանրապետական սենատորի գրած և ԱՄՆ Սենատի կողմից ընդունված բանաձևի տակ կպատրաստեն համապատասխան հենք, որը, իբր, կհաստատի այդ զրպարտությունը, սրանում արդեն կասկածելու հարկ չկա: Ավելին, պարտադիր կարգով կհաջորդեն սադրանքներ Թուրքիայի ու Ադրբեջանի զինված ուժերի կողմից թուրք-հայկական և ադրբեջանա-հայկական սահմաններին, այդ թվում Նախիջևանից: Այստեղ էլ չեն ասում իրավիճակն ապակայունացնելու փորձերի մասին Արցախի Հանրապետության անվտանգության գոտում, որոնք տեղի ունեն մշտապես:

Ինձ թվում է, որ այս ամենը հարցերի այն մոտավոր ցանկն է, որոնք մենք պետք է, որ քննարկեինք: Բարեբախտաբար, Հայաստանում դեռևս կան հայրենասիրաբար տրամադրված ՁԼՄ-ներ, ինտերնետ պորտալներ, որոնք կստանձնեն այդ գործը, ի դեպ, նման ինտերնետ պորտալներից մեկի՝ shame.am-ի ղեկավարը ներկա է մեր նիստին: Հենց այդ ինտերնետ պորտալն է, որ «Լազարյան ակումբի» նիստի նախօրեին համաձայնեց հրապարակել իմ տագնապները: Այդ հրապարակման պատճենը ներկայացրել եմ Ձեզ՝ Կոնստանտին Ֆյոդորովիչ, և հույս ունեմ, որ առաջիկայում այդ հոդվածը կհրապարակի նաև հայրենասիրական մեկ այլ պարբերական՝ «Իրավունքը», այն է՝ «Комсомольская правда в Армении»-ն: Միևնույն ժամանակ, իմ հարգելի գործընկերներին կոչ եմ անում կարդալ «Վերջնապատակը Հայաստանից և Հարավային Կովկասի տարածաշրջանից Ռուսաստանը դուրսմղելն է» հոդվածը, որը հրապարակվել է Հայաստանում «Կոմսոմոլկա»-ի այսօրվա համարում:

Հարգելի գործընկերներ, այստեղ խոսվեց ինչ-որ ուղեղային գրոհների և այլնի մասին: Չգիտեմ՝ որքանով այդ ուղեղային գրոհները կարող են ազդել մարդկանց վրա, որոնք ուղեղ չունեն: Իսկ այսօր մենք պետք է նշենք խնդիրներն ու այդ խնդիրների շուրջ վարենք գործնական, կոնկրետ կառուցողական խոսակցություն:

Շնորհակալություն ուշադրության համար:

«ՀԱՅԵԼՈՒ ԱՌԱՋ» ԾՐԱԳՐԻ ՀՅՈՒՐԸ ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆՆ Է

(16.12. 2019 Թ., ARMNEWS TV)

ԱՆԺԵԼԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ – Բարև Ձեզ, Դուք «Հայելու առաջ» եք: Ձեզ հետ է Անժելա Թովմասյանը: Այսօր իմ հյուրն է «Ազգային Միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը: Բարև Ձեզ, պարոն Գեղամյան:

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ – Բարև Ձեզ:

Ա. Թ. – Շնորհակալ եմ, որ ընդունեցիք իմ հրավերը: Երկուսուկես տարին, կարծեմ, բավական մեծ ժամանակահատված է քաղաքական գործչի, Ազգային ժողովի պատգամավորի, կուսակցության ղեկավարի համար, երկուսուկես տարի ընդմիջում, էսպես ասեմ, որովհետև երկուսուկես տարի, մոտավորապես, կարծես, եթերում չեք եղել: Ես ճիշտ գիտեմ, որ այդքան ժամանակ 2017-ից՝ հիմա 2019-ի վերջն է, ինչո՞վ էր պայմանավորված:

Ա. Գ. – Նախ՝ շնորհակալություն հրավերի համար: Միանգամայն ճիշտ եք նկատել՝ դա իմ կամքով չէր: Այդ ընթացքում, չստացվի թե, ինչ-ինչ կաշկանդվածություն ունեմ, հասցրել եմ երկու գիրք ստեղծել, սակայն եթերից զրկվել ...

Ա. Թ. – Այս գրքի համար էլ, որը ինձ նվիրեցիք, շնորհակալություն:

Ա. Գ. – Սա նախավերջին գիրքս է, իսկ հաջորդը մոտ օրերս տպագրության կհանձնեն: Այսինքն, այս կերպ իմ քաղաքացիական և քաղաքական դիրքորոշումից չեմ հրաժարվել, հստակ հայտնել եմ: Ուրիշ բան, որ ոմանք նպատակահարմար չեն գտել եթեր տալ ինձ պարզ պատճառներով. մի մասը «իմքայլականների» եթերն է և, բնականաբար, այնտեղ ես խիստ անցանկալի հյուր եմ: Մյուս մասը, որ ընդդիմադիր դաշտին է պատկանում, ձեռնպահ է մնացել, երևի որ, իբր, ավելի չսրվեն Արտաշես Գեղամյան – «ժողվարչապետ», «իմքայլականների» հարաբերությունները:

Ա. Թ. – 2017 թ. հետո, Դուք ասում եք՝ եթերում չեմ եղել: Ա՛յ, Ձեր եթերում չլինելը, ի՞նչ եք կարծում, ինչպես հիմա նշեցիք, արդյոք չի՞ սրի «ժողվարչապետի», «իմքայլականների» հետ Ձեր հարաբերությունների լարվածությունը: Հիմա, երբ արդեն եղաք մեր եթերում, այդ լարվածության թուլացման արդյո՞ւնքն է:

Ա. Գ. – Հիմա, երբ դիտեցինք 2018 թ. հոկտեմբերին վերաբերող հեռուստակադրերը՝ կապված հայտնի միջադեպի հետ, հիշեցնեմ՝ «Ժողվար-չապետն» այն ժամանակ կատեգորիկ դեմ էր Հայաստանի Հանրապետության անդամակցությանը Եվրասիական տնտեսական միությանը: Բնականաբար, ես՝ որպես այդ միությանը անդամակցելու ջատագով, Ելույթներ ունեցա Ազգային ժողովում, իսկ մինչ այդ էլ՝ նաև համապատասխան հանձնաժողովում: Ելույթներիս բովանդակությունը խեղաթյուրելով՝ Փաշինյանը փորձեց «քննարկման» այլ դաշտ տեղափոխել՝ ինչ-ինչ անպարկեշտ համեմատություններ անելով: Ես բացատրեցի նրան, որ դա ճիշտ ճանապարհ չէ: Կարծեմ՝ հասկացավ ...

Ա. Թ. – *Ամբիոնից միայն բացատրեցիք, թե՞ նաև միջանցքներում շարունակեցիք ...*

Ա. Գ. – Միջանցքներում բացատրեցի ...

Ա. Թ. – *Միջանցքներում ...*

Ա. Գ. – Ի՞նչ տարբերություն: Կարևորը՝ բացատրական աշխատանք տարվեց:

Ա. Թ. – *Ամբիոնից չէի՞ք կարող բացատրել:*

Ա. Գ. – Նորից եմ կրկնում, այսօր դա չէ կարևորը:

Ա. Թ. – *Այդ թեման, ուզում եմ հասկանալ, փակվա՞ծ է այլևս ...*

Ա. Գ. – Այդ թեման բացված էլ չի եղել:

Ա. Թ. – *Լարվածություն կա, թե՞ չկա:*

Ա. Գ. – Կրկնեմ՝ այդ թեման բացված էլ չի եղել: Սխալ է թույլ տրվել, սխալը բացատրել ենք, որ էլ չկրկնվի: Մյո՞ւս հարցը:

Ա. Թ. – *Մյո՞ւս հարցը: Ընդունում եք, որ երկրում կա որոշակի լարվածություն: Ինձ հետաքրքիր է, ա՛յ, Ձեր տպավորությամբ, էդ ամեն ինչը նստվածք թողել է Արտաշես Գեղամյանի նկատմամբ այսօրվա իշխանությունների մոտ: Թե՞ Դուք դա չեք նկատում:*

Ա. Գ. – Այսօրվա իշխանությունների վերաբերմունքն անձիս նկատմամբ ինձ ընդհանրապես չի հետաքրքրում: Ինձ հետաքրքրում է այն մարդկանց և այն ուժերի վերաբերմունքը, որոնց նկատմամբ ես հարգանք եմ տածում: Բայց ինձ չի կարող չմտահոգել այն, որ բառիս բուն իմաստով անպատրաստ, ոչ ադեկվատ անձինք այս ներկա, բարդ իրավիճակում ստանձնել են երկրի ղեկավարումը, և երկիրը, առանց չափազանցության, տանում են դեպի կործանում:

Ա. Թ. – *Տեսեք, շատ են մեղադրվում այսօրվա իշխանության ղեկավարը՝ Նիկոլ Փաշինյանը, ինչպես նաև հատկապես 2008 թվականից հետո ակտիվ դրսևորումներով ի հայտ եկած ընդդիմադիր գործիչները, թե Սերժ Սարգսյանին հաջողվեց իրենց դարձնել իր՝ գործող նախագահի «հաճախորդներ», այդ թվում, կրկնեմ, նաև Նիկոլ Փաշինյանին են մեղադրում: Իրավունք ունե՞ն նման պնդումներ հնչեցնել:*

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Ա. Գ. – Երեք տարի եթերում չես եղել, հիմա էլ, ահա, հարկադրված ես եթերում բամբասանքներ մեկնաբանել ...

Ա. Թ. – *Ղա բամբասանքի մակարդակ է ...*

Ա. Գ. – Իհարկե: Բամբասանքների մեկնաբանությունն անես, կմտածեն՝ ճիշտ էլ արել են, որ էս մարդուն եթեր չեն կանչել: Երկիրը ծեռքից գնում է, և դա վերին աստիճանի ակներև է, քանզի մենք ոչ ադեկվատ վարչապետ ունենք, որը, օրինակ, կանգնում և, դիցուք, դեկտեմբերի 12-ին կառավարության նիստում հայտարարում է, թե ամբողջ պետական համակարգը հակադրվում է «հեղափոխությանը»: Այստեղ կրկնակի, եռակի սուտ կա: Այսպես՝ սուտ առաջին. 2018 թ. ապրիլ-մայիսին ոչ մի հեղափոխություն էլ չի եղել: Եղել է հեղաշրջում: Հեղաշրջում, որի բաղկացուցիչները և երաշխավորությունները նշված են Ջին Շարփի հանրահայտ աշխատությունում՝ «Դիկտատուրայից դեպի դեմոկրատիա: Ոչ բռնի իշխանափոխության 198 մեթոդ»: Այդ 198 մեթոդներից 43-ը կիրառվել է Հայաստանում: 1960-70-ականներին Երևանում ընդամենը մեկ համասեռական կար, անունը՝ Գուրգենչիկ: Ողջ քաղաքում՝ մի հոգի: Նա վախենում էր փողոց դուրս գալ: Հիմա այն աստիճանի է ամեն ինչ պղծվել, որ ...

Ա. Թ. – *Ժամանակները, բարքերը փոխվել են, պարոն Գեղամյան ...*

Ա. Գ. – Հիմա այն աստիճան է ամեն ինչ պղծվել, որ համասեռամոլները, ԼԳԲՏ հանրույթը ոստիկանության բաժանմունք են զավթում: Այս և նման այլ արտառոց դրսևորումները, ի վերջո, գալիս, համալրում են երկրների կործանմանն ուղղված տեսական հիմնավորումներն ու երաշխիքները:

Ա. Թ. – *Պարոն Գեղամյան, Ղուք երեկ չէ, որ այդ ամենի մասին կարդացել, իմացել եք:*

Ա. Գ. – Ես քանիցս անդրադարձել եմ դրանց իմ հրապարակումներում:

Ա. Թ. – *Կարո՞ղ ենք ասել, որ Արտաշես Գեղամյանը վերջին տարիներին իշխանության բարեկամն էր: Այսինքն, եթե բարեկամը չլինեիք, պատգամավորական թեկնածուների ցուցակի առաջին տասնյակում չէիք լինի:*

Ա. Գ. – Բնականաբար, կարող ենք ասել: Իսկ ի՞նչ, կարո՞ղ ա, բան ա փոխվել: Այո, սխալներ եղել են, սխալների ամենախիստ գնահատականը Սերժ Սարգսյանն է տվել: Ես էլ իմ կողմից եմ տվել, հատկապես տնտեսական քաղաքականության վերաբերյալ: Արտաքին քաղաքականությունը, հավատացնում եմ, եղել է շատ և շատ ճիշտ, հավասարակշռված: Առհավատչյան, որ հենց թեկուզ Անդրանիկ Միհրանյանը՝ բավականաչափ փորձառու քաղաքագետ, աշխարհաքաղաքականության փորձառու մասնագետ այն աստիճանի, որ Ռուսաստանից ժամանակին գործուղել են ԱՄՆ-ում աշխատելու որպես Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հովանու ներքո գործող ժողովրդավարության և համագործակցության ինստիտուտի Նյու Յորքի ներկայացուցչության տնօրեն, բարձր է գնահատել Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականությունը:

Ա. Թ. – *Մի մոռացեք, որ նա Էդուարդ Նալբանդյանի մտերիմ ընկերն է*

և ամիթը բաց չի թողնում ասելու, որ փայլուն արտաքին քաղաքականություն է եղել:

Ա. Գ. – Բա ճի՛շտ ա անում, բա եթե ընկե՛րն է ...

Ա. Թ. – Հա, բայց մյուս կողմից էլ, երբ «և – և»-ի մասին պարոն Մնացականյանը, հիշում եք, հարցազրույցի ժամանակ ակնարկեց, հեզնեցին, թե այնպես չի լինում, որ միանգամից երկու ձի հեծնեք. երկու ձի հեծնողը, տեսա՞ք, ինչ վիճակում հայտնվեց: Արդյոք էդ վիճակում չհայտնվե՞ց ամբողջ նախկին իշխանությունը: Երկու ոտքը դնելով ...

Ա. Գ. – Ամբողջ խնդիրն այն է, թե որքան պրոֆեսիոնալ է ձի հեծնողը. կարող է երեքին էլ նստել, անգամ կանգնել դրանց վրա: Բայց եթե ...

Ա. Թ. – Բայց՝ «եթե». պատկերացնում եք, չէ՞, ինչ կարող է լինել:

Ա. Գ. – Բայց եթե բացարձակապես տարրական տեսական գիտելիքներ չունես, բնականաբար, քեզ անգամ էշ էլ չի կարելի վստահել, ուր մնաց երկու ձի ...

Ա. Թ. – Հիմա ուզում եմ ասել՝ նախկին իշխանությունները «և – և»-ի տակ չմնացի՞ն երկու ձի հեծնելով. ինչ-որ իմաստով մեր բարեկամ Ռուսաստանը, օրինակ, իշխանափոխությունից հետո մի ժամ էլ չհամբերեց ու միանգամից շնորհավորեց: Սա արդյոք չի՞ նշանակում, որ այդ «և – և»-ը էնքան էլ տպավորիչ չէր եղել մեր բարեկամ երկրի համար ու շտապեց շնորհավորել:

Ա. Գ. – Թե՛ Ռոբերտ Քոչարյանը, թե՛ Սերժ Սարգսյանը կարող էին տարբեր և շատ սխալներ թույլ տալ, բայց մի հարցում միակարծիք էին. նրանք ոչ մի գործողություն չեն ձեռնարկել, որը հարվածի տակ կոներ Արցախի անկախությունը, Արցախի պետականությունը: Դա արքիմանտիկ ճշմարտություն է: Դատել այդ աստիճանի բարձր քաղաքական պաշտոնյաների մասին կարելի է միայն այն պարագայում, երբ ինքդ լիարժեք տիրապետում ես այն տեղեկատվությանը, որին իրենք տիրապետում են: Փոքր-ինչ հետ գնանք. եթե հիշում եք՝ Ազգային ժողովի 2017 թվականի ընտրություններին մասնակցում էր նաև ՀԱԿ-ը: Եվ նրա արտաքին քաղաքականության ծրագիրը, ավելի ճիշտ՝ Լեռնային Ղարաբաղի ապագայի հետ կապված ծրագիրը, տրամագծորեն տարբերվում էր ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների և դաշինքների ծրագրերից: Եվ արդյունքում ...

Ա. Թ. – Լևոն Տեր-Պետրոսյանի մոտեցումը հայտնի է:

Ա. Գ. – Ահա՛, միանգամայն իրավացի եք: Եվ արդյունքում նրանք ստացան ընտրողների մեկուկես տոկոս ձայնը: Սերժ Սարգսյանին դա իրավունք վերապահեց ասելու՝ ա՛յ, տեսե՛ք, այն, ինչ ուզում եք Հայաստանի վզին փաթաթել, լավագույն դեպքում ժողովրդի, ընտրողների մեկուկես տոկոսի կողմից է հավանության արժանանալու:

Ա. Թ. – Երբ «Իսկանդերի» հետ կապված պայմանագիր պետք է կնքվեր, Նիկոլ Փաշինյանը շատ խիստ քննադատում էր, ասում, թե մեր ինքնիշխանությունը հատ-հատ մեզնից տանում են ռուսները: Սա ի՞նչ է նշանակում, թե նրանք հետո պիտի գան, տեղում ճշտեն, նայեն, թե ինչ է կատարվում ...

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Ա. Գ. – Սա նշանակում է, որ այդ մարդը բացարձակապես չի հասկացնում, թե ինչի մասին է խոսում:

Ա. Թ. – *Հետո այլ կարծիք հայտնեց, ասաց, որ այո ...*

Ա. Գ. – Հետո սովորեցրին, գիտելիքների բացը լրացրին, փոքր-ինչ բացատրեցին, հասկացրին, որ «Իսկանդեր» համակարգը այն վահանն է, որը կսթափեցնի ոչ միայն Ադրբեջանին, այլ նաև դրա թիկունքին կանգնած Թուրքիային:

Ա. Թ. – *Ձեզ էլ ինքը մեղադրեց, թե ավելի լավ է լենինիզմից, մարքսիզմից խոսես ...*

Ա. Գ. – Եվ դա ամենևին պատահական չէր ...

Ա. Թ. – *Գնացեք, խոսեք լենինիզմից, մարքսիզմից կամ էլ ...*

Ա. Գ. – Ինքը ինձ մեծ կոմպլիմենտ արեց, ինձ հուշեց, որ ինքն ընդհանրապես այդ մասին էլ գաղափար չունի: Սա՝ մեկ: Երկրորդը ...

Ա. Թ. – *Ղարսը, Արդահանը հիշեցրեց, ասաց՝ հիմա չգիտեմ՝ Ղուք մարքսիզմ-լենինիզմի հետևորդ եք, թե՞ Հայ հեղափոխական դաշնակցության:*

Ա. Գ. – Գիտեք, դա մեծ կոմպլիմենտ էր, որովհետև գոնե ականջի ծայրով լսել է ու գիտի, որ մարքսիզմ-լենինիզմ կա. նա, բնականաբար, չգիտի, որ Միլտոն Ֆրիդման կա, Ջոզեֆ Ստիգլից կա, Էմմանուել Վալլերսթայն կա, Գի Ղեբոր կա...

Ա. Թ. – *Նախորդ հարցը չավարտեցի. որ ասում էիք՝ սա, սա, սա, այս թեզերը կան, այս մեթոդները կիրառեցին և կարողացան Հայաստանում հեղափոխություն, չէ՞, իրականացնել:*

Ա. Գ. – Հեղափոխություն չեղավ, հեղաշրջում էր:

Ա. Թ. – *Հեղաշրջում. Ձեր խոսքով եմ ասում՝ հեղաշրջում իրականացրին: Հարցս տվեցի ու չավարտեցի. Ղուք իշխանության բարեկամն էիք, իշխանության հետ, իշխանության ցուցակում, այն էլ՝ տասնյակում, բա այդ ամեն ինչը, վստահաբար, մի ժամում և մեկ օրում, մի տարում էլ տեղի չի ունեցել, բա որ այդքան խելոք էր իշխանությունը, Ղուք էլ իրենց կողքին էիք, ինչո՞ւ էս դարպասներն ու դռները բացեցիք, և այս ամեն ինչը տեղի ունեցավ: Ղուք ասում էիք՝ գրում էի, հուշում էի՝ ահա՛, չարիքը գալիս է:*

Ա. Գ. – Միանգամայն տեղին է Ձեր հարցը: Իշխանության խելքը երևաց հենց այնտեղ, որ ոչ ոքի չխոչընդոտեց, արյան ճանապարհով չկանխեց, որ գան իշխանության:

Ա. Թ. – *Թո՛ղ ...*

Ա. Գ. – Մի րոպե. հարցը տվեցիք՝ մինչև վերջ պատասխանեմ:

Ա. Թ. – *Պարոն Գեղամյան, դա ...*

Ա. Գ. – Չէ՛ ...

Ա. Թ. – *Հեղաշրջումը, հասկացա, բա մինչև էդ ...*

Ա. Գ. – Ղուք հարցը տվեցիք ...

Ա. Թ. – *Լավ, ասեք:*

Ա. Գ. – Չխոչընդոտեցին, օրենքով նախատեսված միջոցները չկիրառեցին, որ նա գա իշխանության, հետո՝ նույնը, որ Ազգային ժողովում 70 տոկոս ունենա, և հիմա էլ շարունակի ասել, ինչպես իր հայտնի հողավածում էր համոզմունք հայտնել, թե կողմնակից է շրջանները հանձնելուն, Լեռնային Ղարաբաղին էլ, Լևոն Տեր-Պետրոսյանի պես, բարձր ինքնավարություն տալուն: Դե թող անի: Բայց եկավ, տեսավ, որ չէ, չի կարող անել: 70 տոկոս ծայն ունես, բարի եղիր, ուրեմն, մինչև վերջ քո գիծը առաջ տար, որ Լեռնային Ղարաբաղը դառնա բանակցային գործընթացի մասնակից: 70 տոկոս ծայն ունես, ասֆալտին փռելու փոխարեն դեմդ գիրք դիր, կարդա, գոնե էս ընթացքում լրացրու գիտությունների, պետական կառավարման առարկայի իմացության հսկայական վիճը, որ չստացվի այնպես, ինչը եղավ դեկտեմբերի 12-ի կառավարության նիստի ժամանակ. քո ձևավորած պետական ապարատը, որի ղեկավարների աշխատավարձը երկու-երեք ամիս առաջ երկու անգամ բարձրացրիր, հիմա հակահեղափոխական ես անվանում, ժողովրդի թշնամի հանում: Իհարկե, այդ ամենը կատարվում է մի պատճառով. ինքը եկել է, ղեկավարում է մի բնագավառ, որից ընդհանրապես ոչինչ չի հասկանում: Եթե որևէ բան հասկանար, ապա նման անհեթեթություն չէր ասի: Եթե ուզում ես պետական կառույցն աշխատի, դու պետական կառույցի առջև խնդիր դիր: Մինչդեռ ինքդ ամենամեծ վատությունն ես անում՝ լինելով անիրազեկ, ոչ ադեկվատ, և ստանձնել ես վարչապետի պաշտոնը:

Ա. Թ. – Արցախի թեման: Վտանգավոր հայտարարություններ հնչեցին, թե՞ ոչ: Թե՞ Բրատիսլավայում Մնացականյան – Մամեդյարով հանդիպումից հետո ներկայացված 7 կետը հանգստացրեց, և շատերն ասացին՝ ինչ լավ է, որ վերադարձել են Սերժ Սարգսյանի մոտեցումներին: Դուք համաձայն եք դրան, թե՞ համաձայն չեք: Եվ վտանգ տեսնո՞ւմ եք արտգործնախարարի վերջին հարցազրույցում, որտեղ խոսել է փախստականների վերադարձի մասին: Թեպետ մեր արտգործնախարարությունն արձագանքեց:

Ա. Գ. – Փաշինյանն ասաց՝ Արցախը Հայաստան է և վե՛րջ: Դա էլ քաղաքականություն է: Այդ քաղաքականության հիմքում այն է, որ անպայման դադարեցվի Մինսկի խմբի համանախագահների ինստիտուտի գործունեությունը, իսկ դրա ավտերնատիվը, հակակշիռը, պատերազմն է: Այսինքն ...

Ա. Թ. – Դա ծրագրվա՞ծ էր, թե՞ անփութություն էր, թե՞ անպատրաստություն: Ձեր կարծիքով, ի՞նչ էր դա:

Ա. Գ. – Ուրեմն, իմ կարծիքով, Նիկոլ Փաշինյանը բացառությամբ զուտ ֆիզիոլոգիական հարցերից (չնայած այդտեղ էլ կասկածներ ունեն), ինքը թելադրվում է այն ուժերի կողմից, ովքեր իրեն բերել են իշխանության:

Ա. Թ. – Բայց երբ Մամեդյարովը խոսում էր Լավրովի պլանի մասին, կարծեմ, էդ պլանը չի մշակվել երեկ կամ այսօր, Նիկոլ Փաշինյանի օրոք: Դա մոտավորապես, երեք, երեքուկես տարվա պատմություն ունի: Այսինքն՝ մշակվել է շատ ավելի վաղ: Եվ հիմա, հիշատակելով էս կետերը՝ առաջ է մղվում Ռուսաստանը. շատ փորձագետներ դա համարում են Ռուսաստանի և Ադրբեյջանի համատեղ մշակած պլան:

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

Ա. Գ. – Բացարձակապես: Դա անտեղյակների հետևությունն է: Յուրաքանչյուր կարգավորման ծրագիր, որն այսօր գոյություն ունի, որը դրված է բանակցային սեղանին, Մադրիդյան հիմնարար սկզբունքների շառավիղն է: Մադրիդյան սկզբունքների մեջ (2018 թ. մարտի 18-ին տպագրվեց մամուլում) առանցքային երեք հարց կա. առաջին՝ ուժի և ուժի սպառնալիքի բացառում, երկրորդ՝ տարածքային ամբողջականություն և երրորդ՝ ժողովուրդների ինքնորոշում:

Ա. Թ. – Հավասար իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

Ա. Գ. – Միանգամայն իրավացի եք: Դուք ճշգրիտ ձևակերպումը բերեցիք Հելսինկյան (1975 թ.) եզրափակիչ ակտից:

Ա. Թ. – Ի՞նչ է այդ դեպքում լավրոլյան պլանը:

Ա. Գ. – Լավրոլյան պլանը, այսպես թե այնպես, պետք է լինի միայն ու միայն հիշատակածս հարցերի շրջանակում: Նրբերանգները, որպիսիք կան, զուտ բանակցողների խնդիրն են: Ժողովրդին չձանրաբեռնենք տերմիններով: Խնդիրը մեկն է՝ Հայաստանը կբանակցի յուրաքանչյուր պլանի շրջանակներում, որի արդյունքում Հայաստանը երբեք չի լինի Ադրբեջանի մաս, և՛ վերջ:

Ա. Թ. – Արցախը երբեք չի լինի:

Ա. Գ. – Անշուշտ, Արցախը, Ադրբեջանն էլ ավելի շուտ կմտնի Հայաստանի կազմի մեջ: Իսկ Արցախը երբեք չի լինի Ադրբեջանի մաս: Մնացածն արդեն դիվանագիտական նրբերանգներ են և բացարձակապես ոչ մեկին ոչինչ չասող: Ես նկատի ունեմ լայն հասարակայնությանը: Ինչ էլ լինի, սա է մեր գերխնդիրը:

Ա. Թ. – Այսինքն, Դուք համաձայն չեք, որ այդ 7 կետը մոտեցում էր Սերժ Սարգսյանի ժամանակներին ... Նույն հանրապետականները ևս ողջունեցին, ասացին՝ այո:

Ա. Գ. – Ամեն մարդ գնահատական է տալիս իր պատկերացումների համաձայն: Այնպես չի, որ եթե ողջունեցին, ուրեմն ես համաձայն եմ:

Ա. Թ. – Արցախի ընտրությունների վերաբերյալ Ձեր դիտարկումը: Ի՞նչ է մեզ սպասում: Կանխորոշված ինչ-որ բան կա, թե՞ ոչ: Եվ ինչքանով եք ողջունում Արցախի այսօրվա իշխանությունների պահվածքը: Օրինակ, հանդիպում կայացավ, որտեղ թեկնածուներից մեկը ներկա չէր, պետք է բոյկոտեի՞ն: Օրինակ, Վիտալի Բալասանյանը ներկա չէր ...

Ա. Գ. – Հարգելի Անժելա, նախ՝ վարչապետը չհանդիպեց երկու թեկնածուի հետ՝ Վիտալի Բալասանյանի և մի կին թեկնածուի: Ես, առիթից օգտվելով, շնորհակալություն եմ հայտնում վարչապետին, որ չի հանդիպել Վիտալի Բալասանյանի հետ, որովհետև ավելի վարկաբեկիչ բան Վիտալի Բալասանյանի համար չէր կարող լինել: Ինչո՞ւ եմ այսպես համոզված ասում. առաջիկա ամիսներին բոլորը կհամոզվեն: Իսկ ինչպիսի՞ նախագահ ես կուզեի տեսնել: Նախ, ի սկզբանե ասեմ, որ բոլոր թեկնածուներին հար-

զանքով եմ վերաբերվում, սակայն ստեղծված իրավիճակում, երբ մենք լսում ենք իրարամերժ հայտարարություններ, ռազմատենչ կոչեր Ադրբեջանի պաշտպանության նախարարի կողմից, որն ասում է, թե ադրբեջանական բանակը պատրաստ է վաղը ևեթ ծեռնարկել ռազմական գործողություններ և սպասում են լոկ քաղաքական որոշման, էդ պարագայում պահանջված է նա, ով սկզբից մինչև վերջ հերոսական դրսևորում է ունեցել ազատագրական պատերազմում: Գործող, ներողություն, ասպարեզում եղած թեկնածուների մեջ լոկ գեներալ-մայոր, Արցախի հերոս Վիտալի Բալասանյանն է:

Ա. Թ. – *Դուք պատկերացնում եք երկու երկիր՝ Արցախ ու Հայաստան, և Վիտալի Բալասանյանն այնտեղ ընտրվում է նախագահ. էն հայտարարությունները, որ արվեցին Նիկոլ Փաշինյանի կողմից Վիտալի Բալասանյանի հասցեին և Վիտալի Բալասանյանի պատասխան հայտարարությունները ... Ինչպե՞ս եք պատկերացնում, ի վերջո, նրանց համագործակցությունը ...*

Ա. Գ. – Շատ լավ:

Ա. Թ. – *Ո՞նց՝ շատ լավ:*

Ա. Գ. – Ասեմ՝ ինչու: Նիկոլ Փաշինյանն իր վերջին հայտարարությամբ, փաստորեն, հող ստեղծեց ...

Ա. Թ. – *Ո՞ր հայտարարության մասին է խոսքը:*

Ա. Գ. – Խոսքս դեկտեմբերի 12-ի ելույթն է, թե ամբողջ պետական համակարգն ընդդիմանում է վարչապետի բարեփոխումներին, հեղափոխությանը:

Ա. Թ. – *Կա՞պր:*

Ա. Գ. – Կա՞պր: Ասեմ: Նա հող ստեղծեց արդարանալու համար, քանի որ վաղը կամ մյուս օրը Արցախի հարցում ինքը չի կարողանա կատարել այն ուժերի թելադրանքը, հանուն ինչի իրեն դրել են վարչապետի աթոռին: Իսկ չի կարողանա, բնականաբար, որովհետև ժողովուրդը չի սատարի իրեն: Նա արդեն նեղացածի կեցվածք կընդունի և հրաժարական կտա՝ հիմնավորելով, ինչպես նախօրոք դրա համար հող էր պատրաստել, ինչպես հուշել էին սուֆյորները, ասելով, թե ժողովուրդ, դուք եք որոշում, ես ընդամենը ձեզնից մեկն եմ: Մեկ գումարած մեկ, գումարած մեկ և այլն, և այլն: Հիմա, բնականաբար, ժողովուրդը չի պաշտպանի այն, ինչ ցանկանում են Ջորջ Սորոսի թիկունքում կանգնած աշխարհաքաղաքական լրջագույն ուժերը:

Ա. Թ. – *Այսինքն, մոբիլիզացիա կլինի: Դուք պատկերացնո՞ւմ եք, որ մոբիլիզացիա կլինի այս հարցում և նա հրաժեշտ կտա:*

Ա. Գ. – Միանգամայն ճիշտ եք, որովհետև ...

Ա. Թ. – *Իսկ եթե դա տեղի չունենա, պարոն Գեղամյան ...*

Ա. Գ. – Մի բոպե...

Ա. Թ. – *... և այնտեղ ընտրվի Վիտալի Բալասանյա՞նը:*

Ա. Գ. – Ասեմ: Ուրեմն, դա պարտադիր տեղի կունենա, որովհետև համաշխարհային քաղաքականության ուժի կենտրոններն արդեն շտապում

Ա. ՊԵՐԱՍՏԱՆ

են: Իրենց օդի, ջրի պես պետք է, որ Արցախի զինուժի կողմից վերահսկվող անվտանգության գոտին, մասնավորապես, Զանգեզուր, Զեբրայիլ, Ֆիզուլի, այդ 105 կիլոմետրանոց սահմանը Իրանի հետ, վերահսկվի, համապատասխանաբար, ամերիկացիների կողմից՝ ՆԱՏՕ-ի հովանոցի ներքո: Այդ պարագայում, բնականաբար, Իրանի Իսլամական Հանրապետությունը կփակի Հայաստանի հետ սահմանը, Վրաստանում էլ, հանկարծակի, էլի մի կամուրջ, եզակի՝ կամուրջ կայացեցնեն, և Հայաստանը շնչառություն կունենա: Հիմա, ինչո՞ւ են համոզված ասում, որ ժամանակը չի ներում իրենց՝ այդ ուժերին, այն պարզ պատճառով, որ հիմա էլ երկրորդ փուլով են սկսում ապակայունացնել իրավիճակը Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Ա. Թ. – *Ինչպե՞ս եք գնահատում հայ-ռուսական հարաբերությունները, իսկապե՞ս այդ ազդեցությունը կա Հայաստանի վրա, երբ շարունակում է փակի տակ մնալ Վլադիմիր Պուտինի ընկերը և բարեկամը: Դա ընդհանրապես ազդեցություն ունենո՞ւմ է այդ հարաբերությունների վրա, թե՞ ռուսներն էլ խորամանկություն բանեցնելով՝ գուցե ինչ-որ բաներ են ուզում պոկել այսօրվա իշխանությունից:*

Ա. Գ. – Հարգելի Անժելա, եթե Փաշինյանը խոսում է բարեկամության մասին և ասում, թե Վլադիմիր Պուտինն իր բարեկամն է, ուրեմն եթե իրոք բարեկամն է, ապա ինչո՞ւ են Պուտինի հասցեին ամենագեղեցիկ արտահայտություններ ասողին, Ռուսաստանի պետական դրոշմն այրողին մինչև օրս, մինչև էս ժամը պահում Անվտանգության խորհրդի քարտուղար: Նրանք հո այդքան միամիտ չեն: Ինչ վերաբերում է ռուս-հայկական հարաբերություններին ...

Ա. Թ. – *Միամիտ-միամիտ ողջունում են, ասում են ...*

Ա. Գ. – ... մի րոպե, նրանք ողջունելով՝ ցույց են տալիս իրենց երկրի՝ Ռուսաստանի Դաշնության և անձամբ Վլադիմիր Պուտինի խորը հարգանքն առ հայ ժողովուրդ, առ Հայաստան:

Ա. Թ. – *Մեկնաբանության բան է, մեկնաբանելու խնդիր է:*

Ա. Գ. – Ո՛չ, ո՛չ ...

Ա. Թ. – *Դե, հիմա ...*

Ա. Գ. – Ո՛չ: Եվ քանիցս ասել են: Եվ ոչ միայն ասել են, այլև գործնականում արել. Հայաստանն առաջին պետությունն էր, որին իրենք «Իսկանդերներ» մատակարարեցին, այդ պահին գերիզոր ու ամենաժամանակակից այդ զենքը: Եթե Հայաստանում տեղակայված Ռուսաստանի Դաշնության յուրաքանչյուր սահմանապահ ուղեկալում նույնիսկ ընդամենը մեկ ռուսական պետական դրոշ ծածանվի, հարյուր Ադրբեջան չէ, Թուրքիան էլ (в придачу) ոչինչ չեն կարողանա անել:

Ա. Թ. – *Ընդամենը կարող են մի քանի ժամ ուշանալ կամ շարունակել զենք վաճառել ...*

Ա. Գ. – Բացարձակապես, դա չի լինի: Երբեք: Ուրիշ բան, որ շահարկ-

վում է հիմա: Այսօրվա դրությամբ ամբողջ արաբական արևելքը զինվում է Միացյալ Նահանգների զենքով՝ 70 – 78 տոկոսը ամերիկյան զենք է: Իսրայելը Միացյալ Նահանգների ամենասերտ դաշնակիցն է Մերձավոր արևելքում և, ընդհանրապես, աշխարհում: Մի օր դուք լսե՞լ եք, որ Բինյամին Նեթաֆայահուն հանկարծ մուննաթ- սուննաթ գար, ասեր՝ Ջորջ, անունը ո՞նց էր, հա՛ Ղոնալդ Իվանովիչ Թրամփ, ինչո՞ւ ես դու արաբական արևելքին զենք վաճառում ...

Ա. Թ. – Ռուբեն Հայրապետյանը վերջերս խոսեց: Ինչպե՞ս կգնահատեք իր հրապարակ գալը:

Ա. Գ. – Ես հարգանքով եմ վերաբերվում Ռուբեն Հայրապետյանին: Ինչպես նաև մեծ հարգանք եմ տածում Խաչատուր Սուքիասյանի ծնողների հանդեպ, Ալբերտ Սուքիասյանի՝ Ալբերտ Ազիզովիչի, ոնց ասում էինք, և տիկին Անժիկի: Եվ ես այս իրավիճակը բնութագրելիս, բնականաբար, բարոյական պատասխանատվություն եմ կրում Խաչատուրի հոր՝ Ալբերտի և մոր՝ տիկին Անժիկի հիշատակի առաջ, և իմ ու Ռուբեն Հայրապետյանի փոխադարձ հարգանքի, հարգալից վերաբերմունքի համար: Շատ ջուր կտանի այս խմորը և, վերջին հաշվով, կհանգեցնի նրան, որ երկու բավականաչափ ինքնաբավ ձեռներեցներ, բիզնեսմեններ կբախվեն, երկու կողմից էլ կներքաշվեն տարբեր ուժեր, իսկ որոշ սրիկաներ վարագույրի ետևից կնայեն, կուրախանան ու կխնդան, թե ինչպես են երկու երևանցի իրար կոտորում: Ես կարծում եմ, որ անհապաղ պետք է ...

Ա. Թ. – Ղա՞ եք կանխատեսում: Ղուք այդպիսի բա՞ն եք կանխատեսում:

Ա. Գ. – Ես կարծում եմ, անհապաղ պետք է անպայման, լինի երեք հոգով, լինի չորսով, հինգով, պիտի հավաքվեն և վիճելի հարցերին ոչ հրապարակային լուծում տան:

Ա. Թ. – Ասում են՝ էդ նախկինում էր, հիմա գոյություն ունի օրենք, օրենքով պիտի էդ արվի, Նիկոլ Փաշինյանի ժամանակաշրջանում ամեն ինչ, բոլոր հարցերը լուծվում են օրենքով:

Ա. Գ. – Ո՞ր օրենքի մասին է խոսքը:

Ա. Թ. – Չգիտեմ, որ օրենքով, այն օրենքով, որ ...

Ա. Գ. – ... այն օրենքի, երբ երկրի դե ֆակտո ղեկավարն ասում է՝ շրջափակեք դատարանները, շրջափակեք Սահմանադրական դատարանը. է՞դ օրենքի մասին է ...

Ա. Թ. – Ունենք այն, ինչ ունենք, պարոն Գեղամյան: Մենք առաջնորդվում ենք, առայժմ, էդ օրենքներով, դրանցով:

Ա. Գ. – Դրա համար, ես իմանալով, որ ...

Ա. Թ. – Ասում եք՝ թող ընտանիքները նստեն, խոսեն կամ ինչ-որ մեկը

...

Ա. Գ. – Չէ, նրանք երկուսն էլ կայացած տղամարդիկ են, կնստեն, կխոսեն, լավ էլ լուծումներ կգտնեն: Կարևորը կողքից չխառնեն ...

Ա. ԳԵՂԱՄՅԱՆ

